

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 3(53)
2011 թ.

Գլխավոր խմբագիր՝
Լևոն Օհանյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավաբանական ֆակուլտետ:

Հեռ. 55-77-92

*Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:*

*10 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:*

e-mail: petutyun.irav@gmail.com

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

1.10.2011

Հանձնված է տպագրության

26.10.2011

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО
И
ПРАВО**

Номер 3 (53)
2011 г.

Главный редактор:
Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -
зам. главного редактора
Давид Мелконян -
ответственный секретарь

Геворг Даниелян
Гагик Амбарцумян
Артур Вагаршян
Сергей Аракелян
Виген Кочарян

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92
e-mail: petutyun.irav@gmail.com

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 1.10.2011
Подписано к печати 26.10.2011

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գեղամ Ղարախանյան
ՀՀ ԸՆՏԱՆՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԹԻՎ3

Լիպարիտ Մելիքջանյան
ՌԻՍԿԵՐԻ ԲԱՇՆՈՒՄԸ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԻՍ.....8

Սոնա Թևանյան
ԿՈՆՑԵՍԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԵՎ ՕՐՅԵԿՏԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ.....16

Մանե Կարապետյան
ՄԻԳՐԱՆՏ ԱՇԽԱՏՈՂԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ.....29

Марианна Калашян
МЕТОДОЛОГИЯ ВЫБОРА ПРИМЕНИМОГО ПРАВА СКВОЗЬ ПРИЗМУ
ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ ЦЕЛЕЙ И ЗАДАЧ КОЛЛИЗИОННОГО
РЕГУЛИРОВАНИЯ.....36

Լիլիթ Քամայան
ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ
ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՈՒՄ46

Ասյա Ավագյան
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ-ՈՒՄ.....57

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Տարոն Սիմոնյան
ՄԻՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌԵ-
ԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԴԻՏԱՐԿԵԼԻՍ.....66

Кристине Сардарян
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СОЦИОНОРМАТИВНОЙ КУЛЬТУРЫ ТРАДИЦИОННЫХ И
ГРАЖДАНСКИХ ОБЩЕСТВ.....83

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Էդգար Խաչատրյան
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՄԱԿ-Ի ԽԱՂԱՂԱՊԱՀ ԱՌԱՔԵ-
ԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ.....90

Զինավոր Մեղրյան
ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ.....98

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գոռ Ալոյան
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....107

Давид Тумасян
СУБКУЛЬТУРА ОСУЖДЕННЫХ ЖЕНЩИН И ЕЕ ОСОБЕННОСТИ В РА.....114

ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարինե Իսահակյան
ՎԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ122

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԹԻՎ

Գեղամ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2004 թ. նոյեմբերի 9-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը» (այսուհետ՝ ընտօր), որը գործողության մեջ է 2005 թվականի ապրիլի 19-ից: Այն Հայաստանում ընդունված երրորդ օրենսգիրքն է և կոչված է կարգավորելու երկրում առաջացող ամուսնական-ընտանեկան հարաբերությունները: Այն, իհարկե, արդեն բռնել է քննություն: Չնայած ընդունվելուց հետո այնտեղ կատարվել են որոշ փոփոխություններ, սակայն այսօր էլ վերանայելու անհրաժեշտություն կա:

Խոսքը առաջին հերթին որոշ ավելորդ բառերից ազատվելու, բազմաթիվ հոդվածներ խմբագրելու մասին է, որոնց վերաբերյալ մեր առաջարկությունները մնում են անարձագանք:

Հոդվածի նպատակը հղկված, հայերենին հարիր ու կատարելագործված օրենսգիրք ունենալն է: Չէ՞ որ այն երկրի բոլոր ընտանիքների օրենսգիրքն է, կիրառելի բոլորի նկատմամբ:

Առաջին հերթին, կարծում ենք, ճիշտ կլիներ, որ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ 1996 թ. մայիսի 29-ի օրենքում նշվեր, թե ով է համարվում երեխա: Այդ հարցը լուծված չէ ոչ միայն հիշյալ օրենքով, այլև ՀՀ ընտանեկան օրենսգրքով:

Բացի դրանից, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը չի պատասխանում նաև այն հարցին, թե ինչ է նշանակում «ծնողական իրավունքներից զրկելը»: Ճիշտ է, ծնողական ի-

րավունքներից զրկելու հիմքերը թվարկված են ընտանեկան օրենսգրքում, սակայն սա հարցի պատասխանը չէ:

Հայաստանի երեք հանրապետություններում ընդունվել են ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող երեք օրենսգրքեր, ինչպես նաև տասնյակից ավելի ենթօրենսդրական ակտեր, սակայն նրանցից ոչ մեկում, ՀՀ ընտանեկան օրենսգրքից բացի, չի օգտագործվում «ազգակցականություն» բառը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 61 հոդվածում խոսվում է «ծնողների և այլ ազգականների հետ ազգակցականության կապի վրա հիմնված գույքային իրավունքների մասին»:

Նույն միտքը կրկնվում է նաև ընտօր 64 հոդվածում: Խոսքը, իհարկե, անձանց միջև եղած ազգակցական կապի մասին է. և դա այն դեպքում, երբ հայոց լեզվին վերաբերող ոչ մի բառարանում այդպիսի բառ չի հիշատակվում: Հարց է ծագում. ո՞վ է հորինել նման արհեստածին բառը և այն օգտագործել ՀՀ քաղաքացիների՝ շատ կարևոր ու շատ գործածական հարաբերությունները կարգավորող օրենսգրքում: Ո՞ւմ է պետք նման նորամուծությունը: Ոչ ոքի: Դրա համար էլ այն գործնականում կիրառություն չունի, քանի որ վաղուց քննությունը բռնած և հնչեղ հայերենով արտասանվող «ազգակցություն» բառը փոխարինված է «ազգակցականություն» կեղծ բառով:

Առաջարկում ենք ՀՀ ընտօր 61 և 64 հոդվածներում օգտագործվող «ազգակցականություն» բառը փոխարինել «ազգակցություն»-ով:

ՀՀ ընտօր 47 հոդվածում նշվում է «ապրուստավճար» բոլորովին ավելորդ բառը: Եվ այն օգտագործվում է «ալիմենտ» բառի

փոխարեն: Հայտնի է, որ ալիմենտը ապրուստի միջոց է, որ տրվում է անչափահաս, անաշխատունակ անձանց՝ նրանց հանապազօրյա կարիքները հոգալու համար: Գիշտ է, այն հայկական ծագում չունի, սակայն կուլտուրական փոխառության կանոններով վաղուց մտել է հայերենի բառապաշար և ընդունվել ժողովրդի կողմից: Այնպես որ, ալիմենտը որևէ ծառայության, կատարված որևէ աշխատանքի դիմաց տրվող գումար, վճար չէ: Հետևաբար անհրաժեշտ է ընտանեկան օրենսգրքից հանել նաև «ապրուստավճար» արհեստածին բառը:

Հայաստանի Հանրապետության՝ 1998 թվականի մայիսի 5-ին ընդունված քաղաքացիական օրենսգրքը ինչպես քաղաքացուն անհայտ բացակայող, այնպես էլ քաղաքացու մահացած լինելու դեպքերի համար սահմանել է ճանաչման հնարավորությունը: Քաղ. օր. 44 հոդվածը սահմանում է «քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու» կարգը, իսկ քաղ. օր. 47 հոդվածը՝ «քաղաքացուն մահացած ճանաչելու» կարգը: Իրականում այդպես չի կարող լինել: Եթե քաղաքացին իր մշտական բնակության վայրից բացակայում է, և մեկ տարվա ընթացքում նրա գտնվելու վայրի մասին տեղեկություններ չեն լինում, դատարանը կարող է այդ քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել: Սակայն, եթե քաղաքացու բնակության վայրում երեք տարվա ընթացքում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին, ապա դատարանը պետք է ի գիտություն հայտարարի, որ տվյալ անձնավորությունը պետք է որ մահացած լինի: Այսինքն, դատարանը պետք է նրան հայտարարի մահացած: ՀՀ քաղ. օր. նախագիծը պատրաստողները, հեռանալով 75 տարի Հայաստանում և ոչ միայն Հայաստանում օրենսգրքի մակարդակով ընդունված քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու և քաղաքացուն մահացած հայտարարելու հասկացու-

յուններից, արհամարհելով այդ առթիվ Հայաստանի ճանաչված մասնագետների դիտողությունները՝ Ազգային ժողով ներկայացրին քաղ. օր. այսօր էլ գործող տեքստը, որտեղ այդ սխալը դեռևս մնում է: Բայց օրենսգիրքը ընդունելու առաջին իսկ օրվանից հարցը քննարկման առարկա չի դառնում: Բանն այն է, որ երկրի որևէ օրենսգրքում օգտագործվող հասկացությունները մեքենայորեն վերարտադրվում են նոր օրենքներում: Այդպես վարվել է ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ ընտանեկան օրենսգրքի նախագծի տեքստը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելիս: Դրա հետևանքով ՀՀ ընտանեկան օրենսգիրքը նույնպես սահմանում է, որ **«ամուսնությունը դադարում է ամուսիններից մեկի մահվան կամ նրան դատարանի կողմից մահացած ճանաչելու** (ընդգծումն իմն է-Գ.Ղ.) հետևանքով» (13 հոդվածի առաջին կետ): Կարծում ենք՝ այս հարցի լուծման ժամանակ չպետք է կաշկանդվել՝ թե հարցը ըստ էության չհասկանալու հետևանքով է ՀՀ քաղ. օր. 47 հոդվածը սահմանում, որ քաղաքացին մահացած է ճանաչվում: Այս սխալի մասին մենք մշել ենք բազմիցս: Վերջին հաշվով, մեր հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը և ընտանեկան օրենսգիրքը հավասարազոր օրենքներ են, և մեկում փոփոխություն կատարելը չպետք է կախման մեջ դրվի մեկ այլ օրենքում փոփոխություն կատարելուց:

Ուստի առաջարկում ենք ՀՀ ընտանեկան օրենսգրքի բոլոր այն հոդվածներում, որտեղ օգտագործվում է «քաղաքացուն մահացած ճանաչել» բառակապակցությունը, դարձնել «քաղաքացուն մահացած հայտարարելը»: Դրանից ելնելով՝ առաջարկում ենք ընտօր 19 հոդվածը խմբագրել: Այդ հոդվածի համաձայն՝ «Դատարանի կողմից մահացած կամ անհայտ բացակայող ճանաչված ամուսնու ներկայանալու և դատարանի համապատասխան վճռի վերանայման դեպքում ամուսինների հա-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

մատեղ դիմումի հիման վրա ամուսնությունը կարող է վերականգնել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինը...»:

Անհրաժեշտ ենք գտնում հողվածի «մահացած» բառից հետո ավելացնել «հայտարարված» բառը, իսկ «վերանայումը»-ը փոխարինել «վերացման» բառով: Չէ՞ որ վերանայել նշանակում է հնի մի մասը թողնել նոր խմբագրությամբ, մյուս մասերը թողնել ինչպես կան: Իսկ 19 հողվածի դեպքում պետք է նախկին վճիռը դադարի գոյություն ունենալուց: Ուրեմն՝ եղած վճիռը ոչ թե պետք է վերանայվի, այլ վերացվի:

Ընտոր 12 և 130 հողվածներում օգտագործվում է «թունամոլություն» բառը: Իսկ նման բառ հայերենում չկա: Հայերենի ոչ մի բառարանում այն տեղ չի գտել: Այս բառը ևս ավելորդ է ընտոր-ում, ուստի պետք է ազատվել նաև դրանից:

Ընտոր բազմաթիվ հողվածներում օգտագործվում է «ընդ որում» բառը: Օրինակ՝ 59 հողվածի «ա» կետն ազդարարում է, որ ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ակիմենտ վճարելուց:

Կարծում ենք՝ այստեղ «ընդ որում» բառը պետք է փոխարինվի «այդ թվում» բառակապակցությամբ: Ինչու՞: Չենք կասկածում, որ ընտոր նախագծի վերջնական տեքստը խմբագրել են բանասերները, որոնք էլ «այդ թվում» կապակցությունը փոխարինել են «ընդ որում»-ով:

Ընտոր 10 հողվածի համաձայն՝ ամուսնություն կնքելու համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի՝ կանանց համար տասնյոթ, իսկ **«տղամարդկանց**

համար տասնութ տարեկան տարիքի հասնելը»: Իհարկե, ընդգծվածը հայերեն չէ: Ուստի առաջարկում ենք այդ հողվածն ավարտել այսպես. «իսկ տղամարդկանց համար տասնութ տարեկան հասած լինելը»:

Անհրաժեշտ է նաև ընտոր 47 հողվածում (կետ 3) «խնամակալի» փոխարեն գրել «խնամարկյալի» բառը:

Խմբագրման կարիք ունեն նաև ընտոր մի շարք այլ հողվածներ:

Այսպես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41 հողվածի 1-ին կետը ենթակա է խմբագրման, ավելի ճիշտ՝ հայերեն շարադրման: Այնտեղ գրված է. «երեխա է համարվում տասնութ տարին չլրացած անձը»: Սա ակնհայտորեն հայերեն չէ: Ուստի առաջարկում ենք այն շարադրել հետևյալ կերպ. «երեխա է համարվում տասնութ տարեկան չդարձած անձը»:

Անհրաժեշտ է նաև ընտոր 63 հողվածի 2-րդ կետում «հանգամանքներից» բառը փոխարինել «պատճառով» բառով:

Ընտոր 62 հողվածի 1-ին կետը սահմանում է, թե «ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձևը և (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը»: Հողվածում պարզություն մտցնելու անհրաժեշտություն կա: Անհրաժեշտ է այնտեղ նշել, որ ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, «եթե ծնողական իրավունքներից զրկված ծնողները փոխել են իրենց կենսաձևը և (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը»:

Առաջարկում ենք նաև ընտոր 21 հողվածի 2-րդ կետի սկզբի «դատարանը» դարձնել «հետևանքով», իսկ վերջում «արդյունքով»-ի փոխարեն գրել «հետևանք»-ով: Իսկ 20 հողվածի 3-րդ կետում «երեք օրվա ընթացքում» բառերից հետո տեղադրել այդ կետերի սկզբի բառը: Մեր կարծիքով, ընտոր առաջին հողվածի

ամաջին կետում «հանրապետությունում» բառից հետո պետք է ավելացնել «գտնվում են» բառը, իսկ «ներքո են» բառը փոխարինել «ներքո» բառով:

Ընտոր 6 հոդվածի 1-ին կետը պետք է խմբագրվի այսպես. «Քաղաքացիներն իրենց հայեցողությամբ իրականացնում են ընտանեկան հարաբերություններից բխող և օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքներ (ընտանեկան իրավունքներ, այդ թվում՝ այդ իրավունքների պաշտպանության իրավունք), եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»: Նաև անհրաժեշտ է ընտոր 15 հոդվածի 3-րդ կետում «երեխաների պատճառով» բառերը փոխարինել «երեխաների առթիվ» բառերով:

Ընտոր 39 հոդվածի 3-րդ կետի 2-րդ մասում «ծնունդը գրանցելուց հետո» բառերից հետո ավելացնել «հայրությունը և մայ-

րությունը վիճարկելիս» բառերը:

Ընտոր 53 հոդվածի 1-ին կետի 3-րդ մասում «եղանակները» բառի փոխարեն անհրաժեշտ է գրել «գործում» բառը:

75 հոդվածի 4-րդ կետում ասված է, որ ալիմենտի չափը որոշվում է «չափահաս զավակների ամենչությամբ»:

Ի՞նչ է նշանակում սա. ալիմենտը նշանակվում է ոչ թե քաղաքացու ամենչությամբ, այլ քաղաքացու համար: Ուրեմն պետք է խմբագրվի նաև 75 հոդվածը:

Ընտոր 92 հոդվածի 1-ին կետի «ծևերը» բառը փոխարինել «եղանակով»:

Ընտոր 151 հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի «հիմնվում են» ստորոգյալը փոխարինել «հենվում են»-ով:

Վերջապես, ընտոր 115 հոդվածի 1-ին կետի «յուրաքանչյուր» բառը փոխարինել «ցանկացած» բառով:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՌԻՍԿԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԻՍ**

Լիպարիտ ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի
ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Արժեթղթերի իրավական կարգավորումը քաղաքացիական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկն է: Արժեթղթերի շուկայի արհեստավարժ մասնակիցների կողմից արժեթղթերով գործարքներ կնքելիս առաջանում են որոշակի մոդելներ և սխեմաներ, որոնց պատճառով հաճախակի խախտվում են ներդրողների իրավունքներն ու օրինական շահերը: Դա առավել խնդրահարույց է դառնում հատկապես այն դեպքերում, երբ որպես ներդրողներ հանդես են գալիս ֆիզիկական անձինք: Այս կապակցությամբ բացարձակ անգործության է մատնված օրենսդիրը, որը ժամանակ առ ժամանակ փոփոխում է արժեթղթերի մասին օրենսդրությունը՝ գնալով ոչ թե աստիճանական կատարելագործման, այլ հետագա վատթարացման ճանապարհով: Իհարկե, օրենսդրական անկատարությունը համարելով արժեթղթում ներդրումներ կատարելու բավական մեծ խոչընդոտ և ռիսկ, այս ուսումնասիրության շրջանակներում սահմանափակվել ենք միայն այն ռիսկերի բաշխման ուսումնասիրությամբ, որոնք առաջանում են արժեթղթերով գործարքներ կատարելիս:

Գրականության մեջ գոյություն չունի ռիսկի մեկ միասնական սահմանում: Հայրենական գրականությունում ի. գ. դ. Ս. Բարսեղյանը ռիսկը մեկնաբանում է գործարարական ռիսկի տեսանկյունից, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ռիսկ եզրույթը օգտագործում է 26 հոդվածում՝

անհատ գործարար հասկացության մեջ, ըստ որի՝ անհատ գործարարն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի առանց իրավաբանական անձ հիմնելու, ինքնուրույն, իր անունից, իր ռիսկով իրականացնելու գործունեություն, որի հիմնական նպատակը գույքը օգտագործելուց, ապրանքները վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Գործարարական ռիսկը տնտեսվարման առանձնահատկություններով պայմանավորված և դրա վրա ազդող տարաբնույթ հանգամանքների ներգործության հետևանքով վնասներ կրելու կամ օգուտներ ստանալու հավանականության անորոշությունն է՝:

Ռուսական իրավաբանական գրականության մեջ նույնպես առանձնակի ուշադրություն չի դարձվել ռիսկի ուսումնասիրությանը, և այն սահմանափակվել է միայն գործարարական ռիսկի վերլուծության սահմաններում անհատ գործարարի հասկացությունը պարզաբանելիս: Քանի որ ձեռնարկատիրական գործունեության կարևորագույն և հիմնական բաղադրիչներից մեկը այդ գործունեությունը իր ռիսկով իրականացնելն է, ուստի այն որոշ չափով ներկայացվում է գործարարական իրավունքի շրջանակներում, չնայած գործարարական ռիսկի ըմբռնման հարցում ևս կարծիքները տրամագծորեն տարբերվում են՝:

Քաղաքացիական իրավունքում ևս հաճախակի հանդիպում ենք ռիսկ եզրույթին, բայց այն այլևս /իրավական տարբեր վերլուծություններում, նաև ՀՀ քաղաքացիական իրավունքի դասագրքում/ մեկնաբանված և պարզաբանված չէ: Ինչպես նկատում է Ս. Բարսեղյանը, չնայած «գործա-

րարական ռիսկ» հասկացությունը գործող քաղաքացիական օրենսգրքում ստացավ իր օրենսդրական ամրապնդումը, ոչ քաղ. օր-ը, ոչ էլ քաղաքացիաիրավական այլ ակտերը չեն բացահայտում ինչպես ռիսկ, այնպես էլ գործարարական ռիսկ հասկացությունները: Ռիսկ հասկացությունը բացահայտված չէ նաև միջազգային իրավական ակտերում, այդ պատճառով էլ ռիսկ հասկացության բացահայտման փորձեր իրավագետները կատարում են տարբեր տեսակի ռիսկերին անդրադառնալիս³: Չնայած մեր նպատակը արժեթղթերով գործարքներ կատարելու ռիսկերի ուսումնասիրությունն է, նախևառաջ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել «ռիսկ» երևույթի էությունն ու հիմնական հատկանիշները:

Եթե իրավագիտության մեջ պատշաճ ուշադրություն չի հատկացվել արժեթղթերի ռիսկերի բաշխմանը, ապա արժեթղթերի շուկայի վերաբերյալ տնտեսագիտական դասընթացներում առանձին գլուխ է հատկացվում արժեթղթերի շուկայում ռիսկեր հասկացությանն ու տեսակներին և դրանց կառավարմանը⁴:

Տնտեսագետների համար նախատեսված «Արժեթղթեր» ուսումնական ձեռնարկում մեկ գլուխ վերաբերում է միայն արժեթղթերի շուկայում ռիսկերի կառավարմանը, որտեղ ռիսկը ներկայացվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերից: Ռիսկը ընդհանրապես ներկայացնելով որպես կանխատեսման անհամապատասխանության հնարավորություն՝ հեղինակը գտնում է, որ ռիսկը միշտ կախված է որոշակի այլ ընտրանքների ընտրությամբ ու հնարավոր արդյունքի հաշվարկով, որն էլ կազմում է սուբյեկտիվ կողմը, և դրան զուգահեռ մեծ է նաև օբյեկտիվ կողմը, քանի որ ռիսկը նաև ռեալ գոյություն ունեցող անորոշության քանակաորակական արտահայտման ձև է⁵: Այլ հեղինակների կարծիքով, ռիսկը այն կանխատեսված նպատակից շեղվելու հնարավորությունն է, որի վերաբերյալ ընդունվել է որոշում⁶, կամ ռիս-

կը ընտրության կանխատեսող գործողություն է, որից հետո հնարավոր է այնպիսի վատ պայմաններում հայտնվել, քան մինչ ընտրությունը⁷, կամ ռիսկը գործողություն է՝ ուղղված ընտրության պայմաններում արդյունքի անորոշությունը կանխելու⁸: Իսկ Միշարևը ռիսկը բնութագրում է որպես անբարենպաստ որևէ իրադարձության վրա հասնելու հնարավորություն, որը կապված է նյութական և ֆինանսական կորուստների հետ⁹:

Ըստ այդմ, ընդհանրացնելով վերը նշվածը, կարող ենք նշել, որ ռիսկը սպասվելիք արդյունքին չհասնելու որոշակի հնարավորությունն է: Ըստ որում, որքան մեծ է սպասվելիք արդյունքին չհասնելու հնարավորությունը, այնքան մեծ է ռիսկը:

Արժեթղթերով գործառնությունների իրականացման ժամանակ առաջացած ռիսկերը իրավագետների կողմից գրեթե չեն ուսումնասիրվել: Ուսումնասիրողները հիմնականում հետազոտել են արժեթղթերում արտահայտված իրավունքների իրականացմանը վերաբերող ռիսկերի հիմնախնդիրները: Խոսքը նախևառաջ արժեթղթերի կորստի, գողության ռիսկերի մասին:

Սակայն արժեթղթերին վերաբերող գործառնությունների հիմնական վտանգը ոչ թե այն է, որ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառների հետևանքով արժեթղթեր ունեցողի համար դժվարություններ են ծագում այնտեղ ամրագրված իրավունքի իրականացման առումով, այլ արժեթղթերի շուկայի և արժեթղթերի որպես նրա օբյեկտի առանձնահատկություններում, ինչպես նաև արժեթղթերի շուկայում գործառնությունների իրականացման կարգում: Այդ չափանիշներից ելնելով՝ արժեթղթերի շուկայում կարելի է առանձնացնել երեք խումբ ռիսկեր՝

1. ռիսկեր, որոնք բխում են անմիջապես արժեթղթի՝ որպես արժեթղթերի շուկայի օբյեկտի, ապրանքի առանձնահատկություններից:

Ռիսկերի այդ խումբը կապված է իրադրության ծագման հավանականության

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հետ, երբ արժեթուղթը այս կամ այն պատճառով կորցնում է իրացվելիությունը և /կամ/ եկամտաբերությունը, հետևաբար ներդրողը չի կարող ստանալ ներդրած դրամական միջոցները՝ չխոսելով արդեն շահույթի մասին:

Եթե տնտեսությունը վերելք է ապրում, ապա աճում են բաժնետոմսերի գները: Սակայն շուկայի բաժնետոմսերի աճի /անկման/ տեմպերը երկու-երեք անգամ գերազանցում են տնտեսության իրական մասի աճի /անկման/ տեմպերին: Իր իրական բազայից կեղծ կապիտալ ներկայացնելու դեպքում հավասարակշռման կետից բաժնետոմսերի աճը գերազանցելու պատճառով ձևավորվում են այսպես կոչված պղպջակներ: Վաղ թե ուշ «պղպջակը» պայթում է, որը հանգեցնում է հարյուրավոր միլիարդ դոլլարների կորստի¹⁰: Այդ «պղպջակների» հայտնվելու պատճառը արժեթղթերի շուկայում ներդրողների գործունեությունն է, բարձր եկամտաբերության հետևից ընկնելը: Որոշ արժեթղթերի պահանջարկը իրարանցում է առաջացնում և բարձրացնում է այլ ներդրողների հետաքրքրությունը իրենց նկատմամբ: Այդպիսով, քանի որ արժեթղթերի գները շարունակվում են աճել, ներդրողները շարունակվում են դրանք գնել՝ հուսալով, որ կարող են ժամանակին «թռչել գնացքից», ինչպես նաև վաճառել արժեթղթերը՝ գնման և վաճառքի կուրսերի տարբերությունից ստանալով շահույթ: Անկասկած ինչ-որ մեկին դա հաջողվում է: Բայց «երբ կեղծ կապիտալի ուռճացումը հասնում է չափազանց մեծ ծավալի, հերիք է փոքրիկ հարված, որ գները սկսեն սրընթաց ընկնել»¹¹: Նման միտումները առկա են այն երկրներում, որոնք շուկայական նոր հարաբերությունների կայացման փուլում են, որովհետև նշված երևույթները եթե հիմնականում նկատելի են հետխորհրդային շրջանի գրեթե բոլոր երկրներում, ապա

Մեծ Բրիտանիայում դեռևս 1720 թվականին է ընդունվել օրենք «օճառի պղպջակների մասին», որը գործել է մինչ 1825 թվականը՝ ընդհուպ այն պահը, երբ ձևավորվել են արժեթղթերի էմիսիայի գրանցման ժամանակակից ընկալմանը համապատասխան խիստ պահանջներ:

Ցավոք, ժամանակակից աշխարհում նույնպես հնարավոր է «օճառի պղպջակների» առաջացում: Միայն թե այժմ խարդախները օգտագործում են դյուրահավատ ներդրողներից դրամների «շորթման» ժամանակակից տեխնոլոգիաները: Մասնավորապես, մեծացել է համացանցի միջոցով արժեթղթերի առևտրի ժամանակ խարդախությունների դեպքերի քանակը: Այդ առիթով Ռուսաստանի Կենտրոնական բանկը դեռ 2000 թվականին նամակ էր պատրաստել «Համացանցի օգտագործմամբ արժեթղթերի առևտրի ժամանակ հնարավոր խարդախության մասին» (N 15-02/229): Փաստաթղթում խոսվում է այն խարդախ ծրագրերի մասին, որոնք օգտագործվել են արտասահմանյան ֆոնդային շուկաներում արժեթղթերում ներդրում կատարել ցանկացողների նկատմամբ՝ օգտագործելով համացանցը:

1. «Ավելացնել և իջեցնել» /Pumpf-lump/ ծրագիրը շուկայական մանիպուլյացիայի տեսակ է, որի էությունը այն արժեթղթերի վաճառքից շահույթ ստանալն է, որոնց պահանջը արհեստականորեն ձևավորված է եղել: Մանիպուլյատորը, որը կոչվում է ինսայդեր կամ իրագել անձ, արժեթղթերի էմիտենտի մասին հաճախակի սուտ տեղեկատվություն տարածելով, նպաստում է դրանց գների բարձրացմանը, որից հետո չափազանց բարձր գներով իրականացնում է արժեթղթերի վաճառքը: Նման մանիպուլյացիաների ավարտից հետո գները շուկայում վերադառնում են ելակետային մակարդակին, իսկ շարքային ներդրողները կրում են վնաս: Այս եղանակը օգտագործվում է այն ընկերության մասին տեղեկատվության պակասի կամ բացակայության պայմաններում, որոնց ար-

ժեթթերը հազվադեպ են սակարկվում:

2. Ֆինանսական բուրգի ծրագիրը՝ /Pyramid Schemes/ ինտերնետ-տեխնոլոգիաների օգտագործմամբ դրամական միջոցների ներդրումը, գրեթե նույնությամբ կրկնում է դասական ֆինանսական բուրգի սխեման: Այս եղանակի կիրառման դեպքում ներդրողը ստանում է եկամուտ բացառապես խաղի մեջ նոր ներդրողներ ներգրավելու հաշվին:

3. «էկզոտիկ» առաջարկներ /Exotic Offerings/, օրինակ՝ ինտերնետի միջոցով տարածված կոստարիկյան կոկոսի այգիների բաժնետոմսերի առաջարկներ, որն ունի պայմանագիր ամերիկյան հանրախանութների ցանցի հետ ու ապահովված է բանկային երաշխիքով, որ կարճատև ժամանակամիջոցում ներդրողը կստանա ներդրումների հիմնական գումարը՝ գումարած 15% եկամուտ:

4. Բանկերի օգտագործմամբ խարդախությունների /Prime Bank Fraud/ ժամանակ խաբեբաները, հայտնի և պատկառելի ֆինանսական կազմակերպությունների երաշխիքի և անվան տակ թաքնվելով, առաջարկում են ներդրողներին գումարներ ներդնել ոչնչով չապահովված պարտավորություններում՝ շահույթների ոչ իրական չափերով:

5. Տեղեկատվության պարտադրում /Touting/ ծրագիրը ներդրողներին հաճախ շփոթության մեջ է գցում ոչ ստույգ տեղեկատվությամբ, որը կարող է վերաբերել էմիտենտին՝ ընկերության հեռանկարային աճի չափազանցությանը: Ոչ ստույգ ինֆորմացիան ցանցը օգտագործողների լայն շրջանակներում կարող է տարածվել տարբեր եղանակներով տեղադրված տեղեկատվական կայքերի հայտարարությունների էլեկտրոնային դաշտերում, ներդրումային ֆորումներում, համապատասխան հասցեներին ուղարկված էլեկտրոնային փոստերում¹²:

Ուստի, միջոցների կորստից խուսափելու համար ներդրումներ կատարելու ժամանակ ներդրողներին առաջարկվում է

մանրակրկիտ վերլուծել տարբեր տեսակի «գայթակղիչ» առաջարկները, բարձր եկամուտ երաշխավորող խոստումները, խուսափել այնպիսի կազմակերպությունների հետ շփումից, որոնք չեն տալիս ճշգրիտ և կոնկրետ պարզաբանումներ ներդրումային մեխանիզմների մասին:

II. Արժեթղթերի շուկայում գործառնությունների իրականացման հետ կապված ռիսկեր: Դրանց են վերաբերում՝

ա/ էմիսիոն ռիսկերը: Ռիսկերի այդ տեսակը ծագում է արժեթղթերի էմիսիայի իրականացման և արժեթղթերի սկզբնական շուկայում դրանց տեղաբաշխման դեպքում: Թողարկողները հաճախ հետապնդում են ոչ թե արտադրության ընդլայնման ֆինանսավորման, այլ արժեթղթերի գործարքներից սպեկուլյատիվ հարստացման նպատակ, օրինակ, երբ թողարկված արժեթղթերի քանակը գերազանցում է բաժնետիրական ընկերության կապիտալին: Հիմնական էմիսիոն ռիսկեր են հանդիսանում.

- չտեղաբաշխման ռիսկ: Դրա էությունն այն է, որ եթե արժեթղթերի վաճառքի հետևանքով սկզբնական շուկայում չի հաջողվում տեղաբաշխել ողջ ծավալը, ապա դրան հետևած վնասները կդրվեն էմիտենտի ուսերին: Տվյալ ռիսկի մակարդակը որոշվում է արժեթղթերի ներդրումային գրավչությամբ, ինչպես նաև արժեթղթերի շուկայում ներդրողների ներդրումային հնարավորությամբ:

- ժամանակային ռիսկ: Ինչ-ինչ պատճառներով ոչ օպտիմալ ժամանակում արժեթղթերի թողարկման ռիսկ, որը կարող է բերել արժեթղթերի եկամտաբերության նվազեցման, նրանց իրացվելիության կորստի;

- արժեթղթերի սեփականատերերի առջև պարտականությունները չկատարելու ռիսկ: Այդ ռիսկը ձևավորում են բոլոր հնարավոր գործոնները, որոնք կարող են ազդել էմիտենտի կողմից արժեթղթերի սեփականատերերի նկատմամբ պարտավորությունների կատարման վրա, ինչպես

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նաև էմիտենտի կողմից իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում արժեթղթերի սեփականատերերի գործողությունների վրա¹³:

բ/ ներդրումային ռիսկերը: Արժեթղթերի շուկայում ներդրումային գործառնությունների իրականացման ժամանակ դա հանդես է գալիս իրացվելիության ռիսկի ձևով, հատկապես կորպորատիվ արժեթղթերի պարագայում: Որպեսզի ապահովվի շուկայի իրացվելիությունը, շատ կարևոր է, որ այդ ընթացքում, երբ թղթերի գինն ընկնում է, նրանց գնեն, իսկ երբ աճում է, վաճառեն¹⁴:

Ներդրումային ռիսկերն էլ իրենց հերթին կարող են արտահայտվել տոկոսային և վարկային ռիսկի ձևով:

Տոկոսային ռիսկը ամենատարածված ռիսկն է ներդրումային գործառնությունների իրականացման ժամանակ: Այն ավելի հայտնի է որպես արժեթղթերի կուրսի փոփոխման ռիսկ: Արժեթղթերի կուրսի փոփոխությունը կարող է տեղի ունենալ օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր գործոնների պատճառով: Տոկոսային ռիսկի տեսակներ կարելի է համարել նաև արժույթային գործարքների արժույթների փոփոխման ռիսկը, ինչը՝ չէ՝ նաև արժույթային օրենսդրության փոփոխության ռիսկը:

Վարկային ռիսկը արժեթղթով նախատեսված հիմնական պարտքը և տոկոսները սահմանված ժամկետում չվճարելն է: Սա հիմնականում պայմանավորված է արժեթղթերի շուկայով և էմիտենտով, մասնավորապես ֆոնդային բորսայում իրականացվող մարժինալ գործարքներով: Մարժինալ գործարքի էությունը հաճախորդի կողմից արժեթղթերի շուկայի արհեստավարժ մասնակցի՝ բրոկերի ներգրավումն է, փոխառու միջոցների և /կամ/ արժեթղթերի օգտագործումը, որոնք հաճախորդին են տրամադրվել բրոկերի կողմից: Հաճախոր-

դին տրամադրվող գումարի չափը, տրամադրման ձևը և վերադարձնելը սահմանվում են բրոկերային ծառայությունների պայմանագրով: Տրամադրվող գումարը պրակտիկայում ստացել է «վարկային թև» արտահայտությունը՝ ի տարբերություն հաճախորդի անձնական միջոցների: Օրինակ՝ «թև 1:5» նշանակում է, որ հաճախորդը կարող է տնօրինել 6 դրամ, ունենալով ընդամենը 1 դրամ: Ընդ որում, եթե նա ճիշտ կարողանա կռահել ֆոնդային շուկայի իրադարձությունների զարգացումը, ապա կարող է շահել 5 անգամ ավելի կամ կորցնել 5 անգամ ավելի: Նման գործառնությունները ֆոնդային շուկայի մասնակիցների, հատկապես ներդրողի համար բավականաչափ ռիսկային են: Վերջինս շատ հեշտությամբ կարող է հայտնվել տրամադրված միջոցները չվերադարձնելու ռիսկի վիճակում: Նման գործարքները հայտնի են դեռևս անցյալ դարի 20-ական թվականներից, երբ ԱՄՆ-ում բրոկերները մանր բրոկերներին սկսեցին տրամադրել մարժինալ վարկեր՝ բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով¹⁵:

III. Արժեթղթերի շուկայի գործունեության ընթացքում առաջացող ռիսկեր:

Այս ռիսկը հիմնականում առաջանում է արժեթղթերի շուկայում առևտուր իրականացնելու կարգից: Արժեթղթերի շուկայում բորսային գործարքների ընթացքում շուկայի որոշ արհեստավարժեր օգտագործում են ոչ այնքան արդար մեթոդներ՝ նպատակ ունենալով գործարքների քիչ փորձառու մասնակիցներին հարկադրել իրենց շուկայական գնից թանկ արժեթղթեր գնել: Ինչպե՞ս դա կարելի է անել:

Նման գործառնությունների ժամանակ մասնակցում են երկու բրոկերներ: Առաջինը վաճառքի է հանում արժեթղթեր՝ սկզբնական ցածր գնով, որը հետաքրքրում է պոտենցիալ գնորդին: Երկրորդ բրոկերը, նկատելով, որ գնորդը ձեռք է բարձրացնում, նման ձևով ցույց տալով արժեթղթերի ձեռքբերման ցանկություն, նույնպես ձեռք է բարձրացնում՝ այդ կերպ խթանելով գների աճուրդային բարձրացման սկիզբը:

Երկրորդ բրոկերը ձեռքը վեր է պահում այնքան, մինչև գնորդը չիջեցնի իր ձեռքը՝ հրաժարվելով մասնակցել գործարքին, որը նշան է այն մասին, որ արժեթղթերի գինը գերազանցել է նրա համար մաքսիմալ ընդունելի չափը: Այդ ամենը տեսնելով՝ երկրորդ բրոկերը գնորդի հետ միաժամանակ իջեցնում է ձեռքը: Մակլերը /գործարք վարողը/ ստիպված է վերադառնալ նախորդ՝ գնորդի համար մաքսիմալ ընդունելի գնին: Երկրորդ բրոկերը ձեռքը չի բարձրացնում, և արժեթղթերը մաքսիմալ գնով մնում են գնորդին: Որոշ արժեթղթերի նկատմամբ իրարանցում ստեղծելու նպատակով վաճառողները դրանք երբեմն վերավաճառում են միմյանց, որը ֆոնդային շուկայում իրադրության վրա նույնպես բացասական է ազդում: Այդ գործառնությունները կոչվում են «կրոսսինգ»¹⁶:

Պետք է ասել, որ շուկայում ցանկացած շահադիտական գործառնություն խելաթյուրում է կոնկրետ արժեթղթերի իրական վիճակը:

Բնական է, որ առավել իրացվելի և հանրաճանաչություն են վայելում այն ձեռնարկությունների արժեթղթերը, որոնք վաղուց աշխատում են շուկայում, ունեն կայուն ֆինանսական վիճակ և մեծ արտադրական կարողություններ: Արժեթղթերով գործառնություններ իրականացնելիս պետք է հաշվի առնել նաև տարածքային և արժեզրկման ռիսկերը:

Արժեթղթերի շուկայում իրադրության վրա ազդում են տվյալ շրջանի զարգացման տնտեսական հեռանկարները, որտեղ որպես հարկատու գրանցված է էմիտենտը, և /կամ/ որտեղ էմիտենտը իրականացնում է իր հիմնական գործունեությունը: Այս դեպքում ներդրողն իր վրա է վերցնում իրադրությունը բարդացնելու ռիսկը այն շրջանում, որտեղ գործում է արժեթղթերի էմիտենտը:

Արժեզրկումը բացասական ներգործություն է ունենում երկրի ողջ ֆինանսական համակարգի վրա: Արժեզրկման ներգործության հիմնական հետևանքը գործառնություններ անցկացնելու ժամկետներ

րի կրճատումն է: Այլ խոսքերով ասած՝ ձեռնտու է միջոցներ ներդնել հնարավոր կարճ ժամկետով, թեկուզ առավել քիչ շահավետ տոկոսային պայմաններով՝ շահելով միջոցների շրջանառման արագության վրա:

Արժեզրկումը կարող է ազդել նաև արժեթղթերով կատարված վճարումների վրա:

Չպետք է մոռանալ նաև քաղաքական-իրավական ռիսկի մասին: Դա էմիտենտի և /կամ/ ներդրողի՝ պետության քաղաքական դրության փոփոխման ռիսկ է: Ի՞նչ կարգով է քաղաքական դրությունը ազդում ֆոնդային շուկայի վրա, պարզ երևում է Ռուսաստանի իրադարձությունների օրինակով: ՌԴ նախագահական ընտրությունների նախաշեմին բաժնետոմսերի գները ցածր էին, որոնք արժևորվեցին և կայունացան Բ. Ելցինի նախագահ ընտրվելուց հետո: Իսկ երբ հայտարարվեց Ելցինի հիվանդության մասին, բաժնետոմսերի գները միանգամից նվազեցին 10-15%-ով:

Արժեթղթերի շուկայում գոյություն ունեն նաև տեղեկատվություն չստանալու և /կամ/ կեղծ տեղեկատվություն ստանալու ռիսկ և այլ ռիսկեր, որոնք արժեթղթերով գործառնությունների կատարումը դարձնում են ոչ հուսալի:

Ռիսկերը, որոնց գործունեության իրականացման ժամանակ բախվում են բաժնետիրական ընկերությունները, ի վերջո ստիպված են լինում իրենց վրա վերցնել բաժնետերերը՝ արժեթղթերը տիրապետողները: Այլ կերպ ասած՝ արժեթղթերը տիրապետողների վրա լիարժեքորեն դրվում են այն ռիսկերը, որոնք կրում է բաժնետիրական ընկերությունը՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ: Ուստի, կառավարման մարմինների կարևոր գործառնությոն ռիսկերի կառավարման համակարգ ստեղծելու հսկողությունն է: Նա թույլատրում է գնահատել ռիսկերը, որոնց գործունեության իրականացման ընթացքում բախվում է հասարակությունը, և նվազեցնում է նման ռիսկերի բացասական հետևանքները:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ¹ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Գործարարական իրավունք, ԵՊՀ, Երևան, 2009, էջ 37
- ² Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Գործարարական ռիսկը որպես պատասխանատվության պայման, Իրավագիտության հարցեր, Երևան, 2004, թիվ 3, էջ 46:
- ³ Տե՛ս նույն տեղը, էջ 45:
- ⁴ Տե՛ս Маренков Н.Л. Ценные бумаги. М. Московский экономико-финансовый институт. 2005, Мишарев А.А. Рынок ценных бумаг. Учебное пособие, Питер, 2007, Савенков В.Н. Ценные бумаги в России. «Банковский деловой центр», М. 1998:
- ⁵ Տե՛ս Маренков Н.Л., նշվ. աշխ., էջ 278:
- ⁶ Տե՛ս Грабовый П.Г., Петрова С.Н. и др. Риски в современном бизнесе, М. Изд-во «АЛАНС» 1994, էջ 3:
- ⁷ Տե՛ս Чалый-Прилуцкий В.А. Рынок и риск, М. Центр Синтек 1994, էջ 7:
- ⁸ Տե՛ս Альгин А.П. Риск и его роль в общественной жизни. М., 1989, էջ 6:
- ⁹ Տե՛ս Мишарев А.А. Рынок ценных бумаг. СПб.: Питер, 2007, էջ 171:
- ¹⁰ Տե՛ս Рубцов Б.Б. Мировые рынки ценных бумаг. М., 2002, էջ 28:
- ¹¹ Նույն տեղում:
- ¹² Տե՛ս Хоменко Е.Г. Правовое регулирование рынка ценных бумаг. М., 2008, էջ 32:
- ¹³ Տե՛ս Хоменко Е.Г., նույն տեղը, էջ 33:
- ¹⁴ Տե՛ս Семенова Е.В. Операции с ценными бумагами: российская практика. М., 1997, էջ 216:
- ¹⁵ Տե՛ս Галкин П.В., Комов А.В., Сизов Ю.С., Чижов С.Д. Фондовые риски США и России: становление и регулирование. М., 1998, էջ 48:
- ¹⁶ Տե՛ս Килячков А.А., Чалдаева Л.А. Рынок ценных бумаг и биржевое дело. М., 2002, էջ 258:

РАСПРЕДЕЛЕНИЕ РИСКОВ ПРИ СДЕЛКАХ С ЦЕННЫМИ БУМАГАМИ

Липарит МЕЛИКДЖАНЫН

*Ассистент кафедры гражданского права
ЕГУ, кандидат юридических наук*

Рынок ценных бумаг - важнейший институт гражданского права, который подвержен воздействию любых социальных и политических событий в республике и за ее пределами. Стабильность правового регулирования и прозрачность рынка ценных бумаг — необходимые условия привлечения инвесторов.

Так как ценная бумага отражает разные экономические и правовые элементы, сделки с ценными бумагами носят рискованный характер.

Риск — это некая вероятность того, что ожидаемый результат не наступит. В основном ученые исследовали проблему рисков, связанных с осуществлением прав, выраженных в ценных бумагах. Речь идет в первую очередь о правоотношениях, выраженных в ценных бумагах на предъявителя, — риск утраты ценной бумаги управомоченным лицом, кражи ценной бумаги и т.п. Применительно к документарным ценным бумагам следует говорить о риске уничтоже-

ния ценной бумаги, что может привести к невозможности исполнения выраженного в ней обязательства, осуществление закрепленного в ней права.

А вот риски, возникающие при осуществлении операций с ценными бумагами, правоведомы практически не изучались. Обсуждались лишь вопросы возникновения разновидных рисков при осуществлении операций с ценными бумагами.

Риски, с которыми сталкивается, скажем, акционерное общество при осуществлении своей деятельности, в конечном итоге вынуждены принимать на себя акционеры — владельцы ценных бумаг общества. Иными словами, на владельцев ценных бумаг ложатся в полной мере те же риски, которые несет акционерное общество как субъект предпринимательской деятельности. Поэтому важной функцией органов управления общества является контроль за созданием системы управления рисками. Он позволил бы оценить риски, с которыми сталкивается общество в процессе осуществления своей деятельности, и минимизировать негативные последствия таких рисков.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ԿՈՆՑԵՍԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԵՎ ՕՐՅԵԿՏԻ
ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

Սոնա ԹԵՎԱՆՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ*

Կոնցեսիայի պայմանագիրը՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագրի ինքնուրույն տեսակ, աչքի է ընկնում իր մի շարք առանձնահատկություններով, որոնք հիմք են տալիս այն տարանջատելու համանման այլ պայմանագրերից: Այդ առանձնահատկությունների թվում էական նշանակություն ունի հատկապես պայմանագրի օբյեկտը, սակայն ինչպես ցանկացած քաղաքացիաիրավական պայմանագրի, այնպես էլ կոնցեսիայի պայմանագրի յուրահատկություններն ու դասակարգման հնարավորությունները բացահայտելու համար շատ կարևոր է նախ և առաջ վերլուծել այն հարցը, թե որն է կոնցեսիայի պայմանագրի առարկան, և որը՝ նրա օբյեկտը: Ընդհանրապես, քաղաքացիաիրավական պայմանագրերը դասակարգելու և դրանք առանձին խմբերում համակարգելու համար այս հարցի պարզաբանումը ձեռք է բերում ոչ միայն տեսական, այլև գործնական լուրջ նշանակություն: Այս առումով հարկ է ուշադրություն դարձնել գրականության մեջ առկա հայեցակարգերին. պայմանագրերի առարկայի և օբյեկտի հիմնախնդիրն անդրադառնալով՝ Օ. Ս. Իոֆֆեն, օրինակ, գտնում է, որ պայմանագրային հիմք ունեցող պարտավորական հարաբերությունները՝ ունեն երկու օբյեկտ՝ իրավաբանական, այն է՝ պարտավոր անձի կողմից դրսևորման ենթակա որոշակի վարքագիծը, և նյութական, որը, ի դեպ, որոշ պարտավորություններում ընդհանրապես կարող է բացակայել, ինչպես

օրինակ՝ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի մի քանի տեսակներում: Վերոնշյալ հեղինակը, քննարկելով պարտավորությունների նյութական և իրավաբանական օբյեկտների հարաբերակցության մասին հարցը, գտնում է, որ հնարավոր են դեպքեր, երբ պարտավորական հարաբերություններում երկու իրավաբանական օբյեկտների առկայության պարագայում գոյություն ունի միայն մեկ նյութական օբյեկտ³, կամ երկու իրավաբանական օբյեկտներին համապատասխանում են նույն քանակի նյութական օբյեկտներ⁴: Մենք, նման դասակարգմանը խիստ վերապահումով ենք մոտենում, քանի որ դրանով, փաստորեն, փորձ է կատարվում պայմանագրի կողմերի պարտականությունները ներկայացնել որպես պայմանագրի օբյեկտ, ինչն այնքան էլ հիմնավոր չէ: Ամեն դեպքում կարևոր ենք համարում նշել, որ կախված այն հանգամանքից, թե ինչպիսի դիրքորոշում է որդեգրված պայմանագրի առարկայի և օբյեկտի հարաբերակցության հարցում, էապես կարող են փոխվել ինչպես պայմանագրերի դասակարգման, այնպես էլ պայմանագրերի կնքման կարգի և դրանց հիման վրա ծագող իրավահարաբերությունների վերաբերյալ մոտեցումները:

Թեև պայմանագրի առարկայի և օբյեկտի հարաբերակցության հիմնախնդիրը ժամանակակից ցիվիլիստական ուսումնասիրություններում այնքան էլ չի քննարկվում և որպես առանձին գիտական հետազոտության նյութ դուրս է սույն հոդվածի շրջանակներից, այնուամենայնիվ այն շատ կարևոր նշանակություն ունի կոնցեսիայի պայմանագրի իրավական բնույթի բացահայտման, դասակարգման չափա-

նիշների առաջադրման, կնքման կարգի և այլ յուրահատկությունների մասին դիրքորոշում ձևավորելու հարցում, **ուստի հարկ ենք համարում ընդգծել, որ մենք պայմանագրի առարկա և օբյեկտ հասկացությունների տարանջատման կողմնակից են:** Այս համատեքստում քննարկվող հիմնախնդրի ոչ միայն տեսական, այլև կիրառական կարևորությունն ընդգծելու նպատակով անհրաժեշտ է նշել նաև, որ գործնականում հաճախ բարդություններ են առաջանում այն պայմանագրերի խմբային պատկանելիությունը որոշելիս, որոնք քաղաքացիարավական պայմանագրերի համակարգում գտնվում են, այսպես կոչված, սահմանային կարգավիճակում, որտեղ առավել ընդունված է բոլոր պայմանագրերը դասակարգել չորս խմբի. 1) գույքի փոխանցման, 2) աշխատանքների կատարման, 3) ծառայությունների մատուցման, 4) տարբեր կազմակերպությունների հիմնադրմանն ուղղված պայմանագրեր: Այս առումով առավել բարդ է այնպիսի պայմանագրերի խմբային պատկանելության որոշումը, ինչպիսիք են, օրինակ, հավատարմագրային կառավարման և առևտրային կոնցեսիայի (ֆրանչայզիզի) պայմանագրերը⁶: Իհարկե, երկու դեպքում էլ գույքի կամ գույքային իրավունքի փոխանցումը տվյալ պայմանագրի առարկան կազմող տարրերից մեկն է, սակայն, այդուհանդերձ, այդ պայմանագրերից ծագող պարտավորական հարաբերությունների մեջ բավականին մեծ նշանակություն ունի նաև կոնտրագենտներից մեկի կողմից մյուսին որոշակի ծառայություններ մատուցելը: Այսպես՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրում դա հավատարմագրային կառավարման հիմնադրի կամ շահառուի օգտին և նրա շահերից ելնելով գույքի հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցումն է, իսկ առևտրային կոնցեսիայի պարագայում իրավատիրոջ կողմից օգտագործողին իր ձեռնարկատիրական գործունեության մեջ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալի-

րի օգտագործման հնարավորություն տրամադրելու համար մատուցվող ծառայություններն են: Այս տեսակետն առաջադրած հեղինակները (Մ. Բրազինսկին և Վ. Վիտրյանսկին), իրենց առջև խնդիր չդնելով հստակ որոշել նշված պայմանագրերի տեղն այս կամ այն խմբում, այնուամենայնիվ եկել են այն եզրակացության, որ դրանք առավել նպատակահարմար է ուսումնասիրել ոչ թե գույքի փոխանցման, այլ ծառայությունների մատուցման պայմանագրերի թվում: Մենք կցանկանայիք նշել, որ կոնցեսիայի պայմանագիրը ևս կարելի է համարել դասակարգման սահմանային հատվածում գտնվող մի պայմանագիր, որի օբյեկտի ու առարկայի տարանջատումը և համապարփակ ուսումնասիրությունն էական նշանակություն ունեն ոչ միայն պայմանագրի՝ որպես ինքնուրույն տեսակի բնորոշման, այլև կողմերի իրավունքների և պարտականությունների ծավալը որոշելու, պայմանագիրը կնքելու կարգի և դրանցից բխող իրավունքները գրանցելու, ռիսկերը բաշխելու և մի շարք այլ՝ խիստ գործնական նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման համար:

Եթե պայմանագրի օբյեկտի և առարկայի հիմնախնդիրը տեղայնացնելու լինենք կոնցեսիոն պայմանագրի նկատմամբ, ապա կարող ենք ասել, որ այս հարցի կապակցությամբ ևս գիտնականների տեսակետները միանշանակ չեն: Ինչպես նշում է Ռ. Մ. Ժելնետոդինովը, կոնցեսիայի պայմանագրի առարկան կոնցեսիոնների՝ պայմանագրով նախատեսված գործունեության իրականացումն է՝ կապված կոնցեսիոն պայմանագրի օբյեկտի ստեղծման և շահագործման հետ, ինչպես նաև ներդրումային գործունեությունը⁶: Նույն հեղինակը փորձ է կատարել սահմանելու նաև կոնցեսիոն պայմանագրի օբյեկտի հասկացությունը և նշում է, որ այդպիսին կարող է լինել ցանկացած անշարժ գույք, այդ թվում քաղաքացիական շրջանառությունից լիովին հանված կամ սահմանափակ շրջանառու գույքը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մեր կարծիքով, երկու բնորոշումներում էլ հեղինակը թույլ է տալիս որոշակի անճշտություններ, որոնք կարող են էական և սկզբունքային նշանակություն ունենալ գործնականում պայմանագրային հարաբերություններ ձևավորելիս: Նախ նշենք, որ այն, ինչ վերոնշյալ հեղինակը դիտում է որպես պայմանագրի առարկա, այսինքն՝ կողմերի որոշակի նպատակով իրականացվող գործունեությունը, իրականում պայմանագրի օբյեկտն է, իսկ նրա կողմից նշված օբյեկտը՝ անշարժ գույքը, առարկան: Սակայն եթե անգամ չլիներ հասկացությունների նմանօրինակ խառնաշփոթը, դարձյալ նշված հեղինակի առաջադրած տեսակետը քննարկումների տեղիք է տալիս: Այսպես⁷, նախ և առաջ ինչպես ցանկացած պայմանագրի, այնպես էլ կոնցեսիայի պայմանագրի օբյեկտ են հանդիսանում ոչ թե կողմերից որևէ մեկի գործունեությունը կամ գործողությունները (ինչը բխում է վերոնշյալ սահմանումից), այլ կողմերի միջև փոխադարձ իրականացվող գործողությունների ամբողջությունը՝ ուղղված ներգործելու պայմանագրի առարկայի վրա և ապահովելու պայմանագրի նպատակի իրականացումը: Ինչ վերաբերում է կոնցեսիոն պայմանագրի առարկայի վերաբերյալ Ռ. Մ. Ժելենտոդինովի կողմից առաջարկվող հասկացությանը, ապա կարող ենք նշել, որ հեղինակը կոնցեսիոն պայմանագրի օբյեկտ լինելու հնարավորությամբ օժտում է ցանկացած անշարժ գույքի, դրանց թվում հպանցիկ կերպով մատնանշելով նաև սահմանափակ շրջանառու կամ շրջանառությունից հանված գույքը: Մինչդեռ այս պայմանագրի մասին խոսելիս ընդգծվում է հատկապես այն հանգամանքը, որ նշված պայմանագրի առարկա կարող է լինել հենց շրջանառությունից հանված գույքը (նույնիսկ՝ ոչ սահմանափակ շրջանառու), քանի որ պայմանագրի առարկան, դրա նպատակային նշանակու-

յունը և սուբյեկտային յուրահատուկ կազմը այն եռամիասնությունն են, որի շնորհիվ հնարավոր է դառնում կոնցեսիոն պայմանագիրը դիտել որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր:

Կոնցեսիայի պայմանագրի օբյեկտ և առարկա հասկացությունների էության բացահայտման հարցում օգտակար կարող է լինել նաև կոնցեսիայի պայմանագրի հասկացության ուսումնասիրությունը: Բնորոշումների բազմազանությունը, ի թիվս այլ պատճառների, պայմանավորված է նաև նրանով, թե տվյալ սահմանման հեղինակն ինչն է համարում կոնցեսիայի պայմանագրի առարկա: ՀՀ օրենսդրությամբ կոնցեսիայի պայմանագրի համապարփակ հասկացություն իհարկե սահմանված չէ՝ պայմանավորված ոլորտը կարգավորող միասնական իրավական ակտի բացակայությամբ, սակայն առանձին ճյուղային իրավական ակտերում կան եզակի դրույթներ, որոնցով փորձ է արվում սահմանել կոնցեսիայի պայմանագրի հասկացությունը՝ առնվազն տվյալ բնագավառի համար⁸: Դրանց ընդհանուր ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայրենական օրենսդրությունը հիմնականում ընթացել է կոնցեսիայի պայմանագիրը որպես պայմանագրի օբյեկտի նկատմամբ օգտագործման իրավունքների փոխանցման կառուցակարգ դիտարկելու ճանապարհով: Համանման մոտեցում է նկատվում նաև ռուսական օրենսդրական ակտերում: Այսպես՝ «Կոնցեսիոն համաձայնագրերի մասին» ՌԴ օրենքի 3-րդ հոդվածը, տալով կոնցեսիոն պայմանագրի հասկացությունը, սահմանում է, որ դրանով մի կողմը (կոնցեսիոները) պարտավորվում է իր հաշվին ստեղծել կամ վերակառուցել այդ համաձայնագրով նախատեսված անշարժ գույքը (այսուհետ՝ կոնցեսիոն պայմանագրի օբյեկտ), որի սեփականության իրավունքը պատկանում կամ հետագայում պատկանելու է մյուս կողմին (կոնցեդենտին), գործունեություն ծավալել կոնցեսիոն համաձայնագրի օբյեկտի օգտագործմամբ (շահագործմամբ), իսկ կոն-

ցեղենտը պարտավորվում է համաձայնագրով սահմանված ժամկետով կոնցեսիոներին տրամադրել կոնցեսիոն համաձայնագրի օբյեկտի նկատմամբ տիրապետման և օգտագործման իրավունքները՝ նշված գործունեությունը ծավալելու համար: Վերլուծելով նշված սահմանումը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության. թեև կոնցեսիոն պայմանագրի բնորոշման մեջ հստակ սահմանված է, որ կոնցեսիոները պարտավորվում է ծավալել որոշակի գործունեություն՝ կոնկրետ գույքի օգտագործմամբ, իսկ կոնցեզենտը պարտավորվում է տվյալ գույքը տրամադրել կոնցեսիոներին այն որոշակի, այն է՝ պայմանագրի օբյեկտը կազմող գործունեությունը իրականացնելու նպատակով, ռուս օրենսդիրը պայմանագրի օբյեկտ է համարել ոչ թե ծավալվող գործունեությունը, այլ տրամադրվող անշարժ գույքը՝ այդ մասին հստակ նշելով վերոնշյալ սահմանման մեջ:

Այս սահմանման վերլուծության կապակցությամբ, սակայն, մասնագիտական գրականության մեջ հանդիպում են նաև այլ տեսակետներ ևս. Օ. Ն. Սավինովան, օրինակ, գտնում է, որ այն հնարավորություն է տալիս հստակ որոշելու կոնցեսիոն պայմանագրի առարկան, որը կազմում են կոնցեսիոներին՝ կոնցեզենտին պատկանող անշարժ գույքի տիրապետման և օգտագործման իրավունքի հիման վրա հետագա շահագործման նպատակով ստեղծմանը կամ վերակառուցմանն ուղղված գործողությունները⁹: Այսպիսով ՌԴ օրենսդրի մոտեցումը կոնցեսիոն պայմանագրի առարկայի բնորոշման նկատմամբ հնարավոր է բացահայտել վերոնշյալ սահմանումից և հանգել այն եզրակացության, որ ըստ այդմ՝ որպես այդպիսին դիտվում են կոնցեսիոների համապատասխան գործողությունները: Մինչդեռ տեսության մեջ այս հիմնախնդրի նկատմամբ մոտեցումը միանշանակ չէ. Ս. Ա. Սոսնան, իր հերթին ներկայացնելով կոնցեսիոն պայմանագրի հասկացությունը, այն բնորոշում է որպես մի պայմանագիր, որով կոնցեզենտը կոնցե-

սիոներին է տրամադրում պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման իրավունքը կամ կոնցեզենտի առանձնաշնորհի հանդիսացող գործունեության կոնկրետ տեսակի իրականացման իրավունքը: Այս բնորոշումից արդեն պարզ է դառնում, որ հեղինակը կոնցեսիոն պայմանագրի առարկա է համարում ոչ թե կոնցեսիոների որոշակի նպատակով ծավալվող գործունեությունը, այլ որոշակի կարգավիճակ ունեցող գույքի օգտագործման կամ որոշակի բնույթի գործունեություն ծավալելու իրավունքը: Ընդ որում՝ վերոնշյալ գիտնականը հատուկ ընդգծում է, որ կոնցեսիոներին պայմանագրով տրամադրում է ոչ թե սեփականությունը որպես այդպիսին, այլ սեփականության օգտագործման իրավունքը¹⁰:

Այս տեսակետների միջև առկա բևեռային տարբերությունը ոչ միայն լուրջ տեսական հետազոտությունների աղբյուր է, այլև աչքի է ընկնում գործնական նշանակությամբ, քանի որ առաջին մոտեցման դեպքում մենք կոնցեսիոն պայմանագիրը դիտում ենք որպես ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման պայմանագիր, իսկ երկրորդ դեպքում այն իր բնույթով համապատասխանում է գույքի փոխանցման պայմանագրերին: Կոնցեսիոն պայմանագրի խմբային պատկանելությունը պարզելը նպատակ ունի բացահայտելու նաև տվյալ պայմանագրի հիման վրա ծագող իրավահարաբերությունների բնույթը, քանի որ եթե ծառայությունների մատուցման պայմանագրի դեպքում կողմերի միջև առաջանում են բացառապես պարտավորական բնույթի իրավունքներ ու պարտականություններ, ապա գույքի փոխանցման պայմանագրերի դեպքում որպես կանոն պարտավորականներից բացի առնչվում ենք նաև իրային բնույթի իրավունքների ու պարտականությունների հետ, ինչից անմիջականորեն բխում է, որ կոնտրագենտներից յուրաքանչյուրի իրավունքների խախտման ժամանակ նրանք առաջին դեպքում կարող են օգտ-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վել իրավունքների պաշտպանության միայն պարտավորական եղանակներից, մինչդեռ երկրորդ դեպքում, որպես գույքի օրինական, տիտղոսային տիրապետող, խախտված իրավունքների վերականգնման համար կարելի է կիրառել նաև պաշտպանության իրային իրավական կառուցակարգեր¹¹:

Ուշագրավ է նաև այն գիտնականների մոտեցումը¹², ովքեր, քննարկելով գույքի փոխանցման պայմանագրերին բնորոշ հատկանիշները¹³, գտնում են, որ դրանց յուրահատուկ է բարդ առարկայի առկայությունը, որը ներառում է ինչպես կողմերի գործողությունները գույքի փոխանցման և ընդունման կապակցությամբ (առաջին կարգի օբյեկտ), այնպես էլ հենց տվյալ գույքը (երկրորդ կարգի օբյեկտ): Այս կապակցությամբ կարող ենք ասել, որ նման մոտեցումը հետևանք է պայմանագրի օբյեկտի և առարկայի նույնացման, հետևաբար ստացվում է, որ այս տեսակետի հեղինակները պայմանագրի առաջին կարգի օբյեկտ ասելով՝ նկատի են ունեցել պայմանագրի բուն օբյեկտը, իսկ երկրորդ կարգի օբյեկտ ասելով՝ առարկան:

Կոնցեսիոն պայմանագրի առարկայի և օբյեկտի տարանջատման մասին խոսելիս պետք է անտեսել այն հարցը, թե տվյալ կատեգորիաներն ինչ փոխկապվածության մեջ են գտնվում կոնցեսիոն իրավահարաբերությունների օբյեկտի հետ:

Ինչպես արդեն նշել ենք, պայմանագիրն այն վերջնական իրավաբանական փաստն է, որը մի շարք իրավաբանական փատերի համակցության առկայությամբ ավարտին է հասցնում քաղաքացիական իրավունքի սուբյեկտների միջև կոնցեսիոն պայմանագրային հարաբերությունների ձևավորումը, մինչդեռ կոնցեսիոն իրավահարաբերություններն ինքնին գոյություն ունեն՝ անկախ կոնցեսիոն պայմանագրի կնքման փաստից, որպես ինքնուրույն հա-

սարակական հարաբերություն, որը ենթարկված է համապատասխան իրավական կարգավորման: Այսինքն՝ կոնցեսիոն իրավահարաբերությունները վերացական առումով առկա են այն պահից, երբ ստանում են օրենսդրական կարգավորում, և դրանց ուսումնասիրությունը որևէ կերպ պայմանավորված չէ արդեն որոշակի սուբյեկտների միջև ձևավորվող պայմանագրային կոնցեսիոն հարաբերությունների առկայության կամ բացակայության փաստով: Ուստի անհրաժեշտ ենք համարում վեր հանել նաև կոնցեսիոն իրավահարաբերությունների օբյեկտի առանձնահատկությունները և պարզել, թե ինչ առնչություն ունի այն կոնցեսիոն պայմանագրի առարկայի և օբյեկտի հետ:

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր իրավահարաբերություն, այդ թվում նաև քաղաքացիական իրավահարաբերությունները և կոնցեսիոն իրավահարաբերությունները, որպես վերջինիս տեսակ, ունի իր տարրերը՝ սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն: Այս իրավահարաբերությունների հիման վրա ձևավորվող կոնկրետ տեսակի պայմանագրային հարաբերությունները իրենց հերթին ունեն իրենց սուբյեկտը, օբյեկտը, բովանդակությունը, ինչպես նաև առարկան: Ուշագրավ է, որ քաղաքացիական իրավահարաբերությունները և դրանց հիման վրա ձևավորվող կոնկրետ քաղաքացիական պայմանագրային հարաբերությունները համընկնում են միայն սուբյեկտային կազմի մասով, այսինքն՝ եթե որևէ իրավահարաբերության կողմ կարող են հադես գալ քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները, ապա պայմանագրի կողմ ևս կարող է լինել ցանկացած սուբյեկտ, իսկ եթե տվյալ իրավահարաբերության սուբյեկտային կազմը սահմանափակ է, և այնտեղ թույլատրվում են միայն քաղաքացիական իրավունքի հատուկ սուբյեկտները, ապա տվյալ իրավահարաբերության հիման վրա ձևավորվող պայմանագրային հարաբերությունների սուբյեկտային կազմը ևս նույնությամբ համընկ-

նում է: Նույնը, սակայն, չի կարելի ասել իրավահարաբերությունների օբյեկտի ու բովանդակության և պայմանագրի օբյեկտի ու բովանդակության վերաբերյալ. դրանք բոլորովին տարբեր կատեգորիաներ են: Այսպես՝ եթե պարտավորական իրավահարաբերությունների բովանդակությունը կազմում է կողմերի իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը, ապա պայմանագրի բովանդակությունն այն անհրաժեշտ կետերն են, առանց որոնց պայմանագիրը չի կարող գոյություն ունենալ, և որոնք բաժանվում են էականի, սովորականի և պատահականի¹⁴:

Ինչ վերաբերում է իրավահարաբերությունների օբյեկտ և պայմանագրի օբյեկտ կատեգորիաների հարաբերակցությանը, ապա այստեղ հարցը փոքր-ինչ ավելի բարդ է, քանի որ ի տարբերություն քաղաքացիական իրավահարաբերությունների, որոնք ունեն երեք տարր, քաղաքացիական պայմանագրերն ի թիվս այդ երեքի ունեն մեկ տարր և՛ պայմանագրի առարկան: Թեև քաղաքացիական իրավահարաբերությունների հարցն ինքնին գիտական բանավեճերի աղբյուր է հանդիսանում, և այս առումով մի շարք տեսակետներ կան, որոնք մենք այժմ չենք մանրամասնի, գիտնականների կողմից առավել ընդունելի է համարվում, որ քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ են այն բարիքները, որոնց կապակցությամբ առաջանում են տվյալ իրավահարաբերությունները, և ծագում են սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներն ու դրանց համապատասխանող պարտականությունները, ըստ էության՝ այն ամենը, ինչն օրենքով համարվում է քաղաքացիական իրավունքի օբյեկտ¹⁵: Սա նշանակում է, որ քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ կարող է լինել 33 քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված գույքը, այսինքն՝ քաղաքացիական իրավունքի բոլոր օբյեկտները՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, աշխատանքները

ընդ և ծառայությունները, տեղեկատվությունը, մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն), ոչ նյութական բարիքները: Այս թվարկման և պայմանագրի առարկայի վերաբերյալ վերը նշված դատողությունների համադրումից ակնհայտ է դառնում, որ պայմանագրի առարկա կարող է լինել այն ամենը, ինչը հանդես է գալիս ինչպես քաղաքացիական իրավունքի, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ: Եթե այս տեսակետը մասնավորեցնենք կոնցեսիայի պայմանագրի նկատմամբ, ապա կարող ենք ասել, որ կոնցեսիոն իրավահարաբերությունների օբյեկտը՝ պետության բացառիկ սեփականությունը հաղիսացող անշարժ գույքը կամ բացառիկ իրավասությանը վերապահված ուրուշակի ոլորտում ծավալվող գործունեությունը՝ կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների տեսքով, այն ամենն է, ինչը կարող ենք համարել որպես կոնցեսիայի պայմանագրի առարկա: Իսկ պայմանագրի օբյեկտը լիովին ինքնուրույն տարր է և որևէ առնչություն չունի իրավահարաբերությունների օբյեկտի հետ: **Այսպիսով՝ մեկ անգամ ևս կարող ենք ընդգծել, որ կոնցեսիայի պայմանագրի օբյեկտն այն գործողությունների ամբողջությունն է, որն իրականացնում են կողմերը պայմանագրի առարկայի նկատմամբ, իսկ պայմանագրի առարկան այն կոնկրետ նյութական արժեքներն են կամ այն ծառայությունները, որոնց կապակցությամբ կողմերը մտնում են պայմանագրային հարաբերությունների մեջ:** Վերոնշյալ սահմանումից ուղղակիորեն բխում է մի եզրակացություն այն մասին, որ պայմանագրի առարկայի և օբյեկտի տարանջատման նշանակությունը այն է, որ հիմք ընդունելով պայմանագրի օբյեկտը՝ մենք կարող ենք որոշել տվյալ պայմանագրի խմբային պատկանելիությունը, այսինքն՝ որոշել պայմանագրի տեսակը, այլ կերպ ասած՝ իրականացնել պայմանագրի արտաքին դասակարգումը, իսկ պայման-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նագրի առարկայի միջոցով ապահովվում է պայմանագրի ներքին դասակարգումը, կամ հնարավոր է լինում որոշել դրա ենթատեսակները: Վերոնշյալ դիրքորոշումը որպես ելակետային ընդունելով՝ այժմ անդրադառանք կոնցեսիայի պայմանագրի առարկայի և օբյեկտի հիմնախնդրի քննարկմանը՝ փորձելով բացահայտել դրանց առանձնահատկություններն ու տարբերությունները այլ քաղաքացիաիրավական պայմանագրերի առարկայից և օբյեկտից: Առաջին յուրահատկությունը, որն ուզում ենք ընդգծել, այն է, որ կոնցեսիոն պայմանագրի առարկան ունի հատուկ իրավական ռեժիմ, և այլ պայմանագրերի առարկաներից տարբերվում են նրանով, որ հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, հանված է քաղաքացիական շրջանառությունից կամ հանդիսանում է պետության բացառիկ իրավասությանը վերապահված, իր բնույթով մենաշնորհային գործունեության տեսակ, և որևէ այլ քաղաքացիաիրավական պայմանագրի առարկա չի կարող: Կոնցեսիոն պայմանագրի առարկայի այս առանձնահատկությունն այն տարբերակիչ և առանցքային հատկանիշներից է, որով ընդգծվում է կոնցեսիոն պայմանագրի ինքնուրույնությունը, և բացառվում է այն՝ որպես որևէ այլ քաղաքացիաիրավական պայմանագրի տարատեսակ դիտելու հնարավորությունը: Միաժամանակ հարց է ծագում՝ արդյո՞ք որևէ պետական մենաշնորհային գործունեության պատվիրակումը կամ որևէ պետական սեփականություն հանդիսացող գույքի տրամադրումը մասնավոր սուբյեկտի շարունակվում է համարվել կոնցեսիոն պայմանագրի կարգավորման առարկա, եթե այդ գործունեությունը կամ գույքն ունի իր այլընտրանքը մասնավոր հատվածում. այլ կերպ ասած՝ արդյո՞ք կոնցեսիոն իրավահարաբերությունների մասին կարելի է խոսել նաև այն դեպքում, երբ պայմանագրի

հավանական առարկան պետական սեփականություն է կամ պետության կողմից իրականացվող գործունեություն, բայց ոչ բացառիկ, և դրան զուգահեռ կան մասնավոր սուբյեկտներ, որոնք գործունեություն են ծավալում համանման ոլորտում կամ նույնական գույքի շահագործմամբ կամ համանման գործունեության ծավալմամբ: Մեր կարծիքով, նման իրավիճակի առկայության պարագայում պետական սեփականություն հանդիսացող գույքի տրամադրումը կամ գործունեության պատվիրակումը մասնավոր սուբյեկտին կարող է իրականացվել ոչ թե կոնցեսիայի, այլ գույք տրամադրելու դեպքում՝ վարձակալության, իսկ գործունեություն պատվիրակելու դեպքում՝ ծառայությունների մատուցման կամ որևէ այլ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելով, քանի որ կոնցեսիայի պայմանագրի տնտեսական նպատակը համապատասխան ոլորտի զարգացման համար ներդրումների ապահովումն է և այն ենթակառույցների զարգացման նախադրյալներ ստեղծելը, որոնց գործառնումը միայն պետական կառավարչական և ֆինանսական ռեսուրսներով ապահովել հնարավոր կամ արդյունավետ չէ: Եթե որևէ կոնկրետ պետական սեփականություն հանդիսացող գույք առկա է նաև մասնավոր սուբյեկտների սեփականության ներքո, կամ պետական իրավասության գործունեության որևէ տեսակ կարող է ծավալվել նաև մասնավոր հատվածում գործառնող սուբյեկտի կողմից, ապա դա նշանակում է, որ տվյալ ենթակառույցները զարգացում են ապրում, ոլորտում առկա են ներդրումներ, և հանրային շահի բավարարումը պետք է որ ապահովված լինի, իսկ բացառիկության հատկանիշը որպես այդպիսին բացակայում է: Հետևաբար, կոնցեսիոն պայմանագրի առարկայի պետության՝ բացառիկ սեփականություն կամ պետական մենաշնորհային գործունեություն լինելու փաստը տվյալ պայմանագրի պարտադիր հատկանիշներից է: Թեև պետք է նշել, որ կան հեղինակներ, ովքեր

նշված հարցի պատասխանը միանշանակ չեն համարում: Ս. Սոսնան, մասնավորապես, նշում է, որ այս հարցի մասին խոսելիս անհարաժեշտ է հիշել, որ տնտեսական ենթակառուցների մի մեծ հատվածը որպես կանոն իրենից ներկայացնում է բնական մենաշնորհներ, և այն հանգամանքը, որ նման օբյեկտների մի մասը երբեմն գտնվում է մասնավոր սեփականության ներքո, չի փոխում հանրային ծառայությունների գործառնման հիմնական սկզբունքները (ծառայությունների մատուցման անընդհատությունը և մատչելիությունը, արտադրության հատուկ ռեժիմն ու կառուցվածքը և այլն), որոնք տարածվում են նաև մասնավոր սուբյեկտների վրա: Այդ իսկ պատճառով նշված գիտնականը կարծում է, որ այդ պայմանագրին ևս բնորոշ է կոնցեսիոն բնույթը¹⁶: Մենք, այնուամենայնիվ, գտնում ենք, որ նշված պարագայում խոսել կոնցեսիոն բնույթ ունեցող պայմանագրերի մասին հնարավոր չէ, քանի որ այդպիսին հանդիսանալու համար անհրաժեշտ ու բավարար երեք պայմաններից (պայմանագրի սուբյեկտներին, առարկային և նպատակին առնչվող) մեկը՝ առարկան՝ իր համապատասխան հատկանիշներով, բացակայում է: Մինչդեռ կոնցեսիայի պայմանագրի առարկայի՝ պետության բացառիկ սեփականությունը լինելու հանգամանքը դրա հիմնական առանձնահատկությունն է, և այն երկրներում, որտեղ իրավունքը բաժանվում է հանրայինի և մասնավորի, այսինքն՝ մայրցամաքային իրավական համակարգի երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Շվեյցարիա, Իսպանիա և այլն) կոնցեսիայի պայմանագրի առարկաները նույնիսկ դասվում են պետական կամ համայնքային **հանրային իրավական կարգավիճակ ունեցող** գույքի թվին: Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգիրքի 714-րդ հոդվածը, օրինակ, սահմանում է, որ գոյություն ունեն իրեր, որոնք որևէ մեկին չեն պատկանում, և դրանցից հավասարապես կարող են օգտվել բոլորը¹⁷: Դրանք, ըստ էության, համընկնում են տա-

կավին հռոմեական իրավունքից հայտնի «բոլորի համար ընդհանուր իրերի» գաղափարին, ինչը ներառում է օդը, արևը, ծովը, հաղորդակցության հանրային ուղիները և այլն, ինչպես նաև պետական կամ կրոնական իրերը¹⁸: Ներկայումս «բոլորի համար» ընդհանուր իրերի շրջանակը նկատելիորեն ընդլայնվել է՝ ներառելով օդային և ծովային տարածքները, ընդերքը և բնական ծագման ջրային օբյեկտները, ճանապարհները և մայրուղիները, որոնք ունեն հանրային նշանակություն: 20-րդ դարի խորհրդային գիտնականներից մեկը՝ Վ.Ն.Շտերերը, նշում էր, որ Ֆրանսիայում հողի այն հատվածը, որն առանձնացված է երկաթուղիների համար և ձեռք է բերվել կոնցեսիոների կողմից՝ համապատասխան գործարքների հիման վրա, հանդիսանում է պետական ձեռքբերում և կոնցեսիայի գործողության ընթացքում անգամ ենթակա է օգտագործման բացառապես հանրային-իրավական հիմունքներով: Նույն հեղինակը, վերլուծելով գերմանական իրավունքի մոտեցումն այս հարցի կապակցությամբ, նշում է, որ կոնցեսիոների իրավական կարգավիճակը հավասարվում է ոչ թե սեփականատիրոջ, այլ օգտագործողի (էնֆիտևզիսի¹⁹ սկզբունքով) կարգավիճակին²⁰:

«Կոնցեսիոն համաձայնագրերի մասին» ՌԴ օրենքի 4-րդ հոդվածը մանրամասն թվարկում է այն իրերը, որոնք կարող են լինել կոնցեսիայի պայմանագրի օբյեկտ²¹: Այս հոդվածի 2-րդ մասը յուրահատուկ վերապահում է նախատեսում այն դեպքերի համար, երբ որևէ իր իր բնույթով ենթակա է համընդհանուր օգտագործման, սակայն գտնվում է ոչ թե պետական, այլ մասնավոր սեփականության ներքո և կարող է ապահովել կոնցեսիոն համաձայնագրով (ՌԴ օրենքում կիրառվում է հենց համաձայնագիր և ոչ թե պայմանագիր եզրույթը) նախատեսված գործունեության տեխնոլոգիական գործընթացի իրականացումը: Նման դեպքերում կոնցեսիոնը կարող է տվյալ օբյեկտների սեփականատիր-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րոջ հետ կնքել այլ քաղաքացիաիրավական պայմանագիր՝ հօգուտ կոնցեսիոների՝ այդ պայմանագրի գործունեությունը կախման մեջ դնելով հիմնական կոնցեսիոն պայմանագրից: Այսպիսով, մայրցամաքային իրավունքի համակարգում հանրային և մասնավոր սեփականություն հանդիսացող գույքի հատուկ ճյուղային իրավական կարգավորման շնորհիվ հնարավոր է լինում օրենսդրորեն սահմանել այն իրերի շրջանակը, որոնք կարող են հանդիսանալ պետության բացառիկ սեփականություն:

Մեր կարծիքով, որևէ տեսակի իրերը պետության բացառիկ սեփականության թվին դասելը թեև կատարվում է համապատասխան օրենսդրության միջոցով, սակայն կոնցեսիոն պայմանագրի հավանական առարկաների շրջանակը տնտեսական զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող երկրներում կարող է տարբեր լինել, օրինակ՝ ԱՄՆ-ում տնտեսության մի շարք ճյուղեր (երկաթուղային, օդային և ջրային տրանսպորտը, պաշտպանության և այլ ճյուղեր), ինչպես նաև բնական ռեսուրսների որոշ տեսակներ, որոնք այլ երկրներում պետության բացառիկ սեփականությունն են, գտնվում են մասնավոր անձանց սեփականության ներքո: Այսինքն՝ զարգացած երկրներում կոնցեսիոն պայմանագրի առարկաների շրջանակը բավականին մեղ է, քանի որ սահմանափակ է պետության բացառիկ սեփականություն հանդիսացող և քաղաքացիական շրջանառությունից հանված օբյեկտների թիվը, մինչդեռ նվազ զարգացած տնտեսությամբ երկրներում տրամագծորեն հակառակ իրավիճակն է, և ավանդաբար պետությանը պատկանող օբյեկտների թվին հավելվում են նաև գույքի այնպիսի տեսակներ, որոնք որպես կանոն ունեն մասնավոր իրավական ուղղվածություն: Բոլոր դեպքերում կոնցեսիոն պայմանագրերը միտված են

սոցիալական և տնտեսական ենթակառուցների զարգացմանը, դրանց շնորհիվ ներկայումս իրականացվում են մեծածավալ, բարդ տեխնիկական հիմք ունեցող նախագծեր, օրինակ՝ ԳԴՀ-ում (Ստորին Սակոնիայում) կոնցեսիոն պայմանագրի կառուցակարգի միջոցով իրականացվում է ջրամաքրման համակարգի ստեղծման խոշոր ծրագիր, Իսպանիայում այդ եղանակով կառուցվել են մի շարք ավտոմայրուղիներ, իսկ առավել հայտնի կոնցեսիոն ծրագրերից է Լա-Մանչ նեղուցի հատակում կառուցված թունելը, ինչպես նաև Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի նավահանգստի կառուցումը՝ հարակից տրանսպորտային հանգույցներով: ԱՄՆ-ում, բացի վերոնշյալ ոլորտներից, կոնցեսիոն կառուցակարգի շնորհիվ զարգացվում են նաև առողջապահության և արդյունաբերության ոլորտները: Ինչպես տեսնում ենք, բոլոր դեպքերում որպես կոնցեսիոն կառուցակարգի կիրառման հիմք է ընդունվում այն, որ դա ուղղված է տնտեսական խոշոր ծրագրերի իրականացմանը, ենթակառուցների զարգացմանը և իհարկե ներդրումներ, հիմնականում օտարերկրյա, ներգրավելուն: Սակայն պետք է մոռանալ կոնցեսիոն պայմանագրերի հիմնական և ամենատեսակառանձնահատկության մասին. պայմանագրի առարկան պետք է լինի պետության բացառիկ սեփականություն հանդիսացող գույքը, որն ամբողջությամբ հանված է քաղաքացիական շրջանառությունից, ունի հանրային նշանակություն և հասարակության կողմից ենթակա է ընդհանուր օգտագործման, կամ պետության մենաշնորհային գործունեությունը, որի իրականացումը չի կարող ապահովվել մասնավոր սուբյեկտին այն ամբողջությամբ պատվիրակելու միջոցով: Այլ խնդիր է, թե որ երկրում օրենսդրական յուրահատուկ կարգավորման պայմաններում դրանց շրջանակը որքանով է ընդարձակ կամ հակառակը, թե ինչ գույք է նրանում ներառված, և թե այդ մոդելներից որը կամ դրանց ինչպիսի համակցություն նպատակահարմար կլինի

սահմանել ՉԳ-ում:

Կոնցեսիոն պայմանագրի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ այդ պայմանագիրը մախ և առաջ դիտվում է որպես մի կառուցակարգ, որը հնարավորություն է տալիս կազմակերպել բարդ գույքի կամ գույքային համալիրի շահագործումը, որն օրենսդրական սահմանափակումների կամ ձևավորված բնական մենաշնորհների առկայության պատճառով մրցակցային հիմունքներով օգտագործելն արդյունավետ կամ հնարավոր չէ կամ ապահովել պետական մենաշնորհային այն գործունեության իրականացումը, որը զգում է մասնավոր սուբյեկտի ներգրավվածության անհրաժեշտություն թե ֆինանսական և թե կազմակերպական ներդրումների առումով:

Որոշ հետազոտողներ վիճելի են համարում նաև այն հարցը, թե ինչ պետք է նկատի ունենալ կոնցեսիոն պայմանագրի առարկա հասկացության ներքո՝ որոշակի գործունեություն, թե՞ նյութական և ոչ նյութական բարիքները²²: Ըստ այդ հեղինակների՝ կոնցեսիոն համագործակցության ընթացքում ներդրումային իրավահարաբերությունների առկայությունն ինքնին հուշում է, որ կոնցեսիոն պայմանագրի առարկան են հենց ներդրումները, իսկ ՌԴ համապատասխան օրենքի 4-րդ հոդվածում նշված օբյեկտները (առարկաները) ներդրումների օբյեկտ են հանդիսանում: Հարկ է ընդգծել, որ անկախ այն բանից, թե կոնցեսիայի պայմանագրի առարկան տնտեսական ինչպիսի գարգացման մակարդակ ունեցող երկրի տեսանկյունից է քննարկվում, մենք կողմնակից ենք այն գիտնականների մոտեցմանը, ովքեր գտնում են, որ որպես այդպիսին կարող են լինել ոչ միայն իրերը, այլև գործունեության որոշ տեսակներ, ո-

րոնք իրականացնելու մենաշնորհը պատկանում է միայն պետությանը: Նման դեպքերում թեև կոնցեսիոնների գործունեությունը հիմնականում իրականացվում է այն պետական կամ համայնքային գույքի օգտագործմամբ, որի նկատմամբ ծավալվում է կոնցեսիոն գործունեությունը, այնուամենայնիվ կոնցեսիոն պայմանագրի առարկա է հանդիսանում հենց տվյալ գործունեությունը, այլ ոչ թե տվյալ գույքը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ վերը շարադրված դատողությունների հիմնական նպատակը կոնցեսիոն պայմանագրի օբյեկտի և առարկայի տարանջատումը և դրանց առանձնահատկությունները վերհանելն էր: Ինչպես արդեն իսկ նշել ենք, մենք կողմնակից ենք այն գիտական մոտեցմանը, համաձայն որի՝ ընդունված է տարանջատել պայմանագրի օբյեկտ և առարկա հասկացությունները: Այդ սկզբունքով առաջնորդվելով՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ կոնցեսիայի պայմանագրի օբյեկտ է հանդիսանում այն գործողությունների ամբողջությունը, որն իրականացնում են կոնտրագենտները՝ պայմանագրի առարկայի նկատմամբ ներագդելու համար: Ինչ վերաբերում է կոնցեսիայի պայմանագրի առարկային, ապա որպես այդպիսին կարող են հանդես գալ պետության բացառիկ սեփականությանը պատկանող անշարժ գույքը կամ պետական մենաշնորհային գործունեության որևէ տեսակ, որն ամբողջությամբ մասնավոր սուբյեկտին չի կարող օտարվել կամ պատվիրակվել՝ նկատի ունենալ դրանց հանրային նշանակությունը և հասարակական շահերի բավարարման համար ունեցած վճռորոշ դերը:

¹ Թեև հեղինակը քննարկում է պարտավորական հարաբերությունների օբյեկտներին վերաբերող հիմնախնդիրները, մեզ համար ակնհայտ է, որ մտքի տրամաբանական ուղղվածությունը և բերված օրինակները միտված են դիտարկելու միայն պայմանագրի օբյեկտների հարցը, քանի

որ, ինչպես հայտնի է, պարտավորական հարաբերություններ կարող են ծագել ոչ միայն պայմանագրային, այլ արտապայմանագրային բնույթի հարաբերությունների հիման վրա:

² Տես Օ. Շ. Կոփֆե, Обязательственное право, М., 1975, էջ 14:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ³ Այսպիսին, ըստ Օ. Ս. Իոֆֆեի, անհատույց պահատվության պայմանագիրն է, որի երկու իրավաբանական օբյեկտներն են պահատվության առարկան պահատուի կողմից պահառուին հանձնելու պարտականությունը և այն պահատվության ընդունելու վերջինիս պարտականությունը, իսկ նյութական օբյեկտը պահատվության հանձնվող առարկան է:
- ⁴ Այստեղ արդեն որպես օրինակ է ընդունվում առուծախի պայմանագիրը, որտեղ ապրանքը վաճառողի կողմից գնորդին տրամադրելու և դրա դիմաց վաճառողին վճարելու գնորդի պարտականություններին, որոնք հանդիսանում են պայմանագրի իրավաբանական օբյեկտը, համապատասխանում են երկու նյութական օբյեկտներ՝ վաճառվող գույքը և վճարվող դրամը:
- ⁵ Стен М.И.Брагинский, В.В.Витрянский, Договорное право, книга вторая. Договоры о передаче имущества, М., 2006, т.2 8:
- ⁶ Стен Желметдинов Р.М. Гражданско-правовое регулирование концессионных соглашений //Автореферат диссертации.
- ⁷ Վերոնշյալ հեղինակի առաջադրած տեսակետի վերլուծության ընթացքում մենք կոնցեսիայի պայմանագրի օբյեկտ և առարկա հասկացությունները դիտարկում ենք նրա իսկ առաջադրած տեսանկյունից՝ անյուսամենայնիվ համաձայն չլինելով այդ մոտեցման հետ, սակայն ձգտելով խուսափել վերլուծությունն անհարկի բարդացնելուց և եզրույթաբանական խառնաշփոթ առաջացնելուց:
- ⁸ Այսպես՝ կոնցեսիայի կամ կոնցեսիայի պայմանագրի վերաբերյալ նորմեր են առկա ՀՀ օրսփյուն օրենսգրքում, որի 1-ին հոդվածը, սահմանելով օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, ամրագրում է կոնցեսիայի պայմանագրի հիմնական հասկացությունը, ըստ որի՝ վերջինս իրենից ներկայացնում է **ջրային համակարգի կամ դրա մի մասի նկատմամբ օգտագործման իրավունքների փոխանցման գրավոր պայմանագիր**: Հաջորդ իրավական ակտը, որը դրույթներ է պարունակում կոնցեսիայի պայմանագրի մասին «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդ-

յունահանման տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը է, որի 3-րդ հոդվածը և սահմանում է օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները և կոնցեսիոն պայմանագիր է համարվում Հայաստանի Հանրապետության (հանձինս Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի) և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուի միջև կնքված գրավոր համաձայնությունը, որով կարգավորվում են կողմերի՝ օրենքով սահմանված պարտավորությունները (պետք է լիներ իրավունքները և պարտականությունները – Ս.Թ.): «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում նույնպես մեկ հոդվածով անդրադարձ է կատարված նշված պայմանագրին և ամրագրված է, որ օտարերկրյա ներդրողներին **վերարտադրվող և չվերարտադրվող բնական ռեսուրսների շահագործման իրավունքի** վերապահումն իրականացվում է կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա, որոնք կնքվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կամ դրա համար լիազորված պետական այլ մարմնի կողմից կոնցեսիաների մասին Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Մեկ այլ իրավական ակտ, որն ինչ-որ չափով իրականացնում է կոնցեսիոն հարաբերությունների և կոնցեսիոն պայմանագրի իրավական կարգավորում, «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքն է, որը, ի տարբերություն վերոնշյալ իրավական ակտերի, բնորոշում է կոնցեսիոն պայմանագիրը այլ ասպեկտով, ինչը պայմանավորված է նրանով, որ կոնցեսիոն պայմանագրի առարկա կարող են լինել ինչպես ընդերքը, այնպես էլ այլ գույք, օրինակ՝ օդանավակայանները՝ հարակից ենթակառուցվածքով: Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն՝ սահմանվում է, որ տվյալ օրենքի իմաստով կոնցեսիոն պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի, ինչպես նաև ավիացիայի ոլորտում գործող պետական ոչ առևտրային կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կոնցեսիոններների միջև կնքված պայմանագիրն է կամ դրանում կատարված փոփո-

խութիւնները: Իհարկէ այս սահմանումները ոչ միայն չեն արտացոլում կոնցեսիայի պայմանագրի էությունն անգամ իրենց կարգավորման շրջանակներում ընդգրկված ասպեկտում, այլև հագեցած են բազում հակասություններով և կրկնաբանություններով, սակայն դրանց մանրամասն վերլուծությունն առանձին ուսումնասիրության նյութ է:

- ⁹ Տե՛ս Савинова О.Н., Автореф. Дисс. “концессионные соглашения: правовое регулирование”, М., 2006, էջ 7:
- ¹⁰ Տե՛ս Сосна С.А., Концессионное соглашение: теория и практика, 2002, М., էջ 183:
- ¹¹ Տե՛ս М.И.Брагинский, В.В.Витрянский, Договорное право, книга вторая. Договоры о передаче имущества, М., 2006, էջ 6:
- ¹² Տե՛ս նույն տեղը:
- ¹³ Իսկ եթե որպէս կոնցեսիոն պայմանագրի առարկա դիտենք պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը կամ այդ գույքի տիրապետման և օգտագործման իրավունքները, որոնք որոշակի գործունեություն ծավալելու նպատակով կոնցեսիոնտի կողմից փոխանցվում են կոնցեսիոներին, ապա կարող ենք ասել, որ այն ևս դասվում է գույքի փոխանցման պայմանագրերի թվին:
- ¹⁴ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. ՀՀ քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Եր., 2009թ, էջ 438:
- ¹⁵ Տե՛ս Гражданское право, часть первая, под ред. А.Г.Калпина, А.И.Масляева, М, 1997, էջ 50:
- ¹⁶ Տե՛ս Сосна С.А., Концессионное соглашение: теория и практика, 2002, М., էջ 59:
- ¹⁷ Տե՛ս Гражданское, торговое и семейное право капиталистических стран, М., 1986, էջ 37:
- ¹⁸ Տե՛ս Новицкий И.Б. Основы римского права, М., 1961, էջ 91:
- ¹⁹ Էմֆիտելոսը հռոմեական իրավունքին հայտնի ինստիտուտ է, որը ենթադրում է պետական սեփականություն հանդիսացող հողերի մասնավոր անձանց տրամադրումը՝ ժառանգական վարձակալության ինստիտուտի նմանությամբ: Այն մշտական վարձակալություն է, որը գույքի նկատմամբ տրամադրում է հատուկ հայցով պաշտպանվող որոշակի իրավունք: Տե՛ս Римское частное право, под ред. Новицкого И.Б., М., 1996, էջ 215, 217:
- ²⁰ Տե՛ս Штерер В.Н., Система промышленного права СССР, М., 1925, էջ 68, 71:
- ²¹ Նշենք, որ ՌԴ «Կոնցեսիոն համաձայնագրերի մասին» օրենքում օգտագործվում է հենց պայմանագրի օբյեկտ և ոչ թե պայմանագրի առարկա հասկացությունը:
- ²² Տե՛ս Лисица В.Н., О проекте ФЗ “О концессионных договорах, заключаемых с российскими и иностранными инвесторами.” // Законодательство и экономика, 2002, N 9, էջ 60:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ**ПРОБЛЕМА РАЗГРАНИЧЕНИЯ ПРЕДМЕТА И ОБЪЕКТА
КОНЦЕССИОННОГО ДОГОВОРА****Сона ТЕВАНЯН***Аспирантка кафедры
гражданского права ЕГУ*

Для определения концессионного договора и выявления его особенностей очень важно установить, что является его предметом и объектом, а также, имеет ли смысл разграничивать эти два понятия. Этот вопрос считается спорным в юридической литературе, и имеет не только теоретическую, но и практическую важность. В данной статье исследуются вышеупомянутые вопросы, а также разные научные доктрины, связанные с этой проблематикой. В результате

всех исследований делается вывод, что разграничение предмета и объекта договора в принципе, и концессионного договора в частности, имеет принципиальное значение для классификации договора. Мы пришли к выводу, что объектом концессионного договора являются действия контрагентов, направленные на воздействие на предмет договора, а предметом является недвижимое имущество, которое в свою очередь является исключительно государственной собственностью, либо видом государственной монопольной деятельности, и не может быть полностью отчуждено или делигировано частному субъекту, в связи с его высокой значимостью в сфере удовлетворения общественных интересов.

ՄԻԳՐԱՆՑ ԱՇԽԱՏՈՂԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Մանե ԿԱՐԱՊԵՏՅԱԼ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի հայցորդ

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը չի օգտագործում «միգրանտ աշխատող» եզրույթը, սակայն այն լայնորեն կիրառվում է ՀՀ վավերացրած մի շարք միջազգային իրավական պայմանագրերում, որոնք ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով ներպետական օրենսդրության բաղկացուցիչ մասն են:

Ընդ որում, ուշագրավ է այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերը չեն սահմանում օտարերկրացու համար իրավունքներ ու պարտականություններ և օգտագործում են միայն միգրանտ տերմինը, իսկ ներպետական օրենսդրության մոտեցումը ճիշտ հակառակն է. այն չի օգտագործում միգրանտ տերմինը, փոխարենը կարգավորում է օտարերկրացի աշխատողների հետ ծագող հարաբերությունները:

Այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում հստակ տարբերակել օտարերկրացի աշխատողին միգրանտ աշխատողից, և եթե օտարերկրացի աշխատողի բնորոշման հարցում իրավաբան գիտնականների շրջանում տարակարծություններ չկան, ապա նույնը չի կարելի ասել միգրանտ աշխատողի մասին:

«Միգրանտ աշխատող» կատեգորիայի բնորոշումը այսօր միջազգային մասնավոր իրավունքի դոկտրինայի խնդրահարույց հարցերից մեկն է: Խնդիրը այն է, որ «միգրանտ աշխատող» եզրույթի մեկնաբանման հարցում իրավաբան գիտնականների կարծիքները այնքան տարբեր են, հաճախ՝ նաև հակասական, որ նույնիսկ դժվար է խմբավորել:

Դեռ ավելին, «միգրանտ աշխատող»

կատեգորիայի միատեսակ գիտական բնորոշում ձևավորելու համար հնարավոր չէ անգամ հույս դնել միջազգային պայմանագրերում առկա բնորոշումների վրա, քանի որ վերջիններս նույնպես տարբեր ձևով են բնութագրում միգրանտ աշխատողներին:

Թեև միջազգային պայմանագրերից գրեթե յուրաքանչյուրը սահմանում է, թե իր կարգավորման շրջանակներում ովքեր են համարվում միգրանտ աշխատողներ, այնուամենայնիվ, կարծում ենք, առավել նպատակահարմար կլիներ գոնե դոկտրինալ տեսանկյունից մշակել միասնական մոտեցում «միգրանտ աշխատող» կատեգորիայի նկատմամբ, որը հիմք կհանդիսանար թե՛ իրավական նորմերի մեկնաբանման և թե՛ իրավաստեղծ գործունեության իրականացման տեսանկյունից:

Միգրանտ աշխատողների իրավական կարգավիճակին վերաբերող միջազգային պայմանագրեր կնքվել են ՄԱԿ-ի, ԱՄԿ-ի և Եվրախորհրդի շրջանակներում:

1. Այսպես՝ **Ձբաղվածության համար միգրացիայի մասին** 1949թ. ընդունված ԱՄԿ 97-րդ կոնվենցիան միգրանտ աշխատող է դիտում այն անձին, ով ոչ իր հաշվին գաղթում է մի երկրից մեկ այլ երկիր զբաղվածության նպատակով (հոդված 11):

Կոնվենցիան աշխատանքային միգրանտ չի համարում սահմանային աշխատողներին, կարճ ժամկետով երկիր ժամանած դերասաններին և ազատ մասնագիտությունների տեր անձանց, ծովայիններին:

Միգրանտ աշխատողի բնորոշման այս մոտեցումը, մեր կարծիքով, ունիվերսալ սահմանման առումով թերի է, քանի որ այն ըստ էության միգրանտ աշխատողի կարգավիճակը կապում է միայն այլ անձանց միջոցներով գաղթելու հանգամանքի հետ, իսկ եթե անձը այլ երկրում աշխատելու նպատակով, սակայն իր միջոցների հաշվին, հեռանում է իր քաղաքացիության երկ-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րից, նա միգրանտ չի համարվում:

Բացի այդ, այս կոնվենցիան կարևորում է աշխատելու նպատակով այլ երկիր ժամանած անձանց միգրանտ աշխատող համարելու նոտեցումը, որը, մեր կարծիքով, գուցե ընդունելի է տվյալ կոնվենցիայի կարգավորման շրջանակներում, սակայն որպես «միգրանտ աշխատողի» ընդհանուր բնորոշում կիրառելի չէ նախ այն պատճառով, որ այլ երկիր ժամանելու իրական նպատակը անձը կարող է թաքցնել, և բացի այդ՝ ո՛չ սոցիալական և ո՛չ էլ իրավական առումով արդարացի չի լինի տարբերակում դնել այլ երկրում մշտապես կամ ժամանակավորապես բնակվող աշխատող անձանց միջև միայն այն պատճառաբանվածությամբ, որ նրանցից մեկը ի սկզբանե հեռացել է իր ծննդավայրից աշխատելու նպատակով, իսկ մյուսը՝ ոչ, սակայն փաստացի նրանք երկուսն էլ նույն կարգավիճակում են հայտնվել:

2. Աշխատավոր միգրանտների մասին երկրորդ կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ԱՄԿ շրջանակներում, **1975թ. ստորագրված 143 կոնվենցիան է Միգրացիայի ոլորտում չարաչափումների և աշխատավոր միգրանտների հավասար հնարավորությունների և վերաբերմունքի մասին**: Այս կոնվենցիայի 11-րդ հոդվածում աշխատանքային միգրանտները բնորոշվում են հետևյալ կերպ. «Աշխատանքային միգրանտ է համարվում այն անձը, որը ոչ իր հաշվին մեկ երկրից տեղափոխվում է մեկ այլ երկիր ցանկացած աշխատանք ստանալու նպատակով և ներառում է ցանկացած անձի, որը մուտք է գործել երկիր որպես աշխատանքային միգրանտ»:

Նշված կոնվենցիան նույնպես սահմանային աշխատողներին, կարճ ժամկետով երկիր ժամանած դերասաններին և ազատ մասնագիտությունների տեր անձանց, ծովայիններին աշխատանքային միգրանտ չի համարում՝ այս խումբը համալրելով նաև կրթության նպատակով ժամանած անձան-

ցով և գործատուի հրավերով որոշակի ժամանակահատվածով երկիր ժամանած կոնկրետ գործառույթ կատարողներին, որոնք գործառույթն ավարտելուն պես պարտավոր են դուրս գալ երկրից:

Ինչպես տեսնում ենք, այս կոնվենցիան միգրանտ աշխատողներին բնորոշում է իր նախորդի նման՝ նորից կիրառելով ժամանման նպատակը և «ոչ իր հաշվին ժամանելու» ինստիտուտը և անգամ գրեթե նույն սահմանափակումները: Ուստի այն նույնպես, մեր համոզմամբ, թերի է միգրանտ աշխատողի ունիվերսալ բնորոշում համարվելու համար:

3. Միննույն ժամանակ, «միգրանտ աշխատողներին» բավականին նեղ բնորոշում է տրվում Եվրոպայի խորհրդի շրջանակներում: Մասնավորապես, **Եվրոպական սոցիալական խարտիան և Միգրանտ աշխատողների իրավական կարգավիճակի մասին Եվրոպական կոնվենցիան**¹ միգրանտ աշխատողին բնորոշում են որպես պայմանագրի մասնակից պետության քաղաքացի, որը միաժամանակ վճարովի աշխատանք է կատարում մեկ այլ պայմանագրի մասնակից կողմի համար: Երկու կոնվենցիաներն էլ բաց են ստորագրման միայն Եվրոպայի խորհրդի անդամ երկրների համար՝ այդպիսով պաշտպանելով միայն Եվրոպացի միգրանտ աշխատողներին:

Միգրանտ աշխատողների իրավական կարգավիճակի մասին Եվրոպական կոնվենցիան նույնպես անդրադառնում է միայն «Եվրոպական միգրանտի»-ն՝ բնորոշելով այն հետևյալ կերպ. «Սույն կոնվենցիայի իմաստով միգրանտ աշխատող է համարվում կողմի քաղաքացին, որը ստացել է մյուս կողմի տարածքում ապրելու և վճարովի աշխատանքով զբաղվելու թույլտվություն»: Ընդ որում, այս կոնվենցիայով միգրանտ չեն համարվում սահմանային աշխատանքներ կատարող անձինք, դերասանները և ազատ մասնագիտությունների տեր անձինք, սեզոնային աշխատանք կատարող անձինք, կրթություն ստացող անձինք և այլն:

4. ԱՊՀ շրջանակներում ընդունված **Աշ-**

խատանքային միգրացիայի և աշխատավոր միգրանտների սոցիալական պաշտպանության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի² շրջանակներում «աշխատավոր միգրանտ» է համարվում մեկնման կողմի տարածքում մշտապես բնակվող անձը, որն օրինական հիմքով աշխատանքի տեղավորման կողմում զբաղվում է վճարովի գործունեությամբ: Այս բնորոշումը նույնպես բավականին լայն է և ներառում է նաև քաղաքացիական պայմանագրերի շրջանակում աշխատանքներ կատարող անձանց:

5. ԱՊՀ շրջանակներում ընդունվել է ևս մեկ միջազգային պայմանագիր, որը ՀՀ վավերացրել է միայն 2010 թ. ԱՊՀ աշխատավոր միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավական կարգավիճակի մասին, որի 1-ին հոդվածը աշխատանքային միգրանտ է համարում ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիներին կամ մշտական բնակության իրավունք ունեցող անձանց, որոնք ԱՊՀ անդամ այլ պետության տարածքում կատարում են վճարովի աշխատանք:

Իհարկե, միջազգային պայմանագրերը որևէ եզրույթի մեկնաբանման համընդհանուր մոտեցում չեն առաջարկում, և յուրաքանչյուրը «միգրանտ աշխատող» եզրույթը մեկնաբանում է իր կարգավորման շրջանակներում, սակայն բոլոր դեպքերում նրանցից յուրաքանչյուրը յուրովի իր ազդեցությունն է թողնում այս ինստիտուտի տեսական հասկացության ձևավորման վրա:

Օրինակ, ինչպես տեսնում ենք, ներկայացված միջազգային իրավական նորմերը տարբեր ձևով են բնորոշում միգրանտ աշխատողին, որոշ դեպքերում՝ ավելի լայն կամ նեղ, միգրանտ աշխատողի բնորոշումը կապելով մի շարք արտաքին գործոնների հետ՝ անգամ այլ երկիր ժամանելու համար միջոցների ծախսման հետ, սակայն բոլոր այս նորմերի համար ընդհանուր է այն, որ միգրանտ աշխատող է համարվում այլ պետության տարածքում մշտապես կամ ժամանակավորապես վճարովի աշխատանք կատարող անձը: Միջազգային

իրավական նորմերի տեսանկյունից միգրանտ աշխատող չեն հանդիսանում սահմանային աշխատողները և ազատ մասնագիտությունների տեր անձինք, որոնք կարճ ժամանակով³ աշխատանք են կատարում այլ երկրի տարածքում: Հենց այս ելակետներն էլ, կարծում ենք, հիմք կարող է հանդիսանալ միգրանտ աշխատողի ընդհանուր բնորոշումը սահմանելու համար:

Միջազգային պայմանագրերում ուշադրության արժանի հաջորդ սկզբունքը քաղաքացիական պայմանագրով ծառայություն մատուցող անձին միգրանտ աշխատող համարելն է, որին, ինչպես ստորև կներկայացնենք, հարում են նաև շատ իրավաբան գիտնականներ:

Բավականին հետաքրքիր են աշխատանքային միգրանտին բնորոշել իրավաբան գիտնականները:

Գրականության մեջ աշխատանքային միգրանտին բնորոշելիս քննարկվում են հիմնականում հետևյալ չափանիշները՝

1. արդյո՞ք աշխատանքային միգրանտ են համարվում նաև միգրանտի ընտանիքի անդամները:

Այս մոտեցման հիմնական կողմնակիցն է ռուս իրավաբան Յու. Վ. Ժիլցովան, ով առաջարկում է աշխատանքային միգրանտ համարել այն անձին և նրա ընտանիքի անդամներին, որոնք վճարովի աշխատանք են կատարում իրենց մշտական բնակության վայր չհանդիսացող երկրում⁴:

Թերևս այս մոտեցման հետ համաձայնվել չենք կարող այն առումով, որ աշխատանքային միգրանտի ընտանիքի անդամները չեն կարող նույնպես համարվել աշխատանքային միգրանտ, եթե նրանք չեն կատարում վճարովի աշխատանք: Բացի այդ, բոլոր դեպքերում աշխատանքային միգրանտի բնորոշման համար կարևոր չափանիշ են ոչ թե մշտական բնակության վայրի երկրից դուրս վճարովի աշխատանք կատարելը, այլ քաղաքացիության երկրից դուրս աշխատանք կատարելը, քանի որ մշտական բնակությունը ժամանակավոր կատեգորիա է, և անձը ոչ միայն կարող է մշտապես չբնակվել որևէ երկրում, այլ նաև պարբերաբար փոխել իր մշտական բնա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կության վայրը: Այս տեսանկյունից մասամբ կիսում ենք Բ.Ա. Ասրիյանի այն նկատառում, որ միգրանտի ընտանիքի անդամները գաղթում են նրա հետ ոչ թե աշխատելու նպատակով, այլ ընտանիքը պահպանելու համար, ուստի նրանց կարգավիճակը չի կարող նույնանալ միգրանտ աշխատողի կարգավիճակի հետ⁶: Միևնույն ժամանակ կարծում ենք՝ միգրանտի և նրա ընտանիքի անդամների կարգավիճակը նույնանում է այն պահից, երբ նրանք նույնպես սկսում են կատարել վճարովի աշխատանք՝ աշխատանքային պայմանագրի կամ այլ համարժեք փաստաթղթի հիման վրա:

2. Արդյո՞ք աշխատանքային միգրանտ են համարում միայն ոչ իրենց հաշվին գաղթած անձինք:

Այս մոտեցումն ընդունելի է համարում Ի.Վ. Գրիգորևը, որն առաջարկում է աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների բնորոշման հետևյալ չափանիշները՝ օրինականությունը, աշխատավոր միգրանտների կողմից վճարովի գործունեություն ծավալելը, այդ գործունեությունը որպես կանոն պայմանագրի հիման վրա կատարելը, ժամանակավոր բնույթը, կամավորությունը, գործատուի միջոցների հաշվին աշխատավայր ժամանելը:

Այս գործոնները ընդհանրացնելով՝ հեղինակը աշխատանքային միգրանտ է համարում այն անձին, որը օրինական հիմքով աշխատել, աշխատում կամ աշխատելու է այն պետության տարածքում, որի քաղաքացիությունը չունի, և որի ժամանումը վճարովի գործունեության կատարման երկիր կազմակերպվում է գործատուի միջոցների հաշվին⁶:

Արդեն նշել ենք, որ միգրանտ աշխատողի բնորոշման հարցում գործատուի միջոցների հաշվին ժամանելու փաստը կարևորելու մոտեցումը ընդունելի չենք համարում, թեև չենք կարող ժխտել, որ այն ունի իր տրամաբանությունը: Գործատուի

միջոցներով գաղթած անձանց միգրանտ աշխատող համարելու դեպքում մենք բնականաբար առնչվում ենք այնպիսի ինստիտուտի հետ, ինչպիսին է «որակյալ կամ մասնագիտական միգրացիան»: Նման պայմաններում անհարկի նեղացվում է միգրանտ աշխատողների շրջանակը, և որպես կանոն աշխատանքային միգրանտ է համարվում միայն բարձր որակավորում կամ որակյալ մասնագետ համարվող անձը, քանի որ բանվորական աշխատուժ վարձելու համար, եթե անգամ համապատասխան աշխատանքը տեղացիների համար հետաքրքրություն չի հարուցում, միևնույն է, գործատուն որպես կանոն չի դիմում այլ պետություններից աշխատող ընտրելու բարդ և ծախսատար քայլին. դրա համար քիչ չեն նաև տվյալ երկրում արդեն իսկ բնակություն հաստատած օտարերկրացիները:

3. Արդյո՞ք աշխատանքային միգրանտ են համարվում քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանք կատարող անձինք:

Այս մոտեցումն ընդունելի են համարում նաև գիտնականներ Ն. Գլադկովը և Յու. Գեֆտերը, որոնց կարծիքով, աշխատանքային միգրանտ պետք է համարել այն անձին, որը ոչ իր քաղաքացիության երկրում զբաղվում է վճարովի աշխատանքով՝ անկախ այն հանգամանքից, այդ աշխատանքը կատարում է աշխատանքային⁶, թե՞ քաղաքացիական պայմանագրի հիման վրա: Նրանք առաջարկում են աշխատանքային միգրանտին բնորոշել որպես մի անձի, որը օտարերկրյա պետության քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ է, որի մշտական բնակության վայրը օտարերկրյա պետությունում է, և որը գաղթում է այլ երկիր աշխատելու նպատակով՝ նախքան ժամանելը կնքելով աշխատանքներ կատարելու պայմանագիր՝ ներառյալ քաղաքացիաիրավական, կամ որը կատարում է վճարովի աշխատանք ընդունող երկրում⁷:

Նույն մոտեցմանն է հարում նաև Ա. Կորտալը, որը, ելնելով ՌԴ իրավական կարգավորումից, աշխատանքային միգրանտներին և օտարերկրացի աշխատողներին

նույնացնում է՝ առաջարկելով նրանց բնորոշման հետևյալ տարբերակը. «Օտարերկրացի աշխատողը օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն է, որը օրինական հիմքով զբաղվում է վճարովի գործունեությամբ աշխատանքային կամ քաղաքացիական պայմանագրի հիման վրա»⁸:

Քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող, ծառայություն մատուցող անձին, կարծում ենք, «միգրանտ աշխատող» համարել չի կարելի՝ հաշվի առնելով այն հսկայական տարբերությունները, որոնք առկա են աշխատանքային և քաղաքացիական հարաբերությունների միջև: Նման մոտեցման դեպքում անհրաժեշտություն կառաջանա աշխատանքային իրավունքին հատուկ կոմպլեքսային մեթոդը կիրառել քաղաքացիաիրավական համաբերություններում, ինչը աշխատանքներ կատարելու մասով կմիաձուլի աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերը, որն իր հերթին անընդունելի է, քանի որ քաղաքացիական իրավունքում կարևորվում է աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքային պայմանագրում՝ աշխատանքի գործընթացը:

Միևնույն ժամանակ բավականին ընդհանրական է բնորոշում միգրանտ աշխատողին Տ. Յա. Խաբրիևան, որն առաջարկում է միգրանտի հետևյալ ունիվերսալ բնորոշումը. «Միգրանտ կարող է համարվել այն անձը, որը կատարում է պետական սահմանների հատմամբ տեղափոխություն՝ նպատակ ունենալով մշտապես կամ ժամանակավորապես փոխել իր մշտական բնակության վայրը և ինչի շնորհիվ ստանում է հատուկ իրավական կարգավիճակ»⁹:

Տ. Յա. Խաբրիևայի բնորոշումը, մեր կարծիքով, առավել ընդունելի է. միայն այս բնորոշման տեսանկյունից է կարծես միգրանտ աշխատող համարվում նաև այն անձը, ով վերադառնում է իր ծնված երկիր: Օրինակ, Հայաստանի Հանրապետության քաղաքացին ժամանակավոր բնակության է մեկնում Ռուսաստանի Դաշնություն, այն-

տեղ ստանում է հատուկ կարգավիճակ և համարվում աշխատանքային միգրանտ, հետագայում նա վերադառնում է Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության: Ստացվում է, որ իր ծննդավայրում և քաղաքացիության երկրում նա այս բնորոշման տեսանկյունից նույնպես կհամարվի միգրանտ: Ուստի բոլոր դեպքերում, կարծում ենք, քաղաքացիության և ծագման հանգամանքն անհրաժեշտ է կարևորել միգրանտ աշխատողի բնորոշման հարցում:

Վերոգրյալը հաշվի առնելով, կարծում ենք՝ աշխատանքային միգրանտի բնորոշման համար կարևորվում են հետևյալ գործոնները՝

1. Անձը միգրանտ կարող է համարվել միայն այն դեպքում, եթե իր աշխատանքի կատարման երկիրը և քաղաքացիության երկիրը տարբեր են, օրինակ՝ ՌԴ քաղաքացին չի կարող ՌԴ-ում համարվել միգրանտ, եթե անգամ իր արողջ կյանքն անցկացրել է արտասահմանում և չի տիրապետում ռուսերենին:

2. Միգրանտ համարվելու համար անհրաժեշտ է, որ անձը փոխի իր միջավայրը՝ հատելով պետական սահման: Օրինակ, Հայաստանում ծնված և մեծացած ԱՄՆ քաղաքացին, որը երբևիցե չի եղել իր քաղաքացիության երկրում, չի կարող ներառվել «միգրանտ» կատեգորիայի մեջ, քանի որ չի հատել պետական սահմանը և չի փոխել իր սոցիալական միջավայրը: Նա ընդամենը կներառվի օտարերկրացի աշխատող խմբում:

Այս առումով միանգամայն կիսում ենք Լ. Ռիբակովսկու այն կարծիքը, որ միգրացիան ներառում է պետական սահմանների ընդգրկմամբ գրեթե բոլոր տեղաշարժները, այդ թվում՝ աշխատանքային կարճատև այցերը, տուրիստական ճանապարհորդությունները և սահմանային աշխատանքները¹⁰:

3. Միգրանտ աշխատող համարվելու համար անհրաժեշտ է, որ անձը կնքի աշխատանքային պայմանագիր, ընդ որում՝ էական չէ՝ նա իր ծագման երկրում է կնքել

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

այդ պայմանագիրը, թե ընդունող երկիր ժամանելուց մի քանի ամիս անց: Ընդ որում՝ նույն տրամաբանությամբ էլ միգրանտ աշխատողի ընտանիքի անդամները կարող են համարվել աշխատանքային միգրանտ այն ժամանակ, երբ ընդունող երկրում կկնքեն աշխատանքային պայմանագիր: Կարծում ենք՝ ճիշտ չէ միգրանտ աշխատող համարել նաև այն օտարերկրացիներին, որոնք պոտենցիալ աշխատող են, օրինակ՝ ունեն աշխատանքի ընդունման հրավեր և այլն, քանի որ բոլոր դեպքերում հրավերը գուցե աշխատանքային հարաբերությունների ծագման նախադրյալ է, սակայն անձը աշխատողի կարգավիճակ ստանում է միայն աշխատանքային պայմանագրի կնքման կամ այլ փաստաթղթի ստորագրման պահից: Հակառակ տրամաբանության դեպքում հրավեր ստացած օտարերկրացին կհամարվի միգրանտ աշխատող դեռ մինչև աշխատողի կարգավի-

ճակ ձեռք բերելը:

Միևնույն ժամանակ, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ծառայություն մատուցող անձանց մենք աշխատանքային միգրանտ չենք համարում, քանի որ քաղաքացիական և աշխատանքային իրավունքի տարանջատման պայմաններում, ինչպես վերը նշել ենք, իրատեսական չենք համարում նույն կարգավիճակի սահմանումը միգրանտ աշխատողի և միգրանտ ծառայություն մատուցողի համար:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք՝ միգրանտ աշխատողին կարելի է բնորոշել հետևյալ կերպ. **Միգրանտ աշխատող է համարվում աշխատելու կամ այլ նպատակով օտարերկրյա պետությունից աշխատանք կատարելու համար պետություն ժամանած և փաստացի աշխատանքային պայմանագրի (այլ համարժեք փաստաթղթի) հիման վրա աշխատանք կատարող օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը:**

Միգրանտ աշխատող չեն համարվում սահմանային աշխատողները:

- ¹ Կոնվենցիան 2009 թ. սեպտեմբերի 18-ի դրությամբ ստորագրել է 15 պետություն: Հայաստանը այս կոնվենցիան չի ստորագրել:
- ² Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թ. փետրվարի 26-ից:
- ³ Կարճ ժամանակով այլ երկրում աշխատող դերասաններին միգրանտ չհամարելու մոտեցումը, կարծում ենք, վիճելի է, քանի որ նրանք կարող է ի սկզբանե նպատակ ունենան կարճ ժամանակով աշխատել, որից հետո պայմանագրի ժամկետը պարբերաբար երկարացվի: Այս դեպքում կարծես հնարավոր չի լինում որոշել, թե որ պահից են նրանք վերածվում միգրանտ աշխատողի կամ, առհասարակ, ձեռք բերում են միգրանտ աշխատողի կարգավիճակ, թե՞ ոչ:
- ⁴ Տե՛ս Жильцова Ю.В. Правовое регулирование трудовых отношений работников-мигрантов. Автореферат дис. ... к.ю.н. Екатеринбург, 2002 էջ 14-16:
- ⁵ Տե՛ս Асриян Б.А. Социальные и трудовые

права мигрантов в Российской Федерации// Дис. ... к.ю.н. 2004, էջ 37-48:

- ⁶ Տե՛ս И.В. Григорьев. Социальное обеспечение трудящихся-мигрантов: Автореферат диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Москва, 2006, էջ 6:
- ⁷ Տե՛ս Н. Гладков. Ю. Гефтер. Различия понятий иностранный работник и трудящийся-мигрант. Кадровик. Трудовое право кадровика. 2008 N 1:
- ⁸ Տե՛ս Коротаяев А.С. Правовое регулирование труда иностранных работников В Российской Федерации. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Москва, 2008, էջ 26:
- ⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 80:
- ¹⁰ Տե՛ս Ионцев В.А., Проблемы утечки умов в России/методологические аспекты изучения// Вестник МГУ. М., 1996, С 45:

ВОКРУГ ВОПРОСА О ПРАВОВОЙ ХАРАКТЕРИСТИКЕ СОТРУДНИКА-МИГРАНТА

Мане КАРАПЕТЯН

*Соискатель кафедры
гражданского права ЕГУ*

В рамках статьи исследовался вопрос правовой характеристики сотрудника-мигранта как вопрос, имеющий важное теоретическое и практическое значение.

Автор представил взгляды и мнения относительно характеристики сотрудников-мигрантов, нашедшие отражение в международных правовых документах, выявив сходства и различия последних.

В статье показаны также существенные различия во взглядах и мнениях авторитетных ученых-юристов относительно правовой характеристики сотрудников-мигрантов.

Рассмотрены следующие факторы,

считающиеся существенными для правовой характеристики сотрудников-мигрантов:

- правомерно ли считать членов семьи сотрудника-мигранта трудовыми мигрантами;

- правомерно ли считать трудовыми мигрантами только лиц, иммигрировавших не за свой счет;

- правомерно ли считать трудовыми мигрантами лиц, устроившихся на работу по гражданско-правовому договору.

В результате исследования автором предлагается характеризовать трудовых мигрантов как иностранцев или не имеющих гражданства лиц, которые прибыли в трудоустроившую страну из зарубежной страны для трудоустройства или иной цели по фактическому трудовому договору (или иного эквивалентного документа).

ՔԱՂԱՔԱՑԻՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐ

МЕТОДОЛОГИЯ ВЫБОРА ПРИМЕНИМОГО ПРАВА СКВОЗЬ ПРИЗМУ ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ ЦЕЛЕЙ И ЗАДАЧ КОЛЛИЗИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ

Марианна КАЛАШЯН

*Соискатель Кафедры гражданского и
гражданско-процессуального права
Российско-Армянского (Славянского)
университета*

Определение применимого права всегда являлось ключевой проблемой международного частного права. Можно с уверенностью сказать, что сфера данной отрасли является одним из тех феноменов права, выработка однозначных решений и подходов к которым является делом нередко вызывающим довольно пессимистические убеждения.

Разногласия относительно коллизионных правил, в частности обязательств из договоров, в доктрине были чрезвычайно существенны и велики. В доказательство сказанного следует привести мнение, высказанное германским профессором Хр. фон Баром. Считая несколько неопределенным мнение, в силу которого установление общего принципа обязательственного коллизионного права невозможно, Хр. фон Бар все же признает законодательную формулировку такого принципа делом исключительной трудности и даже высказывает следующее предположение: не лучше ли вовсе от этой формулировки отказаться?¹

В русской литературе пессимистическую позицию занимал Ф.Ф. Мартенс, считавший, что нет возможности найти

какой-либо один закон, на основании которого разрешались бы все вопросы обязательственного коллизионного права².

Однако, данные позиции, думается, являются лишь показателями уровня достаточной сложности в процессе отыскания системы определения применимого к договорным обязательствам права. Имеется в виду, что отказ от отыскания коллизионных правил в данной сфере привел бы к хаотичной ситуации в международном хозяйственном обороте.

Не задаваясь целью привести все варианты существующих теорий, рассмотрим только наиболее распространенные и определяющие из них на протяжении процесса становления коллизионного метода регулирования.

Среди первоначальных исследовательских проблем коллизионного права следует отметить представителей школы статутариев, и в особенности, ее родоначальника — Бартола де Сассоферрато. Весьма существенным новшеством в доктрине Бартола явились попытки установить принципы для разрешения конфликтных вопросов, другими словами, попытки отрешиться от сплошной казуистики³. Статутарии классифицировали статуты на реальные, которые действовали только на территории принявшего их государства, и персональные, которые всегда следовали за лицом, где бы он не находился. Статутарии полагали, что эта классификация способна решить

все потенциально возможные конфликты, поскольку все статуты — и национальные, и иностранные — принадлежат к одной из двух категорий, и, таким образом, исключается всякий возможный между ними конфликт⁴. Таким образом, это означало впервые постановку вопроса разработки методологии в деле разрешения коллизий.

По справедливому мнению армянского ученого А.М. Айкянца, обобщение концепций и теорий международного частного права позволяет утверждать, что все они касаются двух основополагающих принципов - территориального и персонального (личного) законов. Как отмечает ученый, историческое развитие международного частного права была историей сочетания и разумной гармонизации этих двух принципов⁵.

В дальнейшем, с возрастанием значения теории государственного суверенитета, исследователи коллизионного права ставили и пытались дать ответы на следующие основные вопросы:

- почему суды должны применять иностранное право наряду с действием принципа территориального суверенитета;
- каковым должен быть метод определения применимого права.

Поставленные вопросы нашли свое обоснование в основных доктринальных подходах для применения иностранного права.

Предлагалось объяснить действие норм иностранного права исходя из принципа или доктрины **международной вежливости (comitas gentium)**. Суть данного подхода заключается в том, что применение норм иностранного права необходимо, потому что обратное может рассматриваться как выражение пренебрежения к иностранному суверенитету, как отсутствие “международной вежливости” в отношении иностранного

государства⁶. Как утверждал У. Губер в своей монографии по коллизионному праву (“De conflictu Legum”, 1689 г.), признание действия иностранных законов есть лишь проявление принципа международной вежливости.

Между тем, с середины XIX века данная доктрина воспринималась как относящаяся к уже пройденному этапу развития цивилизованных государств. Именно со второй половиной XIX в. связывается появление новой доктрины — **доктрины международно-правовой общности**. Выразителем данного учения международного частного права явился великий ученый Фридрих Карл фон Савиньи. Он исходил из того общего положения, что “целесообразно”, чтобы по делам, содержащим иностранный элемент, “одни и те же отношения могли ожидать одинакового решения, независимо от того, в каком государстве будет вынесено решение”⁷. Достижение данной цели Ф.К. фон Савиньи видел в существовании международной общности народов, поддерживающих отношения друг с другом. Таким образом, Ф.К. фон Савиньи исходит не из территориальности отдельных правопорядков, а из международно-правовой общности этих правопорядков.

Доктрина “международной общности” Ф.К. фон Савиньи не нашла своего отражения в Германском Гражданском Уложении 1846 г. не потому, что авторы уложения нашли эту концепцию нежизнеспособной, а потому, что в конце XIX в. Германия уже мечтала о всемирном господстве, и широкое применение иностранного права не соответствовало ее глобальной настроенности. Тем не менее, универсализм Ф.К. фон Савиньи имел многочисленных последователей, которые преследовали цель создания всеобщей системы коллизионных норм. Концепция Ф.К. фон Савиньи в дальней-

ԲԱԼԱԹԵՐԱԼԻԶՄ ԵՎ ԻՆԻԼԱԹԵՐԱԼԻԶՄ

шем выступила в качестве концептуальной основы процесса международно-правовой унификации⁸.

Следует выделить еще одну группу теорий, суть которых заключается в применении лишь **внутреннего национального права**. Основополагающие принципы данных учений были выдвинуты К.-Г. Вехтером. Ниже более подробно обратимся к рассмотрению теории примата права страны суда.

Еще одним научным течением, которое пришло на смену статутарной теории в XIX веке, стала национальная теория итальянского исследователя П. Манчини. Согласно учению П. Манчини первостепенное значение для международного частного права имеет национальный закон, а именно закон гражданства лица. Исключением из общего правила действия национального закона является лишь началами публичного порядка. По П. Манчини, применение национального закона лица основывается не на международной вежливости, не на практическом интересе того или иного государства, а на прочном принципе закона гражданства. Следует отметить, что итальянская школа вместе с принципом гражданства, рассматривала еще один принцип — «принцип свободы», который означал свободу договаривающихся сторон выбирать закон, который должен регулировать их договор⁹.

Итак, указанные основные учения, обосновывающие применение иностранного права, позволили сформироваться двум большим системам определения применимого права, антагонизм или комплементарность которых являются предметом научных дискуссий и в наше время.

Этими двумя системами явились **би-**

латерализм (или мультилатерализм) и **унилатерализм**.

Билатерализм, как система определения применимого права, нашел свое теоретическое обоснование в учении Ф. К. фон Савиньи.

В фундаментальном труде «Система современного римского права» получило отражение его учение «о пространственных границах власти правовых норм над правоотношениями» (т. VIII, 1849), которым он предложил совершенно новую теорию коллизионного права, отвергнув статутарную теорию и деление статутов на реальные и персональные¹⁰. Ф.К. фон Савиньи считал, что для определения того, какой из территориальных законов должен быть применен, нужно исследовать природу данного отношения. Концентрируя научное внимание на правоотношениях, Савиньи полагал, что всякая коллизионная проблема сводится к локализации правоотношений в пространстве.

Формирование единых коллизионных правил, в котором ученый видел конечную цель международного частного права, было возможно, как утверждал Ф. К. фон Савиньи, путем установления для каждого правоотношения того закона, к которому данное правоотношение в целом по своей природе относится или под которое подпадает. Для каждого правоотношения необходимо отыскать его основополагающую связь с определенным правопорядком, т.е. найти «центр оседлости правоотношения», так называемый «Sitz».

С этой целью Ф.К. фон Савиньи произвел классификацию международного частного права на категории, которые соответствовали делению в частном праве (наследственное право, обязательственное право — договоры и деликты и др.), а затем с помощью привязок, таких как, domicilio, место заключения

сделки и других, определил оседлость каждого правоотношения. В результате Ф.К. фон Савиньи получил систему двусторонних коллизионных норм, которые были предназначены для регулирования почти всех категорий правоотношений. Причем, руководящую роль в определении оседлости Ф.К. фон Савиньи отдал воле сторон, которые могли свободно подчинить правоотношение определенному правопорядку. Воля сторон здесь приобретает роль основного фактора для разрешения коллизий. В договорных обязательствах при отсутствии воли сторон следовало исходить из привязки места исполнения обязательств.

Рассмотренная концепция представляет собой систему, в которой признается равенство различных правопорядков. Ф.К. фон Савиньи не признавал широкого применения права страны суда, утверждая, что это является источником несправедливости: ведь применение *lex fori* даст возможность одной стороне зависеть от односторонних действий другой стороны.

Ф.К. фон Савиньи стал основателем системы билатерализма, методология которой была принята за основу международного частного права многих стран. В этой системе иностранное материальное право и *lex fori* признаются равноценными, а определение применимого права осуществляется посредством отсылки к праву, к которому это отношение тяготеет.

Итак, билатеральная система основана на выборе правопорядка, а не отдельной материальной нормы. Не означает ли это “слепой” выбор нормы? Ведь данный подход не позволяет сравнивать материальные нормы различных правопорядков, а лишь указывает на применимый правопорядок, таким образом, и не принимает во внимание материальный результат (*substantive result*) применения

коллизионной нормы.

В вышеуказанном и заключается основной недостаток данного подхода. Положительная роль этой концепции в установлении положения равенства между существующими правопорядками.

Обращаясь к следующей системе, которая именуется в литературе унилатерализм, т.е. односторонний подход к вопросу разрешения коллизий, постараемся рассмотреть его основные негативные и положительные стороны.

Современник Ф.К. фон Савиньи, Карл-Георг фон Вехтер дал концептуальное обоснование унилатерального подхода. По его мнению, международная вежливость или международное публичное право не являются основанием для применения иностранного права. Международная гармония решений также не является таким основанием. И, наконец, интерес иностранного государства в применении его нормы также не имеет определяющего значения, потому что, как правило, в сфере частного права такие интересы не имеют большого значения¹¹. В основе учения К.-Г. фон Вехтера лежит положение, согласно которому суд всегда применяет свое внутреннее право, т.е. устанавливается презумпция в пользу применения *lex fori*¹². Если в действующем внутреннем праве нет прямой отсылки к иностранному закону, то судья должен исходить из общего духа отечественных законов, чтобы решить дело, осложненное иностранным элементом. Если же из смысла и духа отечественного закона нельзя вывести ответ на вопрос о применении иностранного закона, то применяется *lex fori*¹³. К.-Г. фон Вехтер утверждает, что, в случае сомнений относительно применимости к данному случаю чужого или отечественного закона, предпочтение должно всегда отдаваться закону оте-

ԲԱՂԱՔԱՑՆԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐ

чественному.

По мнению Ф.К. фон Савиньи и многих критиков, теория К.-Г. фон Вехтера страдала определенной узостью¹⁴. Как указывает М. Вольф, К.-Г. фон Вехтер полагал, что неполноту норм коллизионного права можно “исцелить” сентенцией о том, что суд должен восполнять пробелы путем применения своего национального закона¹⁵.

Таким образом, унилатеральная система, обоснованная К.-Г. фон Вехтером, представляла собой закрытую систему, в которой применение иностранного права является исключением.

Унилатерализм стал основой учений американских идеологов революции конфликтного права в США — Б. Карри, Д. Каверса и др. Унилатеральная система исходит из того положения, что каждый правопорядок самостоятельно устанавливает действие своих норм в пространстве и по кругу лиц. Если вопрос, являющийся предметом спора, не подпадает под действие материальных норм страны суда, то все правопорядки, которые претендуют на применение своих норм в этом случае, определяются как применимые. Данная ситуация носит название — “универсальный призыв” (по Р. Аго)¹⁶.

Таким образом, в унилатеральной системе происходит переосмысление принципов коллизионного регулирования, которое основано на замене процесса определения применимого законодательства поиском применимой нормы. Унилатеральная система в ее крайнем проявлении не располагает инструментом билатерализма — метода отсылок или привязок. Данная система “работает” непосредственно с материальными нормами, тем самым обеспечи-

вается прямое экстерриториальное действие нормы иностранного права. Значимость унилатерализма заключена в возможности усмотреть в нормах материального права интересы государства в области экономики, защиты слабой стороны.

Отметим, что несмотря на широкую критику унилатерального подхода, невозможно полностью отвергать его применение. Как указывает Ф. Вишер, унилатерализм, как способ определения применимого права, способен к существованию, если он будет дополнен беспристрастным отношением к претендующим на применение материальным нормам различных правопорядков, включая применение норм *lex fori*.

Итак, утверждение классических коллизионных норм во второй половине XIX века означало приверженность к учению Ф.К. фон Савиньи о методе локализации правоотношения. Господствовавшая система была нейтральна по отношению к материальному исходу коллизии — результату выбора применимого права. Коллизионные нормы рассматривались как нормы о нормах, т.е. им была присуждена лишь отсылочная, механистическая роль. Классический коллизионный метод предоставил возможность рассматривать два равноправных в применении к коллизионным вопросам правопорядка — иностранного и отечественного. Данный метод создал основу для сосуществования различных гражданских систем стран мира.

Однако, на наш взгляд, как и все системы, система коллизионного права должна была следовать своему естественному, последовательному развитию. И, следовательно, для разрешения новых проблем на пути своего становления на качественно новый уровень, характер коллизионных норм должен был подвергнуться новой трактовке.

Речь идет о тенденции доктринального изменения роли коллизионных норм от отсылочной к регулятивной. Так, Л.А. Лунц рассматривал коллизионные нормы как нормы, которые не могут быть сведены к юридико-техническим правилам или же к нормам, определяющим компетенцию правовых систем различных государств, так как коллизионная норма вместе с той материально-правовой нормой, к которой она отсылает, образует настоящее правило поведения для участников гражданского оборота¹⁷.

Постепенно коллизионные нормы стали рассматриваться в своем новом амплуа. Исследователи пришли к выводу, что коллизионное право не должно пониматься как некая система абстрактных правил о применении материальных норм, так как в процессе применения таких норм судья обращается к внутренним нормам при квалификации понятий, содержащихся в коллизионной норме, и далее при использовании таких категорий, как публичный порядок, свехимперативные нормы, обратная отсылка, а после выбора применимого права суд рассматривает дело по существу на основании норм той правовой системы, к которой и отослала коллизионная норма.

Итак, когда уже за коллизионным методом была признана регулятивная функция, стали очевидны и актуальны следующие цели: достижение максимальной предсказуемости результата, принятие справедливого решения, исходя из существа спора; учет интересов и оправданных ожиданий сторон.

Регулятивная функция коллизионных норм все больше усиливается, что проявляется не в простой механической отсылке к определенному правопорядку, а в разумном взвешивании претендующих на применение материальных норм¹⁸.

Рассматривая вопрос изменения ви-

дения роли коллизионного метода, целесообразно затронуть проблему достижения справедливости в данной сфере, ведь в широком смысле, именно это является первостепенной задачей и конечной целью регулирования частноправовых споров на международном уровне.

Указанная проблема — одна из дилемм международного частного права, заключающаяся в понимании конечной цели выбора применимого права — справедливости, которая дифференцируется на справедливость в коллизионном праве (*conflicts justice*) и справедливость в материальном праве (*material or substantive justice*)¹⁹. Справедливость в коллизионном праве в течение веков рассматривалась как первостепенная задача и цель коллизионного права, доминируя над *material justice*. Однако материальная справедливость должна рассматриваться в качестве звена коллизионного регулирования. С. Симеонидес считает, что классический подход состоит скорее в выборе подходящего государства, право которого будет применяться, чем в прямом поиске подходящего права, не говоря уже о поиске подходящего результата²⁰.

Таким образом, согласно классической школе коллизионного права именно право подходящего государства и есть подходящее (применимое) право. Основной принцип выбора права, по Г. Кегелю, в том, что справедливость в коллизионном праве имеет первенство перед содержанием норм материального права; определяться должен не наилучший результат применения норм материального права, а наилучший результат, способствующий определению свойственной договору локализации, т.е. определению правового пространства, к которому в наибольшей степени данное правоотношение относится²¹.

Итак, классический коллизионный

ԲԱՂԱՔԱՑՆԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ

подход делает, фактически, пространственный выбор, невзирая на “качество” результата.

Сторонники conflicts justice объясняют это тем, что невозможно установить одно, единое и универсальное понятие “справедливости” для всех стран, ввиду различных интересов, целей и задач, вложенных законодателем в смысл коллизионной нормы в определенный период времени.

Как утверждал Г. Кегель, “международное частное право стремится к пространственно лучшему решению, в то время как материальное право — к существенно (материально) лучшему решению”²².

С точки зрения материальной справедливости (substantive justice) международное частное право должно стремиться к разрешению коллизий с той же целью той же справедливости, какая преследуется в материальном (внутреннем) праве. Как видно, данная точка зрения диаметрально противоположна первой. Если при conflicts justice важна справедливость процесса выбора применимого права, то здесь - справедливость самого результата.

Теория материальной справедливости нашла свое распространение в США, корнями уходя в область философских воззрений Ф. Бэкона, Дж. Локка, Т. Гоббса, Дж. Дьюи, считающих приоритетными средствами постижения истины опыт и индуктивное мышление, т.е. практическая эффективность принимается как критерий истинности. “Истинно все, что полезно”²³.

Данные идеи были трансформированы в область коллизионного регулирования в форме “метода отбора результата” (“result-selective approach”). Наиболее

подробное научное обоснование данный метод получил в работах Р. Лефлара, Дж. Каверса, Б. Карри, В. Кука.

Итак, для достижения справедливости в смысле материального права в свете вышесказанного и формирования методологической базы для выбора применимого права представляется целесообразным некий диалог между существующими методологическими системами выбора применимого права.

В этой связи особый научный интерес вызывает статья современного ученого С. Симеонидеса “Приспособленный унилатерализм как начальная предпосылка в выборе права”²⁴.

Термины унилатерализм или мультилатерализм (или билатерализм) не были восприняты корректно, с тем и их применение оказалось исключаящим друг друга. Как известно, унилатерализм — это подход, при котором страна суда выбирает применимое право, основываясь исключительно на собственных понятиях и предпочтениях, независимо от заявлений другой стороны. А билатерализм со времен обоснования его Ф.К. фон Савиньи, пользуется в общем положительной “репутацией”.

Однако, унилатерализм, при условии его правильного восприятия, может внести свою лепту в дело разрешения коллизий. Унилатерализм и билатерализм являют собой две ветви коллизионного метода (selectivist method). Унилатерализм выбирает на основании соответствующих заявлений каждого правопорядка на применение своего права, в то время, как билатерализм осуществляет свой выбор в зависимости от predetermined критериев (имеются в виду привязки). Билатерализм характеризуется нейтральным отношением к материальному результату выбора права.

Возвращаясь к историческому прош-

лему унилатерализма, С. Симеонидес указывает, что итальянские статутари XII века устанавливали для каждого конкретного статута свою предполагаемую цель, однако, это не давало возможности *inter alia* разрешить те случаи, когда на решение коллизионного вопроса претендовало более одного или же ни одного статута. Когда же была сделана попытка восполнить пробелы статутарной теории, билатеральный подход к разрешению коллизий уже занял главенствующее положение.

Однако, как указывает С. Симеонидес, с середины XX века унилатерализм в определенной форме сумел снова проявить себя. Течение, которое называется нео-унилатерализм, имело своих видных представителей в США. Как указывает С. Симеонидес, подход к унилатеральной системе как исключительно “узкой” (“*parochial*”) несправедлив. Автор предлагает избавиться от того стереотипа, что унилатерализм является антиподом билатерализма, и использовать в коллизионном методе те элементы унилатерализма, которые признанно обладают высоким уровнем точности к результату.

В наши дни в литературе высказывается мнение об использовании “приспособленного унилатерализма”, который по возможности будет выбирать применимое право исходя из изучения материальных норм, а не *a priori*.

Таким образом, автором предлагается достаточно интересная формула, состоящая из сознательной комбинации приспособленного унилатерализма и билатерализма. Эти два подхода не являются взаимоисключающими и несовместимыми, более того, для более конструктивного разрешения коллизий международного частного права будет бесполезно использование своего рода симбиоза унилатерального и билате-

рального подходов, что и представляет собой проявление “*pluralisme des méthodes*”²⁵, характеризующим современное международное частное право.

Обращаясь к системам международного частного права Европы, которая является приверженницей билатеральной системы, следует отметить, что здесь также присутствуют элементы унилатерального подхода. В частности в форме закрепления императивных норм, не говоря уже о волне “сверхимперативных” норм. Например, п. 1 ст. 7 Конвенции о праве, применимом к договорным обязательствам (Римской Конвенции) устанавливает применение императивных норм: “При применении на основании настоящей (Римской — курсив мой К.М.) Конвенции права какой-либо страны может быть признано действие строго императивных норм права другой страны, с которой данная ситуация имеет тесную связь, если по праву этой последней страны такие правила должны были бы применяться вне зависимости от применимого права. При рассмотрении вопроса о возможности применения таких императивных норм, должны приниматься во внимание их существо и цели, а также последствия их применения или неприменения”²⁶.

В заключение следует отметить, что как видно, возможность комплиментарного использования двух данных подходов уже внедрена в международное частное право в виде отдельных институтов. В действительности, несмотря на то, что билатеральный подход и является доминирующим, элементы унилатерализма на сегодняшний день присутствуют практически во всех системах коллизионного права.

На современном этапе преимущественное применение *lex fori* действительно не должно рассматриваться в качестве единственно возможного и обос-

ԲԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ванного варианта, а, при расширении судебного усмотрения, должна ставиться цель достижения максимальной справедливости в деле применения коллизионных норм. Рассмотренные в данной статье теории не могут рассматриваться как изжившие себя. Все новые теории по большому счету носят “паразитический”

характер. Они могут действовать только в условиях налаженного традиционного механизма коллизионного регулирования²⁷.

Отметим также, что не цель достижения единообразия решений определяет методологию выбора применимого права, а наоборот, объективно требуемая и уже сложившаяся методология должна определять справедливые (в том числе и с материальной точки зрения) результаты разрешения коллизий.

¹ Макаров А.Н. Основные начала международного частного права. М. 2007. С.108.

² Там же.

³ Там же. С.36.

⁴ Канашевский В.А. Международное частное право. Учебник. — М.: Междунар. отношения, 2006. — С.29.

⁵ Հայկյանց Ա. Միջազգային մասնավոր իրավունք: Դասագիրք/ Երևանի պետ. Համալս. — Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 40:

⁶ “Private International Law” by M. Wolff. Oxford University Press, 1945. P.18.

⁷ Вольф М. Международное частное право. Пер. с англ. С.М. Рапопорт под ред. проф. Л.А. Лунца. М.: 1948. С. 50.

⁸ Հայկյանց Ա. Միջազգային մասնավոր իրավունք: Դասագիրք/ Երևանի պետ. Համալս. — Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 37:

⁹ Там же. С. 34.

¹⁰ Ануфриева Л.П. Международное частное право: В 3-х томах. Т.1. Общая часть: Учебник. - М.: Изд. БЕК, 2002. С. 13.

¹¹ Цит. по: Толстых В.Л. “Международное частное право: коллизионное регулирование” СПб, 2004. С. 40.

¹² Ա. Հայկյանց Միջազգային մասնավոր իրավունք: Դասագիրք/ Երևանի պետ. Համալս. — Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 36:

¹³ Лунц Л. А. “Курс международного частного права” в 3 т. М.: Спарк, 2002. С. 131.

¹⁴ Вольф М. “Международное частное право”. 1948. С. 50.

¹⁵ Вольф М. “Международное частное право”. 1948. С. 50.

¹⁶ Ago R. Rìgles generales des conflits de lois // Recueil des cours de l’Académie de droit inter-

national de La Haye. 1936. P. 301.

¹⁷ Лунц Л.А. “Курс международного частного права”. Спарк 2002, С. 171.

¹⁸ Звекон В.П. “Международное частное право”. М. 2004, С. 160.

¹⁹ International Conflict of Laws for the Third Millenium: essays in honor of Friedrich K. Juenger // Material justice and conflicts justice in choice of law. Symeon C. Symeonides. 2001. P. 125.

²⁰ Symeon C. Symeonides “Result-selectivism in private international law” ROMAN Priv. InT’L L & Comp. Priv. L. Rev. 2008. P.2.

²¹ International Conflict of Laws for the Third Millenium: essays in honor of Friedrich K. Juenger // Material justice and conflicts justice in choice of law. Symeon C. Symeonides. 2001. P. 126.

²² Цит. по: Symeon C. Symeonides “Result-selectivism in private international law” ROMAN Priv. InT’L L & Comp. Priv. L. Rev. 2008. P.3.

²³ Монастырский Ю.Э. “Господствующие доктрины коллизионного права США”: Дис. ... канд. юрид. наук. М., 2002. С. 39.

²⁴ Symeon C. Symeonides “Accomodative Unilateralism as a starting premise in choice of law” 2005.

²⁵ Цит. по: Symeon C. Symeonides “Accomodative Unilateralism as a starting premise in choice of law” 2005. P.24.

²⁶ Вилкова Н.Г. “Договорное право в международном обороте” 2002. Прил. С. 458

²⁷ Толстых В.Л. Международное частное право: коллизионное регулирование. СПб, 2004. С.155.

**ԿԻՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԻԶԻՈՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Մարիաննա ՔԱԼԱՇՅԱՆ

*Հայ-ուսական (սլավոնական) համալսարանի
քաղաքացիական իրավունքի և
քաղաքացիական դատավարության
ամբիոնի հայցորդ*

Հոդվածը նվիրված է միջազգային մասնավոր իրավունքի առանցքային խնդիրներից մեկին՝ կիրառվելիք իրավունքի ընտրության մեթոդոլոգիային: Հատկանշական է, որ այս խնդիրը ուսումնասիրվել է կոլիզիոն-իրավական կարգավորման խնդիրների պատմական զարգացման լույսի ներքո՝ սկսած XIX-րդ դարից մինչ օրս: Հոդվածում ուսումնասիրվել են օտարերկրյա իրավունքի կիրառման

հիմնական դոկտրինալ մոտեցումները՝ ըստ պատկանելիության ունիլատերալ կամ բիլատերալ համակարգերին: Ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ կիրառվելիք իրավունքի ընտրության մեթոդոլոգիան պետք է զարգանա նշված երկու համակարգերի երկխոսության հիման վրա: Դա նաև անհրաժեշտ է միջազգային մասնավոր իրավունքի ոլորտում ծագող կոլիզիաների արդարածի լուծման գործում: Հիմնական եզրակացությունն այն է, որ ոչ թե միանման որոշումների կայացումը պետք է որոշի կիրառվելիք իրավունքի ընտրության մեթոդոլոգիան, այլ այդ մեթոդոլոգիան պետք է կանխորոշի կոլիզիաների արդարացի լուծումը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՈՄԱՆ ԵՎ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԱՎՏՈՍՈՐԻԼԱՅԻՆ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՈՒՄ**

Լիլիթ ՔԱՍԱԼՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ*

Մասնավոր իրավունքում և տեսությունում հայցային վաղեմությունը բնորոշվում է որպես իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատված¹: Հայցային վաղեմության ժամկետները վեճերի կարգավորման հարցում ունեն կարևոր դերակատարություն: Պատահական չէ, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար նախատեսված ժամկետները մշակվել, ամրագրվել և կատարելագործվել են ՀՀ ներպետական իրավունքում, օտարերկրյա պետությունների իրավական համակարգերում և միջազգային աղբյուրներում, քանի որ դրանք հանդես են գալիս որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության ոլորտի ժամկետային կողմնորոշիչներ՝ դրանով իսկ նպաստելով վեճերի արագ և արդյունավետ քննությանն ու լուծմանը:

Հայցային վաղեմությունը միջազգային մասնավոր իրավունքի կարևորագույն ինստիտուտներից է, որի կարգավորման նպատակով կյանքի են կոչվել մի շարք կոլիզիոն և ունիֆիկացված նյութական նորմեր: Միջազգային մասնավոր իրավունքի ունիֆիկացման միջազգային ինստիտուտի (ՈՒՆԻԴՐՈՒԲ) մշակած փաստաթղթում՝ Անդրազգային քաղաքացիական դատավարության սկզբունքներում², անդրադարձ է կատարվել նաև հայցային վաղեմության ինստիտուտին: Մասնավորապես, նշված փաստաթղթի 9.3.3. կետով ամրագրված է,

որ քաղաքացիական դատաքննության փուլում դատարանը պետք է առաջնային ուշադրություն դարձնի հայցային վաղեմության ժամկետին, իսկ 10.2. կետով սահմանվում է հայցը ժամանակին, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքում, դատարան ներկայացնելու պահանջը:

Հայցային վաղեմության ինստիտուտի կարգավորումը միջազգային մասնավոր իրավունքում իրականացվում է ըստ միջազգային մասնավոր իրավաբանությունների առանձին ոլորտների: Այսպես, 1974 թ. «Ապրանքների միջազգային առուվաճառքում հայցային վաղեմության մասին» կոնվենցիան սահմանում է ապրանքների միջազգային առուվաճառքի հարաբերություններում հայցային վաղեմության ժամկետների կիրառման և համանուն ինստիտուտի կարգավորման յուրահատկությունները:

Թեև միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների բնագավառում առաջին գոյություն չունի հայցային վաղեմության հարցերի կարգավորմանը նվիրված՝ ունիֆիկացված առանձին միջազգային իրավական ակտ, սակայն «Միջազգային ճանապարհային բեռնափոխադրման պայմանագրի մասին» կոնվենցիան³ (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) էականորեն լրացնում է այդ բացը: Կոնվենցիայի գլուխ V-ը⁴ ներառում է միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների ոլորտում պահանջների և հայցերի վերաբերյալ հարաբերություններ կարգավորող իրավանորմեր: Մասնավորապես, Կոնվենցիայի 32-րդ հոդվածը վերաբերում է հենց հայցային վաղեմության հարցերի կարգավորմանը⁵:

Նշված հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Կոնվենցիայի գործողության ոլորտում ներառվող փոխադրումների առնչությամբ ծագած պահանջների համար հայցային վաղեմության ժամկետը սահմանվում է մեկ տարի, սակայն դիտավորյալ կատարված ոչ իրավաչափ գործողությունների դեպքում կամ պարտականությունների ոչ պատշաճ այնպիսի կատարման դեպքում, որը գործը քննող դատարանի կողմից կիրառվող օրենքի համաձայն՝ հավասարեցվում է դիտավորյալ կատարված ոչ իրավաչափ գործողություններին, հայցային վաղեմության ժամկետը սահմանվում է երեք տարի:

Այս առնչությամբ, նախ, հարկ է պարզել, թե իրավահարաբերությունների որ շրջանակի նկատմամբ է կիրառվում նշված Կոնվենցիան, քանի որ Կոնվենցիայի 32-րդ հոդվածով նախատեսված՝ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման կարգը գործում է միայն Կոնվենցիայի կարգավորման առարկան կազմող հարաբերությունների նկատմամբ:

Այսպես, Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ Կոնվենցիան կիրառվում է տրանսպորտային միջոցներով վարձատրության դիմաց կատարվող ցանկացած ճանապարհային բեռնափոխադրման պայմանագրի նկատմամբ, երբ պայմանագրում նշված բեռի ընդունման վայրը և բեռի հանձնման վայրը գտնվում են երկու տարբեր երկրներում, որոնցից առնվազն մեկը Կոնվենցիայի մասնակից է՝ անկախ պայմանագրի կողմերի բնակությունից և ազգությունից: Ընդ որում, Կոնվենցիայով միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների հարաբերությունների սուբյեկտային կազմի առնչությամբ տարբերություններ չեն նախատեսվում, քանի որ Կոնվենցիայով սահմանվում է, որ այն կիրառվում է նաև պետությունների կամ կառավարական հաստատությունների կամ կազմակերպությունների մասնակցությամբ համապատասխան հարաբերությունների նկատմամբ:

Կարգավորման ենթակա հարաբերությունների առնչությամբ Կոնվենցիայով ևս մի առանձնահատկություն է ամրագրվում: Մասնավորապես՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիան կիրառվում է ոչ բոլոր տրանսպորտային միջոցներով կատարվող միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների նկատմամբ, այլ միայն նրանց, որոնք կատարվում են ավտոմեքենաներով, ժանրաքարշ ավտոմեքենաներով, կցավագոններով և կիսակցավագոններով:

Յոդվածի 4-րդ կետով հստակ առանձնացվում են փոխադրման այն հարաբերությունները, որոնք, լինելով ցամաքային և անգամ իրականացվելով Կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված տրանսպորտային միջոցներով, Կոնվենցիայի կարգավորման առարկայից դուրս են: Մասնավորապես, դրանք միջազգային փոստային կոնվենցիաների համաձայն իրականացվող փոխադրումներն են, հանգուցյալների և կահույքի ու այլ առարկաների փոխադրումները:

Յետևապես, Կոնվենցիայի 1-ին հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ, որպեսզի համապատասխան փոխադրման հարաբերությունների նկատմամբ կիրառվի Կոնվենցիան և, հետևապես, նրա՝ հայցային վաղեմության դրույթները կարգավորող նորմերը, անհրաժեշտ է հետևյալ պայմանների առկայությունը՝

ա) վարձատրության դիմաց կատարվող ճանապարհային բեռնափոխադրման պայմանագրային հարաբերություններ,

բ) որոնք, սակայն, չեն ներառում Կոնվենցիայի 1-ին հոդվածի 4-րդ կետով նախատեսված փոխադրման հարաբերությունները,

գ) որոնց դեպքում բեռնափոխադրումները կատարվում են Կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված տրանսպորտային միջոցներով,

դ) երբ պայմանագրում նշված բեռի ընդունման վայրը և բեռի հանձնման համար նախատեսված վայրը գտնվում են երկու

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տարբեր պետությունների տարածքներում, որոնցից առնվազն մեկը Կոնվենցիայի մասնակից է,

ե) և ավտոմոբիլային բեռնափոխադրումները որպես միջազգային բեռնափոխադրումներ որակելու համար որևէ նշանակություն չունի փոխադրող անձանց բնակության վայրը կամ ազգությունը:

Կոնվենցիայով նախատեսված այն պահանջը, համաձայն որի՝ փոխադրման պայմանագրում նշված բեռի ընդունման վայրը և բեռի հանձնման համար նախատեսված վայրը պետք է գտնվեն երկու տարբեր պետությունների տարածքներում, որոնցից առնվազն մեկը պետք է լինի Կոնվենցիայի անդամ-պետություն, կարևոր նշանակություն ունի հայցային վաղեմության ինստիտուտի կարգավորման և կիրառման հարցում և կարգավորման դաշտում հաճախ լուրջ խնդիրներ է առաջացնում:

Թվում է, թե առաջին հայացքից ամեն ինչ պարզ է: Այսպես, եթե կարգավորման ենթակա փոխադրման պայմանագրում նշված բեռի ընդունման վայրը և բեռի հանձնման համար նախատեսված վայրը գտնվում են երկու տարբեր պետությունների տարածքներում, որոնցից երկուսն էլ Կոնվենցիայի անդամ պետություններ են, ապա, ղեկավարվելով Կոնվենցիայի 41-րդ հոդվածի 1-ին կետով, Կոնվենցիան այդ հարաբերությունների նկատմամբ պետք է ունենա իմպերատիվ կիրառություն, իսկ ցանկացած համաձայնագիր, որով կթուլատրվի Կոնվենցիայից ուղղակիորեն կամ անուղղակիորեն շեղվել, պետք է համարվի անվավեր: Դա նշանակում է, որ խնդրո առարկա ղեպքում միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրման հարաբերությունները կարգավորող պայմանագիր կնքելիս պայմանագրի կողմերը չեն կարող փոխադարձ համաձայնությամբ ամբողջովին կամ մասնակիորեն շրջանցել համապատասխան պայմանագրային հարաբե-

րությունների նկատմամբ Կոնվենցիայի կիրառությունը:

Այլ հարց է, թե ինչպես պետք է կարգավորվեն միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագրային այն հարաբերությունները, որոնց ղեպքում բեռի ընդունման վայրը և բեռի հանձնման վայրը գտնվում են այն երկու տարբեր պետությունների տարածքներում, որոնցից միայն մեկն է Կոնվենցիայի մասնակից: Հաշվի առնելով Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետի ձևակերպումը՝ Կոնվենցիան կիրառվում է նաև այդ հարաբերությունների նկատմամբ: Սակայն, մեր կարծիքով, խնդրո առարկա ղեպքում Կոնվենցիան չի կարող ամբողջ պայմանագրի նկատմամբ ունենալ իմպերատիվ կիրառություն, եթե, իհարկե, կողմերը փոխադարձ համաձայնությամբ չնախատեսեն դրա կիրառման հնարավորությունը, ինչը բխում է կամքի ինքնավարության եությունից⁷: Այսպես, եթե Կոնվենցիայի մասնակից լինի այն պետությունը, որի տարածքում է գտնվում բեռի ընդունման վայրը, կամ այն պետությունը, որի տարածքում է գտնվում բեռի հանձնման վայրը, ապա, մեր կարծիքով, Կոնվենցիայով պետք է կարգավորվեն միայն համապատասխանաբար այդ առնչությամբ ծագող իրավահարաբերությունները: Հետևապես, Կոնվենցիայի կարգավորման առարկայից դուրս մնացած պայմանագրային հարաբերությունների մյուս մասը ենթակա է կարգավորման միջազգային մասնավոր իրավունքում լայն կիրառություն ունեցող կոլիզիոն մեթոդով, երբ կոլիզիոն կարգավորման մեթոդի միջոցով փնտրվում և գտնվում է այն երկրի իրավունքը, որը կիրառելի է տվյալ հարաբերությունների նկատմամբ⁸:

Ինչ վերաբերում է միջազգային բեռնափոխադրման պայմանագրային այն հարաբերություններին, որոնց ղեպքում բեռի ընդունման վայրը և բեռի հանձնման վայրը գտնվում են երկու տարբեր պետությունների տարածքներում, որոնցից և ոչ մեկը Կոնվենցիայի մասնակից չէ, և, հետևապես,

կարգավորման ենթակա հարաբերություններն ամբողջությամբ դուրս են մնում Կոնվենցիայի կարգավորման առարկայից, նույնպես օգնության է գալիս կոլիզիոն կարգավորման մեթոդը:

Իհարկե, իրավահարաբերությունների կարգավորման նպատակով միջազգային ունիֆիկացված նորմեր ամրագրող միջազգային պայմանագրեր կիրառելն ավելի արդյունավետ և արդարացված է, քանի որ դրանով գրեթե ամբողջությամբ հաղթահարված են լինում տարբեր երկրների իրավական համակարգերի միջև կոլիզիաները, իսկ նյութական ունիֆիկացված նորմերի դեպքում իրականացվում է նաև ուղղակի կարգավորում: Ասկայն այն դեպքերում, երբ բացակայում է նյութական կամ կոլիզիոն ունիֆիկացված աղբյուրը, կիրառվում է անուղղակի կարգավորման մեթոդը, որը հայցային վաղեմության ինստիտուտի կարգավորման հարցում ունի իր յուրահատկությունները: Այդ յուրահատկությունները պարզաբանելու համար, նախ, անհրաժեշտ է ուսումնասիրել հայցային վաղեմության ինստիտուտի իրավական բնութագրի հիմնական ուղղությունները համաշխարհային իրավագիտությունում:

Հայցային վաղեմության ընդհանրական սահմանման համատեքստում հայցային վաղեմության ժամկետը կարելի է բնորոշել որպես այնպիսի ժամկետ, որը սահմանվել է ներպետական օրենսդրությամբ և (կամ) միջազգային համաձայնագրով, և որի ընթացքում դատարանները կոչված են այն անձի հայցի հիման վրա, ում իրավունքը խախտվել է, հարկադիր կարգով պաշտպանելու այդ իրավունքը:

Հայցային վաղեմության ինստիտուտի առանձնահատկություններից մեկն այն է, որ խնդրո առարկա ինստիտուտը տարբեր երկրներում տարբեր կերպ է դիտարկվում⁹: Մայրցամաքային իրավական համակարգում այն դիտվում է որպես նյութական-իրավական ինստիտուտ, մինչդեռ անգլո-ամերիկյան իրավական համակարգում կամ ընդհանուր իրավունքի երկրներում հայցա-

յին վաղեմությունը համընդհանուր կարգով ճանաչվում է որպես դատավարական-իրավական կատեգորիա¹⁰:

Միջազգային մասնավոր իրավունքի դոկտրինայում ընդունված է, որ դատարանը, կոլիզիոն կարգավորման մեթոդի արդյունքում, կարող է կիրառել միայն օտարերկրյա նյութական իրավունքի նորմեր¹¹: Դա նշանակում է, որ եթե հայցային վաղեմության հարցի լուծման նպատակով հղում կատարվի անգլո-ամերիկյան իրավական համակարգի իրավունքին, ապա այդ իրավունքը խնդրո առարկա հարաբերությունների նկատմամբ չի կարող կիրառվել, քանի որ դրանք իրենց բնույթով դատավարական են: Այս դեպքում հարաբերությունները ենթակա են կարգավորման *lex causae* կոլիզիոն կապի միջոցով, այսինքն՝ կիրառելի է կարգավորման ենթակա հարաբերությունների հետ առավել սերտ կապված իրավունքը¹²:

Միաժամանակ, այն պետություններում, որտեղ հայցային վաղեմությունը ճանաչվում է որպես քաղաքացիական դատավարության ինստիտուտ, հայցային վաղեմության վերաբերյալ օտարերկրյա կանոնների կիրառման հնարավորության վերաբերյալ մոտեցումը խիստ փոփոխվել է: Այսպես, Մեծ Բրիտանիայում 1984թ. ընդունվել է «Օտարերկրյա հայցային վաղեմության ժամկետների մասին» հատուկ օրենք, որով անգլիական միջազգային մասնավոր իրավունքում օտարերկրյա իրավունքի հայցային վաղեմության ժամկետները սկսվեցին համարվել որպես նյութական իրավունքին վերաբերող նորմեր: Նշված մոտեցումն աստիճանաբար ընդունելի է դառնում նաև ամերիկյան դատական պրակտիկայում, քանի որ դա ապահովում է հայցային վաղեմությանն առնչվող հարցերի առավել արդյունավետ կոլիզիոն կարգավորումը¹³:

Անդրադառնալով հայցային վաղեմությանն առնչվող այլ հարցերին՝ հարկ ենք համարում հստակեցնել հայցային վաղեմության ժամկետի տևողության և դրա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հաշվարկման կարգի յուրահատկությունները: Մասնավորապես, Կոնվենցիայի 1-ին հոդվածով որպես միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների ոլորտում խախտված իրավունքների պաշտպանության համար հայցային վաղեմության ժամկետ, ընդհանուր առմամբ, նախատեսվում է մեկ տարի տևողությամբ ժամկետը:

Համեմատական կարգով նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 867-րդ հոդվածի համաձայն՝ բեռների փոխադրումից բխող պահանջներով հայցային վաղեմության ժամկետը մեկ տարի է:

Հատկանշական է, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսվում է, որ դիտավորյալ կատարված ոչ իրավաչափ գործողությունների դեպքում կամ պարտականությունների ոչ պատշաճ այնպիսի կատարման դեպքում, որը, գործը քննող դատարանի կողմից կիրառվող օրենքի համաձայն, հավասարեցվում է դիտավորյալ կատարված ոչ իրավաչափ գործողություններին, հայցային վաղեմության ժամկետը սահմանվում է երեք տարի:

Խնդրո առարկա դեպքում եռամյա հայցային վաղեմության ժամկետ նախատեսելը պատահական չէ, քանի որ դրանով Կոնվենցիայի հեղինակները նպատակ են ունեցել ապահովելու համապատասխան անձի խախտված իրավունքների առավել ամբողջական և արդյունավետ պաշտպանությունը: Այսպես, քանի որ խոսքը դիտավորությամբ կատարված կամ դիտավորությամբ

կատարվածին հավասարեցված բնույթ ունեցող անիրավաչափ արարքների մասին է, պարզ է, որ նման փաստն առանձին հաստատման կարիք ունի, ինչը հաճախ բարդ և ժամանակատար գործընթաց է և կարող է տևել մեկ տարուց ավելի, ուստի իրավունքը խախտված անձին տրվում է ավելի երկար ժամկետ՝ իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքից լիարժեք օգտվելու համար:

Միաժամանակ, կարծես թե Կոնվենցիայի նշված նորմի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 867-րդ հոդվածի միջև առկա է հակասություն, որը վերացվում է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը և «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի¹⁴ 5-րդ հոդվածը, որոնք սպառնիչ պատասխան են տալիս ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրի և ՀՀ ներպետական իրավական ակտի միջև հակասության հարցին:

Հայցային վաղեմության ժամկետի տևողության հարցի կարգավորման առնչությամբ անհրաժեշտ է նաև պարզել, թե որ պահից է սկսվում հաշվարկվել հայցային վաղեմության ժամկետը: Կոնվենցիայի 32-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետը սկսվում է հաշվարկվել.

ա) բեռի մասնակի կորստի, դրա վնասման կամ հանձնումն ուշացնելու դեպքում՝ բեռը հանձնելու օրվանից,

բ) ամբողջ բեռի կորստի դեպքում՝ առաքման համաձայնեցված ժամկետը լրանալուց հետո՝ երեսուներորդ օրը, կամ եթե այդպիսին համաձայնեցված չի եղել, փոխադրման համար փոխադրողի կողմից բեռն ընդունվելուց հետո՝ վաթսուներորդ օրը,

գ) բոլոր մյուս դեպքերում՝ փոխադրման պայմանագիրը կնքելուց հետո՝ եռամյա ժամկետը լրանալուն պես:

Միաժամանակ, Կոնվենցիայով մանրամասնվում է, որ հայցային վաղեմության ժամկետի առաջին օրը հայցային վաղե-

մության ժամկետի մեջ չի ներառվում:

Ուշագրավ է, որ Կոնվենցիան միջազգային բեռնափոխադրումների ոլորտում ծագած վեճերի լուծման համար նախատեսում է դրանց արտադատական կարգավորման պարտադիր կարգ, համաձայն որի՝ իրավունքը խախտված անձը մինչ դատարան դիմելը պետք է իրավունքը խախտած անձին ներկայացնի պահանջ (պրետենզիա)՝ Կոնվենցիայի 30-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում¹⁶: Սակայն Կոնվենցիայի 30-րդ և 32-րդ հոդվածների բովանդակության համեմատություներից պարզ է դառնում, որ ամբողջ բեռի կորստի դեպքի համար Կոնվենցիան պրետենզիա ներկայացնելու ժամկետ չի սահմանում, ուստի որպես ածանցյալ կարգավորման աղբյուր հանդես է գալիս 32-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը: Այլ կերպ ասած՝ նման դեպքում պահանջը կարող է ներկայացվել հայցային վաղեմության համար սահմանված երեսնօրյա կամ վաթսուօրյա ժամկետներում՝ կախված առաքման ժամկետը կողմերի միջև համաձայնեցված լինելու հանգամանքից: Նմանապես, պահանջային ժամկետ նախատեսված չէ Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետով նախատեսված դեպքերի համար, ուստի այստեղ ևս պահանջային ժամկետը որոշելու համար կիրառելի է հայցային վաղեմության համար սահմանված ժամկետը¹⁶:

Վերոշարադրյալը հաշվի առնելով՝ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանելու այն հարցը՝ արդյոք պահանջային ժամկետը ներառվում է հայցային վաղեմության ժամկետի մեջ:

Համեմատական կարգով նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները նախատեսվում են սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով»:

Միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների բնագավառում իրավունքի խախտման մասին իմանալու համար սահմանված են պահանջային ժամկետներ, իսկ խախտման մասին վկայող փաստ է համարվում պահանջ (պրետենզիա) ներկայացնելը:

Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 2-րդ կետով մանրամասնվում է, որ պահանջը գրավոր ներկայացնելը դադարեցնում է հայցային վաղեմության ժամկետի ընթացքը՝ մինչև այն օրը, երբ փոխադրողը գրավոր ձևով մերժում է պահանջը և վերադարձնում դրան կից ներկայացված փաստաթղթերը: Բողոքը մասնակիորեն ընդունվելու դեպքում հայցային վաղեմության ժամկետի ընթացքը վերականգնվում է պահանջի միայն այն մասի նկատմամբ, որը մնում է վեճի մեջ: Այն, որ պահանջը կամ դրա պատասխանն ստացվել է, ինչպես նաև այն, որ փաստաթղթերը վերադարձվել են, պետք է ապացուցի այն կողմը, որը վկայակոչում է սույն փաստերը: Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի դադարեցվում նույն հիմքով հետագա պահանջներ ներկայացվելու դեպքում:

Հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, նախ, որ պրետենզիա ներկայացվելու դեպքում իրավունքը խախտած անձի կողմից համապատասխան պահանջն ստանալու պահից հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է և վերսկսվում միայն համապատասխան պահանջի վերաբերյալ մերժումն ու կից փաստաթղթերը վերադարձվելու ու դրանք պահանջատիրոջ կողմից ստանալու օրվանից, ընդ որում՝ միայն այն մասով, որով պրետենզիան մերժվել է: Հետևապես, պահանջը մասնակիորեն մերժվելու դեպքում պահանջի՝ բավարարված մասով հայցային վաղեմության ժամկետը համարվում է լրացած Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվածից ավելի կարճ ժամկետներում:

Նշված նորմի ձևակերպումը բավականին հակասական է, քանի որ չեն կարգա-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վորվում այն դեպքերը, երբ պրետենզիայի վերաբերյալ պատասխան չի ներկայացվում: Այս դեպքում ստացվում է, որ պահանջը ներկայացրած անձը, մինչև նույնն է, պարտավոր է սպասել մինչև պրետենզիոն ժամկետը լրանալը՝ իր իրավունքների դատական պաշտպանությունից օգտվելու համար, իսկ այն դեպքերում, երբ կոնվենցիայով պահանջային ժամկետային կողմնորոշիչ սահմանված չէ՝ հարցն ընդհանրապես բաց է մնում (օրինակ՝ Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի առնչությամբ):

Խնդրահարույց է նաև այն դեպքը, երբ անձը, ում դեմ ներկայացվել է պրետենզիան, պահանջի վերաբերյալ պատասխան չի ներկայացնում և նաև չի վերադարձնում պրետենզիային կից ներկայացված փաստաթղթերը: Հատկանշական է, որ Կոնվենցիայով պահանջվում է պրետենզիային կից ներկայացնել պրետենզիան հիմնավորող փաստաթղթերը, այլ ոչ թե դրանց պատճենները: Իհարկե, իր խախտված իրավունքների դատական պաշտպանությունը դիմելիս անձը, ներպետական դատավարական իրավանորմների համաձայն¹⁷, կարող է չվերադարձված փաստաթղթերը պահանջել դատական կարգով, սակայն այդ նպատակով նա պետք է ապացուցի, որ համապատասխան փաստաթղթերը գտնվում են իրավունքը խախտած անձի տրամադրության տակ:

Ի վերջո, խնդիրներ կարող են ծագել նաև այն դեպքում, երբ իրավունքը խախտած անձն ընդունում է իր դեմ ներկայացված պահանջը, սակայն չի կատարում ստանձնած պարտավորությունը: Մասնավորապես, վկայակոչված հոդվածով նախատեսվում է, որ պահանջի ընդունման պահից ընդունված պահանջի ծավալին համապատասխան պահանջի ներկայացման հայցային վաղեմության ժամկետը համարվում է լրացած, հետևապես՝ իրա-

վունքը խախտված անձը զրկվում է նույն պահանջի՝ դատական կարգով բավարարում ստանալու իրավունքից, եթե, իհարկե, համաձայն ներպետական օրենսդրությամբ ամրագրված նորմերի, դատարանը չներկարացնի հայցային վաղեմության ժամկետը կամ հարգելի չհամարի բաց թողնված ժամկետը: Այս առնչությամբ Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ, նույն հոդվածի 2-րդ կետի դրույթը պահպանելու պայմանով, հայցային վաղեմության ժամկետի երկարացումը կարգավորվում է գործը քննող դատարանի վայրի օրենքով (*lege fori*), ինչպես նաև այդ նույն օրենքով է կարգավորվում հայցային վաղեմության ժամկետի կասեցումը:

Միաժամանակ, Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 4-րդ կետով, որպես իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակում, նախատեսվում է, որ այն պահանջները, որոնց հայցային վաղեմության ժամկետը լրացել է, չեն կարող ներկայացվել հանդիպակաց պահանջի կամ առարկության ձևով: Դա նշանակում է, որ, օրինակ, եթե իրավունքը խախտված անձի պահանջի հայցային վաղեմության ժամկետը լրացել է (թեկուզև՝ հարգելի պատճառներով), և նրա դեմ ներկայացվել է պահանջին առնչվող որևէ հայց (փոխադրողի, բեռն ուղարկողի կամ երրորդ անձանց կողմից), ապա վերջինս ոչ միայն զրկված է համապատասխան պահանջի վերաբերյալ հայցով դատարան դիմելու, այլև համապատասխան պահանջի մասով հակընդդեմ հայց կամ առարկություններ ներկայացնելու հնարավորությունից: Մինչդեռ, մեր կարծիքով, պահանջային ժամկետը չպահպանելու հետևանքով համապատասխան պահանջի իրավունքի՝ դատական կարգով բավարարում ստանալու հնարավորությունից զրկելն անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի անհարկի սահմանափակում է¹⁸:

Մարդու իրավունքների եվրոպական

դատարանը «Լիխտենշտեյնի Արքայազն Յանս-Ադամս Երկրորդն ընդդեմ Գերմանիայի» թիվ 42527/98 գործով կայացրած վճռի 44-րդ կետով ամրագրվել է, որ Կոնվենցիայի 6(1) հոդվածով երաշխավորված արդարադատության մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների ... սակայն, դրա հետ մեկտեղ, արդարադատության մատչելիության իրավունքը կարող է սահմանափակվել կամ այդ իրավունքի իրականացման հնարավորությունները կարող են նվազեցվել միայն այնպես կամ այն աստիճան, որ արդարադատության մատչելիության բուն էությունը մնա անփոփոխ: Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նույն նախադեպային վճռում արձանագրել է, որ սահմանափակումը չի կարող Կոնվենցիայի 6(1) հոդվածի հետ համատեղելի և արդարացված լինել, եթե այն լեզվտիմ նպատակ չի հետապնդում, և կիրառված սահմանափակման միջոցների ու հետապնդվող նպատակների միջև բացակայում է ողջամիտ կապը կամ համապատասխանությունը¹⁹:

Կարծում ենք, որ այն դեպքը, երբ անձի դատական պաշտպանության իրավունքը սահմանափակվում է հայցային վաղեմության ժամկետներով՝ միաժամանակ անձին հնարավորություն ընձեռելով դիմելու բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը հարգելի համարելու համար, լիովին բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ նման կերպ նախատեսում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքների դատական պաշտպանության երկուստեք առավել արդյունավետ հնարավորության: Այսպես, հայցային վաղեմության ժամկետը նպաստում է պայմանագրային կարգուկանոնի հաստատմանն ու պահպանմանը, իրավահարաբերության մասնակիցների ակտիվությանը՝ իրենց պատկանող իրավունքների, այդ թվում՝ իրավունքների դատական պաշտպանությամբ:

յան իրավունքի և պարտականությունների իրականացման առնչությամբ: Հայցային վաղեմության ժամկետներով սահմանափակված չլինելը հաճախ կարող է հանգեցնել գործի քննության համար անհրաժեշտ ապացույցների անհետացմանը և կորստին, գործերի քննության իրականացման դժվարությունների, գործի ճիշտ քննության և ճշմարտության վերականգնման հետ կապված բարդությունների: Դրանով է պայմանավորված համընդհանուր տարածում և ամրագրում ստացած այն մոտեցումը, ըստ որի՝ ներպետական կամ միջազգային աղբյուրներով սահմանված հայցային վաղեմության ժամկետը չի կարող փոփոխվել պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ, սակայն, որպես կողմերի իրավունքների պաշտպանության երաշխիք, նախատեսվում է համապատասխան ժամկետը երկարացնելու կամ այն բաց թողնված լինելու դեպքում հայցային վաղեմության ժամկետը լրիվ կամ մասնակիորեն վերականգնելու հնարավորությունը²⁰:

Մինչդեռ Միջազգային ճանապարհային բեռնափոխադրման պայմանագրի մասին կոնվենցիայով ամրագրված այն մոտեցումը, համաձայն որի՝ պրետենզիոն ժամկետը չպահպանելը անձին զրկում է համապատասխան պահանջի՝ դատական կարգով բավարարում ստանալու հնարավորությունից, հանգեցնում է այնպիսի ոչ տրամաբանական իրավիճակի, երբ հայցային վաղեմության ժամկետն ընդհանրապես չի սկսվում: Նման պարագայում, սահմանված պրետենզիոն ժամկետի լրացմամբ հայցային վաղեմությունը չսկսված մարվում է: Ըստ էության, տեսաբանների կողմից դա հիմնավորվում է, մեր կարծիքով, չարդարացված այն տեսակետով, ըստ որի՝ հայցային վաղեմության ժամկետը դիտվում է որպես խափանիչ ժամկետ, մինչդեռ այն իրավունքի պաշտպանության ժամկետ է²¹:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ընդունվել է 1998 թ. մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 1999 թ. հունվարի 1-ին) 331-րդ հոդված: Տե՛ս նաև Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Երևանի համալսարանի իրատարկչություն, Երևան, 2004 թ., էջ 242, Стольникова М.В., Практика подготовки и ведения гражданских дел, изд.-во «Проспект», М., 2008 г., էջ 38, Гражданское право, часть первая, под ред. А. Г. Калпина, А. И. Масляева, изд.-во «Юристъ», М., 1997 г., էջ 204:
- ² 2004 թ. ապրիլին Սկզբունքների տեսքերը և դրան կից մեկնաբանությունները հաստատվել են Մասնավոր իրավունքի ունիֆիկացման միջազգային ինստիտուտի կողմից, իսկ 2004 թ. մայիսին՝ Իրավունքի ամերիկյան ինստիտուտի կողմից: Վկայակոչված փաստաթղթի պաշտոնական տեքստը կարելի է գտնել www.unidroit.org էլեկտրոնային կայքում՝ ըստ [www.unidroit.org/UNIDROIT PRINCIPLES of Transnational Civil Procedure](http://www.unidroit.org/UNIDROIT%20PRINCIPLES%20CIVIL%20PROCEDURE%20ALI-UNIDROIT) հղումի:
- ³ Ոլորտի սկզբնական աղբյուրը 1956 թ. մայիսի 12-ի՝ «Միջազգային ճանապարհային բեռնափոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիան է, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Ներկայումս նույնանուն կոնվենցիան գործում է 1978 թ. հուլիսի 5-ին «Միջազգային ճանապարհային ավտոմոբիլային բեռնափոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի արձանագրությամբ կատարված փոփոխություններով: Տե՛ս նաև Հայկյանց Ա.Ս., Միջազգային մասնավոր իրավունք, ուսումնական ձեռնարկ, Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան, 2003 թ., էջ 184, Холопов К. В., Международное частное транспортное право, изд.-во «Статус», М., 2010 г. էջ 481: Կոնվենցիայի պաշտոնական տեքստը կարելի է գտնել <http://www.miripravo.ru, www.sklad-zakonov/narod.ru, www.unidroit.org> կայքերում:
- ⁴ Կոնվենցիայի տեքստի հայերեն թարգմանությունը տե՛ս Հովհաննիսյան Վ., Հակոբյան Լ. Ս., Հակոբյան Լ.Օ., Միջազգային մասնավոր իրավունք, Միջազգային իրավական փաստաթղթերի ժողովածու, «Տիգրան Մեծ» իրատարակչություն, Երևան, 2005 թ., էջեր 269-283:
- ⁵ Տե՛ս նույն տեղը:
- ⁶ Ավտոմոբիլային փոխադրումների բնագավառում տրանսպորտային միջոցների սահմանումների առնչությամբ տե՛ս 1949 թ. սեպտեմբերի 19-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի (ուժի մեջ է մտել 26 մարտի 1952 թ.) 4-րդ հոդվածը: Համեմատական կարգով տե՛ս նաև 08.11.1968 թ. «Ճանապարհային երթևեկության մասին» փնենցիայի կոնվենցիայի 1-ին հոդվածը:
- ⁷ Տե՛ս Հայկյանց Ա.Ս., Աշխատության էջ 59, տե՛ս նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1284-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:
- ⁸ Տե՛ս Հայկյանց Ա.Ս., Աշխատության էջեր 15-16, Гетьман-Павлова И.В., Международное частное право, учебник, изд.-во «ЭКМО», М., 2005 г., էջեր 29-30:
- ⁹ Տե՛ս Добровольский А. А., Иванова С. А., Основные проблемы исковой формы защиты прав, М., 1979 г., էջեր 18-19, ըստ հղումի՝ Арбитражный процесс, под ред. В. В. Яркова, изд.-во «Юристъ», М., 2002 г., էջեր 175-176, տե՛ս նաև ՀԱՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (որով հայցային վաղեմության ժամկետ հասկացությունը նախատեսված չէր), ընդունվել է 04.06.1964 թ., ուժի մեջ է մտել 01.01.1965 թ.: ՀԱՍՀ Գերագույն խորհրդի հաստատմամբ, ուժը կորցրել է 01.01.1999 թ., սկզբնաղբյուր՝ ՀԱՍՀԳՍՍ 1964/7, հոդված 85, Кипнис С. С., Трубников П. Я., Постатейно-практический комментарий к ГПК РСФСР, изд.-во «Юридическая литература», М., 1971 г., էջ 10:
- ¹⁰ Տե՛ս Հայկյանց Ա.Ս., Աշխատության էջ 63, Հայկյանց Ա. Ս., Միջազգային մասնավոր իրավունք, ԵՊՀ իրատարակչություն, Երևան, 2010 թ., էջեր 113-114, Стольникова М.В., Աշխատության էջ 38, տե՛ս նաև Новицкий И. Б., Сделки. Исковая давность, изд.-во «Госюриздат», 1954 г., էջ 138:
- ¹¹ Տե՛ս Հայկյանց Ա.Ս., նույն տեղում:
- ¹² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1253-րդ հոդվածի 2-րդ մաս:

- ¹³ Տե՛ս Բунк Գ. Ի., Исковая давность и международное право, журнал “Бюджетные организации”, N 2, 2001 г., Шинкевич А., журнал “Главный Бухгалтер”, N36, 2006г., հոդվածների էլեկտրոնային տարբերակները կարելի է գտնել <http://spravka-jurist.com> կայքում:
- ¹⁴ Տե՛ս թիվ ՅՕ-123-Ն օրենք, ընդունվել է 22.02.2007 թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից, ուժի մեջ է մտել 12.04.2007թ.:
- ¹⁵ Տե՛ս Холопов К. В., նշված աշխատության էջեր 515-519, Բунк Գ. Ի., Калимов Д. А., Сергеев В. П., Курс внешнеторгового права, “Издательство деловой и учебной литературы”, М., 2007 г., էջ 419:
- ¹⁶ Տե՛ս Холопов К. В., նշված աշխատության էջեր 516-517:
- ¹⁷ Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական իրավունք, բուհական դասագիրք, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003 թ. էջ 330, տե՛ս նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մաս, թիվ ՅՕ-247, ընդունվել է 17.06.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.:
- ¹⁸ Տե՛ս Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6(1) և 13-րդ հոդվածներ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ և 10-րդ հոդվածներ, Ֆրեդերիկ Կուին, Права человека и ты. Руководство для стран бывшего Советского Союза и Восточной Европы, изд.-во “ОБСЕ/БДИПЧ”, 1997 г., էջեր 19-20:
- ¹⁹ Տե՛ս նաև Philip Leach, Taking a Case to the European Court of Human Rights, Oxford University Press, 2005, էջ 249:
- ²⁰ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետը: Վկայակոչված փաստաթղթի պաշտոնական տեքստը կարելի է գտնել www.gdeza-kon.ru էլեկտրոնային կայքում:
- ²¹ Տե՛ս Советское гражданское право, под ред. О. А. Красавчикова, в 2-х томах, М., 1985 г., том 1, էջ 274, Гражданское право, учебник, в 2-х томах, под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого, том 1-ый, изд.-во “Проспект”, М., 2001 г., էջ 305, Бутнев В. В., К понятию механизма защиты субъективных прав// Субъективное право: Проблемы осуществления и защиты, Владивосток, 1989 г., էջ 10, Բարսեղյան Տ.Վ., նշված աշխատության էջ 238:

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ**ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ И РЕГУЛИРОВАНИЯ
ИНСТИТУТА ИСКОВОЙ ДАВНОСТИ В МЕЖДУНАРОДНЫХ
АВТОМОБИЛЬНЫХ ГРУЗОПЕРЕВОЗКАХ****Лилит КАМАЛЯН***Аспирантка кафедры гражданского
права ЕГУ*

Данная статья посвящена изучению особенностей применения института исковой давности в сфере отношений международных автомобильных грузоперевозок. Автором были тщательно изучены теоритические основы института исковой давности, а также практические навыки применения данного института.

В связи с особенностями международных автомобильных грузоперевозок институт исковой давности в теории гражданского права главным образом рассматривается как пресекательный срок для права предъявления требования, возникающего в рамках отношений международных автомобильных грузоперевозок. В связи с этим рассмотрен вопрос об ограничении права на судебную защиту нарушенных прав и законных интересов человека.

Автор также детально изложил в чем заключается роль исследуемого института как в гражданских, так и в транспортных отношениях.

В данной статье автором был проведен детальный анализ нормативных основ, регулирующих процесс применения

института исковой давности как в рамках международных автомобильных отношений, так и гражданско-правовых отношений Республики Армения. В связи с этим особое внимание уделено также гражданско-процессуальным нормам Республики Армения, оставляющим свой отпечаток на регулировании исследуемых отношений.

Особенно детально автором были изучены соответствующие нормы Конвенции 1956 года “О международных дорожных (автомобильных) грузоперевозках”. Примечательно, что Конвенция применительна не ко всем отношениям автомобильных грузоперевозок, а лишь к тем, которые наделены отличительными чертами, предусмотренными Конвенцией. Соответственно встает вопрос о том как же должны регулироваться те отношения, которые не являются предметом регулирования Конвенции? Касательно упомянутой ситуации в статье приведены отдельные примеры и предложены методы их регулирования.

В заключение следовало бы отметить, что автором также была проведена связь между институтами исковой давности и предъявления претензий в сфере международных автомобильных грузоперевозок, так как существующая между ними взаимосвязь играет особую роль в регулировании упомянутых отношений.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԶՅ-ՈՒՄ

Ասյա ԱՎԱԳՅԱՆ

Իրավագիտության մագիստրոս

հնտերնետի հայտնագործությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործումը փոփոխեցին մարդու վերաբերմունքը կյանքի նկատմամբ: Անդինակայելի արագությամբ զարգացող տեխնոլոգիաների շնորհիվ էլեկտրոնային բանակցությունները, պայմանագրերը և կոմերցիան դարձան ժամանակակից մարդու առօրյա:

Սոս հարյուր տաս էլեկտրոնային պայմանագիր է կնքվում յուրաքանչյուր վայրկյան¹: Համաձայն eBay կայքի տվյալների՝ այն ունի մոտ ութսունվեց միլիոն օգտվողներ ամբողջ աշխարհում, մեկ բիլիոն այցելուներ յուրաքանչյուր օր, և 2008 թվականի հաշվետվությունների համաձայն՝ եկամուտը կազմել է մեկ ամբողջ յոթանասուներեք բիլիոն ԱՄՆ դոլլար²: Ինտերնետը համարվում է աշխարհի ամենաարագ զարգացող շուկան: Այս շուկայից օգտվելու համար անհրաժեշտ է ապահովել էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը: Վերջինիս համար հիմք են ծառայում կատարելագործվող հաղորդակցման միջոցները և տվյալ ոլորտը կալուսացնող իրավական համակարգը:

Արդյո՞ք ՅՅ-ն ունի անհրաժեշտ տեխնիկական և իրավական հիմքերը այս ոլորտի միջազգային փորձը և չափանիշները մեր երկրում ներդնելու համար: Մենք կփորձենք ներկայացնել էլեկտրոնային պայմանագրերի էությունը, առանձնահատկությունները, առավելությունները, ստորագրման կարգը, ինչպես նաև ՅՅ օրենսդրության կարգավորումները և բացթողումները այս ոլորտում: Համադրելով ՅՅ իրավական համակարգը և միջազգային նորամուծու-

յունները՝ կառաջարկենք ՅՅ իրավական համակարգի կատարելագործման նոր մեխանիզմներ:

ՅՅ Բաղաքացիական օրենսգրքի³ «Գործարքներ» 18-րդ գլուխը սահմանում է, որ գործարքները ըստ կնքման ձևի լինում են գրավոր և բանավոր: ԲՕ-ի 296 հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Էլեկտրոնային պայմանագիրը փաստորեն գրավոր գործարք է: ՅՅ ԲՕ-ի «Պայմանագիր կնքելը» 29-րդ գլուխը անդրադառնում է պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ նախապայմաններին և պայմանագիրը կնքելու ձևին: ԲՕ 450 հոդվածի 3-րդ ենթակետի համաձայն. «Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով փաստաթղթեր փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշելու, որ փաստաթուղթը ելնում է պայմանագրի կողմից»: Հիմնվելով այս հոդվածի բովանդակությանը՝ կարող ենք վստահորեն նշել, որ ՅՅ օրենսդիրը նախատեսել է էլեկտրոնային պայմանագրերի կնքումը, սակայն, ցավոք, էլեկտրոնային պայմանագրերը ԲՕ-ում մատնանշվում են միայն մեկ՝ վեր նշյալ հոդվածում: Բացակայում է նաև որևէ օրենքի առկայությունը, ըստ որի՝ առավել մանրամասն կկարգավորվի էլեկտրոնային պայմանագրեր կնքելու բավականին բարդ գործընթացը:

Էլեկտրոնային պայմանագրերի օրենսդրական կարգավորումը դժվարություններ է առաջացնում նաև զարգացած

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

եվրոպական երկրներում: Առաջադեմ համարվող ԵՄ օրենսդրական համակարգում բացակայում է էլեկտրոնային պայմանագրերի սահմանումը: Խնդիրն այն է, որ տվյալ պայմանագրի սահմանումը պետք է լինի շատ ճկուն: Յուրաքանչյուր օր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում տեղի են ունենում նոր փոփոխություններ և կատարելագործումներ: Էլեկտրոնային պայմանագրի տվյալ պահի սահմանումը կարող չենք առել մի քանի վայրկյան անց ստեղծված տեխնոլոգիաների օգտագործման պահանջները: Հստակ սահմանված չեն նաև էլեկտրոնային պայմանագրերի տեսակները: Ըստ մեզ՝ էլեկտրոնային պայմանագրերը այժմ բաժանվում են երկու մեծ խմբի՝ հեռահաղորդակցման պայմանագրեր և առցանց պայմանագրեր: Հեռահաղորդակցման պայմանագրերին, որոնք ներառում են փոստային, հեռագրային, հեռատիպային և հեռախոսային պայմանագրերը, մենք այստեղ չենք անդրադառնա: Կուսումնասիրենք առցանց պայմանագրերը, որոնց տարատեսակ են համարվում էլեկտրոնային փոստի միջոցով կնքված, վեբկայքերի միջոցով կնքված* և չատերի միջոցով կնքված* պայմանագրերը:

Էլեկտրոնային փոստը փոստի էլեկտրոնային տարբերակն է*: Էլեկտրոնային փոստի միջոցով պայմանագիր կնքելը հավասարազոր է փոստի միջոցով պայմանագիր կնքելուն: Էլեկտրոնային փոստը ունի փոստի նման կառուցվածք: Էլեկտրոնային փոստում գոյություն ունի Outbox հասկացությունը, որը առօրյա փոստում փոստային արկղն է, ուր մենք նետում ենք նամակները: Այսպիսով, երբ մենք սեղմում ենք «Ուղարկել» կոճակը, մեր էլեկտրոնային նամակը հայտնվում է Outbox-ում: Հետագայում սերվերի միջոցով նամակը տեղափոխվում է և հասցվում հասցեատուների Inbox, որը նույն նամակների արկղն է փոստում:

Առցանց պայմանագրերի հանդիսացող Վեբ պայմանագրերը ժամանակակից հասա-

րակության նախընտրելի տարբերակն են: Խնայելով ժամանակը՝ մարդիկ ընտրում են իրենց անհրաժեշտ գրքերը, հագուստը, սնունդը, էլեկտրոնային տեխնիկան և այլ պարագաներ վեբկայքերից, կարող են առցանց պայմանագրի բովանդակությունը և սեղմելով «պատվիրել», «զնել» կոճակները՝ տալիս են հրահանգ, որպեսզի նախընտրած պարագաներն առաքվեն:

Չատ պայմանագրերը չատի ընթացքում կնքվող պայմանագրերն են: Այս դեպքում գործողությունները, թվում է, թե տեղի են ունենում իրական ժամանակահատվածում: Չատ պայմանագրերի կնքումը տարածված չէ և ավելի հազվադեպ է հանդիպում, քան նախորդ երկու ձևով կնքվող պայմանագրերը:

Էլեկտրոնային պայմանագրերին անցում կատարելու հետ կապված կան մի շարք խնդիրներ: Առաջինը պայմանագրի կնքման պահն է: Շատ կարևոր է հստակ իմանալ, թե որ պահին է պայմանագիրը համարվում կնքված, քանի որ մինչ այդ կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի հրաժարվել պայմանագրի կնքումից⁷: Պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ է օՖերտա և ակցեպտ: ՀՀ ԹՕ-ի 449 հոդվածի 1-ին ենթակետի համաձայն. «Պայմանագիրը կնքված է համարվում օՖերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտը ստանալու պահից»: Լ. Կոֆմենը գրում է. «Վերջերս բավականին քննարկումներ են եղել, թե երբ է էլեկտրոնային պայմանագիրը համարվում կնքված: Թվում է, թե դատարանները առավել հակված կլինեն էլեկտրոնային փոստի միջոցով պայմանագիրը համարել կնքված, և ակցեպտը կընդունվի որպես գործող միայն այն դեպքում, երբ հասցեատերը այն ստացել է: Սակայն, թե երբ է ակցեպտը համարվում ստացված, մեզ կանգնեցնում է լրացուցիչ դժվարությունների առջև: Ակցեպտը կարող է համարվել ստացված, երբ վերոնշյալը հասնում է օՖերտան ուղարկած անձի էլեկտրոնային փոստին, կամ երբ օՖերտան ուղարկած անձը մուտք է գործում իր էլեկտրոնային փոստ: Նույնիսկ, բայց ավելի քիչ հավանական է, որ այն կարող է համարվել

ստացված, երբ օֆերտան ուղարկած անձը ընթերցում է նամակը»*:

Այսպիսով, գրեթե անհնար է որոշել, թե երբ է ակցեպտը համարվում ստացված, երբ գործ ունենք էլեկտրոնային փոստի միջոցով կնքվող պայմանագրերի հետ: Թվում է, թե էլեկտրոնային նամակների ուղարկումն ու ստացումը վայրկյաններ են տևում: Սակայն այս ամենի հետևում թաքնված են բարդ տեխնիկական հնարքներ, որոնց խախտումները կարող են անցանկալի հետևանքներ ունենալ գործընկերների համար: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել, թե տեխնիկապես որ պահին է ակցեպտը համարվում ընդունված: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ էլեկտրոնային փոստի միջոցով պայմանագիրը կնքված համարել, երբ ակցեպտ պարունակող էլեկտրոնային նամակը մուտք է գործում ստացողի Inbox, և չկա նամակի ընթերցումը անհնար դարձնող տեխնիկական որևէ խնդիր:

Այլ է իրադրությունը Վեբ պայմանագրերի կնքման հարցում: Այստեղ մենք գործ ունենք նոր սերնդի պայմանագրերի հետ: Վեբ պայմանագրերը հիմնականում կոչվում են «Ժամկետներ և Պայմաններ»: Այստեղ բանակցելու հնարավորություն չկա: Մի կողմը, որը հանդիսանում է վեբկայքը, առաջարկում է իր ծառայություններն ու ապրանքները, իսկ մյուս կողմը, որը կարող է լինել վեբկայքի ցանկացած այցելու, կարող է առաջարկվող «Ժամկետները և Պայմանները» և համաձայնվում կամ մերժում: Համաձայնվելու դեպքում այցելուն սեղմում է «Համաձայն եմ» կոճակը, կատարում է վճարում, և պայմանագիրը համարվում է ստորագրված: Այստեղ նույնպես խնդիրը մնան է էլեկտրոնային պայմանագրերի դեպքում առաջացող հարցին, թե երբ է պայմանագիրը համարվում կնքված: Արդյո՞ք կնքման պահ է համարվում կոճակը սեղմելու, վճարումը կատարելու, թե վեբկայքի կողմից մատակարարման կամ ծառայությունների մատուցման պատվերները ստանալու պահը: Տվյալ դեպքում, կարծում ենք, պայմանագիրը կնքելու պահ պետք է համարվի վճարումը կա-

տարելու պահը, երբ գնորդը կամ ծառայություններից օգտվողը տալիս է իր համաձայնությունը՝ իր բանկային հաշվից գումարը փոխանցել վեբկայքի սեփականատեր հանդիսացող կազմակերպության բանկային հաշվին: Կողմերի շիսկերը նվազեցնելու համար անհրաժեշտ է «Ժամկետներ և Պայմաններում» սահմանել նրանց հետագա քայլերը այն դեպքում, երբ դրամական միջոցները, համաձայն գնորդի կամ ծառայություններից օգտվողի հրահանգի, փոխանցվել են վեբկայքի սեփականատեր հանդիսացող կազմակերպության բանկային հաշվին, բայց տեխնիկական խախտումների միջոցով գումարը հասանելի չէ: Այս դեպքում պայմանագիրը անհրաժեշտ է համարել կնքված, և պայմանագրի վճարման ուշացման հետ կապված վնասների համար պատասխանատվություն պետք է կրեն կողմերին սպասարկող բանկերը:

Նմանատիպ է խնդիրը նաև Չատ պայմանագրերի դեպքում: Այստեղ ամեն ինչ տեղի է ունենում իրական ժամանակում: Համաձայն «Էլեկտրոնային հաղորդակցության» մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ իրական ժամանակը կամ գրեթե իրական ժամանակը այնպիսի ուղիներով փոխանցվող հաղորդում է, որոնց բնորոշ է յուրաքանչյուր ուղղությամբ 400 միլիվայրկյանից պակաս ցանցային ուշացումներ կամ ավելի երկար ուշացումներ, եթե «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծվող հանձնաժողովը գտնում է, որ հաղորդակցության կողմերն այդ դեպքում ևս ընկալում են հաղորդակցությունը որպես իրական ժամանակում տեղի ունեցող: Տեխնիկական այսպիսին է. երբ նամակը ուղարկողը գրում է «Բարև», ապա «Բարև» բառը անմիջապես հայտնվում է ստացողի էկրանին: Այս դեպքում նույնպես պայմանագրի կնքման պահը մնում է անորոշ: Այն պետք է կնքված համարել, երբ նամակ ուղարկողը սեղմում է «Ռեդարկել» կոճակը, երբ նամակը հայտնվում է ստացողի էկրանին, թե երբ նա կարդում է նամակը: Չէ՞ որ հնարավոր է, որ տեխնիկական խնդիրների պատճա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

ռով նամակը չհասնի, կամ դրա ընթերցումը դառնա անհնար: Տվյալ պարագայում ճիշտ է նամակի ստացման պահ համարել այն, երբ ստացողը հնարավորություն ունի ընթերցելու այն:

Առցանց պայմանագրեր կնքելու հաջորդ խնդիրը կողմերին տարրորոշելու հարցն է: Երբ պայմանագիրը ստորագրվում է փաստաթղթի տեսքով, կողմերը ռեալ անձինք են, ովքեր ստորագրում, կնքում են փաստաթուղթը միմյանց ներկայությամբ: Պայմանագրային պարտավորությունները պայմանագրին համապատասխան չկատարելու դեպքում պատասխանատվության հարցը հստակորեն լուծված է կողմերի միջև: Էլեկտրոնային աշխարհում այս հարցը շատ ավելի բարդ է լուծվում: Երբ կողմերը ցանկանում են էլեկտրոնային փոստի միջոցով պայմանագիր կնքել, նրանք նախևառաջ պետք է ճշտեն, թե ում է պատկանում տվյալ էլեկտրոնային փոստի հասցեն: Գաղտնիք չէ, որ մեր օրերում էլեկտրոնային փոստ կարող է ունենալ ցանկացած անձ, սովորաբար անվճար: Էլեկտրոնային փոստի ստեղծման գործընթացը թույլ է տալիս կեղծել կամ թաքցնել իրական տվյալները: Այս տվյալները ոչ ոք չի ստուգում: Ավելի քան պարզ է, որ մեծանում է խարդախությունների քանակը, երբ գործարքներ են իրականացնում անհայտ մարդիկ հեռավոր երկրների կամ նույնիսկ անհայտ տարածությունների միջև⁹: Խնդիրն այն է, որ կողմերը երբեք չեն կարող համոզված լինել, թե ում հետ են բանակցում: Այս իսկ պատճառով գործարար աշխարհը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում այս հարցի հանդեպ: Անհրաժեշտություն կա ապացուցելու, որ էլեկտրոնային դարաշրջանում կարող են ապահովել հաղորդակցության իսկությունը, ամբողջությունը, գաղտնիությունը: Ձեռագիր ստորագրությունները ավանդաբար եղել են փաստաթղթերի ինքնությունը և ամբողջականությունը ապահովող լավագույն երաշխիքները: Ձե-

ռագիր ստորագրությունները հաստատում են այն անձի ինքնությունը, ով եղել է այդ փաստաթղթի ստեղծողը, և մատնանշում են համաձայնություն փաստաթղթի բովանդակությանը¹⁰: Որպեսզի ստորագրությունը վավեր լինի և գործի, անհրաժեշտ է. ա) հաստատի ստորագրողի ինքնությունը, բ) այն ստորագրելու կամք հաստատի, գ) ապացուցի ստորագրողի համաձայնությունը պայմանագրի բովանդակությանը¹¹:

Անհրաժեշտ է, որ էլեկտրոնային աշխարհում նույնպես ստորագրությունը կատարի նույն՝ վերը նշված գործառնությունները: Սա չափազանց կարևոր հարց է էլեկտրոնային պայմանագրերի կնքման համար¹²:

ՀՀ ՔՕ 296 հոդվածի 3-րդ ենթակետը սահմանում է, որ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով: 2004 թվականին ընդունվել է «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրությունների մասին» ՀՀ օրենքը¹³, որի նպատակն է կարգավորել էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում առաջացող հարաբերությունները: Վերջինիս հաջորդեց «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք և մի շարք որոշումներ, որոք նպատակ ունեին ներմուծելու էլեկտրոնային հաղորդակցությունը ՀՀ-ում: ԵԹՍ օրենքի 4 հոդվածը սահմանում է, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացա-

ռությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար: Հարց է ծագում, թե արդյոք գաղտնաբառերը, թվայնացված ձեռագիր ստորագրությունները, լուսային գրիչով (Light Pen) ստորագրությունները համարվում են էլեկտրոնային և կարող են բավարարել ներկայիս ժամանակաշրջանի պահանջները: Ըստ ձևի վերոնշյալները համարվում են էլեկտրոնային և կցվում են էլեկտրոնային տեղեկատվությանը: Սակայն խնդիրն այն է, որ այդպիսի ստորագրությունները հուսալի չեն: Օրինակ, գաղտնաբառերը հեշտությամբ կարող են վերահսկվել, որի հետևանքով խարդախությունների թիվը կտրուկ աճում է: Եվ քանի որ հեշտ է կեղծել, հետևաբար խոսք չի կարող լինել անձին նույնականացնելու մասին: Այս իսկ պատճառով կրիպտոգրաֆիայի մեթոդներով ստացված էլեկտրոնային ստորագրությունները այժմ համարվում են ամենից վստահելի: ԵԹՍ օրենքը սահմանում է, որ էլեկտրոնային թվային ստորագրությունը էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն է, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից և աղավաղումներից պաշտպանելու համար:

Մարտին Հոգը ասում է. «էլեկտրոնային ստորագրությունը նկարագրվում է որպես էլեկտրոնային տեղեկատվության ապահովման կարևոր միջոց, որը օգտագործվում է հաղորդակցությունը նույնացնելու համար նույն կերպ, ինչպես ձեռագիր ստորագրությունը, որը տառերի յուրահատուկ ձև է, նույնականացնում է անհատականությանը»¹⁴:

էլեկտրոնային թվային ստորագրության

հավաստագրման կենտրոնների հավատարմագրումն¹⁵ իրականացնող ՀՀ կառավարության լիազոր մարմին է համարվում ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը¹⁶: Վերջինս օրենքի համաձայն և ՀՀ կառավարության սահմանված կարգով իրականացնում է հավատարմագրման գործընթացը, վարում է ՀՀ հավատարմագրված հավաստագրման կենտրոնների մատյանը (ռեգիստրը), վերահսկում է հավատարմագրված հավաստագրման կենտրոնների գործունեության համապատասխանությունը գործող օրենսդրությանը, իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

2009 թվականին ՀՀ կառավարության կողմից ստեղծվել է էլեկտրոնային կառուցվածքների ներդրման գրասենյակ՝ «ԷԿԵՆԳ» ԲԲԸ: Ներկայումս «ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ն ՀՀ-ում էլեկտրոնային ստորագրություններ տրամադրող միակ հավատարմագրված հավաստագրման կենտրոնն է¹⁷: Հավաստագրման կենտրոնի հավատարմագրման համար հիմք են ծառայում հավաստագրման կենտրոնի կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի, այդ հավաստագրերին համապատասխանող էլեկտրոնային թվային ստորագրությունների ստեղծման ապարատային և (կամ) ծրագրային միջոցների ու իր կողմից մատուցվող էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված այլ ծառայությունների՝ ՀՀ կառավարության հաստատած չափանիշներին համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատները՝ տրված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից միակողմանիորեն կամ երկկողմանիորեն ճանաչված տեղական կամ միջազգային սերտիֆիկացնող մարմնի կողմից¹⁸: Համաձայն օրենքի հավաստագրման կենտրոնները պարտավոր են.

ա) իրենց ծառայությունների մատուցման համար ստորագրող անձի հետ կնքել համապատասխան պայմանագիր՝ հավաստագրեր տրամադրելու, ինչպես նաև էլեկտրոնային թվային ստորագրության

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հետ կապված այլ ծառայություններ մատուցելու վերաբերյալ,

բ) տրամադրել էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման և ստուգման տվյալները,

գ) հաշվառել իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերը և ստուգման տվյալները,

դ) հավաստել իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի և էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների պատկանելիությունը ստորագրող անձին,

ե) նույնականացնել և հաստատել էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և հավաստագրի համապատասխանությունը,

զ) երաշխավորել էլեկտրոնային թվային ստորագրության պաշտպանվածությունը,

է) նախքան անձի հետ ծառայությունների մատուցման մասին պայմանագիր կնքելը պատշաճ ձևով տեղեկացնել նրան էլեկտրոնային թվային ստորագրության օգտագործման պայմաններին, ներառյալ՝ դրա օգտագործման սահմանափակումները,

ը) էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալներ տրամադրելիս ապահովել այդ ծառայության մատուցման գաղտնիությունը՝ իրենց մոտ չպահպանելով էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալները:

Հավատարմագրվող հավաստագրման կենտրոնների կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերը պետք է համապատասխանեն հետևյալ ալգորիթմների ստանդարտներից որևէ մեկին՝

1) առնվազն 1024 բիտ երկարությամբ բանալի ունեցող, դիսկրետ լոգարիթմների վրա հիմնված ալգորիթմների,

2) առնվազն 512 բիտ երկարությամբ բանալի ունեցող, էլիպիկ կորերի վրա հիմնված ալգորիթմների¹⁹:

ԷԹՍ օրենքի 13 հոդվածի համաձայն՝ հավաստագիրը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

ա) հավաստագրի եզակի գրանցման համարը՝ ըստ տվյալ կենտրոնի.

բ) անձի անունը, ազգանունը կամ նրա կեղծանունը (մտացածին անունը).

գ) էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

դ) էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի տրման օրը, ամիսը, տարեթիվը, իսկ եթե էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրն ունի գործողության ժամկետ, ապա նաեւ այդ ժամկետը.

ե) էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնի անվանումը, գործունեության իրականացման հասցեն եւ իրավաբանական անձի գտնվելու վայրը:

Էլեկտրոնային թվային ստորագրության օգտագործման կարգը սահմանում է էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման միջոցներն արտադրողը: ՀՀ-ում այդպիսին հանդիսանում է «ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ն: Հավատարմագրվող հավաստագրման կենտրոնի կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության ձևաչափը պետք է համապատասխանի Հեռահաղորդակցության միջազգային կազմակերպության կողմից մշակված հանրային (բաց) կրիպտոգրաֆիկ բանալիների (ստուգման տվյալների) տարածման և նույնականացման չափանիշներին²⁰: Հանրային (բաց) կրիպտոգրաֆիկ բանալու մեխանիզմը հետևյալն է. ֆիզիկական կամ իրավաբանական անձը, դիմելով հավաստագրման կենտրոն, ձեռք է բերում էլեկտրոնային թվային ստորագրություն: Էլեկտրոնային թվային ստորագրությունը հանրային/անձնական բանալիների համադրությունն է: Բանալին կող է, մշակների ամբողջություն: Ֆիզիկական կամ իրավաբանական անձը տեղեկացնում է իր գործընկերներին հանրային բանալու տվյալները, իսկ անձնական բանալու տվյալները մնում են գաղտնի: Ցանկացած անձ, ով ունի ֆիզիկական կամ իրավաբանական անձի, այ-

սինքն ստորագրողի հանրային բանալին, կարող է հավաստիանալ, որ հաղորդագրությունը կողավորվել է ստորագրողի անձնական բանալու միջոցով և կարող է ապակողավորել հաղորդագրությունը ստորագրողի հանրային բանալու միջոցով: Լանս Ռոզը ասում է. «Յուրաքանչյուր անձ էլեկտրոնային փաստաթուղթ ստորագրելիս օգտագործում է թվային ստորագրության ծրագրային ապահովում, որի օգնությամբ ստեղծվում է էլեկտրոնային փաստաթղթին կից և վերաբերող փոքր տեղեկատվություն, և դա կողավորում է իր անձնական բանալու օգնությամբ՝ այսպիսով ներառելով ստորագրված պայմանագիրը: Անձին նույնականացնելու համար անհրաժեշտ է ապակողավորել կողավորված ստորագրությամբ փաստաթուղթը՝ օգտագործելով անձի հանրային բանալին և ցույց տալ, որ տեղեկատվությունը հավաստի է: Այն փաստը, որ հանրային բանալին ապակողավորում է փաստաթուղթ, տեղեկատվությունը ապացուցում է, որ վերջինս կողավորվել է՝ օգտագործելով նույն անձի անձնական բանալին»²¹:

Ստորագրող անձի հետ համագործակցող անձը իրավունք ունի ցանկության դեպքում դիմելու հավաստագրման կենտրոն: ԵԹՍ օրենքի 12 հոդվածի դ) ենթակետի համաձայն՝ հավաստագրման կենտրոնը պետք է հավաստի իր կողմից տրամադրված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի և էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների պատկանելիությունն ստորագրող անձին:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ն վերջին տարիներ ընթացքում բավականին առաջընթաց է գրանցել՝ ՀՀ օրենսդրական դաշտը հազեցնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը կարգավորող օրենքներով և որոշումներ: Պահի դրությամբ ՀՀ-ում մոտ 5700 անձ օգտվում է էլեկտրոնային ստորագրություններից²²: Այսուհանդերձ, դեռևս բավականին աշխատանք պետք է կատարվի այս ոլորտում կայուն, գործող օրենսդրական դաշտ ունենալու համար: Նախ և առաջ անհրաժեշտ է տեղեկատվա-

կան տեխնոլոգիաների մասնագետների և իրավաբանների համագործակցություն, որպեսզի օրենքները լինեն և իրավաբանորեն, և տեխնիկապես հստակ:

Ճիշտ է, ՀՀ ԲԾ-ն նախատեսում է պայմանագրերի կնքման էլեկտրոնային ձևը, բայց այս ոլորտը պահանջում է հարցի բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրում և լուծում՝ հետագա խարդախություններից խուսափելու համար: Նախ և առաջ պետք է տրվի էլեկտրոնային պայմանագրի սահմանումը, որը, ինչպես արդեն նշվեց, բավականին բարդ, սակայն առաջնահերթ հարց է: Այնուհետև, պայմանագրի կնքման գործընթացի տեխնիկական բարդությունները հաշվի առնելով, պետք է սահմանվի, թե որն է համարվում ակցեպտի ստցաման պահ, և որն է համարվում պայմանագրի կնքման պահ: Ճիշտ է սահմանել, թե էլեկտրոնային ձևով ապրանքներ մատակարարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից ինչպիսի տեղեկատվության հաղորդումը պետք է պարտադիր լինի գնորդի կամ այդ ծառայություններից օգտվողի համար: Այդպիսիք կարող են լինել, օրինակ, քայլ առ քայլ նկարագրված գործողությունները պայմանագիրը կնքելու համար, կնքված պայմանագիրը մատակարարողի կամ ծառայությունները մատուցողի էլեկտրոնային համակարգում պահպանելու և գնորդի կամ ծառայություններից օգտվողի համար էլեկտրոնային փաստաթղթի հետագա հասանելի լինելու փաստը, սխալ պատվերը շտկելու միջոցները և այլն:

Ինչ վերաբերում է ԵԹՍ օրենքին, ապա անհրաժեշտ է շեշտել, որ օրենքը ԵՄ օրենսդրությանը համապատասխան կարգավորում է էլեկտրոնային ստորագրություններին առնչվող իրավական հարաբերությունները: Այսուհանդերձ, քանի որ ՀՀ-ում դեռևս չկա առանձին օրենք, որը կկարգավորի էլեկտրոնային պայմանագրերի ոլորտը, ճիշտ կլինի ԵԹՍ օրենքում առանձնացնել այն դեպքերը, երբ էլեկտրոնային ստորագրությունների կիրառումը համագոր չէր լինի ձեռագիր ստորագրությունների: Որպես այդպիսի դեպք կարելի է նշել

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նոտարական վավերացման կարիք պահանջող պայմանագրերի և փաստաթղթերի

ստորագրումը:

Քանի որ ՀՀ համարվում է տեխնիկապես առաջատար երկիր, ուստի ցանկալի է, որ էլեկտրոնային իրավական հարաբերությունների ոլորտը օրենսդրորեն կայուն և անթերի լինի:

¹ Տե՛ս <http://en.wikipedia.org/wiki/Contract>:

² Տե՛ս Lilian Edwards, Charlotte Waelde, *Law and the Internet*, Third Edition, Hart Publishing, Oxford and Portland, Oregon, 2009, էջ 89:

³ Այսուհետ՝ ՔՕ:

⁴ Այսուհետ՝ Վեբ պայմանագրեր:

⁵ Այսուհետ՝ Չատ պայմանագրեր:

⁶ Տե՛ս Lilian Edwards, Charlotte Waelde, *Law and the Internet*, Third Edition, Hart Publishing, Oxford and Portland, Oregon, 2009, էջ 18:

⁷ Տե՛ս Paul Dobson, Rob Stokes, *Commercial Law*, 7th Edition, THOMSON SWEET & MAXWELL, 2008, էջ 13:

⁸ Տե՛ս Laurence Koffman, Elizabeth Macdonald, *The Law of Contract*, Sixth Edition, Oxford University Press, Oxford, 2007, էջ 33:

⁹ Տե՛ս Lorna Brazell, *Electronic Signatures and Identities Law and Regulation*, Second Edition, SWEET and MAXWELL, London, 2008, էջ 4:

¹⁰ Տե՛ս Lilian Edwards, Charlotte Waelde, *Law and the Internet*, Third Edition, Hart Publishing, Oxford and Portland, Oregon, 2009, էջ 38:

¹¹ Տե՛ս Chris Reed, John Angel, *Computer Law-The Law and Regulation of Information Technology*, Sixth Edition, Oxford University Press, Oxford, 2007, էջ 209:

¹² Տե՛ս Jill Poole, *Contract Law*, 9th Edition, Oxford University Press, 2008, էջ 186-187:

¹³ Այսուհետ՝ ԷԹՍ օրենք:

¹⁴ Տե՛ս Lilian Edwards, Charlotte Waelde, *Law and the Internet*, Third Edition, Hart Publishing, Oxford and Portland, Oregon, 2009, էջ 38:

¹⁵ Կարծում ենք՝ սխալ է տվյալ և ստորև նշված՝ էլեկտրոնային ստորագրությունները կարգավորող մի շարք որոշումներում «հավաստագրման կենտրոն» և «հավատարմագրում» բառերի համատեղ կիրառումը: Գիշտ է՝ ԷԹՍ օրենքը սահմանում է, որ հավաստագրման կենտրոնը էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրեր տրամադրող և էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված այլ ծառայություններ մատուցող կազմակերպություն է, իսկ հավատար-

մագրումը՝ հավաստագրման կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակի ճանաչումն է պետության կողմից, սակայն տվյալ բառերը, նույնանման հնչողություն ունենալով, շփոթությունների տեղիք են տալիս: Գիշտ կլինե՞ր իրավական ակտերում հանդիպող «հավաստագրման կենտրոն» արտահայտությունը փոխարինել, օրինակ, «էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված ծառայություններ մատուցող կենտրոն» արտահայտությամբ:

¹⁶ Տե՛ս ՀՀ կառավարության «էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրումն իրականացնող ՀՀ կառավարության լիազոր մարմին հաստատելու մասին» 4 օգոստոսի 2005 թվականի N 1594-Ն որոշումը:

¹⁷ Տե՛ս <http://www.ekeng.am>:

¹⁸ Տե՛ս ՀՀ կառավարության «էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» 4 օգոստոսի 2005 թվականի N 1596-Ն որոշումը:

¹⁹ Տե՛ս ՀՀ կառավարության «էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոններ հավատարմագրման համար դրանց կողմից մատուցվող ծառայություններին առաջադրվող տեխնիկական չափանիշները հաստատելու մասին» 25 հունվարի 2008 թվականի N 116-Ն որոշումը:

²⁰ Տե՛ս ՀՀ կառավարության «էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոններ հավատարմագրման համար դրանց կողմից մատուցվող ծառայություններից առաջադրվող տեխնիկական չափանիշները հաստատելու մասին» 25 հունվարի 2008 թվականի N 116-Ն որոշումը:

²¹ Տե՛ս Lance Rose, *Netlaw-Your Rights in the Online World*, Osborne McGraw-Hill, U.S.A., 1995, էջ 80:

²² Տե՛ս <http://www.aysor.am/am/news/2011/03/14/e-registr/>:

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ЭЛЕКТРОННЫХ ЦИФРОВЫХ ДОГОВОРОВ И ЭЛЕКТРОННЫХ ПОДПИСЕЙ В РА

Ася АВАКЯН

Магистр юриспруденции

Успешный бизнес в 21-ом веке основан на правильном использовании информационных технологий. Приблизительно десять электронных контрактов подписывают каждую секунду во всем мире. Интернет считается самым большим рынком в мире бизнеса. Чтобы иметь пользу от этого рынка, нужно обеспечить электронный оборот документов. Надо следить за развитием ин-

формационных технологий и обеспечить соответствующий правовой режим.

Имеет ли РА технологические и правовые основы для внесения международной практики и стандартов? В пределах этой работы мы выясним суть электронных контрактов, их особенности, привилегии, условия подписания, правовое регулирование РА в этой области и упущения в правовой системе. Сопоставляя правовую систему РА и международный опыт, рассмотрим возможные улучшения в этой сфере.

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ**

**ՍԻՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԿԱՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԴԻՏԱՐԿԵԼԻՍ**

Տարոն ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ

*«Կարևոր սկզբունքները կարող են
և պետք է լինեն ճկուն»¹:*

Սիներգետիկան գիտական շրջանառություն է մտցնում իր հատուկ լեզուն, առանց որի անչափ դժվար կլինի հետազոտել և ուսումնասիրել կարծես թե անկանխատեսելի վարքագիծ դրսևորող, քառսի սաղմնային վիճակում գտնվող հասարակական և պետական համակարգերը, քանի որ դրանց հետազոտությունը նախկին՝ դասական գիտության մեթոդաբանությամբ բավարար չէ և անխուսափելիորեն հանգեցնում է ճգնաժամերի հենց գիտության բնագավառներում: Առաջանում է անհրաժեշտություն վերանայել և այն տեսանկյունը, որից դիտարկվում է հետազոտության օբյեկտը, և՛ գործիքները, որոնց օգնությամբ դիտարկվում է այն: Շատ դեպքերում (և գիտության պատմությունը հաստատում է այդ) անցում է կատարվում նախկինում մոռացված, նույնիսկ քամահրանքով անտեսված գիտական նորարարություններին, որոնք, միացվելով և երբեմն կլանելով նոր գիտական բացահայտումները, կարողանում են հետազոտվող օբյեկտի ամբողջությամբ այլ պատկեր բացել հետազոտողի առջև: Դա հնարավորություն է տալիս տեսնելու և հասկանալու երևույթներ, որոնք մինչ այդ կա՛ն հասկանալի էին միայն հետևանքների տեսքով, կա՛ն ընդհանրապես հասկանալի չէին: Այդ-

պիսի սիներգետիկ հետազոտության համար կարևոր են մի շարք հասկացությունների նշանակությունը, որոնք կփորձենք բացահայտել սույն հոդվածում:

Ատորակտոր²: Ատորակտորները բարձր, տեսական մակարդակի ֆենոմեններ են և չեն կարող գոյություն ունենալ անհատական մասերի մակարդակով: Դրանք առաջանում են, երբ համալիր և բարդ համակարգում դրա բազմաթիվ մասեր փոխազդեցության մեջ են գտնվում: Լինելով նաև դինամիկ ֆենոմեններ՝ դրանց ձևավորումը հանդես է գալիս որպես ինքնակազմակերպման ընթացք: Երբ համակարգի մասերը ինչ-ինչ պատճառներով վերադասավորվում են և վերակազմակերպում իրենց կապերը, առկա ատորակտորը կարող է լուծվել և նոր ատորակտոր ձևավորվել: Այստեղ առաջ է գալիս կապերի փոփոխության միջոցով համակարգի զարգացման հետևանքների վրա ազդեցություն ունենալու հնարավորությունը: Ավելի պարզ ասած՝ ատորակտորն իրավիճակի տեսական զարգացման ուղղություն է, որին համահունչ դինամիկ համակարգը զարգանում է: Երկրաչափորեն ատորակտորը կարող է պատկերվել որպես կետ, գիծ, կոր, շրջան, պարույր, չափազանց բարդ հետազոծային պատկերներով և այլն³: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ ատորակտորը «տարածությունում ցանկացած ուղեգծի վերջնական վիճակն է»⁴:

Ատորակտորները, որպես կանոն, բնորոշվում են ֆազային տարածությունում (քառաչափ տարածաժամանակային կորդինատային հարթությունում) պատկերմամբ: Մեր կարծիքով, ատորակտորները

տարածությունում և ժամանակում իրական կառուցվածքներ են, որոնց համահունչ զարգանում են ինքնակազմակերպման գործընթացները բաց, ոչ գծային ինքնազարգացող, հասարակական համալիր համակարգերում: Կառուցվածք-ատտրակտորները էվոլուցիայի նպատակներն են: Նման նպատակներ կարող են հանդիսանալ ինչպես քառասյին իրավիճակները, այնպես էլ կառուցվածքների զանազան տեսակները, որոնք ունեն համաչափ /սիմետրիկ/, ուղիղ կառուցվածք և ինչ-որ իմաստով միջավայրում արձագանքային արտահայտվող բնույթ:

Հասարակության քաղաքական, պետական, իրավական գործընթացների հետազոտությունը ցույցադրում է դրանցում առկա մշտապես բախվող անհրաժեշտ և պատահական երևույթներ. անընդհատ առաջանում են անկայուն, ոչ դիմացկուն գործընթացներ, որոնք հանգեցնում են նրան, որ մտադրված և ծրագրավորված զարգացումը ընդհանրապես տեղի չի ունենում, այլ իրականում դա ենթարկվում է ինչ-որ ինքնակազմակերպման սկզբունքի⁶: Հասարակական համակարգերի վերաբերմամբ կարելի է ասել, որ «ատտրակտոր» հասկացությունը մոտ է «նպատակ» հասկացությանը, և այն սոցիոլոմի համար կատարում է նաև դրա զարգացման տեսլականի դեր: Նպատակի առկայությունը բացվում է ամենից լայն, ոչ անտրոպոլոգիական իմաստով՝ որպես նպատակահարմարություն (բայց ոչ թե նպատակահարմարություն)՝ բաց, ոչ գծային համակարգի վարքագծի ուղղվածություն, որպես համակարգի «վերջնական իրավիճակի» առկայություն: Սիներգետիկայում ատտրակտորի ներքո հասկանում են համակարգի հարաբերականորեն կայուն վիճակը, որը կարծես թե քաշում է դեպի իրեն տարբեր սկզբնական պայմաններով որոշվող համակարգի «ուղեգծերի» ամբողջությունը⁶:

Կետային և կրկնվող ատտրակտորները նյութոսոսյան ֆիզիկայի և դեկարտյան գիտության համար ցանկացած համակարգե-

րի շարժումը բնութագրող հիմնական միջոցներից մեկն էին. բոլոր կայուն շարժումները համարվում էին այդ վիճակների տարատեսակներից մեկը: 1960-ականների սկզբներին Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի գիտաշխատող Էդուարդ Լորենցը բացահայտեց մեկ այլ ատտրակտոր, որը Դեվիդ Ռուելի և Ֆլորիս Թակենսի կողմից անվանվեց «տարօրինակ ատտրակտոր»⁷: Այս ատտրակտորը ունի երկրաչափական կառուցվածք, որը գոյություն ունի սահմանափակ ֆազային տարածությունում, և ունի որոշակի կայունություն այն իմաստով, որ կայունությունը խանգարված՝ անկայունությունում հայտնված համակարգը արագորեն վերադառնում է այն իրավիճակին, որը ներկայացնում է ատտրակտորը: Այնուամենայնիվ, ի տարբերություն այլ ատտրակտորների՝ «հանդիսանալով ֆռակտալ օբյեկտ»⁸՝ սա ոչ պարբերական է, ոչ քվադրպարբերական, քանի որ նրա կողմից ներկայացվող համակարգի վարքագիծը երբեք իրեն չի կրկնում: Այլ կերպ՝ տարօրինակ ատտրակտորը ոչ գծայնության և արտա- և ներհամակարգային փոխներգործության արդյունք է, որը հատուկ է քառասյին համակարգերին. մասնավորապես՝ անկայուն հասարակական համակարգերին:

Տարօրինակ ատտրակտորների վարքագծում կանխատեսելիության բացակայությունը երկու երևույթի արդյունք է: Առաջինն այն է, ինչ է. Լորենցը անվանում էր «սկզբնական պայմաններից զգայուն կախվածություն»: Նա բացահայտեց, որ ոչ գծային համակարգերը չափազանց զգայուն են միջավայրային աննշան փոփոխություններին: Այս երևույթը անվանվեց «թիթեռի ազդեցություն /էֆեկտ/»⁹: Անկանխատեսելիության երկրորդ պատճառը գործ ունի փոխազդեցությունների և, ինչպես նշել է 19-րդ դարի մաթեմատիկոս Հ. Պուանկարեն, արձագանքի հետ¹⁰:

Փոխազդող մասնիկները ցուցադրում են «փոխկապվածություն» (“correlation”) կոչվող մեկ այլ կարևոր ֆենոմեն: Երբ հա-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

մակարգի երկու մասնիկ, անդամ փոխազդում են, նրանց վարքագիծը ենթադրում է փոխկապվածության որոշակի ձև, հաճախակաճությունը սկսում է հարմոնիայի որոշակի մակարդակով կրկնվել: Սա օգնում է բացատրել քառասյին կայունությունը կամ ատտրակտորները:

Հետաքրքիր է, որ նույն բանը տեղի է ունենում նաև մարդկային սոցիալական վարքագծի մակրոմակարդակում: Անհատները՝ որպես հասարակական համակարգի մասնիկներ, մտնում են համալիր հարաբերությունների, փոխազդեցությունների մեջ, և որոշակի ժամանակ դրանց պարբերական կրկնվելուց հետո արդեն տեսանելի է դառնում, թե ինչպես է առաջանում կարգավորվածություն, և այստեղ սոցիալական քառսի, համալիր համակարգերի, սիներգետիկայի տեսությունները օգնում են հետազոտել հասարակական վարքագիծը և ընդհանրապես՝ հասարակարգն ու իրավակարգը:

Տարօրինակ ատտրակտորը սոցիալական ֆենոմենի բնութագրիչներից է: Այն կայուն է, սակայն դրա ուղեգիծը երբեք չի կրկնվում: Նմանապես, սոցիալական վարքագիծը կայուն է, սակայն նույնությամբ չի կրկնվում: Տարօրինակ ատտրակտորը փոփոխվելու հատկություն ունի. այն կարող է աճել կամ կրճատվել լայն կամ նեղ վարքագիծ դրսևորելու համար, այն կարող է փոխել իր դրսևորումները, այն կտրուկ ձևով կարող է փոփոխվել մեկ այլ ատտրակտորի և նույնիսկ կարող է անհետանալ¹¹:

Սոցիալական ատտրակտորները, նմանապես, ավելի բովանդակալից են ժամանակի մեջ և երբեմն արմատական փոփոխություններ են դրսևորում (օրինակ՝ ԽՍՀՄ-ի հետ 1980-ական թթ. կատարվածը)¹²: Հետաքրքրական է, որ ատտրակտորների որոշակի տեսակներ կարող են «սովորել», դրանք կարող են ունենալ տեղե-

կատվություն իրենց անցյալի մասին, կարող են նախագայլ, կանխատեսել ապագան և կարող են վերաարտադրվել: Սա մեծամասամբ վերաբերում է հասարակական համակարգերի զարգացումները բնութագրող ատտրակտորներին, քանի որ հասարակություններն են, որ սեփական համակարգային զարգացումների անցյալի փորձը յուրացնելու և դրա համաձայն ապագան կառուցելու համար ունակություն ունեն:

Բիֆուրկացիա (ճյուղավորում): Բիֆուրկացիանները ժամանակակից ոչ գծային, քառսային, անկայուն համակարգերի ուսումնասիրության կարևորագույն երևույթներից են և գտնվում են գիտական լայն ուսումնասիրությունների ներքո¹³: Ի. Պրիգո-ժինը և Ի. Ստեգենսը էվոլուցիայի տարբեր ուղղությունները նախ և առաջ կապում են հաստատուն, կոնստանտ միջավայրի փոփոխության ժամանակ ճյուղավորումների հետ¹⁴:

Մաթեմատիկական բնորոշման մակարդակով «բիֆուրկացիան» նշանակում է ոչ գծային դիֆերենցիալ հավասարման որոշումների ճյուղավորում: Բիֆուրկացիայի ֆիզիկական իմաստը հետևյալն է. բիֆուրկացիայի կետը բաց, ոչ գծային համակարգի էվոլուցիայի ուղիների ճյուղավորման կետն է: Այդ պատճառով ոչ գծային համակարգը կարելի է բնորոշել որպես այնպիսին, որն իր մեջ «թաքցնում է» բիֆուրկացիաներ¹⁵: Հասարակական զարգացման որոշակի փուլերում, երբ համակարգը՝ որպես ամբողջություն, մտնում է ոչ կարգավորված, անկայուն զարգացման փուլ, որտեղ երևույթները միմյանց հաջորդում են արագացման տեմպերով, համակարգն անընդհատ կատարում է էքզիստենցիալական ընտրություն հետագա իր զարգացումն իրականացնելու համար: Հենց այդ ընտրություններն էլ, որոնք ընդունակ են սկզբունքորեն փոփոխել համակարգի վարքագիծը, իրենցից ենթադրում են բիֆուրկացիայի արտահայտություն: Դրանք տեղի են ունենում շարժման ցանկացած

պահի, իսկ այն խնդրի լուծումը, թե դրանք պատահական ընտրություններ են, թե օրինաչափ, պետք է փնտրել ոչ այնքան օբյեկտիվության մեջ, որքան մարդկային մտածողությունում: Այնուամենայնիվ, հետազոտողների մեծ մասը, ինչպես նաև Ի. Պրիգոժինը, գտնում են, որ բիֆուրկացիայի կետում տեղի են ունենում ոչ դետերմինիստական գործընթացներ:

Բիֆուրկացիայի կարևորությունը այն է, որ նման կետերում «գործընթացների կանխորոշվածությունը դրսևորվում է ոչ միայն և ոչ այնքան անցյալով, որքան ապագայով, որն էլ կապված է կառուցվածք-ատորակտորների պատկերացման հետ (այսինքն՝ ֆազային տարածությունում համակարգի կայուն վիճակի հետ)»¹⁶: Եթե տարածական հարթության վրա պատկերենք հասարակության զարգացման հնարավոր ուղղությունները իրենց ճյուղավորումներով, այսինքն՝ ժամանակին տանք տարածական պատկեր, ապա կստացվի ոչ այլ ինչ, քան ծառի պատկեր¹⁷ իր ճյուղերով, որտեղ ճյուղավորման մասերը բիֆուրկացիոն կետերն են, որտեղ էլ անկանխատեսելի վարքագիծ դրսևորող համակարգերը հնարավոր տարբերակներից ընտրում են այն, ինչ ավելի մոտ է իր ատորակտորին՝ զարգացման «նպատակին»:

Սկզբունքներ: Համալիր համակարգերի հետազոտման սիներգետիկ մեթոդի առանձնահատկությունները ընմռնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ սիներգետիկ մտածողության առանձնահատկությունները և դրա համար հիմնարար բնույթ ունեցող դրույթները: Վ. Ա. Արշինովը և Վ. Գ. Բուդանովը առաջարկում են սիներգետիկայի յոթ հիմնական սկզբունքներ¹⁸, որոնք ոչ այլ ինչ են, քան համալիր համակարգերի՝ (օբյեկտիվ) թե՛ բնութագրական, թե՛ դրանց հետազոտման համար (սուբյեկտիվ) հիմնարար նշանակություն ունեցող դրույթներ:

Հետաքրքրական է, որ արևմտյան գիտնականների շրջանում համալիր համակարգերի սկզբունքների համակարգում

չկա¹⁹: Սկզբունքների նկատմամբ նման դիրքորոշումը, միգուցե, գալիս է հենց արևմտյան՝ հատկապես անգլո-ամերիկյան գիտական մտքում դեդուկտիվ մտածողության նկատմամբ ինդուկտիվ գերակայությունից, որի ամենաակնհայտ դրսևորումը իրավական մտածողությունն է և անգլո-ամերիկյան երկրներում դրա հետևանքը՝ իրավական համակարգը: Այս գիտական մտածողությունում համալիր համակարգերի հետազոտման սիներգետիկ մոտեցման հետ կապված գերշխում է այն տեսակետը, որ անկայուն, քառասյին վարքագիծ դրսևորող համալիր համակարգերում կամ փոխազդեցություններում միակ սկզբունքը այն է, որ դրանց սկզբունքները պետք է անընդհատ գտնվեն փնտրվելու ընթացքում, ամեն ինչ պետք է բխեցնել ամենակարևորից՝ դինամիկայից, զարգացումից, ընթացքից: Մինչդեռ մայրցամաքային և ռուսական դպրոցի ներկայացուցիչներն ավելի շատ նախընտրում են ներկայացնել որոշակի հիմնարար դրույթներ, որոնք ընդհանուր են անկայուն, քառասյին վարքագիծ դրսևորող համալիր համակարգերին կամ փոխազդեցությունների համար:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է հաշվի նստել սկզբունքների համակարգի հետ, սակայն միևնույն ժամանակ չբացառել հետազոտման ընթացքում՝ ցանկացած պահին, դրանց մերժումը, քանի որ հենց սիներգետիկայի և նույնիսկ դիալեկտիկական «փիլիսոփայությունն» է ընդունում դրույթի և հակադրույթի միաժամանակյա գոյությունը²⁰: Այդ սկզբունքները պայմանականորեն բաժանվում են կեցության կամ օնտոլոգիական երկու և ձևավորման կամ դինամիկ վիճակի հինգ սկզբունքների: Կեցության սկզբունքներն են հոմեոստատիկությունը և աստիճանակարգությունը: Սրանք բնութագրում են համակարգի կայուն գործունեության փուլը, դրա կոշտ կեցությունը՝ օնտոլոգիան, բնորոշման թափանցիկությունը և պարզությունը Սրանք բնութագրում են նաև Հ. Հակենի աստիճանակարգված ենթակայության սկզբունքը, հա-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

նաձայն որի՝ երկարտև փոփոխությունները ենթարկում են իրենց կարճաժամկետները, ինչպես նաև՝ դիմացկուն դիսսիպատիվ կառուցվածքատարակտորների առկայությունը, որոնց վրա ներազդում է համակարգը:

Ձևավորման կամ դինամիկ վիճակի հինգ սկզբունքներն են՝ ոչ զծայնությունը, անկայունությունը, ոչ պարփակվածությունը²¹ (բաց վիճակը), դինամիկ աստիճանակարգվածությունը, դիտարկելիությունը: Վերջին երկու սկզբունքներն են ներառում «փոխլրացման և համապատասխանության, շրջանային կոնուրկատիվության և դիտարկման միջոցների հարաբերականության սկզբունքները՝ օգտագործելով ներքին դիտարկման և մետադիտարկման երկխոսության գործընթացը»²²: Դիմանկայի այս սկզբունքները, փաստորեն, վերաբերում են և՛ սիներգետիկ ձևի մտածողությանը, և՛ սիներգետիկ մեթոդոլոգիայով հետազոտվող օբյեկտների բնույթին:

Հոմեոստատիկության²³ սկզբունք: Այս սկզբունքը վերաբերում է համակարգի՝ որոշակի դիսպազոնում սեփական պարամետրերը, գործառույթները արտաքին միջավայրի գրգռող ազդեցություններից ներքին միջավայրի կամ կառուցվածքի դիմադրության վրա հիմնվելու միջոցով պահպանելու հատկությանը: «Հոմեոստատը որոշակի սահմաններում համակարգի ներքին բնութագրիչները, դրա հաջողակ գործունեությունն ապահովող ծրագրին աջակցությունն է, ինչը թույլ է տալիս համակարգին հետևել իր էվոլյուցիայի նպատակին՝ ատտրակտորին»²⁴: Այդ աջակցությունը իրականանում է ի հաշիվ հետադարձ բացասական կապերի²⁵, որոնք մարում են շրջապատող միջավայրի գրգռող ազդեցությունները, ճնշում են վարքագծի սահմանված ծրագրում ցանկացած շեղում:

Հոմեոստատիկ հիմնական գործառույթը կայանում է նրանում, որ նվազագույնի

հասցնի արտաքին միջավայրի կործանող ազդեցությունը, վերացնի դրա դետերմինացնող ազդեցությունը համակարգի վրա: Հոմեոստատիկ կառուցվածքները ապահովում են համակարգի ամբողջականությունը: Սակայն սա միակ առանձնահատկությունը չէ. սոցիալական հոմեոստատիկությունները, ունենալով հարաբերականորեն փոքր ատտրակտորներ, անցնում են համակարգի տարբեր վիճակներով, թեև դրանք նման են միմյանց, և «հետևաբար համակարգը մնում է կայուն-դինամիկ վիճակում»²⁶: Քաղաքականությունում, օրինակի համար, այս սկզբունքի իրացման է ուղղված պահպանողական քաղաքական ուժերի գործունեությունը: Լայն առումով, երկրների օրենսդրությունը նույնպես կոչված է պահպանելու առկա կամ ցանկալի կարգը՝ հիմնվելով պետական ամբողջապարատի դիմադրության վրա: Սա, թերևս, ունի իր դրական և բացասական կողմերը:

Աստիճանակարգության սկզբունք: Աստիճանակարգությունն այնքանով, որքանով հաճախ կանոնակարգվածության (ռեդուկցիոնիստական) փոխաբերությունն է, անհամաչափորեն ազդեցություն է թողել սոցիալական և բնական գիտությունների տեսությունների կառուցման գործընթացում²⁷: Ն. Բերդեևը, օրինակ, ընդգծում է աստիճանակարգությունը՝ որպես աշխարհակառուցման հիմնական սկզբունք. «Աշխարհը աստիճանակարգային օրգանիզմ է, որում բոլոր մասնիկները միմյանց հետ կապված են, և որտեղ այն, ինչ կատարվում է վերևներում, արտացոլվում է ներքևում»²⁸:

Կառուցվածքային աստիճանակարգության հիմնական իմաստը կայանում է ստորադաս մակարդակի նկատմամբ վերադասի բովանդակային բնույթում²⁹: Մակարդակների նման հարաբերակցությունը շատ լավ արտահայտված է Սեդոյի աստիճանակարգվածության փոխհատուցման սկզբունքում, որում ցույց է տրված, որ «միայն ստորադաս մակարդակի բազմազանության սահմանափակման պայմաններում է հնարավոր ձևավորել սոցիալա-

կան համակարգի առավել բարձր մակարդակում գտնվող բազմազան գործառույթները և կառուցվածքները»³⁰:

Ինչպես ցույց է տալիս Յ. Հակենը, սիներգետիկան իր ուշադրությունը կենտրոնացնում է համակարգի տարրական կառուցվածքի և որպես ամբողջություն՝ դրա դինամիկ հատկությունների մակարդակի միջև փոխկապվածության վրա: Կարգավորվածության կամ կարգի պարամետրերը, որոնք բնութագրում են որոշակի համակարգերի վարքագիծը մակրոսկոպիկ մակարդակում և այդ համակարգի տարրերի շարժը միկրոսկոպիկ մակարդակում, պայմանավորում են միմյանց³¹: Տարրերը ստեղծում են պարամետրեր, որոնք հետադարձ կապով ազդում են տարրերի վրա և պայմանավորում դրանց վարքագիծը: Դրա համար էլ այստեղ անհնար է սահմանել, թե որն է սկզբնականը, իսկ որը՝ երկրորդականը: Ուստի այստեղ խոսքը ցիկլային պատճառականության մասին է:

Աստիճանակարգությունը կամ հիերարխիան, հակառակ այլ տեսակի կառուցվածքային հարաբերությունների, կազմված է «տարրերից, որոնք որոշակի գործոնների հիման վրա սուբորդինացված են մյուսների նկատմամբ և կարող են դասակարգվել»³²: Կա առնվազն երկու տեսակի աստիճանակարգություն՝ «սկալիար և դեկավար»³³: Համընդհանուր խոչընդոտն այն է, որ հետազոտողները շփոթում են սկալիար և դեկավարման աստիճանակարգությունները, ինչն էլ հանգեցնում է պատճառականության շղթայի սխալ մեկնաբանությանը:

Որոշ պետական հասարակություններում աստիճանակարգությունը մի շարք կառուցվածքների պարզ միասնությունն է, որում տարրերը կարող են կանոնակարգվել, այլ համընդգրկուն կառուցվածքային փոխաբերություն և հենց իր՝ կարգի սահմանում: Մինչ այսօր շատ գիտական ուղղություններում աստիճանակարգվածությունը և կարգավորվածությունը համարվում են միևնույն երևույթը: Սակայն դժվար

է լինել համարածիք այս մոտեցմանը:

Շատ համակարգերում, նույնիսկ ոչ համալիր համակարգերում, դրսևորվում է կարգավորվածության երևույթը առանց դրանում առկա աստիճանակարգության³⁴: Իսկ համալիր համակարգերում, որտեղ դրսևորվում են դասական գիտության մեթոդաբանությամբ անբացատրելի երևույթներ, աստիճանակարգությունը և կարգավորվածությունը հավասարեցնելը, հոմանիշ դիտելը և երկրորդը առաջինով պայմանավորելը ընդամենը կհանգեցնեն փակուղու, քանի որ դրանք շատ հաճախ գտնվում են հակազդեցության մեջ: Հենց այդ հակազդեցությունն է դժվարեցնում պատկերացնել, ճանաչել և ուսումնասիրել հարաբերությունների մոդելները, որոնք համալիր են, սակայն ոչ աստիճանակարգված: Եվ հետաքրքիր է, որ դեմոկրատական կառավարման ձևի հասարակական համակարգերում, որոնց նպատակը, լայն իմաստով, քաղաքացիական հասարակության հաստատումն է, դրսևորվում է ոչ այնքան հասարակական կառուցվածքների աստիճանակարգվածությունը, որքան մեկ այլ երևույթ, որն ընդունված է անվանել հետերարխիա (*heterachy*³⁵)՝ ի հակադրություն հիերարխիային (*hierachy*):

Գիտության մեջ 20-րդ դարի կեսերին սկսվեց օգտագործվել այս հասկացությունը, որը բացատրում է ոչ աստիճանակարգված համակարգերում կարգավորվածության առկայության պատճառները, թեև ցայսօր այն հասարակական համակարգերի և պետական կառավարման ուսումնասիրության բնագավառում քիչ ուշադրության է արժանացել, կամ այդ ուշադրությունն արժանացել է ոչ հանրային գիտական մակարդակով, այլ որոշակի կատեգորիայի մարդկանց կողմից, ովքեր, առաջ անցնելով հասարակությանը մատուցվող հասարակական կյանքի կառավարման ձևերից, օգտագործում են այդ նույն հասարակությունների կազմակերպման և կառավարման նորարական կառուցակարգերը:

Ամենևին չնսեմացնելով Վ. Ա. Արչինովի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

և Վ. Գ. Բուդանովի առաջարկած սիներգետիկայի սկզբունքների դասակարգումը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է կատարել լրացում և աստիճանակարգման /հիերարխիայի/ սկզբունքին ավելացնել նաև հետերախիայի սկզբունքը, առանց որի անհնար կլինի համալիր հասարակական և պետական համակարգերի ամբողջական հետազոտությունը:

Հիերարխիկ-հետերարխիկ հարաբերությունները թույլ են տալիս ժամանակային և տարածական ճկունություն: Որպես օրինակ կարելի է բերել կառավարման հետերարխիան (հավասարության կառավարման ձևը³⁶), որը կարող է ժամանակի ընթացքում անցում կատարել աստիճանակարգությանը և հակառակը՝ առանց կոլապսի ենթարկվելու վտանգի: Համակարգի տարրերի միջև հարաբերությունները մեկ տարածական հարթությունում կամ մեկ ուղղությունում կարող են լինել հետերարխիկ (միևնույն խմբի մեջ անդամների հավասարություն), մյուսում՝ հիերարխիկ (որոշումների ընդունման գործում ավագության գերակայություն): Այստեղ պետք է հիշել, որ «հետերարխիան և՛ կառուցվածք է, և՛ պայման»³⁷:

Հետերարխիկ հետազոտությունները կարող են ունենալ բազմաթիվ դրսևորումներ, սակայն պետաիրավական հետազոտությունների համար, կարծում ենք, առավել կարևոր և հետաքրքրական է դրա երեք ոլորտի ուսումնասիրությունը՝ «նստվածքի (scale) հետերարխիա»³⁸, «իշխանության հետերարխիա»³⁹ և «արժեքների հետերարխիա»⁴⁰: Այս երեք հետերարխիաներն էլ անչափ կարևոր են պետական իշխանության լեգիտիմությունը ուսումնասիրելիս:

Ոչ գծայնության⁴¹ սկզբունք: Ոչ գծայնությունը համարում են համակարգի այն հատկությունը, որ տվյալ համակարգն իր ներսում բազմազան թույլատրելի վարքագծի օրենքներին համապատասխան իր

կառուցվածքում ունի զանազան ստացիոնար վիճակներ: Տվյալ տեսակի համակարգերի վարքագծի զարգացումը բարդ է և ոչ միանշանակ, դրա համար պատահական արտաքին ազդեցությունները (ֆլուկտուացիաները) կարող են առաջացնել տվյալ համակարգի ստացիոնար վիճակի շեղումներ ցանկացած ուղղությամբ: Նման համակարգի միևնույն ստացիոնար վիճակը մի պայմաններում կայուն է, մյուսներում՝ անկայուն. այսինքն՝ հնարավոր է անցում մեկ այլ ստացիոնար վիճակի⁴²:

Կարծիք կա նաև, որ «ոչ գծայնությունը նոր պարադիգմայի հիմնարար, կոնցեպտուալ հանգույց է: Նույնիսկ կարելի է ասել, որ նոր պարադիգման ոչ գծայնության պարադիգմա է»⁴³: Ոչ գծային իրականության յուրահատկությունը այն է, որ ոչ գծային կառավարումների հաստատուն միջավայրի և պարամետրերի փոփոխությունների որոշակի դիապազոնում տեղի չի ունենում գործընթացի պատկերի որակական փոփոխություն: Չնայած հաստատունի քանակական տատանումներին՝ պահպանվում է միևնույն ատտրակտորի ձգողականությունը. գործընթացը գնում, ընկնում է դեպի միևնույն կառուցվածքը, համակարգի շարժման միևնույն ռեժիմը: Սակայն եթե մենք անցնում ենք որոշակի սահմանային փոփոխությունը, գերազանցում ենք պարամետրերի կրիտիկական մեծությունը, ապա համակարգի շարժման ռեժիմը որակապես փոխվում է: Համակարգը ընկնում է այլ ատտրակտորի ձգողության ոլորտ⁴⁴:

Աշխարհայացքային առումով ոչ գծայնությունը կարող է արտահայտվել՝ ա/ այլընտրանքայնության, բազմատարբերակայնության միջոցով, բ/ այդ այլընտրանքներից ընտրության հասկացության միջոցով, գ/ միջավայրում գործընթացների զարգացման արագության հասկացության միջոցով, դ/ էվոլյուցիայի անդառնալիության հասկացությունների միջոցով:

Ոչ գծայնության ֆենոմենի յուրահատկությունները կայանում են հետևյալ հանգամանքներում՝

ա/ ոչ գծայնության շնորհիվ առկա է «փոքրի մեծացման» կամ «տատանումների ուժեղացման» կարևորագույն սկզբունքը: Որոշակի պայմաններում ոչ գծայնությունը կարող է ուժեղացնել տատանումները, փոքր տարբերությունը հետևանքների առումով դարձնել մեծ՝ մակրոսկոպիկ,

բ/ ոչ գծային բաց համակարգերի որոշակի դասեր ցուցադրում են մեկ այլ կարևոր հատկություն՝ զգայականության սահմանայնությունը: Սահմանից ներքև ամեն ինչ փոքրանում է, մաքրվում, մոռացվում՝ բնությունում, գիտությունում, մշակույթում չթողնելով ոչ մի հետք, իսկ սահմանից վերև՝ հակառակը. ամեն ինչ մի քանի անգամ մեծանում է,

գ/ ոչ գծայնությունը ստեղծում է քվանտային էֆեկտ՝ ոչ գծային համակարգերի /միջավայրերի/ զարգացման ուղիների հատվածայնություն: Այսինքն՝ տվյալ ոչ գծային միջավայրում հնարավոր է ոչ թե էվոլյուցիայի ցանկացած ուղի, այլ ընդամենը այդ ուղիների որոշակի սպեկտր: Որոշակի դասի ոչ գծային համակարգերի վերոնշյալ զգայունակության սահմանայնությունը նույնպես համարվում է քվանտայնության ցուցանիշ,

դ/ ոչ գծայնությունը նշանակում է փիլիսոփայությունում «էներջենտային» կոչվող գործընթացների ուղղությունների անսպասելի փոփոխություններ: Գործընթացների ոչ գծայնությունը սկզբունքորեն ոչ պիտանի և անբավարար է դարձնում ներկայից բխող զարգացումների կանխագուշակումները, քանի որ զարգացումը տեղի է ունենում ճյուղավորման պահին պատահական ընտրության ուղիով, իսկ հենց պատահականությունը սովորաբար նորից չի կրկնվում:

Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, գործընթացի պատկերը սկզբնական կամ միջանկյալ մակարդակում կարող է ամբողջապես հակառակը լինի զարգացված, ասիմպտոտիկ մակարդակի պատկերին: Նման ճյուղավորումները ժամանակի ընթացքում կարող են որոշվել ոչ թե պա-

րամետրերի փոփոխությամբ, այլ տվյալ միջավայրի ինքնուրույն կառուցվածքներ ստեղծելու գործընթացի ընթացքով: Ի վերջո, կարող են տեղի ունենալ հենց բաց, ոչ գծային միջավայրի փոփոխություններ: Իսկ եթե միջավայրը դառնում է այլ, ապա դա հանգեցնում է դրա էվոլյուցիայի գործընթացների պատկերի որակական փոփոխությանը: Առավել խորը մակարդակում տեղի է ունենում միջավայրի էվոլյուցիայի հնարավոր ուղիների դաշտի վերափոխում, վերակառուցվածքավորում⁴⁵:

Ոչ պարփակվածություն, բացություն: Ընդհանուր համակարգային տեսությունը բացում է միջավայրի հետ փոխազդեցության մեջ գտնվող և միջավայրից կախված բաց, հոլիստիկ համակարգերի իրական պատկերը⁴⁶: 20-րդ դարում ձևավորված բաց համակարգերի տեսությունը 1960-ականների համար արեց հեղափոխական մտահանգում, ըստ որի, կազմակերպական կառուցվածքները և ընդհանրապես վարքագիծը մեծ ազդեցություն են կրում միջավայրային գործոններից: Մինչ այդ տեսաբանները պնդում էին, որ կազմակերպությունները դրանք ղեկավարող անձանց ռացիոնալ վարքագծի հետևանք են, և հենց առաջնորդներն են մեծապես ազդում ընդհանուր հասարակական կամ այլ համակարգի էվոլյուցիայի վրա⁴⁷:

Ինքնակազմակերպման ընդունակ համակարգերը բաց և ոչ գծային համակարգեր են: Համակարգի բաց լինելը նշանակում է դրանում շրջակա միջավայրի հետ նյութի և/կամ էներգիայի փոխանակության աղբյուրների կամ հոսքերի առկայությունը: Այլ կերպ ասած՝ բաց համակարգը նյութով /էներգիա, տեղեկատվություն/ շրջակա միջավայրի հետ անընդհատ փոխանակության մեջ գտնվող համակարգ է, որը «տիրապետում է ինչպես տվյալ համակարգի կառուցվածքային բազմատարրության աճեցմանը նպաստող սնուցման տարածություններ, այնպես էլ էներգիան տարրալուծող, բաշխող արտահոսքի շրջաններ, որոնց գործունեության արդյունքում համակար-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

գում տեղի է ունենում կառուցվածքային բազմաստեղծության հարթեցում»⁴⁸:

Փիլիսոփայական բովանդակությամբ բացությունը իրենից ներկայացնում է «սահմանային աշխարհայացքային հասկացություն, որը բացառում է ամեն տեսակ սահմանափակվածություն, պարփակվածություն, սահմանայնություն և նշանակում է աշխարհի և աշխարհադրսևորման անսկզբություն և անվերջություն՝ որպես իր արտահայտություն»: Այն՝ որպես սահմանային աշխարհայացքային հասկացություն, «իրացվում է ավելի կոնկրետ մակարդակով ինքնակազմակերպման և կազմակերպման մեջ՝ որպես համակարգային կարգավորվածության կոնկրետ ձևեր»⁴⁹:

Ժամանակակից համամիասնականացման (գլոբալիզացիայի) պայմաններում, երբ խրախուսվում է հասարակական համակարգերի բացությունը, ինչը պայմանավորում է մշակութային, այդ թվում՝ իրավական ավանդույթների փոխներթափանցումը, այս տեսություն-աշխարհայացքը բացում է ազգային պետությունների, հասարակությունների միջև փոխազդեցության պատկերը:

Ի դեպ, եթե խոսքը աղբյուրի մասին է, առաջին հերթին առաջանում է պատկերացում ինչ-որ կետային կամ, համեմայն դեպս, տեղայնացված աղբյուրի մասին: Այլ կերպ է ինքնակազմակերպվող համակարգերի դեպքում: Նման համակարգերում աղբյուրները և հոսքերը առկա են յուրաքանչյուր կետում: Դրանք, ասպես ասած, ծավալային աղբյուրներ և հոսքեր են: Փոխանակման գործընթացները տեղի են ունենում ոչ միայն ինքնակազմակերպվող համակարգի սահմանների միջոցով, այլ նաև տվյալ համակարգի յուրաքանչյուր կետում:

Համակարգի բաց լինելը ինքնակազմակերպման համար անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ: Այսինքն՝ ցանկա-

ցած ինքնակազմակերպվող համակարգ բաց է, սակայն ոչ բոլոր բաց համակարգերն են ինքնակազմակերպվում, կառուցվածքներ ստեղծում: Ամեն ինչ կախված է երկու հակառակ սկիզբների փոխադարձ խաղից՝ պայքարից. մի կողմից՝ կառուցվածքներ ստեղծող, համատարած միջավայրում բազմազանությունը մեծացնող սկզբից, իսկ մյուս կողմից՝ տարաբնույթ բազմազանությունը ցրող սկզբից: Բաց համակարգում ցրող, տարածող սկիզբը կարող է թուլացնել աղբյուրի աշխատանքը, վերացնել դրանով ստեղծվող ամեն բազմատարրություն: Տվյալ ռեժիմում կառուցվածքները չեն կարող առաջանալ⁵⁰:

Կառուցվածքների ստեղծման էֆեկտը բաց, ոչ գծային միջավայրում պայմանավորված է տեղայնացման էֆեկտով:

Բաց համակարգը ի վիճակի է յուրացնելու արտաքին ազդեցությունները՝ ֆլուկտուացիաները, և գտնվել անընդհատ փոփոխության մեջ: Ֆլուկտուացիաների /տատանումների/ առկայությունը քառսի ցուցանիշ է: Դրանք կարող են լինել այնքան ուժեղ, որ առաջանա հետադարձ կապ, որի հետևանքով նախկին համակարգը կամ որակապես փոփոխվում է, կամ ընդհանրապես փլուզվում է⁵¹: Համակարգային տեսաբան Ուոլտեր Բաբլեյը պնդում է, որ, կախված էներգիայի, տեղեկատվության փոխանակության բնույթից, համակարգերը լինում են երեք տեսակի՝ կազմակերպված պարզություն, կազմակերպված համալիրություն և քառս⁵²:

Անկայունություն: Այս սկզբունքը պարունակում է նախորդ երկու սկզբունքները՝ ոչ գծայնությունը և ոչ պարփակվածությունը՝ բաց վիճակը: Անկայունության վիճակը սերտորեն առնչվում է ճյուղավորումների կետերի հետ /բիֆուրկացիա/, որոնք ներկայացնում են համակարգի էվոլուցիայի հնարավոր ուղիների ճյուղավորումների կետեր: Դրանք բնորոշում են հնի և նորի միջև սահմանը: Ոչ գծային իրավիճակը, էվոլուցիայի ուղիների ճյուղավորման իրավիճակը կամ ոչ գծային միջավայրի անկայուն-

նության վիճակը, դրա զգայունակությունը փոքր ազդակներին կապված են ընտրության անորոշության և հնարավորության հետ:

«Անկայունության փիլիսոփայություն» աշխատությունում Ի. Պրիգոժինը գիտությունում տեղի ունեցող հեղափոխությունը բացատրում էր ուրույն կերպով: Ըստ նրա՝ տեղի է ունենում անցում դետերմինիզմից դեպի անկայունություն, անկայունությունը որոշ առումով փոխարինում է դետերմինիզմին: «Դետերմինիստական աշխարհում բնությունը կառավարելի է, այն իներտ օբյեկտ է՝ ենթակա մեր կամայականություններին: Եթե բնությունը պարունակում է անկայունությունը՝ որպես էական տարր, ապա մենք պետք է այն հարգենք, քանի որ մենք չենք կարող կանխատեսել, թե ինչ կարող է պատահել... Այսօր գիտությունը ո՛չ մատերիալիստական է, ո՛չ ռեդուկցիոնիստական, ո՛չ դետերմինիստական»⁵³:

Ի. Պրիգոժինը ընդգծում է զարգացման գործընթացների անդառնալի և պատմական բնույթը, ինչպես նաև փոքր դեպքերի և գործերի ազդեցությունը էվոլյուցիայի ընդհանուր ընթացքի վրա:

Անկայունությունը ոչ միշտ է չարիք: Անկայունությունը կարող է հանդիսանալ կայուն և դինամիկ զարգացման պայման: Միայն հավասարակշռությունից հեռու, անկայունության վիճակում գտնվող համակարգերն են ընդունակ տարերայնորեն կազմակերպել իրենց և զարգանալ: Միայն հավասարակշռությունից հեռու գտնվող իրավիճակներում են առաջանում բարդությունը, համալիրությունը: Կայունությունը և հավասարակշռությունը, այսպես ասած, էվոլյուցիայի փակուղիներն են: Այլ կերպ՝ անկայունությունը նշանակում է զարգացում, զարգացումը տեղի է ունենում անկայունության, ճյուղավորումների, պատահականությունների միջոցով:

Այնուամենայնիվ, դժվար է համաձայնել Պրիգոժինի հետ այն բանում, որ, ընդգծելով և կենտրոնական տեղ տալով անկայունությանը, կարելի է մոռացության մատնել

կայունությանը: Ավելի համոզիչ են Կուրդյունովի և Կնյազևայի դիրքորոշումը, համաձայն որոնց՝ «նման անկայունությունում ոչ թե բացակայում է դետերմինիզմը, այլ առկա է մեկ այլ՝ առավել բարդ տեսակի դետերմինիզմ»⁵⁴:

Նրանց առաջին նկատառումը այն է, որ աշխարհում ամեն ինչ չէ, որ անկայուն է. կան անկայուն համակարգերի որոշակի տեսակներ: Անկայուն համակարգերից (այսինքն՝ համակարգեր, որոնց համար գոյություն ունեն կանխատեսման և ղեկավարման սահմաններ), օրինակի համար, կարելի է նշել «տարօրինակ ատոմակտորով» համակարգերը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նույնիսկ տարօրինակ ատոմակտորով բնութագրվող համակարգերը չեն կարող համարվել բացարձակ անկայուն, քանի որ նման համակարգերի համար հնարավոր է ոչ թե ցանկացած վիճակ, այլ ֆազային տարածության սահմանափակ, դետերմինացված ոլորտն ընկնող վիճակ: Անկայունությունը նշանակում է համակարգի պարամետրերի ամբողջապես որոշակի ոլորտի ներսում պատահական շարժում: Այստեղ ոչ թե առկա է դետերմինիզմի բացակայություն, այլ մեկ այլ՝ առավել բարդ, նույնիսկ պարադոքսալ օրինաչափություն՝ դետերմինիզմի այլ տեսակ: Պրիգոժինը չի նշում այն կարևոր հանգամանքը, որ տարօրինակ ատոմակտորի ֆազային տարածության ոլորտը կարող է սահմանափակ լինել: Իսկ տարօրինակ ատոմակտորների ուսումնասիրությունը, փաստորեն, անկայունության սահմանների և օրենքների բացահայտումն է:

Պրիգոժինյան դիրքորոշման վերաբերյալ երկրորդ դիտողությունն այն է, որ գոյություն ունի միայն զարգացման որոշակի մակարդակ, որի վրա ոչ ստացիոնար դիսսիպատիվ կառուցվածքները դառնում են անկայուն: Դա համաձայնեցվում է աշխարհի սկզբնական պատկերի հետ. մենք տեսնում ենք, որ մակրոկառուցվածքները, բիոլոգիական ձևերը, մարդկային մարմինը և ուղեղը, հասարակական հարաբերություն-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Ները, պետական կազմավորումները հարաբերականորեն կայուն են. տևական ժամանակ չեն քայքայվում: Որպեսզի հասկանալի լինեն վերոնշյալ քվազիստացիոնար մակարդակի բնույթը և անկայունության պայմանները, օգտակար է ներգրավել «սրման ռեժիմներ», «ոչ գծային դրական հետադարձ կապ», «տեղայնացում» հասկացությունները, որոնց կանդիդատները հետազայուն:

Հետաքրքրական է, որ համակարգերի զարգացման անկայունությունը կամ դրա անկայուն ճյուղերը կարող են ազդել և արմատապես փոխել կայունների ընթացքը: Բիֆուրկացիոն դիագրամայի կայուն և անկայուն ճյուղերը կարող են բախվել, որի ժամանակ համակարգում կարող են տեղի ունենալ անկանխատեսելի թռիչքներ և հեղափոխական փոփոխություններ:

Որքան դինամիկ և համալիր է հասարակությունում իրավիճակը, որքան ծավալուն է նորությունների, նորարարությունների և ընդհանրապես իրադարձությունների հոսքը, այնքան դժվարանում է հասարակության համար արդյունավետ որոշումների ընդունումը՝ հիմք ընդունելով նախկին պետաիրավական կամ ընդհանրապես հասարակական փորձը⁶⁵:

Հասարակությունում դա կարող է դրսևորվել արդեն իսկ կատարված արտակարգ իրավիճակներում հասարակության կողմից վեր հանված վարքագծի համընդհանուր կանոնները պահպանելու հատկության տեսքով: Թեև այդ արտակարգ, անցումային, անկայուն վիճակները մեծ մասամբ չեն կրկնում մեկը մյուսին, այնուամենայնիվ վարքագծի այդ կանոնները ենթադրվում են, որ պետք է լինեն և բացարձակ ճկուն, և բացարձակ կոշտ ժամանակային առանձին հատվածներում անկայունությանը դիմադրելու կամ հարմարվելու, ինչպես նաև հասարակական համակարգի ֆլուկտուացիաները մեղմելու համար:

Հենց այդ հետադարձ կապի շնորհիվ առաջանում է անխափան կապ անհետևանք չննացած անցյալի, ընթացիկի և գալիքի միջև, որն արտահայտվում է անցյալի և ներկայի արդյունքերի փոխանցումը ապագային: Հասարակական համակարգի ակտիվ հիշողության նման պայմաններում կարող է առաջանալ անցյալի, ներկայի և ապագայի միաժամանակյա և միաձուլված ներկայություն, որը Մարտին Հայդեգերի մեկնաբանությամբ հենց հանդիսանում է ժամանակ կոչվող ֆենոմենի էությունը⁶⁶:

Անցյալն ու ապագան ներկայի հետ կապելու այս ունակությունը ոչ միայն բարձրացնում է հարմարվողական հնարավորությունները, այլ նաև ազդեցություն է գործում նման համակարգերի ներքին ժամանակի ընթացքի վրա:

Դինամիկ աստիճանակարգություն, ձևավորում (emergence): Այս սկզբունքն է երբեմն նշվում սիներգետիկայի հիմնական հատկությունն արտահայտելու համար. «ամբողջը ավելին է, քան դրա մասերի գումարը»: Սա համալիր համակարգերի սիներգետիկ առանձնահատկությունը պայմանավորող կարևորագույն սկզբունքներից է, որն արտահայտում է համակարգի կարևորագույն ինտեգրատիվ հատկությունը, ամբողջականության էֆեկտը. այսինքն՝ մասերի, մարդկանց տվյալ ամբողջությունում այնպիսի հատկությունների առաջացում, որոնք չկան դրանց մոտ առանձին-առանձին:

Կոլեկտիվ մասշտաբում մեծ թվով ներհամակարգային, պարզ, առանձին հարաբերությունների շնորհիվ ինքնուրույնաբար նոր համակարգային որակներ է առաջանում: Այդ պատճառով կարելի է ասել, որ «նման մոդելներում հաշվողական հնարավորությունները աքսիոմատիկորեն՝ կանոնների և ակսիոմաների միջոցով չեն դուրս բերվում, այլ էքզիստենցիալիստորեն՝ համակարգի ունակության միջոցով՝ ինքնուրույնաբար բացահայտել, բարդանալ և ինքնակազմակերպվել կոլեկտիվ փոխհարաբերությունների մասշտաբի մա-

կարդակուն»⁵⁷:

Այս սկզբունքը ընդհանրացնում է ձևավորման գործընթացերում ենթակայության սկզբունքը, կարգի պարամետրերի ծնունդը, «երբ անհրաժեշտություն է դառնում դիտարկել ավելի քան երկու մակարդակների փոխգործակցությունը, և այստեղ հենց ձևավորման գործընթացը անհայտացման գործընթացն է, իսկ հետո դրանցից որևէ մեկի ծնունդը համակարգի առնվազն երեք աստիճանակարգային մակարդակների փոխազդեցության գործընթացում: Այստեղ, ի տարբերություն կեցության ֆազայի, կարգի փոփոխական պարամետրերը, հակառակը, հանդիսանում են ամենից արագ, անկայուն փոփոխությունները»⁵⁸:

Սոցիալիզացիայի ընցաթքում մարդիկ կենսագործում են իրենց գիտելիքները, ունակությունները, հմտությունները, որոնց միջոցով ներգրավվում են իրենց շրջապատող միջավայրում, և այդ կենսագործումը գիտակցության կառուցվածքակազմող տարրերի կոլեկտիվ վարքագծի արդյունք է, դրանց միջև առաջացող կապերի արդյունք: Սա էլ հենց ամբողջականության երևույթի դրսևորում է, երբ մարդու բախումը արտաքին առարկայական, իրավական և սոցիալական աշխարհի հետ գիտակցության կոլեկտիվ փոխկապվածությունը սկսում է աշխատել, որի հետևանքով սկսում է տեղի ունենալ անձի սոցիալականացումը, անձը հարմարվում և իրեն է հարմարեցնում սոցիալական իրականությունը: Այդ ընթացքում բախումները ուժեղանում կամ թուլանում են՝ կախված սահմանային վիճակների առանձնահատկություններից և ընտրությունից: Անկանխատեսելի ընտրությունները հիմնականում պայմանավորված են անձի, հասարակության համալիրությունից: Այդ համալիրության ներքին փոխպայմանավորված հարաբերությունների արդյունքում ամբողջական համակարգը իր համար ստեղծում է նոր որակներ: Դինամիկ աստիճանակարգության հատկությունը ցույց է տալիս, որ համալիր համակարգերը ունեն կրեատիվ, ստեղծա-

գործ հատկություն, որն էլ պայմանավորում է նրա ինքնագարգացումը:

Դիտարկելիություն: Սա իրենից ներկայացնում է կարգի (հասարակարգ, իրավակարգ, աշխարհակարգ) և քառսի կատեգորիաների «հարաբերականությունը՝ դիտարկման մակարդակին, տարածաժամանակային պատուհանի մասշտաբին, որը նույնիսկ կարող է քառսը վերածել կայուն գործունեության»⁵⁹: Սա չափազանց կարևոր սկզբունք է, որի հիմքերը պետք է փնտրել Զատուկ և Ընդհանուր հարաբերականության տեսություններում:

Այս սկզբունքը ցույց է տալիս, թե կարգավորվածության և անկարգավորվածության երևույթները դիտարկելիս սուբյեկտը տարածաժամանակային ինչ հարթությունում է գտնվում, դա ինչով է ազդում նրա առջև բացվող պատկերի ուսումնասիրության վրա, ժամանակի ընկալումը ինչպես է տեղի ունենում այնտեղ: Եթե երևույթների դինամիկան, հասարակական զարգացումները, ներհասարակական հակասությունները և/կամ համագործակցությունը դանդաղում են դիտորդի համար, ապա ժամանակի ընթացքը նրա համար նույնպես դանդաղում է, եթե տեղի է ունենում արագացում հասարակական երևույթներում, ապա դիտորդի համար ժամանակի ընթացքը արագանում է, և նա շատ հաճախ չի տեսնում և հասկանում երևույթների պատճառահետևանքային կապը, հասարակական զարգացումները նրա համար ստանում են անկանխատեսելի, տարերային, անկայուն բնույթ, և դրանցում օրինաչափությունները վերածվում են պատահականությունների, կարգավորվածությունը՝ քառսի: Արդյունքում «քառսը բարդ է թվում այն պատճառով, որովհետև դիտորդը չգիտի, թե որոնք են կանոնները»⁶⁰, որոնցով շարժվում է համակարգը:

Այս սկզբունքը հաշվի առնելով է, որ սիներգետիկական առաջարկում է օբյեկտը ու այն դիտարկող սուբյեկտին դիտարկել միևնույն մակարդակում, այնպես որ անկայուն վարքագիծ դրսևորող սոցիալ-պե-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

տական համակարգը հետազոտողը մտազործունեության ամբողջ ընթացում հետազոտության տակ է պահում նաև օբյեկտի վերաբերյալ սեփական ընկալումը:

Անկայուն համակարգերը, որոնց քառասային և համալիր բնույթը կազմում են «միննույն երևույթի տարբեր կողմերը», կարող են օբյեկտիվորեն ուսումնասիրվել՝ միայն հաշվի առնելով վերը պարզաբանված հասկացություններն ու սկզբունքները, որոնք, կարծես, հետազոտողին թույլ են տալիս ձևավորել գիտական մտածողության երրորդ՝ սիներգետիկ ձևը, ինչը հնարավորություն է տալիս անընդհատ դինամիկ զարգացման մեջ գտնվող համալիր

համակարգերի պարբերական քառասային զարգացումներում, որոնք շատ հաճախ ոչ դետերմինիստական բնույթ են կրում, բացահայտել խորը օրինաչափություններ՝ ձևավորելու համար հասարակական և պետական համակարգի ճիշտ պատկերացում, առանց որի անհնար կլինի անկայուն համակարգերում և մասնավորապես անցումային հասարակական համակարգերում անընդհատ բնույթը փոփոխող առաջադրված խնդիրներին տալ ոչ ժամանակավրեպ և ճիշտ լուծումներ: Այլ կերպ ասած՝ հետազոտողի միտքն ինքը պիտի լինի սիներգետիկ, որպեսզի կարողանա դիտարկել և հասկանալ համալիր համակարգերում սիներգետիկ գործընթացները, այլապես ի սկզբանե դատապարտված է սխալ եզրահանգումների:

¹ Տե՛ս **Abraham Lincoln**, “Wisdom and Wit”, Lincoln, the philosopher, Peter Pauper Press, Inc., NY, 1998:

² “Attract”– նշանակում է ձգել, գրավել:

³ Կա կարծիք (հիմնականում բնական գիտություններում), ըստ որի՝ «առավել ճիշտ կլինի ատտրակտորը մեկնաբանել որպես բաց, ոչ գծային միջավայրերի երկրորդ թերմոդինամիկայի սկզբունք: Թերմոդինամիկայի երկրորդ սկզբունքը խոսում է այն մասին, թե ուր են գնում գործընթացները փակ համակարգերում և /հաճախ/ հավասարակշռությանը մոտ համակարգերում. դրանք գնում են դեպի ջերմային քառս, ավելի շատ՝ էնտրոպիայով վիճակի: Էվոլուցիայի այս ուղին անվանում են «թերմոդինամիկ ճյուղ»: Բաց, ոչ գծային միջավայրերի էվոլուցիայի ատտրակտորները ցույց են տալիս՝ դեպի ուր են զարգանում գործընթացերը նման միջավայրերում» (Տե՛ս **Е. Н. Князев, С. П. Курдюмов**, Синергетическая парадигма. Основные понятия в контексте истории и культуры, <http://spkurdyumov.narod.ru/synpar.htm>):

⁴ Տե՛ս **Егорov В. С.** Философия открытого мира, М., Московский психо-социальный институт; Воронеж, 2002, էջ 69:

⁵ Տե՛ս **Митина О.В., Петренко В.Ф.** Синергетическая модель динамики

политического сознания, <http://www.psychology.ru/library/00076.shtml>:

⁶ Ատտրակտորների հասկացությունը կարելի է մնանցնել Պլատոնի «էյդոսների»՝ սկզբնական գաղափարներին, որոնց մնանակելուն են ձգտում տեսանելի աշխարհի իրերը, Արիստոտելի իդեալական ձևերին, Կ. Յունգի արխետիպերին: Հոգեբանությունում այդ ակնհայտ կամ թաքնված երևույթները, որոնք նախապես դետերմինացնում են մարդու վարքագիծը, կառուցում են նրան՝ էլնելով ապագայում իրերի անհրաժեշտ վիճակից: Ատտրակտորները կապում են նաև Ա. Պուանկարեի կողմից 20-րդ դարի կեսերին մշակված մաթեմատիկական ապարատի հետ: Պուանկարեն առաջ էր քաշում թերմոդինամիկ ճյուղի կառուցման խնդիրը այդ իրավիճակի ոչ մեծ շեղումների դեպքում և լուծում էր այդ գործընթացը միայն ժամանակի մեջ հետևող հասարակ, ոչ գծային դիֆերենցիալ հավասարումների միջոցով: Ա. Տյուրինգը լուծում էր այդ խնդիրը՝ օգտագործելով հավասարումները մասնավոր ածանցյալներում, որտեղ էական է գործընթացի և տարածական, և ժամանակային բնորոշումը:

⁷ Տե՛ս **Russ Marion**, The Edge of Organization, Chaos and Complexity Theories of Formal Social Systems, SAGE Publications, Thousand Oaks, London, New Delhi, 1999, էջ 16:

⁸ Տե՛ս **Егоров В. С.**, նշվ. աշխ., էջ 69:

⁹ Սա բացատրում էր, թե ինչպես թիթեռնիկի թևի շարժումը երկրի մեկ կիսագնդում մյուս կիսագնդում առաջացնում է վիթխարի հետևանքներ՝ փոթորիկներ, հզոր քամիներ և այլն:

¹⁰ Պուանկարեն փաստում էր, որ յուրաքանչյուր մասնիկ իր առկա վարքագծի համար աղբյուր հանդիսացող կինետիկ էներգիա և ապագայի հնարավոր վարքագծի համար պոտենցիալ էներգիա ունի: Եվ եթե անգամ կինետիկ էներգիան դետերմինացված վարքագծի է ուղղում, և համակարգում փաստացի անկայունություն չկա, այնուամենայնիվ ներքին փոխազդեցությունների և պոտենցիալ էներգիայի պատճառով քառսը դեռևս գոյություն կունենա:

¹¹ Տե՛ս **Russ Marion**, նշվ. աշխ., էջ 16:

¹² Համակարգերը ատոտակոորների նման անհետանում են. կայարությունները գերիշխում են իրենց և այլ տարածաշրջաններում, ի վերջո դրանք կոլլապսի են ենթարկվում ու վերադառնում այն միջավայրը, որը որ ստեղծել էր իրենց:

¹³ Այդ մասին մանրամասն տե՛ս «Բիֆուրկացիայի և քաոսի միջազգային ամսագիր», International Journal on Bifurcation and Chaos (IJBC). http://www.worldscinet.com/ijbc/mkt/aims_scope.shtml:

¹⁴ Այսինքն՝ դիֆերենցիալ հավասարումներում փոփոխվում է ինչ-որ հավասարակշռող պարամետր, և այդ պարամետրի որոշակի կրիտիկական մեծությունում թերմոդինամիկ ճյուղը կորցնում է կայունությունը, և առաջանում է առնվազն երկու զարգացման ուղղություն: (Տե՛ս **Баблюяц А.**, Молекулы, динамика, жизнь. М., 1990):

¹⁵ Տե՛ս **Е. Н. Князв, С. П. Курдюмов**, նշվ. աշխ.:

¹⁶ Տե՛ս **Егоров В. С.**, նշվ. աշխ., էջ 56:

¹⁷ Հետաքրքրական է, որ ծառի պատկերը սուրբ է համարվել մի շարք անտիկ հասարակություններում /այդ թվում՝ Վանի թագավորությունում/ որպես կենաց ծառ: Բիֆուրկացիոն ճյուղավորումը, ինչը նույնպես ծառ է հիշեցնում, թույլ է տալիս տեսնել կոնկրետ համակարգի կյանքի զարգացման հնարավոր ուղիները:

¹⁸ Տե՛ս **Аршинов В. И., Буданов В. Г.**, Когнитивные основания синергетики // Синергетическая парадигма 2. Под ред. Аршинова В.И., Буданова В.Г., Копцика В.А. М., Прогресс-Традиция, 2001, էջ 270:

¹⁹ Տե՛ս **Ashby W. R.**, “Principles of the self-organizing system,” in *Principles of Self-Organization: Transactions of the University of Illinois Symposium*, H. Von Foerster and G. W. Zopf, Jr. (eds), Pergamon Press: London, UK, 1962, էջ 255-278:

²⁰ Դրույթի և հակադրույթի միաժամանակյա գոյության՝ համակեցության մասին դասական փիլիսոփայությունում առաջին անգամ խոսել է Ի. Կանտը, այնուհետև Յեզեյը զարգացրել է այդ միտքը՝ պնդելով, որ շարժումը, զարգացումը հնարավոր են միայն նման հակադրությունների միասնության պայմաններում:

²¹ Սրանք այն երեք «ոչ»-եր են (ոչ գծայնություն, ոչ պարփակվածություն, անկայունություն), որոնցից ամեն կերպ խուսափում էր դասական գիտության մեթոդոլոգիան, և որոնք համակարգին թույլ են տալիս մտնել քաոսային ստեղծագործ (կրետսիվ) փուլ: Սովորաբար դա տեղի է ունենում՝ ի հաշիվ դրական հետադարձ կապերի:

²² Տե՛ս **Моисеева И. Ю.**, Концепция самоорганизации в контексте постнеклассической парадигмы, Оренбургский государственный университет, Вестник, ОГУ, 11՝2005, էջ 85:

²³ «Հոմեոստազ» հասկացությունը գիտության մեջ է մտցրել ամերիկացի ֆիզիոլոգ Ու. Կեն-նոնը, և օգտագործվել է 40-ական թթ. Ու. Լ. Է-շիբի կողմից հետադարձ կապ ունեցող համակարգերի լայն շրջանակի մոդելավորման համար:

²⁴ Տե՛ս **Николаева Е. М.**, Феномен Социализации Личности с позиций теории самоорганизации, Вестник, ОГУ, 9/2005, Институт Экономики, Управления и права, г. Казань, էջ 33:

²⁵ Համաձայն Ընդհանուր համակարգերի տեսության՝ հետադարձ կապը կարևոր է ցանկացած համակարգի համար, որն ունի ներքին կանոնակարգման կարիք, որպեսզի իրեն շրջապատող միջավայրի հետ համահունչ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ**ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ**

գործի: Այն կապն է միջավայրի և դրանում հարաբերականորեն անկախ գործող համակարգի միջև: Համակարգը կարող է փոփոխել իր առջև դրված նպատակները՝ ի պատասխան միջավայրային ֆլուկտուացիաների ու պահանջների, և հավերժորեն իրականացնի կանոնակարգում այդ նպատակներին հասնելու համար: Հետադարձ կապը լինում է դրական կամ բացասական: Շնորհիվ բացասական հետադարձ կապի՝ հասունացող համակարգերը զարգանում են միջավայրի ներգործությունից դուրս և կանգնում են էքվիլիբրիումի՝ հավասարակշռվածության վիճակում: Համակարգի հոմեոստատիկության վիճակը բխում է հենց բացասական հետադարձ կապից: Տնտեսագիտությունում դրա հավասարարժեք երևույթը «նվազող արձագանքն» է, ինչը ցույց է տալիս, որ շուկայի պահանջարկը կայունանում է, երբ կարիքները բավարարվում են: Իսկ ինչ վերաբերում է դրական հետադարձ կապին, ապա պետք է նշել, որ «համակարգային տեսաբանները խոսում էին դրա մասին շատ առաջ, քան տնտեսագետներն ու ֆիզիկոսները այն կհանրայնացնեին»: - (Russ Marion, նշվ. աշխ., էջ 76) Դրական հետադարձ կապը (տնտեսագիտորեն՝ աճող արձագանքը) հզորացող խոստորում է, ինքն իրեն սնող և ինքն իրեն առկա կացությունից հեռացնող հետադարձ կապ:

²⁶ Տե՛ս **Russ Marion**, նշվ. աշխ., էջ 59:

²⁷ Տե՛ս **Carole L. Crumley**, *Heterarchy and Analysis of Complex Societies*, University of North Carolina at Chapel Hill, <http://www.tri-quete.org/documents/HeterarchyAnalysisComplexSoc.pdf>:

²⁸ Տե՛ս **Николай Бердяев**, *Диалектика божественного и человеческого*, М., 2005, էջ 165:

²⁹ Այն, ինչ ստորադաս մակարդակի համար կառուցվածքային կարգ է, վերադասի համար անկառուցվածք քառս է՝ կառուցման համար նյութ:

³⁰ Տե՛ս **Седов Е. А.**, *Информационно-энтропийные свойства социальных систем* // ОНС. 1997, N. 2, էջ 100:

³¹ Տե՛ս **Николаева Е.**, նշվ. աշխ., էջ 35:

³² Տե՛ս **Carole L. Crumley**, *A Dialectical critique*

of hierarchy. In "Power Relations and State Formation". T.C. Patterson and **C. W. Gailey**, eds, Washington, D.C.; American Anthropological Association, 1987a, էջ 155-159:

³³ Տե՛ս **Carole L. Crumley**, նշվ. աշխ. 27:

³⁴ Մանրամասն տե՛ս **Diamond Stanley**, *In Search of the Primitive: A Critique of Civilization*, New Brunswick: E. P. Dutton/ Transaction Books, 1974:

³⁵ Ժամանակակից իմաստով «heterarchy» հասկացությունն օգտագործել է ՄակԿալլոը: Նա հետազոտում էր այլընտրանքային կոգնիտիվ կառուցվածքներ, որոնց կոլեկտիվ կազմակերպումը անվանեց heterarchy: Մասնավորապես, նա կարողացավ ցուցադրել, որ մարդկային ուղեղը թեև կարգավորված է, սակայն աստիճանակարգվածությամբ կազմակերպված է: Տե՛ս **McCulloch Warren S.**, *A Hierarchy of values determined by topology of neural nets*. *Bulletin of Mathematical Biophysics*, 1945, 89-93:

³⁶ Մանրամասն տե՛ս **Renfrew, Colin, and John F. Cherry**, eds., *Peer Polity Interaction and Socio-Political Change*, Cambridge: Cambridge University Press, 1986:

³⁷ Տե՛ս **Carole L. Crumley**, նշվ. աշխ.:

³⁸ Մանրամասն տե՛ս **Marquardt William H., and Carol L. Crumley**, *Theoretical issues in the analysis of spatial patterning, in Regional Dynamics: Burgundian Landscapes in Historical Perspective*, C. L. Crumley & W. H. Marquardt, eds. New York, Academic Press, 1987, էջ 1-18:

³⁹ Մանրամասն տե՛ս **Carol L. Crumley**, *Celtic settlement before the conquest: the dialects of landscape and power, in Regional Dynamics: Burgundian Landscapes in Historical Perspective*, C. L. Crumley & W. H. Marquardt, eds. New York, Academic Press, 1987, էջ 403-429

⁴⁰ Մանրամասն տե՛ս **McCulloch Warren S.**, *A Hierarchy of values determined by topology of neural nets*. *Bulletin of Mathematical Biophysics*, 1945, 7:89-93:

- ⁴¹ Մաթեմատիկական իմաստով ոչ գծայնությունը նշանակում է մաթեմատիկական հավասարման որոշակի տեսակ: Ոչ գծային հավասարումները կարող են ունենալ մի քանի որակապես տարբեր լուծումներ: Ոչ գծային հավասարման լուծումների մեծաքանակությամբ համապատասխանում է համակարգի զարգացման՝ այդ հավասարումներով սահմանվող ուղիների բազմազանությունը:
- ⁴² Տե՛ս **Николаева Е.**, նշվ. աշխ., էջ 36:
- ⁴³ Տե՛ս **Е. Н. Князвa**, նշվ. աշխ.:
- ⁴⁴ Մանրամասն տե՛ս նույն տեղում:
- ⁴⁵ Մանրամասն տե՛ս **Е. Н. Князвa, С. П. Курдюмов**, նշվ. աշխ.:
- ⁴⁶ Տե՛ս **Russ Marion**, նշվ. աշխ., էջ 70:
- ⁴⁷ Տե՛ս **Russ Marion**, նշվ. աշխ., էջ 63:
- ⁴⁸ Տե՛ս **Николаева Е.**, նշվ. աշխ., էջ 37:
- ⁴⁹ **Егоров В. С.**, նշվ. աշխ., էջ 56:
- ⁵⁰ Մանրամասն տե՛ս **Е. Н. Князвa**, նշվ. աշխ.:
- ⁵¹ Տե՛ս **Николаева Е.**, նշվ. աշխ., էջ 37:
- ⁵² Մանրամասն տե՛ս **Buckley W.**, *Sociology and modern systems theory*, Englewood Cliffs, NJ: Prentice Hall, 1967:
- ⁵³ **Prigogine I.**, *The Philosophy of Instability*, // *Futuries*. August, 1989, էջ 397
- ⁵⁴ Տե՛ս **Е. Н. Князвa, С.П. Курдюмов**, նշվ. աշխ.:
- ⁵⁵ Սակայն, օրինակ, «կենդանի» համակարգերում ինքնակազմակերպման ֆենոմենը այս կամ այլ ձևերով հավաքում և պահպանում է կենսական փորձը, որպեսզի հետագայում կարողանա օգտագործել դա՝ հետադարձ կապի սկզբունքի ուժով նոր միջավայրում հարմարվելու համար:
- ⁵⁶ Մանրամասն տե՛ս **M. Heidegger**, “Being and Time”, Blackwell, 2005:
- ⁵⁷ Տե՛ս **Николаева Е.**, նշվ. աշխ., էջ 39:
- ⁵⁸ Տե՛ս **Моисеева И. Ю.**, նշվ. աշխ., էջ 85:
- ⁵⁹ Տե՛ս **Моисеева И. Ю.**, նշվ. աշխ., էջ 85:
- ⁶⁰ Jack Cohen & Ian Stewart, *The Collaps of Chaos*, 1994, էջ 197, մեջբերումն ըստ Ruhl. J. B., *Complexity theory as a paradigm for the dynamical law-and-society system A wake-up call for legal reductionism and the modern administrative state*, *Duke Law Journal*, Vol. 45, N. 5, March 1996, էջ 876:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ**ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ****ПРИМЕНИМОСТЬ ОСНОВНЫХ ПОНЯТИЙ И ПРИНЦИПОВ
СОЦИАЛЬНОЙ СИНЕРГЕТИКИ В ИССЛЕДОВАНИЯХ
НЕУСТОЙЧИВЫХ СОЦИАЛЬНЫХ СИСТЕМ****Тарон СИМОНЯН***Аспирант кафедры Теории и истории
государства и права ЕГУ*

Синергетика имеет свой собственный специфический язык, на который наибольшее влияние оказали естественные науки и без которого было бы невозможно исследовать неустойчивые и динамические системы. Синергетический язык включает в себя такие понятия, как аттракторы (странные аттракторы), бифуркации и т.д. Эта научная методология предполагает также собственную систему принципов при работе с

нелинейными явлениями в поведении системы.

Такие онтологические принципы, как гомеостаз, иерархия и гетерархия, и принципы становления и динамики, как нелинейность, открытость, нестабильность, динамическая иерархия (становления), специфическая наблюдаемость, есть методы, которые взяты с естественных наук: такие, как физика, химия, математика и т.д., и которые могут и должны применяться в ходе исследования социальной и государственной нестабильности в переходный период, когда социальные и государственные системы ведут себя непредсказуемо и странно.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СОЦИОНОРМАТИВНОЙ КУЛЬТУРЫ ТРАДИЦИОННЫХ И ГРАЖДАНСКИХ ОБЩЕСТВ

Кристине САРДАРЯН

Преподаватель кафедры истории и теории государства и права Российско—Армянского (Славянского) Университета

Проблема соотношения гражданского общества и общества традиционного, на наш взгляд, представляет научный интерес. После образования независимых государств на территории бывшего Советского Союза, стала значима идея формирования и развития гражданского общества, его соотношения с государством. Но для того, чтобы построить гражданское общество, и вообще любое, следует перенять те социокультурные ценности, которые вырабатывались веками в процессе исторического развития и глубоко закрепились в характере и традициях того или иного общества.

В работе “Философия права” Гегель пишет, что гражданское общество сформировалось в результате исторической дифференциации всей общественной жизни, длительного диалектического развития от семьи к государству¹.

Категория “гражданское общество” отражает новое качественное состояние общества, основанное на развитых формах его самоорганизации и саморегуляции. В общественных науках выделяют следующие основные подходы к определению сущности гражданского общества: как комплекса общественных отношений, противопоставляемых государству, как противоположность церкви, как конкретный феномен западной цивилизации².

Теоретическое противопоставление гражданского общества и государства возникло где-то в середине XVII века. До того времени мыслители — классики западной политико-правовой мысли попросту не чувствовали противоположности общества и государства, и вовсе не потому, что им не хватало кругозора. Просто на том этапе развития общества и политического знания о нем социум понимался как некое единое целое — “социальное тело”, и лишь по мере развития хозяйственной жизни противоречия между слоями и классами достигли такой остроты и конфликтности, когда, наконец, стало ясно, что общество, т.е. люди, составляющие его, — как бы сами по себе, то есть имеют свои, отличные от других слоев и групп интересы, а государство — в известной степени — само по себе, потому что должно регулировать возникающие в обществе противоречия. Во всей полноте формирование гражданского общества завершилось в условиях развития буржуазного общества и под влиянием его государства. Следует заметить, что “гражданское общество” и “буржуазное общество” звучит по-немецки одинаково: “burgerliche Gesellschaft”, то есть под гражданским обществом понималось общество “буржуазное” или современное “либеральное”.

Как известно, базовая ценность идеологии либерализма, как следует уже из названия, состоит в свободе личности. Духовная свобода — это право на выбор в религиозном вопросе, свобода слова. Материальная свобода — это право на собственность, право купить и продать

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԵՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

из соображений собственной выгоды. Политическая свобода — свобода в политическом волеизъявлении. Права и свободы личности имеют приоритет над интересами общества и государства.

Государство “традиционного” общества устроено по типу семьи, то есть оно является патерналистским, от слова отец. Мировоззрение (идеология) традиционного общества обусловлено традицией и авторитетом³.

Традиционное общество есть не совокупность классов, но единство сословий. Класс — экономическая категория, сословие — политическая, оно является обязательной организацией всей социальной группы. В современном либеральном обществе экономика доминирует над политикой в плане общественно-государственного строительства. Напротив, в обществе традиционном намного важнее не экономическое, но политико-юридическое единство. Оно требует всеобщей организации, которая не оставляет ни одного из членов общества вне самоорганизации группы и, соответственно, без той защиты, которую эта самоорганизация оказывает. Напротив, либеральное общество предоставляет каждому индивидууму право свободно решать проблемы собственной организации, и это часто приводит к отчужденности этого индивидуума от общества. “Гражданское общество - есть сфера реализации частных целей и интересов отдельной личности: здесь каждый для себя есть цель. Все другие значимы лишь как средства достижения этих целей”⁴.

Традиционное же общество предполагает доминирование государства над личностью, ассоциациями личностей и общественными структурами. В тради-

ционном обществе должна существовать многоуровневая система подчинения, которая учитывала бы разные состояния общественного организма. Личность должна подчиняться группе (сословию, корпорации), обществу (нации) и государству, но при этом сохраняет автономность на своем уровне. То же самое относится к группе (подчинение обществу и государству), обществу (подчинение государству), и даже к самому государству (подчинение Богу). Таким образом, общественный строй традиционного общества соотносится с устройством традиционного государства.

Гражданское общество или либеральное, все равно неразрывно связано с понятием правовое государство. Связано именно потому, что в нем действует принцип примата юридического права над всеми остальными. Примат юридического права надо понимать так: существует только одно право, которое должно выполняться всегда — юридическое. Остальные социальные нормы, в частности, моральные, религиозные — необязательны.

В отличие от либерального (правового) общества, общество традиционное основывается на принципе примата морали, традиции над всеми остальными. В представлениях традиционного общества моральный закон обязателен для исполнения всегда и везде. Юридический закон должен его дополнять и особенно в тех случаях, когда моральные (традиционные, религиозные) нормы нарушаются. Такова идеология народов Ближнего Востока, Китая, Японии. Россию и постсоветские государства принято также относить к обществам традиционным. Проблемы человеком традиционной культуры решаются через те культурные нормы, что существуют в той среде, в которой он находится. Можно сказать, что в традиционном обществе

большей частью не юридический закон заставляет человека поступать так или иначе, а моральные ориентиры, которые установлены в данном социуме и которые человек несет в себе.

В отличие от традиционного, правовое общество не признает каких бы то ни было норм, кроме правовых, то есть установленных и санкционированных государством и имеющих формально определенный вид. То есть “что не запрещено законом, то разрешено”. А не записаны в большинстве своем именно моральные нормы. Именно это следует из такого принципа гражданского общества как индивидуализм, по которому единой морали и этики для всего общества быть не должно, так как это противоречит принципам индивидуальной же свободы. Этот принцип в западном современном обществе приводит к релятивизации морали и, как следствие, появлению “мозаичной” культуры. По этой “культуре” — моральные нормы — личное дело каждого. И личное дело творчества каждого. Этому же способствует и отрицание гражданским обществом единой этики. То есть, основа поведения члена гражданского общества — юридические нормы, записанные на бумаге и принятые к исполнению общим договором граждан, так же написанном на бумаге. Ясное дело, что осуществлять те или иные нормы права можно с совершенно противоположных или принципиально разных морально-этических установок. “На мораль и нравственность закона не существует!”.

В отличие от гражданского, общество традиционное основывается на морали единой для всех его членов. Традиционное общество – общество, которое регулируется традицией, существованием устойчивых социальных общностей (особенно в странах Востока), особым способом регуляции жизни общества, осно-

ванном на традициях, обычаях. Данная организация общества стремится сохранить в неизменном виде социокультурные устои жизни.

Традиционный человек воспринимает мир и заведенный порядок жизни как нечто неразрывно-целостное, холистичное, священное. В традиционном обществе преобладают коллективистские установки, индивидуализм не приветствуется. В целом для традиционных обществ характерно преобладание коллективных интересов над частными, в том числе примат интересов имеющих иерархических структур (государства, клана и т. п.).

Быстрые перемены и отход от традиций могут переживаться традиционным человеком как крушение ориентиров и ценностей, утрата смысла жизни. Поскольку приспособление к новым условиям и изменение характера деятельности не входит в стратегию традиционного человека, трансформация общества зачастую приводит к маргинализации части населения.

В древности изменения традиционного общества происходили чрезвычайно медленно – на протяжении поколений, практически незаметно для отдельного человека. Быстрая и необратимая трансформация традиционного общества начала происходить лишь в результате промышленной революции. К настоящему моменту этот процесс охватил почти весь мир.

И так далее. Можно пройтись по всем признакам общественного бытия, и мы увидим очень большую разницу в обществах. Так вот, именно в “традиционное” общество вмещается этнос.

Общество, в пределах традиционного миропонимания, не может быть истолковано абстрактно, как всего лишь совокупность личностей и групп. Любое общество вполне конкретно и почвенно,

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԵՐ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

оно создается на базе этноса (народа, национальности, нации), имеющего культурные, языковые и антропологические отличия. Попытка затушевать данное обстоятельство есть стремление к устранению общества, превращению его в бесформенный агломерат индивидуумов⁵. Показательно, что смешение этнокультурных типов, которое определяет лицо современного мира, стало возможным в результате смешения сословий, имевшего место быть в результате буржуазных революций. Общество стало однородным (гомогенным), сведенным к одному культурному типу — буржуа. В результате народы потеряли самобытность, что облегчило их космополитическое смешение друг с другом.

Действительно, если мы вспомним советский период, а это было общество именно традиционное, то заметим, что здесь постоянно происходила постоянная и постепенная консолидация этносов и их огосударствление, поэтому этносы имели голос. Человек представлял этнос, это было записано в паспорте, а в верховных органах власти этносы, народы были представлены своим особым голосом.

Индивид же современного гражданского общества свой голос несет себе, он ничего не оставляет общности, типа этноса, то есть этнос в названном обществе голосом не обладает.

С идеей гражданского общества, как было сказано выше, тесно связана идея правового государства, неотъемлемыми элементами которого также являются равенство всех перед законом и судом, равенство правового, конституционного статуса граждан. Таким образом, напрямую связана с идеей правового государства идея равенства человека с человеком перед законом и судом и идея неотъемлемых, естественных прав человека, яв-

ляющихся атрибутивными свойствами самой человеческой личности.

Но общество - это не простая совокупность индивидов. Общество не есть арифметическое сложение личностей. Интересы общества не совпадают с интересами составляющих ее индивидов, они не соотносятся как часть и целое. Таким образом, с одной стороны, индивид, его права, свободы, интересы, стремление к счастью, а с другой — некое коллективное начало, в том числе, государство, этнонациональная группа, семья. Отсюда следует, что и для обеспечения прав человека, и для обеспечения устойчивости и стабильности социума, чрезвычайно важно достижение баланса интересов индивида и общества. Поэтому сама доктрина соотношения индивидуального и социального - это ведь не только оторванная от жизни философия, это практическая проблема, которая проявлялась и в живописи, и архитектуре, практически во всех сферах человеческой жизни и деятельности.

Гипертрофия социальных интересов, интересов коллектива, общества, государства ведет к тому, что права человека просто перестают существовать. Гипертрофия индивидуального начала, в свою очередь, ведет к разрушению социума, семьи, коллективных форм сосуществования людей. На наш взгляд, это чрезвычайно опасная тенденция. Может быть по этой причине главная проблема, стоящая и перед социальной наукой, и перед социальной практикой заключается в том, чтобы найти баланс интересов индивида и социума, человека и этноса. Следует заметить, что в различных государствах этот баланс различен. Он зависит от многих факторов, включая даже психологические стереотипы того или иного общества, этноса, народа, имея в виду его историческое развитие.

Но говоря об интересах общества, следует иметь в виду, что, хотя это и объективная категория, но, по сути, труд-

но познаваемая. Поэтому для ученого, исходящего из объективного интереса в объяснении поведения людей и социальных общностей, опасность состоит в почти неизбежной возможности соскользнуть на путь произвольного “конструирования” интересов. Иначе говоря, существует риск заменить субъективность тех, кого изучает социолог, своей собственной субъективностью. Подобного мнения придерживается также известный французский специалист в области международных отношений Ж.-Б. Дюрозель. “Было бы, конечно, хорошо, — пишет он, — если бы существовала возможность определить объективный национальный интерес... Беда однако состоит в том, что любое размышление об объективном национальном интересе является субъективным”⁶.

Таким образом, поскольку абсолютно объективно определить национальный интерес не представляется возможным, многие ученые предлагают рассматривать вместо категории “национальный интерес” — “национальную идентичность”. Речь идет о языке и религии как основах национального единства, о культурно-исторических ценностях и национально-исторической памяти и т.п. Исторический путь, пройденный конкретным народом или этносом, очень важен для ответа на вопросы, что есть это общество сегодня и куда оно идет?

Монтескье в своем “Духе законов” пишет: “Законы должны быть настолько свойственны народу, для которого они созданы, что следует считать величайшей случайностью, что установления одной страны могут быть пригодны для другой”⁷. В своей работе “О Праве владения” Савиньи выдвигает важнейшие ее положения; не произвол, не рефлексия, не законодательство создают право, как не могут создать они религию или язык; право с внутренней необходимостью вытекает из “природного” развития народа, из потребностей национального, прису-

щего каждому народу знания... Само право — историческое наследие народа, которое не может и не должно произвольно меняться. Подлинным бытием, источником права является не закон, произвольно принимаемый, изменяемый, отменяемый государством, а обычай, выражающий дух народа⁸.

Каждый народ имеет свой неповторимый духовный облик и свою особую историческую миссию. Национальная принадлежность человека определяется не столько государственно-правовым статусом, сколько его самосознанием, имеющим как этническую, так и общенациональную составляющую. Религиозное самосознание также является основой национального самосознания. Вне религии не может быть национальной идентичности, как и никакой этики и морали.

Наша страна именно традиционной, солидарной культуры и принципиально отличается от Западной. Чтобы сделать ее “либеральной”, надо было ее провести через Инквизицию, Эпоху Просвещения, Реформацию, массовое распространение Протестантизма. Кстати, одна Германия за этот период потеряла 2/3 своего населения.

Таким образом, в нашей стране, на этом переходном этапе от традиционного общества к обществу современному, гражданскому, следует очень осторожно выбирать способы и механизмы, для того, чтобы не растерять то ценное, что у нас накапливалось за все время нашего исторического развития (крепкая традиционная семья, наилучшие обычаи, христианские ценности) и перенять у “современных”, гражданских обществ самое лучшее и полезное — это возможность свободного развития личности, реальные механизмы защиты прав и свобод личности, равенство всех перед законом и судом и т.д.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

¹ ՏՄ.: Գեգել Գ. Վ. Փ. Փիլոսոփիա թրա. Փեր. ս ռեմ.: Րեդ. և սոստ. Ը. Ա. Կերիմով և Վ. Տ. Ոերսեսյանց; Ավտ. վստը. ստ. և թրիմեչ. Վ. Տ. Ոերսեսյանց.– Մ.: Մըսլը, 1990. Տ.227.

² ՏՄ.: Չերնիլովսկի Յ.Մ. Գրաճանսոն օբնշեստո: օթըր ևսսևոնոնոն // Գոսըդարստո և թրա, 1992. Ո5. Տ.6.

³ ՏՄ.: Գըմիլև Լ.Ո. Ըրևնյն Րըսն և Վելիկնն ստըթ. - Աստրըլ, ԱՏՏ, 2004. Տ.17.

⁴ ՏՄ.: Գեգել Գ. Վ. Ոննն. թրիզն. Տ.237.

⁵ ՏՄ.: Ըըդթյնր, Վ Գ. Մ., Կոլոտիլո Լ.Գ. Զնոնոց-

նըզ – յնվընը կոսմիչեսոն. Կ 25-լըտիը թնսիոննրն թըրի զնոնոննն // Լընինգրնդսկի յնիվըրսիտը, 1990. Տ. 35.

⁶ ՏՄ.: Ըյըրոզըլ Յ.Բ. Լըի Բարտը և ֆրնկո-սօվըտսոն սնիճիլընը Վ 1934 ց. // Մ. 1962. Տ. 73.

⁷ ՏՄ.: Մոնտըսոն Տ. Ոնննրնն թրիզնընընն., Գոսթրիզնըդնդ., Մ., 1955. Տ 65.

⁸ ՏՄ.: Ոստրիոն թոլիտիչեսկի և թրաոնն յըչընի. Փոն.օնն.րըդ. Օ.Զ.Լըյստն. Մ. 2000. Տ.415.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Քրիստինե ՍԱՐԳՍՐՅԱՆ

*Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի
պետության և իրավունքի տեսության ու
պատմության ամբիոնի դասախոս*

Սույն հոդվածում վերլուծվում են քաղաքացիական և ավանդական հասարակությունների միջև տարբերությունները և ընդհանրությունները:

Քաղաքացիական հասարակության ձևավորումը ամբողջական ավարտին է հասնում բուրժուական հասարակության զարգացման պայմաններում: «Քաղաքացիական հասարակություն» և «բուրժուական հասարակություն» բառակապակցությունները միանման հնչողություն ունեն գերմաներենում, այն է «burgerliche Gesellschaft», այսինքն դրա տակ հասկացվում է բուրժուական կամ ժամանակակից լիբերալ հասարակություն:

Ինչպես հայտնի է, լիբերալ գաղափարախոսության հիմնական արժեքը, ինչպես դա երևում է նաև անվանումից, անձի ազատությունն է: Հոգևոր ազատությունը խղճի, կրոնի ընտրության և խոսքի ազատության իրավունքն է: Նյութական ազատությունը սեփականության իրավունքն է, անձնական

շահերից բխող ազատ գնելու և վաճառելու իրավունքն է: Քաղաքական ազատությունը ազատ արտահայտվելու իրավունքն է: Անձի իրավունքները և ազատությունները գերակա են հասարակության և պետության շահերի նկատմամբ:

Ավանդական հասարակությունը ենթադրում է պետության գերակայություն անձի նկատմամբ: Ավանդական հասարակության տեսանկյունից բարոյական նորմերը ենթակա են պարտադիր կատարման միջոց և ամենուրեք: Իրավական նորմերը պետք է միայն լրացնեն բարոյական, ավանդույթային և կրոնական նորմերին, հատկապես այն դեպքերում, երբ վերջիններս խախտվում են:

Քաղաքացիական հասարակությունը չի ընդունում որևէ այլ նորմ՝ բացի իրավականից, այսինքն՝ պետությունից ընդունված կամ սանկցիավորված, և որպես դրա հետևանք՝ ժխտում է միասնական էթիկան:

Յուրաքանչյուր ազգ ունի իր անկրկնելի հոգևոր կերպարը և իր հատուկ պատմական առաքելությունը: Մարդու ազգային պատկանելությունը որոշվում է ոչ այնքան պետական իրավական կարգավիճակով, որքան նրա ինքնագիտակցմամբ, որն ունի ինչպես էթնիկ, այնպես էլ ընդհանուր ազգային բաղադրատարրեր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՄԱԿ-Ի ԽԱՂԱՂԱՊԱՅ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Էդգար ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Միավորված ազգերի կազմակերպությունն այսօր հնարավոր չէ պատկերացնել առանց իր կողմից իրականացվող խաղաղապահ առաքելությունների: Այդուհանդերձ, ՄԱԿ-ի խաղաղապահ օպերացիաները, որպես կանոն, դիտվում են որպես սոսկ ռազմական բնույթի միջոցառումներ, որոնք որևէ առնչություն չունեն տվյալ պետության մեջ ժողովրդավարությանն աջակցելու, պետականաշինության և այլ քաղաքացիական բաղադրատարրերի հետ:

ՄԱԿ-ի խաղաղապահ օպերացիաների նման ընկալումը, սակայն, փոքր-ինչ հնացած է և պայմանավորված է սառը պատերազմի ընթացքում ՄԱԿ-ի խաղաղապահ օպերացիաների նկատմամբ ձևավորված կարծրատիպով: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ մինչ սառը պատերազմի ավարտը ՄԱԿ-ի խաղաղապահ օպերացիաները, իրոք, գերազանցապես ռազմական ուղղվածություն ունեին: ՄԱԿ-ի ստեղծումից հետո ծավալված առաջին խաղաղապահ օպերացիաներն ուղղված էին բացառապես կամ գերազանցապես զինված ընդհարման մեջ գտնվող կողմերի միջև «խաղաղապահ պատմեշ» ստեղծելուն և հրադադարը պահպանելուն: Նման օպերացիաներն իրականացնում էին ՄԱԿ-ի հատուկ նշանակության ուժերը (UN Emergency Forces (UNEF))¹:

Տարիների ընթացքում, սակայն, ՄԱԿ-ի շրջանակներում սկսեց ավելի ու ավելի

ընդգծվել խաղաղության պահպանման և ժողովրդավարության աջակցության միջև առկա կապը: ՄԱԿ-ի՝ առավել քան 60-ամյա պատմության ընթացքում կուտակված խաղաղապահ գործունեության հսկայական փորձը զգալիորեն հարստացրեց խաղաղապահ գործիքների շտեմարանը, ինչն իր հերթին հանգեցրեց ՄԱԿ-ի խաղաղապահ օպերացիաների որակական փոփոխությանը²: Առաջ եկան նոր սերնդի խաղաղապահ օպերացիաներ, որոնց հիմնական բովանդակային առանձնահատկությունը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի նախկին խորհրդական գեներալ-մայոր Ինդար Ռիկիի կարծիքով, բազմաբաղադրատարրությունն էր, այսինքն՝ օպերացիայի հանձնառությամբ որոշված խնդիրների ընդլայնված շրջանակը և խաղաղապահ առաքելության համապատասխան կառուցվածքը³:

Սառը պատերազմի ավարտից հետո ժողովրդավարության աջակցության հիմնահարցերն առավել նշանակալի տեղ զբաղեցրեցին ՄԱԿ-ի բազմաբաղադրատարր խաղաղապահ օպերացիաների շրջանակներում: Վերջին տասնամյակներին միջազգային իրավիճակի թելադրանքով ՄԱԿ-ի հովանու ներքո անցկացվող օպերացիաների շրջանակներում արմատավորվեցին ժողովրդավարական աջակցությանն ուղղված այնպիսի տարրեր, որոնք, ավանդական խաղաղապահ գործառնությունների հետ մեկտեղ, նպատակաուղղված էին ճգնաժամն առաջացրած խնդիրները լուծելուն կամ ճգնաժամում հայտնված հասարակությունների «ապաքինմանը»:

Ժամանակակից խաղաղապահ օպերացիաների հանձնառության մեջ են նտնում,

մասնավորապես, այնպիսի միջոցառումների իրականացումը, ինչպիսիք են.

- մարդու իրավունքների զանգվածային խախտումների և մարդասիրական աղետների կանխարգելումը,

- ժողովրդավարական բարեփոխումների իրականացմանն աջակցությունը,

- ընտրությունների կազմակերպումը, կառավարական և սոցիալական կառույցների վերականգնմանն աջակցությունը, իրավապահպան մարմինների և զինված ուժերի վերակազմակերպումը,

- տեղական վարչակազմի կառավարումը, ականագերծման միջոցառումներին օժանդակելը, ենթակառուցվածքի վերականգնումը և այլն*:

Ժամանակակից խաղաղապահ առաքելությունների հանձնառության մեջ ներառվում են նաև ժողովրդավարության աջակցությանն ուղղված այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են՝ բնակչության անվտանգությանն աջակցելը, վստահության ամրապնդմանն ուղղված միջոցների խրախուսումը, իշխանությունների տարանջատման մեխանիզմների ձևավորման հարցում օժանդակություն ցուցաբերումը և այլն:

Ժողովրդավարության աջակցության բաղադրատարր ունեցող ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելություններում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական գործառույթները.

1. միջազգային անցումային վարչակարգերի միջոցով ինքնիշխանության ժամանակավոր իրականացում,

2. հետհակամարտային կայունությունն ապահովելու նպատակով քաղաքացիական ներկայացուցչության ծավալում,

3. ժողովրդավարական պետական շինարարությանը, այդ թվում՝ արդարադատության իրականացմանն աջակցությունը,

4. մարդու իրավունքների խախտումների և մարդասիրական աղետների կանխարգելում,

5. ընտրությունների կազմակերպում և անցկացում,

6. ժողովրդավարական հասարակության հաստատությունների կայացմանն աջակցություն,

7. այլ հարակից գործառույթներ:

Ընդ որում, պետք է նշել, որ տվյալ գործառույթները կարող են հանդես գալ ինչպես առանձին վերցրած, այնպես էլ զուգակցվել միևնույն առաքելության հանձնառության ներքո:

Ընդհանրապես, դասական առումով ՄԱԿ-ի ժողովրդավարության աջակցության բաղադրատարր ունեցող խաղաղապահ առաքելության առաջին օրինակը, ի կատարումն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1989 թվականի փետրվարի 16-ին ընդունված 632 բանաձևի⁶, Նամիբիայում ծավալված ՄԱԿ-ի անցումային աջակցության խմբի (UNTAG) օպերացիան էր, որը ոչ միայն կոչված էր ապահովելու հրադադարը ՍՎԱՊՕ-ի⁶ և Հարավաֆրիկյան ուժերի միջև, այլ նաև նախապատրաստելու և վերահսկելու ազատ և արդար ընտրությունների իրականացումը, որոնք պետք է հանգեցնեին անկախ պետության ստեղծմանը:

Պետք է նշել, որ, ի տարբերություն խաղաղապահ օպերացիաների ռազմական ասպեկտների, որտեղ ՄԱԿ-ի անաչառությունը և օբյեկտիվությունը կասկած չեն հարուցում, ընտրությունների մեջ ներգրավված լինելու պարագայում ցանկացած մակարդակում ՄԱԿ-ը պետք է չափազանց աչալուրջ լինի՝ բոլոր խմբավորումների նկատմամբ դրսևորելով միատեսակ մոտեցում⁷: Հակառակ պարագայում, եթե ՄԱԿ-ը ուղղակի կամ անուղղակի նախապատվություն տա երկրի ներքաղաքական պայքար ներառված որևէ ուժի, ապա կվերածվի ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների՝ նախևառաջ պետության ներքին գործերի մեջ չմիջամտելու սկզբունքի կոպտագույն խախտողի: Նման իրավիճակում չհայտնվելու համար ՄԱԿ-ը պետք է փորձի նման գործառույթներ իրականացնելիս ներգրավի բավականաչափ քանակությամբ բարձրակարգ արհեստավարժ մասնագետներ՝ ընտրությունների

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նախապատրաստման և անցկացման ողջ ընթացքը վերահսկելու համար:

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ ՄԱԿ-ի՝ ընտրությունների անցկացման բաղադրատարր ներառող խաղաղապահ առաքելությունների իրականացման պարագայում ՄԱԿ-ի ներգրավվածությունը միատարր չէ: Այսպես, տեսական գրականության մեջ ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունների հանձնառությունները վերլուծելու արդյունքում առանձնացնում են ՄԱԿ-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման մեջ ներգրավվածության հետևյալ 7 մակարդակները.

1. անմիջապես ՄԱԿ-ի կողմից ընտրությունների կազմակերպում և անցկացում,

2. անցկացվող ընտրությունների նկատմամբ վերահսկողություն,

3. ընտրությունների հաստատում,

4. միջազգային դիտորդների համակարգում,

5. ազգային դիտորդներին աջակցություն,

6. ընտրությունների դիտարկում,

7. տեխնիկական աջակցություն:

Ինչպես տեսնում ենք, խաղաղապահ օպերացիաների շրջանակներում և դրանցից դուրս ընտրական հարցերում ՄԱԿ-ի ցուցաբերած աջակցությունը կրում է բազմաստիճան բնույթ՝ սկսած ամենաբարձր ներգրավվածության աստիճանից, որը դրսևորվում է ընտրությունների կազմակերպմամբ ու անցկացմամբ և ազգային իշխանություններին տեխնիկական աջակցություն ցուցաբերելով: Ընդ որում, պետք է նկատել, որ ՄԱԿ-ի ներգրավվածության աստիճանի տեսանկյունից առավել աչքի են ընկնում առաջին երեք մակարդակները, որտեղ ՄԱԿ-ը լրջագույն դերակատարություն է ունենում ընտրությունների լեգիտիմությունը հաստատելու տեսանկյունից, մինչդեռ վերջին չորս մակարդակի պարագայում ՄԱԿ-ի դերակատարությունն առա-

վել նվազ է:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 46/137 բանաձևի⁹ դրույթների ուսումնասիրությունը գործնականում թույլ է տալիս եզրակացնելու, որ ընտրություններին աջակցության ոլորտում ՄԱԿ-ի գործունեությունը ուղղված է երկու գերխնդիրների լուծմանը.

1. սատարել անդամ-պետությունների՝ մարդու իրավունքների վերաբերյալ ունիվերսալ և տարածաշրջանային փաստաթղթերում ամրագրված միջազգայնորեն ճանաչված չափանիշներին համապատասխանող, վստահություն ներշնչող օրինական ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու ջանքերին,

2. աջակցել իրական և պարբերական բնույթ կրող, ընտրազանգվածի և հակամարտող բոլոր ուժերի վստահությունն անվերապահորեն վայելող ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար կազմակերպչական ներուժի ստեղծմանը այն երկրներում, որոնց նման օժանդակություն է ցուցաբերվում:

Իհարկե, խաղաղապահ առաքելությունների շրջանակներում ընտրությունների կազմակերպման և անցկացման հարցերում աջակցության իրականացումը հնարավոր չէր լինի՝ առանց համապատասխան ինստիտուցիոնալ բազա ստեղծելու: Այդ իսկ պատճառով, դեռևս 1991թ., ի կատարումն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 46/137 բանաձևի, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը Քաղաքական հարցերով գլխավոր քարտուղարի տեղակալին նշանակեց Ընտրությունների անցկացման հարցերում օժանդակություն ցուցաբերելու միջոցառումների համակարգողի պաշտոնում: Նույն թվականին, ի կատարումն նշված բանաձևի 11-րդ կետի, Քաղաքական հարցերի դեպարտամենտի կազմում ձևավորվեց Ընտրությունների կազմակերպման հարցում օժանդակություն ցուցաբերելու խումբը (ՕՑԽ), որի հիմնական գործառույթը համակարգողին վերապահված գործառույթների իրականացման ընթացքում

նույն օժանդակությունն ցուցաբերելն էր: Ընդգծելով ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեության շրջանակներում ընտրությունների անցկացմանն աջակցելու կարևորությունը՝ 1994թ. որոշվում է տվյալ խումբը վերածել Խաղաղապահ օպերացիաների դեպարտամենտի (DPKO) կառուցվածքային ստորաբաժանման և վերանվանել այն Ընտրությունների աջակցման բաժնի (Electoral Assistance Division (UNEAD))¹⁰: Նշված կառուցվածքային տեղափոխությունը պատճառաբանվում էր Քաղաքական հարցերի և Խաղաղապահ օպերացիաների դեպարտամենտների գործառույթների իրականացման ներդաշնակեցման մակարդակի բարձրացմամբ: Այդուհանդերձ, 1995թ. Ընտրությունների աջակցման բաժինը կրկին վերադարձվեց Քաղաքական հարցերի դեպարտամենտի հովանու ներքո և առ այսօր գործում է վերջինիս համակարգում:

Պետք է նշել, որ ՄԱԿ-ի ժողովրդավարության աջակցության գործառույթի բնույթն ու բովանդակությունը բավական հետաքրքրական ձևափոխումների են ենթարկվել Կազմակերպության ստեղծումից ի վեր: Ի սկզբանե այն կոչված էր սատարելու ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի իրականացումը՝ ինքնակառավարման զարգացման և ապագադրությամբ միջոցով, առավելապես՝ ընտրությունների միջոցով, սակայն աստիճանաբար նշված աջակցությունն սկսեց ընդգրկել նորանոր ուղղորտներ՝ ներառելով ժողովրդավարության սկզբունքի հաստատումը և զարգացումը, ինչպես նաև քաղաքական իրավունքների պաշտպանության բնագավառները՝ ապագադրությամբ համատեքստից դուրս¹¹:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ խաղաղապահ առաքելությունների շրջանակներում ժողովրդավարության աջակցությանն ուղղված գործառույթներն ուղղված չեն ՄԱԿ-ի անդամ-պետություններին որևէ քաղաքական մոդել պարտադրելուն. նման օժանդակությունը նախ հիմնված է

այն գաղափարի վրա, որ առկա են միջազգային իրավական ստանդարտների վրա հիմնված ժողովրդավարության մոդելներ, որոնք արտացոլում են շահագրգիռ ժողովրդի հատուկ պահանջմունքները, սպասելիքները և պատմական իրողությունները¹², իսկ ժողովրդավարության աջակցության ձևն ու բովանդակությունը պայմանավորված են տվյալ տարածաշրջանի, պետության, տարածքի ուրույն առանձնահատկություններով:

Յետաքրքրական է նաև այն, որ մի շարք հետազոտողների, մասնավորապես՝ Նայջլ Ուայթի կարծիքով, ՄԱԿ-ը հետզհետե գիտակցում է, որ սոսկ ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը բավարար չեն պատերազմից խաղաղության, միակուսակցական պետությունից բազմակարծությամբ ժողովրդավարությանն անցնելու համար¹³: Ուստիև, ակնհայտ է, որ ժամանակակից բազմաբաղադրատարր խաղաղապահ առաքելություններում ՄԱԿ-ից պահանջվում է առավել լայն ժողովրդավարական ներգրավվածություն՝ համապատասխան պետություններում հետևականարտային կայունությունն ապահովելու, ժողովրդավարական պետաիրավական հաստատությունները վերականգնելու, մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու և կայուն զարգացումն ապահովելու համար:

Նոր տեսակի խաղաղապահ օպերացիաներն աչքի են ընկնում քաղաքացիական ասպեկտների և խաղաղ շինարարության բաղադրատարրերի նկատմամբ առավել մեծ ուշադրությամբ: Քաղաքացիական վարչակազմի ստեղծման հետ մեկտեղ (Կոսովո, Աֆղանստան, Արևելյան Թիմոր), նոր սերնդի խաղաղապահ առաքելություններն սկսել են ներառել այնպիսի բաղադրատարրեր, որոնք նախկինում երբևիցե ընդգրկված չեն եղել խաղաղապահ առաքելությունների հանձնառություններում: Մասնավորապես, Կոսովոյում, Աֆղանստանում և Արևելյան Թիմորում ծավալված խաղաղապահ առաքելությունների հանձ-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նառություններում ներառված էին այնպիսի հարցեր, ինչպիսիք են օրենսդրության մշակումը և այն կիրառելու ապահովումը, մաքսային ծառայությունների ստեղծումը, հարկերի սահմանումը և հարկահավաքումը, օտարերկրյա ներդրումների ներգրավումը, գույքային վեճերի լուծումը և ռազմական վնասի համար պատասխանատվությունը, համայնքային ձեռնարկությունների վերականգնումը և շահագործումը, բանկային համակարգի ստեղծումը, դպրոցական կրթության կազմակերպումը և նույնիսկ աղբահանությունը¹⁴:

Քաղաքացիական վարչակարգերի ստեղծման գործում ՄԱԿ-ի առաջին հետաառըպատերազմյան առաքելությունը Կոստովոն էր, որում ՄԱԿ-ի քաղաքացիական ներկայության իրավական հիմքը դարձավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1244 բանաձևը¹⁵: Կոստովոյում ծավալված քաղաքացիական ներկայությունը ուներ երեք բաղադրատարր՝ վարչական (վարչարարություն, ոստիկանություն, դատական համակարգ), ինստիտուցիոնալ-իրավական (ժողովրդավարացում, իշխանության ինստիտուտներ, ընտրություններ, մարդու իրավունքներ) և տնտեսական (տնտեսության վերականգնում): Հետաքրքրականն այն է, որ նշված երեք բաղադրատարրերից միայն առաջինն էր ՄԱԿ-ի անմիջական վերահսկողության ներքո, ինստիտուցիոնալ-իրավական բաղադրատարրի, այդ թվում և ժողովրդավարացման աջակցության իրականացումը հանձնարարված էր ԵԱՀԿ-ին, իսկ տնտեսական բաղադրատարրը՝ Եվրոպական Միությանը: Սա ՄԱԿ-ում առկա նոր միտման՝ համապատասխան մասնագիտացված հաստատության հետ փոխհամագործակցության բարձրացման վառ օրինակներից մեկն է:

Միջազգային քաղաքացիական ներկայության ծավալման հաջորդ օրինակ դարձավ Արևելյան Թիմորը, որտեղ, ի կատա-

րումն 1999թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1272 բանաձևի¹⁶, հիմնվեց Արևելյան Թիմորում ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմը, որի հանձնառությունը, իմիջիայլոց, ներառում էր նաև ժողովրդավարության աջակցության բաղադրատարրը: Դրանում հատկապես ընդգծվում էր վերջինիս հանձնառության արդյունավետ իրականացման համար արևելաթիմորցիների հետ ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելության սերտ համագործակցության իրականացման անհրաժեշտությունը, տեղական ժողովրդավարական ինստիտուտների, ներառյալ՝ մարդու իրավունքների հարցերով անկախ արևելաթիմորյան կազմակերպության ստեղծման նպատակով և տվյալ հաստատություններին դրա վարչական և պետական ծառայության գործառույթների փոխանցման համար:

ՄԱԿ-ի առաքելությունը Արևելյան Թիմորում փաստորեն իրականացնում էր պետաիշխանական բոլոր գործառույթները՝ ներառյալ արդարադատության իրականացումը: 2002թ. մայիսի 17-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1410 բանաձևով¹⁷ Արևելյան Թիմորում հիմնադրվեց նոր խաղաղապահ առաքելություն՝ ՄԱԿ-ի՝ Արևելյան Թիմորին աջակցության առաքելությունը, որը կոչված էր բազմակողմ աջակցություն ցուցաբերել նորանկախ պետությանը: Ժողովրդավարության աջակցությանն ուղղված էր նշված առաքելության քաղաքացիական բաղկացուցիչը (կայունություն, ժողովրդավարություն և արդարատություն), որը ներառում էր, մասնավորապես, տեղական կառավարչական կադրերի պատրաստմանը, արդարադատության անկախ համակարգի ձևավորմանը, գործող քրեակատարողական համակարգի բարեփոխմանն ուղղված միջոցառումներ:

Քաղաքացիական վարչակարգի բաղադրատարրեր ներառել է նաև Աֆղանստանում ծավալված խաղաղարար առաքելությունը: Դեռ ավելին, 2001թ. դեկտեմբերի 6-ի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի

1383 բանաձևը հավանության արժանացրեց ՄԱԿ-ի հովանու ներքո Բոննում ստորագրված՝ Աֆղանստանում մինչ մշտական կառավարական հաստատությունների վերականգնումը ժամանակավոր մեխանիզմների մասին համաձայնագիրը¹⁸՝ հաստատելով Աֆղանստանում ժամանակավոր կառավարման համակարգը, իսկ 2002թ. մարտի 28-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1401 բանաձևով հիմնվեց Աֆղանստանին աջակցության առաքելությունը՝ ճանապարհ հարթելով Լոյա Ջիրգայի (աֆղանական ավագանու բարձրագույն խորհրդի) հրավիրմանը և Աֆղանստանի ժամանակակից պետաիրավական կառույցների ձևավորմանը:

Արդի միջազգային իրավական մարտահրավերները՝ ներպետական բռնության ուժգնացում, մարդու իրավունքների զանգվածային խախտումների թվի զգալի աճ, ահաբեկչության և միջազգային հանցավորության ծավալների մեծացում, ՉԻԱՎ/ՄԻԱՎ-ի տարածում և այլն, ստիպեցին Միավորված ազգերին առավել լուրջ ուշադրություն դարձնել խաղաղապահ առաքելությունների շրջանակներում քաղաքացիական ասպեկտներին և հետպատերազմյան խաղաղ շինարարության հարցերին: Նշված հիմնախնդիրը ՄԱԿ-ի ամբիոնից բարձրաձայնվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահի 2005թ. հուլիսի 12-ի հայտարարության մեջ, որում մասնավորապես նշվում էր, որ խաղաղապահ առաքելությունների շրջանակներում ՄԱԿ-ի համապատասխան կառույցները պետք է առանցքային համակարգող դերակատարություն ունենան «մարդասիրական օգ-

նության ցուցաբերման, հասարակական կարգի վերականգնման, պետական մարմինների գործունեության ապահովման, ինչպես նաև վերականգնման, վերակառուցման և խաղաղ շինարարության ապահովման հարցերում, որոնք հանգեցնում են երկարաժամկետ կայուն զարգացմանը»¹⁹:

Ամփոփելով նշվածը՝ կարող ենք եզրակացնել, որ ՄԱԿ-ի ժամանակակից խաղաղապահ առաքելությունների հանձնառությունների վերլուծությունը թույլ է տալիս վստահաբար նշելու, որ դրանց զգալի մասը ներառում է ժողովրդավարության աջակցությանն ուղղված համապատասխան բաղկացուցիչներ, որոնք, կախված առաքելության նպատակներից, ձեռք են բերում տարատեսակ ծավալ և բովանդակություն՝ սկսած ժամանակավոր քաղաքացիական վարչակազմի ստեղծումից կամ քաղաքացիական ներկայության ծավալումից և ավարտած ընտրությունների կազմակերպմամբ և անցկացմամբ կամ ընտրությունների անցկացմանը տեխնիկական աջակցության ցուցաբերմամբ: Ընդ որում, խաղաղապահ առաքելությունների շրջանակներում ժողովրդավարության աջակցմանն ուղղված ՄԱԿ-ի գործառնությունները որևիցե կերպ չեն կարող այնպիսի դրսևորումներ ստանալ, որոնք կդիտվեն որպես տվյալ պետությանը պետական կառավարման որևէ համակարգի պարտադրում կամ վերջինիս ներքին գործերին միջամտելու փորձ կամ որևէ այլ կերպ կհակասեն ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին:

¹ Նման խաղաղապահ օպերացիաներ, մասնավորապես, ծավալվել էին 1956–1967թթ. Եգիպտոսի տարածքից Ֆրանսիայի, Իսրայելի և Մեծ Բրիտանիայի զինված ուժերը դուրս բերելու և եգիպտական ու իսրայելյան ուժերի միջև միջանցք ստեղծելու նպատակով (UNEF I) (UN GA Res. 1000 (ES-I)), ինչպես նաև 1973–1979 թթ. եգիպտական և իսրայելյան ու-

ժերի միջև զինադադարը պահպանելու և ստեղծված բուֆերային գոտին հսկելու նպատակով (UNEF II) (UN SC Res. 339 (1973)):

² Տե՛ս The Evolution of UN Peacekeeping: Case Studies and Comparative Analysis, edited by William J. Durch. New York, NY: St. Martin's Press, 1993, p. 12.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ³ Տե՛ս *Major-General Indar Jit Rikhye (Ret.)*, *Strengthening UN Peacekeeping: New Challenges and Proposals*, Washington, D.C. United States Institute of Peace, 1992, p. 16.
- ⁴ Տե՛ս *В.Заемский*, Опыт миротворческих операций ООН // «Обозреватель-Observer», N 6(173) 2004. Հասանելի է http://www.rau.su/observer/N6_2004/6_05.HTM համացանցային կայքում 11.07.2010թ.
- ⁵ UN Doc. S/RES/632(1989)
- ⁶ ՄԱԿՊՕ անգլ. South-Western Africa People's Organization (SWAPO) Հարավարևմտյան Աֆրիկայի ժողովրդի կազմակերպություն
- ⁷ Տե՛ս *Nigel D. White, the United Nations and democracy assistance - developing practice within a constitutional framework*; in *Democracy Assistance: International Co-operation for Democratization*, Peter Burnell ed. London, Frank Cass, 2000), p. 77.
- ⁸ Ավելի մանրամասն տե՛ս *Nigel D. White, the United Nations and democracy assistance - developing practice within a constitutional framework*; in *Democracy Assistance: International Co-operation for Democratization*, Peter Burnell ed. London, Frank Cass, 2000), p. 79-84.
- ⁹ UN Doc. A/RES/46/137
- ¹⁰ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի զեկույց: UN Doc. A/49/675
- ¹¹ <http://www.un.org/russian/topics/peace/elections/context.htm> 11.07.2010թ.
- ¹² Տե՛ս *Human Rights and Elections: A Handbook on the Legal, Technical and Human Rights Aspects off Elections*. UN New York and Geneva, 1994, para 17.
- ¹³ Տե՛ս *Nigel D. White, the United Nations and democracy assistance - developing practice within a constitutional framework*; in *Democracy Assistance: International Co-operation for Democratization*, Peter Burnell ed. London, Frank Cass, 2000), p. 77.
- ¹⁴ Տե՛ս *Soldiers for Peace: Fifty Years of United Nations Peacekeeping*. Benton, Barbara; Boutros-Ghali, Boutros (ed), New York: Facts on File Inc. p.154.
- ¹⁵ UN Doc. S/RES/1244 (1999)
- ¹⁶ UN Doc. S/RES/1272 (1999)
- ¹⁷ UN Doc. S/RES/1410 (2002)
- ¹⁸ UN Doc. S/2001/1154
- ¹⁹ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահի 2005թ. հուլիսի 12-ի հայտարարությունը՝ «Միջազգային խաղաղության և անվտանգության պահպանություն. Անվտանգության խորհրդի դերը մարդասիրական ճգնաժամներում՝ մարտահրավերներ, քաղած դասեր և ապագայի հեռանկարներ» վերտառությամբ հարցի վերաբերյալ: UN Doc. S/PRST/2005/30.

ФУНКЦИЯ ПОощРЕНИЯ ДЕМОКРАТИИ В РАМКАХ МИРОТВОРЧЕСКОЙ МИССИИ ООН

Эдгар ХАЧАТРЯН

*Аспирант кафедры Европейского и
международного права юридического
факультета ЕГУ*

Данная статья посвящена одной из важнейших тем, актуальной и по сей день. В частности, речь идет о содействии демократии и о миротворческой функции ООН в данной области. Примечательно, что современное понимание международного мира и безопасности Объединенными Нациями строится на постулатах осуществления целей и принципов, закрепленных в Уставе ООН, включая уважение прав человека, обеспечение устойчивого развития и содействие демократии в государствах-членах.

Немаловажно, что ООН играет ключевую роль в деле поддержания международного мира и безопасности, которая в рамках Объединенных Наций рассматривается намного шире, чем простое избавление человечества от угроз глобальной войны. Невозможно также представить ООН без миротворческой миссии, осуществляемой данной организацией. Тем не менее, миротворческие операции ООН, как правило, рассматриваются как меры военного характера, которые не имеют отношения к поощрению демократии, государственному строительству и другим гражданским составляющим в соответствующих странах.

Действительно, миротворческие операции ООН в основном имели военный характер. Так, окончание холодной войны дало старт новому этапу развития международного права и международных отношений, который можно охарактеризовать как этап наиболее полномасштабной реализации Объединенными Нациями полномочий в области поощрения и содействия демократии. После создания ООН первые предпринятые миротворческие операции исключительно или главным образом были направлены на создание «миротворческого барьера» между сторонами, находящимся в вооруженном столкно-

вении, и на сохранение перемирия. С годами в рамках ООН все более и более начала очерчиваться действующая связь между обеспечением мира и поощрением демократии. В дальнейшем проложили себе путь миротворческие операции нового поколения, основными качествами которых являются многогранность и многофункциональность.

За последние десятилетия в рамках операций, осуществляемых под эгидой ООН, в связи с международным положением закрепились такие функции, которые наряду с поощрением демократии и обычными миротворческими операциями направлены на разрешение проблем, вызвавших кризис, или на «лечение» обществ, столкнувшихся с кризисом.

В рамках данной статьи автором был осуществлен анализ функциональных особенностей ООН в области сохранения мира, рассматриваемых в качестве инструментов, направленных на национальное примирение, обеспечение безопасности в государствах, недавно переживших гражданские войны, а также в качестве мер, направленных на содействие восстановления властных инфраструктур.

Ключевым вопросом исследования явилось детальное изучение основных функций ООН в сфере обеспечения и сохранения мира, как залог легитимного обеспечения демократического режима в государствах и демократической организации общества. Особое внимание в статье уделено направлениям деятельности ООН в сфере электоральных отношений (так называемое: «электоральное содействие») и приоритетам в данной области, распределению основных направлений деятельности ООН в исследуемой сфере, подчеркнута взаимосвязь данных направлений между собой и с миротворческими функциями ООН.

Немаловажно также, что в рамках данной статьи автором был осуществлен анализ нормативной основы деятельности ООН в миротворческой области, что обеспечивает юридическую обоснованность исследования.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՍԿՋՐՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ. ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ

Զինավոր ՄեղրՅԱՆ

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Ինքնորոշման իրավունքի էությունը բացահայտելու և իրական բովանդակությունը լիարժեք ըմբռնելու համար անհրաժեշտ է հետադարձ հայացք գցել պատմական զարգացման այն ուղու վրա, որը անցել է ինքնորոշումը: Առավել արդյունավետ եզրակացությունների հանգեցնելու նպատակով համառոտ ներկայացված են պատմական զարգացման այն հիմնական փուլերը, որ անցել է ինքնորոշումը: Դրա արդի ընկալումը առավել համակողմանի հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել ինքնորոշման սկզբունքի ձևավորման պատմական նախադրյալները և զարգացման ուղին:

Միջազգայնագետ իրավաբանները ինքնորոշման իրավունքի պատմական զարգացումը հիմնականում բաժանում են երեք փուլերով: Առաջին շրջանը սկսվում է Վեստֆալիայի խաղաղության պայմանագրով և ավարտվում Վիեննայի Կոնգրեսով (1648-1815 թթ.): Այս ժամանակաշրջանը առավել հայտնի է որպես միապետական կամ դինաստիկ օրինականության շրջան: Հաջորդ փուլը իշխանությունների հավասարակշռման ժամանակաշրջանն է (1815-1914 թթ.): Երրորդ փուլը որպես կանոն համարվում է համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածը՝ 1918-1939 թթ.: Մենք այս հոդվածում հիմնականում կանդրադառնանք վերջին երկու փուլերի լուսաբանմանը, քանի որ դրանք են ըստ էության որոշիչ եղել ինք-

նորոշման իրավունքի ժամանակակից բովանդակության հարցում:

Վեստֆալիայի խաղաղության պայմանագիրը նշանավորում է ժամանակակից պետությունների իրավահավասարության վրա հիմնված համակարգի զարգացման սկիզբը: Այս ժամանակահատվածից ի վեր՝ ընդհուպ Ամերիկյան և Ֆրանսիական հեղափոխությունները, միջազգային հանրությունը աստիճանաբար հասու էր ազգ-պետությունների ժամանակակից գաղափարին: Համապատասխանաբար, գիտնականները հող են նախապատրաստում ինքնորոշման ժամանակակից ըմբռնման համար: Ինքնորոշումը այդ ժամանակահատվածում երկու հիմնական ասպեկտների՝ մարդու իրավունքը ճանաչելու և ազգ-պետություն գաղափարախոսության միասնություն էր: Այս գաղափարախոսությունները կիրառություն գտան վերը նշված հեղափոխությունների ընթացքում՝ ամրագրվելով այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների Բիլը (1776), Մարդու և քաղաքացու Հռչակագիրը (1789 թ):

Միապետական դարաշրջանում միապետը պետությանը հավասարեցված սուբյեկտ էր և բացարձակ իշխանություն ուներ թե՛ պետության ներսում և թե՛ պետության սահմաններից դուրս: Ժողովուրդը որևէ իրավունք չուներ, քանի որ միապետը կառավարում էր Աստծո անունից: Այս իրավիճակը տիրում էր մինչև Ֆրանսիական և Ամերիկյան հեղափոխությունները: Սակայն սա բոլորովին էլ չի նշանակում, որ չկար հակառակ կարծիք:

Ինքնորոշման իրավունքի նախադրյալները դեռևս ձևավորվել են Ամերիկայի Անկախության հռչակագրի (1776 թ) և Ֆրան-

սիական հեղափոխության (1789 թ) ժամանակաշրջաններում: Հիմնական գաղափարը, որ դրվեց այդ զարգացումների հիմքում, այն էր, որ պետությունը պետք է պատասխանատվություն կրի իր ենթակաների ճակատագրերի համար: Ինքնորոշման իրավունքը Ֆրանսիայում առաջին անգամ ներկայացվեց որպես տարածքի փոխանցման չափանիշ:

Հետագա զարգացումների համատեքստում Լենինն առաջիններից էր, որը գտնում էր, որ ինքնորոշման իրավունքը պետք է հանդիսանա ժողովուրդների ազատագրման չափանիշ:

Ֆրանսիական հեղափոխությունը հռչակեց ինքնորոշման սկզբունքը ընդդեմ բռնատիրության և միապետության: Այս սկզբունքի համաձայն՝ բոլոր քաղաքացիները օժտվում էին հավասար իրավունքներով, և աստվածային հիմքը դադարում էր օրինական իշխանության աղբյուր լինելուց: Վերը նշված փաստաթուղթը հետագայում լրացվեց ժողովուրդների իրավունքների մասին Հռչակագրով: Հռչակագիրն ամրագրում էր բոլոր ժողովուրդների անձեռնմխելիությունը, հարգանքը նրանց անկախության և ինքնիշխանության հանդեպ, պատերազմի և ագրեսիայի դատապարտումը, ինչպես նաև չմիջամտելու սկզբունքը: Նշված սկզբունքները նոր հասարակության հիմքն էին:

Ազգային սկզբունքը ժամանակի ընթացքում չարդարացրեց իրեն և իր տեղը գիջեց պետության սկզբունքին: Ազգային սկզբունքն ինքնին ժամանակավոր բնույթ էր կրում, քանի որ ստեղծվել էր ի հակադրություն միապետական և բռնատիրական համակարգերի, և այդ իսկ պատճառով էլ ժամանակի ընթացքում ազգային սկզբունքի բովանդակությունն ընդլայնվեց պետությունների սահմաններից դուրս:

Իշխանությունների հավասարակշռման փուլ (1815-1914): Ինքնորոշման իրավունքի զարգացման հաջորդ փուլի սկիզբը նշանավորվում է Վիեննայի Կոնգրեսով, որը առաջադրեց ինքնորոշման լիովին նոր

փիլիսոփայություն և հասկացություն՝ որպես հիմք ընդունելով իշխանության կառավարումը:

Վիեննայի Կոնգրեսը հաստատեց իշխանությունների հավասարակշռման սկզբունքի գերակայությունը ազգային սկզբունքի հանդեպ, ինչը նշանակում էր, որ տարածքները կարող են վաճառվել՝ հանուն կայունության՝ անկախ բնակչության ցանկությունից: Կայունություն ապահովելու նկատառումներով Կոնգրեսը թույլատրեց կիրառել տարածքների փոխանցման այն մեթոդները, որոնք կիրառվում էին դինաստիկ ժամանակաշրջանում՝ առանց հաշվի առնելու տարածքի բնակչության կարծիքը: Ցանկացած անջատողական տրամադրություն ճնշվում էր: Այս իրավիճակում, իհարկե, առկա էր նաև ընդդիմություն, որը հակադրվում էր այն փիլիսոփայությանը, համաձայն որի չկառավարվող ինքնորոշումը կարող է էապես վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը: Այս կացությունը տևեց մինչև 1917-1918 թթ.:

Հունական և Բելգիական անջատումները ազգային սկզբունքի վերածնման վառ օրինակներ էին, սակայն միևնույն ժամանակ Իտալիայի տարբեր հատվածներում իրականացրած հանրաքվեի արդյունքում տեղի ունեցած միավորումը բացառություն էր ազգային սկզբունքից: Իտալիայի և Գերմանիայի միավորման նախադեպերը փաստորեն հիմնված էին իշխանությունների հավասարակշռման սկզբունքի վրա, որը համահունչ էր ժամանակի ոգուն:

Ինքնորոշման հիմնական դրսևորումները համաշխարհային երկու պատերազմների միջև: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը նշանավորում է ինքնորոշման զարգացման երրորդ փուլի սկիզբը: Պատերազմից հետո ինքնորոշումը սկսվում է դիտվել որպես միջազգային հարաբերությունների առօրյա խնդիր, այլ ոչ թե հեղափոխական գաղափար: Ինքնորոշման սկզբունքի կիրառման շնորհիվ հնարավոր դարձավ վերականգնել մի շարք

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պետությունների միջազգային և քաղաքական կարգավիճակը. օրինակ՝ Լեհաստան, Չեխոսլովակիա, Ռումինիա, Չարավալվիա, Բալթյան երկրներ, Ուկրաինա և Ֆինլանդիա: Ինքնորոշման սկզբունքի հիմնական առանցքը՝ բնակչության մեծ մասի կամքի արտահայտությունը, հիմք հանդիսացավ առաջնային քաղաքական լուծումների համար (Դանցիգ, Մեմել և Սաարի տարածքը): Այնուամենայնիվ, ինքնորոշման սկզբունքի կիրառումը առավել հստակեցվեց միայն Վերսալի խաղաղության պայմանավորվածություններում ամրագրվելուց հետո միայն: Ոչ իշխանությունների հավասարակշռման և ոչ էլ ինքնորոշման սկզբունքը առանձին-առանձին բավարարչեն միջազգային անվտանգությունն ու խաղաղությունը ապահովելու համար: Այդ իսկ պատճառով էլ ինքնորոշման կիրառման լավագույն մոդելը կոմպլեքս մոտեցումն է, որը ներառում է հիշատակված բոլոր սկզբունքները:

Ինքնորոշման կիրառման մասն օրինակներից է Ալաբանդյան կղզիների գործը: Այն, ինչպես նաև Լենինի և Վիլսոնի պատկերացումները ինքնորոշման մասին մեզ օգնում են հասկանալ խնդրո առարկա սկզբունքը այն բովանդակությամբ, ինչպիսին որ է այսօր: Փորձ կատարենք վեր հանել այն հիմնական բաղադրիչները, որոնց ամբողջությունը ինքնորոշման սկզբունքն է: Դրանցից առաջինը այսպես կոչված ազատ կամքի դրսևորումն է (Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բալթյան երկրների, Ուկրաինայի և Ֆինլանդիայի փորձը), մինչդեռ մյուս բաղադրիչը վերաբերում է կամքի արտահայտման հստակ իրավիճակներին, որոնք նպատակաուղղված են տարածքային աննշան փոփոխություններ կատարելուն:

Ինքնորոշման նկատմամբ բավականին անսովոր մոտեցում որդեգրեց նացիստական Գերմանիան: Հիտլերի և նացիստ

գիտնականների համար ինքնորոշումը հիմնված է արյան (ռասայի) վրա: Այն պաշտպանում է գերագույն ռասայի ինքնորոշման իրավունքը: Գաղափարապես նույն մոտեցումը որդեգրվեց նաև կոմունիստների կողմից. էական տարբերությունն այն էր, որ կոմունիստները համարում էին, որ ինքնորոշվելու իրավունք ունի միայն աշխատավոր դասակարգը:

Միջազգային-իրավական գրականության մեջ ընդունված է համարել, որ ինքնորոշման սկզբունքի արմատները սկիզբ են առնում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ 1918 թ. ԱՄՆ Կոնգրեսի միացյալ նստաշրջանին հասցեագրված տասնչորս կետերից: Նշված փաստաթղթում հղումներ կան Լուսավորության դարաշրջանի աղբյուրներին³:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը տեղի ունեցած զարգացումների հիման վրա 1920 թ. Ազգերի Լիգայի Խորհուրդը կազմավորեց երեք իրավաբաններից կազմված հանձնաժողով, որի խնդիրն էր ուսումնասիրել՝ արդյոք Ալաբանդյան կղզիներն իրավունք ունեն անջատվել Ֆինլանդիայից և միանալ Շվեդիային:

Լենինը և ինքնորոշման խորհրդային հանցակարգը: Իշխանության գալուց ի վեր բոլշևիկները հայտարարեցին ինքնորոշման սկզբունքի կիրառումը նախկին Ռուսական կայսրության տարածքում ապրող ազգությունների համար: Այդօրինակ քայլը ավելի շատ պայմանավորված էր նորաստեղծ ռեժիմի թուլությամբ: Կարճ ժամանակ անց Լենինը չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագրերը և զինված միջամտությամբ փորձեց վերադարձնել Ուկրաինան և Ֆինլանդիան: Լենինը հայտարարեց, որ ինքնորոշումը օգտակար հեղափոխական կարգախոս է, որը կորցնում է իր արդիականությունը և նշանակությունը այն պահից սկսած, երբ աշխատավոր դասակարգը հասնում է իշխանության, և երբ բազմազգ պետությունները վերածվում են միասնական սոցիալական կարգի՝ սոցիալիստա-

կան (կոնունիստական) դաշնությամբ*:

Սոցիալիստական կամ կոնունիստական դաշնության գաղափարն իրականում հակասում էր ինքնորոշման սկզբունքին, քանի որ իշխանությունը կենտրոնանում էր միայն մեկ կազմակերպության՝ տվյալ դեպքում կոնունիստական կուսակցության ձեռքերում:

Խորհրդային իշխանությունները Լենինի և Ստալինի օրոք դոկտրինալ մակարդակում սահմանեցին ազգ, էթնոս հասկացությունը՝ հաշվի առնելով այն ժամանակվա Ռուսաստանում առկա ազգային հարցը:

Խորհրդային Միությունը մինչև 1991 թ. պայքարում էր երկու սկզբունքները հաշտեցնելու ուղղությամբ՝ ինքնորոշում և ֆեդերալիզմ: Դաշնության գաղափարը չէր ընդունվում ո՛չ Մարքսի, ո՛չ Լենինի և ո՛չ էլ Էնգելսի կողմից: Ֆեդերալիզմը միջոց էր ինքնորոշման հարցը հանդարտեցնելու համար: Անջատման իրավունքի ամրագրումը 1924 թ. Խորհրդային սահմանադրության մեջ ավելի շատ ձևականություն էր, ֆիկցիա: Անջատման ցանկացած փորձ կհամարվեր հակահեղափոխական քայլ⁶: Անջատման նկատմամբ նման վերաբերմունքը մնաց անփոփոխ մինչև ԽՍՀՄ փլուզումը: ԽՍՀՄ ժամանակահատվածի համար ինքնորոշում տերմինն օգտագործել է այդքան էլ տեղին չի լինի, քանի որ այն բավարարում էր սոսկ մշակութային ինքնավարության սահմաններով: Հիմնական գործիքը, որ Խորհրդային իշխանություններն օգտագործում էին ազգային-էթնիկական խնդիրները լուծելու համար, «քաղաքական և տարածքային» ինքնավարությունն էր: Մասնավորապես, որոշակի ազգային կամ էթնիկական խմբերի միութենական հանրապետության կարգավիճակ չտրամադրելը ուղեկցվում էր համապատասխան վարչական սահմանների ամրագրմամբ և հաճախ նաև բնակիչների տեղափոխությամբ: Նման քայլերը իրականացվում էին կամայական՝ Խորհրդային իշխանությունների քաղաքական շահերը հաշվի առնելով⁷:

Ընդհանրացնելով նշվածը՝ կարելի է նշել, որ Լենինը և նրա համախոհները օգտագործեցին ինքնորոշման սկզբունքը հեղափոխությունը իրականացնելու նպատակով, սակայն աղավաղեցին այդ սկզբունքի իրական բովանդակությունը ԽՍՀՄ գոյության ժամանակահատվածում:

Վիլսոնի տեսակետը ինքնորոշման վերաբերյալ: Վուդրո Վիլսոնի տեսակետները ևս էական ազդեցություն ունեցան ինքնորոշման սկզբունքի ժամանակակից բովանդակության ձևավորման գործում: Վիլսոնի դիրքորոշումը Աալադյան կղզիների գործի վերաբերյալ լիովին արտացոլում է ինքնորոշման սկզբունքի ժամանակակից բովանդակությունը՝ և ներքին, և արտաքին դրսևորումներով (1924թ.): Սակայն, ինքնորոշման իրավունքի վերաբերյալ Վ. Վիլսոնի պատկերացումները չէին համապատասխանում պետությունների՝ Ազգերի Լիգայի շրջանակներում ձևավորված այդ ժամանակաշրջանի պրակտիկային: Վիլսոնի դիրքորոշումը ինքնորոշման հարցի կապակցությամբ ռեակցիա էր բուլշևիկների և պատերազմական ժամանակաշրջանի՝ ինքնորոշման ընկալումների նկատմամբ⁸: Արտաքին ինքնորոշման կողմնակից էր և կողմ էր Ավստրո-Յունգարական կայսրության փլուզմանը⁹: Արտաքին ինքնորոշման իրավունքը առավել զարգացում ապրեց ավելի ուշ և հիմնականում ներառում էր հետևյալ երկու տարրերը՝ սեփական պետությունը (sovereignty) ընտրելու ժողովրդի իրավունք և մեկ պետությունից մյուսին չփոխանցվելու իրավունք⁹: Վիլսոնը նաև ընդգծում էր այդ սկզբունքի ապակայունացնող պոտենցիալը՝ փորձնական կիրառության դեպքում:

Այդ ժամանակահատվածի գերտերությունները չէին կիսում Վիլսոնի պատկերացումները ինքնորոշման մասին, ուստի այն չներառվեց Ազգերի Լիգայի Դաշնագրի հոդված 10 –ում: Այդ հոդվածը ամրագրեց միայն պետությունների տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության սկզբունքը: Ինքնորոշման իրա-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վունքի կիրառումն էապես սահմանափակված էր Ազգերի Լիգայի շրջանակներում և միայն պետք է իրականացվեր հիշատակված Դաշնագրով ամրագրված ընթացակարգերում: Չնայած Ազգերի Լիգայի շրջանակներում ստեղծված ինքնորոշման համակարգը չէր համապատասխանում Վիլսոնի իդեալներին, այնուամենայնիվ փոքրամասնությունների պաշտպանությանն առաջադրված համակարգը բավականին մեծ քայլ էր ազգային սկզբունքի իրագործման ճանապարհին: Սակայն Ազգերի Լիգայի համակարգում փոքրամասնությունների պաշտպանության մեխանիզմը արդյունավետ չէր, իսկ դրա պատճառներից էր նաև այն, որ այդ մեխանիզմը չէր կիրառվում նաև գերտերությունների նկատմամբ, և չկար այդ նորմերի կիրառումն ապահովող գործուն կառուցակարգ: 1919 թ. հունիսի 28-ին Գերմանիան և դաշնակից ուժերի ներկայացուցիչները ու այլ տերություններ Վերսալում ստորագրեցին Խաղաղության պայմանագիր: Պայմանագրի երկրորդ մասը նախատեսում էր Գերմանիայի նոր սահմանները: Գերմանական վեց տարածքների հնարավորություն տրվեց որոշելու իրենց հետագա ճակատագիրը պլեբիսցիտի միջոցով: 1921 թ. մարտ ամսին անցկացված պլեբիսցիտի ժամանակ մեծ մասը քվեարկեց հօգուտ Գերմանիայի հետ միավորվելուն: Եվրոպայի այլ հատվածներում ևս անցկացվեցին պլեբիսցիտներ:

Աալանդյան կղզիների գործը: Այն պահին, երբ ծագեց Աալանդյան կղզիների գործը, ինքնորոշումը ենթադրում էր լրիվ անկախություն: Այդ է պատճառը, որ իրավագիտական գրականության մեջ հատկապես շեշտվում է, որ Ազգերի Լիգայի կողմից կղզիների միավորվելը Շվեդիայի հետ չընդունելը հավասարազոր էր ինքնորոշումը մերժելուն: Ազգերի Լիգան հաշվի առավ թե՛ ներքին և թե՛ արտաքին ինքնորոշումը՝ այդպիսով ընդունելով Վիլսոնի մոտեցում-

ները ինքնորոշման նկատմամբ: Ազգերի Լիգայի նման մոտեցումը ամուր հիմքեր դրեց ինքնորոշման կոնցեպցիայի հետագա զարգացման համար: Հետագայում Աալանդյան կղզիների գործը բազմիցս հիշատակվել է որպես ինքնորոշման իրավունքի առավել լիբերալ մեկնաբանության օրինակ: Աալանդյան կղզիների գործը կարելի է դասակարգել և իրավական, և քաղաքական տեսանկյունից: Իրավական վեճը քննարկում էր Ազգերի Լիգայի Իրավաբանների Հանձնաժողովը, մինչդեռ վեճի քաղաքական կողմը քննարկվում էր Ձեկուցողների Հանձնաժողովում (Commission of Rapporteurs): Խնդիրը ծագեց Ֆինլանդիայի անկախանալու պահից՝ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Աալանդյան կղզիների բնակիչները նույն տարվա դեկտեմբերին ընդունեցին Ռուսաստանից անկախանալու հռչակագիր: Իր եզրակացության մեջ Հանձնաժողովը կատարեց մի շարք արժեքավոր դատողություններ. մասնավորապես՝ ինքնորոշումը բացարձակ իրավունք չէ, այն պետք է իրականացվի յուրովի, յուրաքանչյուր իրավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ համաձայնության հիման վրա: Դա նշանակում էր, որ ժողովրդի կամքից զատ անհրաժեշտ է հաշվի առնել նաև մի շարք գործոններ, ինչպես՝ տնտեսական, քաղաքական և անվտանգության¹⁰:

Հանձնաժողովը եզրակացրեց, որ այդ սկզբունքը միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս չէ, և Ազգերի Լիգան այն չի նախատեսել իր դաշնագրում: Հանձնաժողովը, սակայն, նաև որոշակի լիբերալ մեկնաբանություններ տվեց ինքնորոշման սկզբունքին՝ մասնավորապես ընդգծելով այն հանգամանքը, որ թերկառավարվող տարածքներն իրավունք ունեն անջատվելու:

Չնայած այն հանգամանքին, որ մինչև 1945 թ. ինքնորոշման իրավունքն այդքան զարգացած չէր, այնուամենայնիվ այս գործը վերը հիշատակված պլեբիսցիտների և Ազգերի Լիգայի մանդատային համակար-

գի հետ մեկտեղ (ինքնորոշման իրավունքի կիրառումը միայն հատուկեմտ իրավիճակներում) ներկայացնում են միջպատերազմյան ժամանակաշրջանում այս կոնցեպցիայի քաղաքական ուժի մասին: Աւլանդյան կղզիների գործը նախադեպ է, որի հիման վրա հետագայում ձևավորվեց ինքնորոշման սկզբունքը ժամանակակից ընկալմամբ: Նույնիսկ 1945 թ. հետո՝ ապագա դուքայնացման ընթացում, Աւլանդյան կղզիների գործի քննության ժամանակ ձևավորված սկզբունքները և ինստիտուտները իրենց կիրառելիությունը գտան, ինչպես օրինակ՝ վաղահաս ճանաչման դոկտրինան¹:

Ինքնորոշումը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այն նախադրյալները, որ ստեղծվեցին քննարկված փուլերում, հիմք հանդիսացան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հետագա զարգացումների և ինքնորոշման իրավունքի՝ որպես իրավական սկզբունքի վերջնական ձևավորման և ամրագրման համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային իրավակարգի զարգացման նոր նախադրյալները ստեղծվեցին ՄԱԿ-ի հիմնադրմամբ և ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունմամբ: Կանոնադրության մշակման և նախապատրաստման աշխատանքները հիմնականում նպատակ էին հետապնդում ամրագրելու ինքնորոշման սկզբունքը և հիմքեր ստեղծելու դրա կիրառումն ապահովելու համար: Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած քննարկումների ընթացքում ԽՍՀՄ-ի կողմից առաջարկ կատարվեց փոփոխություն կատարել հոդված 1 (2)-ում և հոդված 55-ում՝ ավելացնելով հետևյալ պարբերությունը. «Ազգերի և ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա»: Բնականաբար, ԽՍՀՄ-ի կողմից այս գաղափարն առաջ քաշելը հիմնականում պայմանավորված էր արտաքին քաղաքական խնդիրներով, մասնավորապես՝ ԽՍՀՄ տարածման հարցը լուծելու նպատակով: Ի հակադրություն այս քայլի՝ արևմտյան պե-

տությունները առաջ քաշեցին խնամակալության ինստիտուտի գաղափարը: ՄԱԿ-ի ստեղծումը նպաստեց ինքնորոշման հիմնախնդիրը բարձրացնելու միջազգային մակարդակի: Կանոնադրությունը միայն ամրագրում է ինքնորոշումը սկզբունքի մակարդակով՝ առանց դրա կիրառման համար անհրաժեշտ պայմանները և նախադրյալները նախատեսելու: ՄԱԿ-ի նախագծողները իրականում չէին կարող կանխատեսել ինքնորոշման իրավունքի հետագա զարգացումները, որոնք տեղի ունեցան սառը պատերազմի ընթացքում և ԽՍՀՄ փլուզումից հետո: Ըստ նրանց՝ ինքնորոշումը ենթադրում էր ինքնորոշում միայն պետության սահմաններում: Ինքնորոշման նոր ձևերը զարգացում ապրեցին հետագայում՝ տարբեր քաղաքական գործոնների դրդմամբ: Զարգացման առաջին փուլը ՄԱԿ-ի ստեղծումից հետո հիմնականում սահմանափակվեց հակազաղութային պայքարով: Ինքնորոշման իրավունքի դրսևորման տարբեր ձևերը հիմնականում արդյունք են Աֆրասիական Արևելյան բլոկի երկրների կողմից վարած դիվանագիտության: 1975 թ. արդեն Զելանդիայի եզրափակիչ ակտում, ինչպես նաև 1970 թ. Միջազգային իրավունքի սկզբունքների Յճակագրում ամրագրվեց ինքնորոշման ավելի լայն մեկնաբանությունը՝ չսահմանափակելով այն միայն հակազաղութային պայքարով: 1966 թ. Դաշնագրերը ամրագրեցին ինքնորոշման իրավունքի ընկալման նոր մակարդակ, որին հաջորդեցին վերը հիշատակված հռչակագրերը: Այս ամրագրումը նախատեսեց հստակ կապ ինքնորոշման և մարդու իրավունքների միջև՝ ստեղծելով այդ սկզբունքի իրագործման լրացուցիչ երաշխիք: Նման երաշխիքները, իհարկե, հնարավոր եղավ որոշակիորեն կյանքի կոչել միայն ԽՍՀՄ փլուզումից հետո միայն:

Ապազաղութայնացման գործընթացը. տարածքային ամբողջականությունը որպես տարածքային միասնության պահպանման գործիք: Ինքնորոշումը որպես իրավունք և

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

որպես սկզբունք չէր նախատեսվել 1948 թ. Մարդու իրավունքների ունիվերսալ Յճակագրով: Յճակագրում ամրագրված իրավունքները ավելի շատ կրում էին անհատական և ընդհանուր բնույթ: Գլխավոր ասամբլեան 1960 թ. ընդունեց Յճակագիր գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տրամադրելու մասին: Այս ակտում ինքնորոշումը սահմանվեց որպես իրավունք, որը հետագայում հիմք հանդիսացավ 1966 թ. Դաշնագրերում համապատասխան ամրագրում կատարելու համար: Ինքնորոշման իրավունքի հետագա զարգացման տեսանկյունից բեկումնային էր Բանդանգի կոնֆերանսը (1956 թ.), որի ընթացքում սուվերեն պետությունների միջև վեճերի խաղաղ կարգավորման վերաբերյալ քննարկումները վերափոխվեցին գաղութային լծից ժողովուրդների անկախության սկզբունքի: Այս տեսանկյունից եզրափակիչ իրավական փաստաթուղթ է 1970 թ. Միջազգային իրավունքի վերաբերյալ սկզբունքների հռչակագիրը: Այս փաստաթուղթը առաջիններից մեկն էր, որով նախատեսվեց, որ ինքնորոշման իրավունքը ավելին է, քան լոկ հակագաղութային պայքարը: Այս փաստաթղթում ամրագրված ինքնորոշման ձևերը նախկինում կիրառվել էին տարբեր պետությունների կողմից՝ բացառությամբ էթնիկ ինքնորոշման դեպքերի: Էթնիկ ինքնորոշումների խնդիրը ավելի արդիական դարձավ 1970 թ. Յճակագրի տեքստի ընդունումից հետո միայն, որին հատուկ ուշադրություն դարձվեց 1993 թ. ԵԱՀԿ-ի Վիեննայի հռչակագրում, որը ճանաչեց էթնիկ խմբերի ինքնորոշման իրավունքը որոշակի հանգամանքների առկայության դեպքում միայն: Այնուամենայնիվ, նշված փաստաթուղթը ևս մեծ շեշտադրում էր կատարում տարածքային ամբողջականության սկզբունքի վրա: Հակագաղութային տրամադրությունների կուտակումը հնարավորություն ընձեռեց ԽՍՀՄ-ին ավե-

լի որոշակի բարձրացնել ինքնորոշման իրավունքի արդիականության խնդիրը հակագաղութային պայքարի համատեքստում¹²: Ապագաղութայնացման նպատակով ինքնորոշման իրավունք կիրառելու պրակտիկան սկսվեց 1955 թ.-ից և իր զազաթնակետին հասավ 1960-ականներին, երբ ՄԱԿ-ի անդամ դարձան 17 նախկին գաղութներ՝ 16-ը Աֆրիկայից և Կիպրոսը: Գործընթացը շարունակվեց, և ՄԱԿ-ի անդամների շարքը համալրվեց նաև Ասիայի և Մերձավոր Արևելքի նախկին գաղութներով:

1960 թվականը բեկումնային դարձավ միջազգային իրավունքի զարգացման համար: Այդ տարում Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունվեց Գաղութային հռչակագիրը: Ինքնիշխանության բովանդակությունն ընդլայնվեց և ընդգրկեց նաև ինքնորոշվող միավորները (նախկին գաղութները): Պարադոքսալ զարգացումն այն է, որ ինքնորոշման սկզբունքի կիրառման հետևանքով ստեղծված պետություններն իրենց գործելաոճով շատ հեռու էին ինքնորոշման սկզբունքը հարգելու գաղափարից՝ հասկանալի պատճառներով: Նախկին գաղութների անկախացումից անմիջապես հետո չէր ճանաչվում որևէ անջատման իրավունք նորաստեղծ պետությունների տարածքում բնակվող էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնությունների համար¹³:

Հետագա զարգացումները և բազմաթիվ կոնֆլիկտները հատկապես նորաստեղծ պետություններում հանգեցրեցին ինքնորոշման իրավունքի նոր դրսևորումների ի հայտ գալուն, այդ թվում նաև՝ հատուցողական անջատման գաղափարը (remedial secession): Վերջինս իր վերջնական զարգացումն ու ամրագրումը դեռ չի գտել և վեճի առարկա է միջազգային իրավագիտության շրջանակներում:

Ընդհանրացնելով ինքնորոշման իրավունքի պատմական զարգացման մասին բռնությունը՝ կարելի է անել հետևյալ հիմնական եզրահանգումները: Նախ և առաջ՝

ինքնորոշումը սկսեց օգտագործվել նաև որպես տարածքային փոփոխությունների համար կիրառվող չափանիշ, երկրորդ՝ ինքնորոշման սկզբունքը սկսեց դիտվել իբրև ժողովրդավարական սկզբունք, որը նպատակ ունի լեգիտիմացնել ժամանակակից պետությունների կառավարությունները: Սկզբունքի հետագա զարգացումները հանգեցրեցին այն բանին, որ այն սկսեց կիրառվել հակազաղութային պայքարի: Այստեղից էլ ինքնորոշման սկզբունքի նեղ՝ միայն հակազաղութային պայքարի համատեքստում մեկնաբանելու միտումները, որոնք շարունակվում են մինչ օրս: Եվ վերջին կամ արդիական ընկալումը, համա-

ձայն որի տարբեր էթնիկ կամ կրոնական խմբերը, որ փոքրամասնություն են որևէ պետության տարածքում, պետք է ունենան անջատվելու և սեփական պետությունը ստեղծելու իրավունք: Ջարգացման այս հետագիծը ըստ էության միջազգային իրավական մարտահրավերների փոփոխման հայելային արտահայտությունն է: Այլ բաներով ասած՝ միջազգային իրավունքի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում այն օգտագործվել է որպես գործիք այս կամ այն մարտահրավերներին պատասխանելու և որոշակի հիմնախնդիրներ լուծելու նպատակով:

¹ Տե՛ս Antonio Cassese, *Self-determination of Peoples. A Legal reappraisal*. Cambridge University Press, էջ 14:

² Տե՛ս S. Calogeropoulos-Straits, *Les Droit Des Peoples a Disposes d'eux Memes*, էջեր 18-19:

³ Տե՛ս Նույն տեղը, էջեր 20-21:

⁴ Տե՛ս Bernard Morris, 'Soviet Policy Toward National Communism: The Limits of Diversity'. *The American Political Science Review* Vol. 53 Issue 1 (March 1959) pp. 128-137 at 130.

⁵ Տե՛ս Vernon Aspaturin, 'The Theory and Practice of Soviet Federalism', էջ 27:

⁶ Տե՛ս Martti Koskenniemi, 'National Self-Determination Today: Problems of Legal Theory and Practice'. In Robert McCorquodale (ed.), *Self-Determination in International Law*, pp. 77-140 at 71.

⁷ Տե՛ս Michla Pomerance, 'The United States and Self-Determination: Perspectives on the Wilsonian Conception'. *American Journal of International Law* Vol. 70 Issue 1 (January 1976) pp. 1-27 at 2; 12. 'Wilson proposed a new international system in which all nations

might share in the benefits of war and ultimately bear together the burdens it had imposed. Wilsonism meant a sort of United States of Western Civilisation'.

⁸ Տե՛ս Derek Heather, *National Self-Determination: Woodrow Wilson and his Legacy* (New York: St. Martin Press, 1994) էջեր 42; 47-52.

⁹ Տե՛ս Michla Pomerance, 'The United States and Self-Determination', p. 18.

¹⁰ Տե՛ս «Official Journal, League of Nations. Special Supplement», No. 3 (October 1920) p. 6.

¹¹ Տե՛ս Charles Noble Gregory, 'The Neutralisation of the Aaland Islands', p. 76.

¹² Տե՛ս Bernard Morris, 'Soviet Policy Toward National Communism: The Limits of Diversity'. *The American Political Science Review*. Vol. 53 Issue 1 (March, 1959) pp. 128-137 at 128.

¹³ Տե՛ս Michael K. Addo, 'Political Self-determination within the Context of the African Charter on Human Rights'. In Robert McCorquodale (ed.), *Self-Determination in International Law*, էջեր 257-278:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ ПРИНЦИПА
САМООПРЕДЕЛЕНИЯ В МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ****Зинавор МЕГРЯН**

*Аспирант кафедры европейского и
международного права ЕГУ*

В представленной статье автор обсуждает проблемы становления принципа самоопределения народов в современном международном праве. Проведенный анализ исторического процесса формирования

важнейшего принципа международного права, подводит автора к ряду выводов, которые имеют непосредственное отношение к ряду международно-правовым проблемам, существующих в современном мире. В частности, это касается попыток сведения права на соопределения к так называемым “колониальным случаям”, что по мнению автора необоснованно как в историческом, так и правовом аспекте.

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գոռ ԱԼՈՅԱՆ

ՀՀ դատախազության աշխատակազմի արարողակարգի, դատախազների սպասարկման և կազմակերպական-մեթոդական վարչության առաջին կարգի մասնագետ

Սեփականությունը ցանկացած հասարակության գոյության և կենսագործունեության տնտեսական հիմքն է: Տվյալ բարիքի նշանակությունն այնքան մեծ է, որ միջազգային հանրությունն անհրաժեշտ է համարել դրա ամրագրումը մարդու կարևորագույն իրավունքների և ազատությունների շարքում: Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 17-ում հռչակվում է, որ «յուրաքանչյուր մարդ իրավունք ունի տիրապետել գույքին ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ: Ոչ ոք չի կարող կանայականորեն զրկվել իր գույքից»: Ելնելով այս ընդհանուր սկզբունքներից՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը: Այսպես, Սահմանադրության հոդված 8-ի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը»: Իսկ հոդված 31-ն ուղղակի ամրագրում է, որ «սեփականությունից կարող է զրկվել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում»: Ասվածից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքը մարդու կարևոր և անքակտելի իրավունքներից է:

Սոցիալական արժեքների համակարգի մասին ժամանակակից առաջադեմ պատկերացումների համաձայն՝ սեփականու-

յան իրավունքը անձի կարևորագույն սոցիալական բարիքներից է, որի պաշտպանությունը ոտնձգություններից իրականացվում է տարբեր եղանակներով, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի քրեաիրավական ներգործությունը: Վերջինս, բնականաբար, առաջ է գալիս սեփականության դեմ ուղղված առավել վտանգավոր ոտնձգությունների՝ հանցագործությունների դեպքում: Այլ կերպ ասած՝ սահմանադրական վերոհիշյալ դրույթին համապատասխան՝ քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է սահմանված սեփականության դեմ ուղղված հանցավոր արարքների համար:

ՀՀ քրեական գործող օրենսգրքում, ինչպես և նախկինում (1961 թ.), սեփականության դեմ ուղղված հանցագործություններին նվիրված է հատուկ գլուխ՝ գլուխ 21-ը, որը ներառում է հոդվածներ 175–186.1-ը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ՀՀ գործող քր. օր.-ում, ի տարբերություն նախկինի, սեփականության դեմ ուղղված հանցագործությունները ենթարկվել են որակական և քանակական փոփոխությունների: Այդ փոփոխությունները հիմնականում պայմանավորված են հետխորհրդային տարիներին մեր երկրում տեղի ունեցող քաղաքական, սոցիալական և տնտեսական գործընթացներով:

Ժամանակակից բոլոր պետություններում սեփականության դեմ ուղղված (կամ գույքային) հանցագործությունները հանցավորության առավել տարածված տեսակն են: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ հանցագործությունների ընդհանուր զանգվածում մեր երկրում ևս ավանդաբար գերակայում են հենց նշված հանցավոր արարքները: Այդ մասին են վկայում նաև վերջին տարիների ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 1-ը)՝

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ*Աղյուսակ 1***Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վիճակը****ՀՀ-ում 2003-2010 թթ.**

Տարիներ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Սեփ. դեմ ուղղված հանց.-ներ	3856	3935	3547	4110	3674	4297	5578	5392
Ընդամենը	11073	10083	8875	9757	8428	9271	14339	15477

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների սեռային և տեսակային օբյեկտները նույնանում են և արտահայտվում հասարակական այն հարաբերությունների մեջ, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը: Իսկ անմիջական օբյեկտը այն կոնկրետ սեփականությունն է, որին վնաս է հասցնում հանցավոր արարքը²:

Քննարկվող հանցագործությունների առարկան նյութական աշխարհի այն իրն է (առարկան), որում նյութականացվել է մարդկային աշխատանքը, և որը հանդես է գալիս շարժական կամ անշարժ գույքի ձևով: Բնական վիճակում գտնվող առարկաները կարող են դիտվել սեփականության դեմ ուղղված հանցագործության առարկա միայն այն դեպքում, երբ դրանք մարդու աշխատանքի շնորհիվ անջատվել են բնությունից և ներառվել են տնտեսական կամ այլ ոլորտ (կենդանաբանական այգում կամ արգելանոցում պահվող վայրի կենդանիները և թռչունները, կտրված անտառը, որսած ձուկը և այլն)³:

Մասնագիտական գրականության մեջ սեփականության դեմ ուղղված հանցագործություններն ընդունված է բաժանել երկու մեծ խմբի՝ 1) հափշտակություններ և 2) սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ

հափշտակությունները սեփականության դեմ ուղղված մյուս հանցագործություններից հստակորեն սահմանազատելը անչափ կարևոր նշանակություն ունի հանցագործությունների ճիշտ որակման համար: Սակայն ՀՀ քրեական ինչպես նախկին, այնպես էլ գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ հափշտակությունները հստակորեն սահմանազատված չեն: Այս առումով, թերևս, պետք է համաձայնել այն քրեագետներին, ովքեր առաջարկում են ՀՀ քր. օր.-ում սեփականության դեմ ուղղված հանցագործությունները առանձին գլուխներով բաժանել երկու խմբի՝ 1) հափշտակություններ և 2) սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ⁴:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ չնայած ՀՀ քրեական գործող օրենսգրքում նման բաժանում չկա, բայցևայնպես հնարավոր է հափշտակությունները սահմանազատել այլ հանցագործություններից, որովհետև հողվածների դիսպոզիցիաներում ուղղակի նշվում է, որ այդ արարքը հափշտակություն է (օրինակ՝ կողոպուտը, այսինքն՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը):

ՀՀ քրեական գործող օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ հափշտակություն են համարվում՝ 1) ավազակությունը (քր օր.-ի հոդված 175), 2) կողոպուտը (քր օր.-ի հոդված 176), 3) գողութ-

յունը (քր օր.-ի հոդված 177), 4) խարդախությունը (քր օր.-ի հոդված 178), 5) յուրացնելը կամ վատնելը (քր օր.-ի հոդված 179), 6) առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը (քր օր.-ի հոդված 180) և 7) հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ (քր օր.-ի հոդված 181):

Սակայն անհրաժեշտ է նշել, որ հափշտակության վերոհիշյալ վերջին երկու տեսակների առանձնացումը քր. օր.-ի առանձին հոդվածներում արդարացված չէ: Բանն այն է, որ, նախ, հափշտակության տեսակների դասակարգումն առավել նպատակահարմար է իրականացնել ըստ հանցավոր արարքի կատարման եղանակների, այլ ոչ թե հանցագործության առարկայի կամ միջոցի առանձնահատկությունների կամ այլ հատկանիշների:

Հենց նման դիրքորոշումն է գերակայում ժամանակակից քրեաիրավական տեսության մեջ: Մասնավորապես, մասնագիտական գրականության մեջ այդ կապակցությամբ արդարացիորեն նշվում է, որ հափշտակության եղանակի, հետևաբար նաև հափշտակության ձևերի առանձնացման հիմնական նշանակությունն այն է, որ դրանով հնարավորություն է ստեղծվում սահմանազատելու հափշտակությունների տեսակները, ինչպես նաև տարբերակելու և անհատականացնելու պատասխանատվությունը հանցավոր այդ արարքների համար⁶: Մինչդեռ ո՛չ առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը և ո՛չ էլ հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, հափշտակության ինքնուրույն եղանակ չեն պարունակում: Դրանք ընդամենը պայմանավորված են մի դեպքում հանցագործության առարկայի, մյուսում՝ միջոցի առանձնահատկություններով:

Բացի այդ, ՀՀ քր. օր.-ի հոդված 180-ով նախատեսված հանցագործության առարկան ուրիշի առանձնակի արժեք ունեցող ոչ միայն առարկաներն են, այլև փաստաթղթերը, որոնք հափշտակության (որ-

պես սեփականության դեմ ուղղված հանցագործության) առարկա համարվել չեն կարող: Ուստի առավել ճիշտ կլինի առանձնակի արժեք ունեցող փաստաթղթերի հափշտակությունը որակել որպես կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը (ՀՀ քր. օր.-ի հոդված 324): Իսկ ինչ վերաբերում է առանձնակի արժեք ունեցող մյուս առարկաների հափշտակությանը, ապա, հաշվի առնելով դրանց բարձր արժեքը և կարևորությունը, հափշտակության առանձին հոդվածներում (հոդվածներ 175-179) այն պետք է հավասարեցվի խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի հափշտակությանը և նախատեսվի որպես ծանրացնող հանգամանք⁶:

Եվ վերջապես, հոդվածներ 180-ը և 181-ը անիմաստ ծանրաբեռնում են ՀՀ քրեական գործող օրենսգիրքը և լրացուցիչ բարդություններ ստեղծում իրավակիրառական պրակտիկայում:

Ինչ վերաբերում է սեփականության դեմ ուղղված այլ (հափշտակություն չհանդիսացող) հանցագործություններին, ապա ՀՀ քր. օր.-ի համաձայն, դրանց տեսակներն են 1) շորթումը (քր. օր.-ի հոդված 182), 2) ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին տիրանալն առանց հափշտակելու նպատակի (քր. օր.-ի հոդված 183), 3) գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով (քր. օր.-ի հոդված 184), 4) գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (քր. օր.-ի հոդված 185), 5) գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը (քր. օր.-ի հոդված 186) և 6) գույքի պահպանության պարտականություններն անփույթ կամ անբարեխիղճ կատարելը (քր. օր.-ի հոդված 186.1):

ՀՀ քրեական գործող օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կարելի է դասակարգել նաև՝ 1) շահադիտականների և ոչ շահադիտական-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ների, 2) բռնությամբ և առանց բռնության կատարվողների:

Շահադիտական ասելով՝ հասկանում ենք այն հանցագործությունները, որոնց դեպքում սեփականության դեմ ուղղված հանցանք կատարողը ձգտում է հարստանալ (նյութական օգուտ ստանալ) ուրիշի գույքի հաշվին: Բնականաբար, ոչ շահադիտականների պարագայում հանցավորի նման ձգտումը բացակայում է:

Ըստ այդմ, սեփականության դեմ ուղղված շահադիտական հանցագործությունների խումբն են կազմում բոլոր հափշտակությունները (քր. օր.-ի հոդվածներ 175-181), ինչպես նաև շորթումը (քր. օր.-ի հոդված 182) և գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով (քր. օր.-ի հոդված 184): Ոչ շահադիտականների թվին են դասվում ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին տիրանալն առանց հափշտակելու նպատակի (քր. օր.-ի հոդված 183), գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (քր. օր.-ի հոդված 185), գույքն անզուրկությամբ ոչնչացնելը կամ վնասելը (քր. օր.-ի հոդված 186) և գույքի պահպանության պարտականություններն անփույթ կամ անբարեխիղճ կատարելը (քր. օր.-ի հոդված 186.1):

Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործությունները նախատեսված են 33 քր. օր.-ի հոդվածներ 175-ով (ավազակություն), 176-ով (բռնությամբ զուգորդված կողոպուտ) և 182-ով (շորթում)⁷: Նշված բոլոր դեպքերում ֆիզիկական կամ հոգեկան բռնությունը հանդես է գալիս որպես հանցավորի պահանջումների բավարարման և նպատակներին հասնելու միջոց: Ուստի չի կարելի համաձայնել մասնագիտական գրականության մեջ հանդիպող այն տեսակետին, որի համաձայն ավազակությունը, շորթումը և բռնությամբ զուգորդված կողոպուտը չեն

կարող դասվել բռնությամբ կատարվող հանցագործությունների շարքը: Ճիշտ է, նշված հանցավոր արարքները տարբերվում են, օրինակ, սպանություններից, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերից, բռնաբարություններից, սեքսուալ բնույթի բռնի գործողություններից, մարդուն առանձնացնելուց, ազատությունից ապօրինի զրկելուց, ահաբեկչությունից և ավանդաբար բռնությամբ կատարվող համարվող այլ հանցագործություններից ուղեղային օբյեկտով, մոտիվացիայի տարբերով, սակայն արարքը կատարելու եղանակը, որին դիմում է հանցավորն իր նպատակներին հասնելու համար, նշված բոլոր դեպքերում նույնն է՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնությունը⁸:

Բացի դրանից, ինչպես արդարացիորեն նշում են Յու.Մ. Անտոնյանը, Մ.Ի. Ենիկեևը և Վ.Ե. Ենիմովը, անկախ մոտիվացիայի առանձնահատկություններից, նշված բոլոր հանցագործությունները շատ ընդհանրություններ ունեն, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին՝

1. պահանջումների բավարարման եղանակը դրանց բոլորի դեպքում բռնությունն է և ազդեսիվ վարքագիծը,

2. երբեմն դրանք հանդիսանում են ագրեսիայի ակտ, թեև կարող են նաև ուղեկցող շարժառիթներ լինել,

3. այդ բոլոր հանցագործություններում արտահայտվում է հանցավորի բացասական, երբեմն նաև թշնամական վերաբերմունքը մարդկային կյանքի, առողջության և ընդհանրապես շրջապատի նկատմամբ,

4. որպես կանոն, համընկնում են նշված հանցանքները կատարողների բարոյահոգեբանական, հոգեֆիզիոլոգիական հատկությունները⁹:

Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ աշխարհի շատ երկրներում քրեական վիճակագրության մեջ կիրառվում է այն մոտեցումը, որ կողոպուտները, ավազակությունները և շորթումները հաշվառվում են բռնությամբ կատարվող հանցագործություններին վերաբերող բաժնում: Սակայն

այս առումով անհրաժեշտ են նաև որոշ պարզաբանումներ:

Այսպես, եթե հիմնվենք սեփականության նկատմամբ անձի գերակայության սկզբունքի վրա, ապա նման մոտեցումը լիովին արդարացված է: Սակայն, եթե միևնույն ժամանակ հաշվի առնենք նշված հանցագործությունների մոտիվացիոն-կրիմինալոգիական էությունը, ապա այն կարելի է արժանացնել լուրջ քննադատության, քանզի ինչպես բռնությամբ զուգորդված կողոպուտների, այնպես էլ ավագակության և շորթման դեպքերում բռնությունը պարզապես ուրիշի գույքին տիրանալու եղանակ է: Անկասկած, բռնությունը սեփականության դեմ ուղղված հանցագործությունների առավել վտանգավոր եղանակն է, սակայն դա չի կարող հիմք հանդիսանալ վիճակագրական հաշվետվություններում նշված հանցագործությունները սեփականության դեմ ուղղված հանցագործությունների խմբից բացառելու համար: Ուստի կրիմինալոգիական տեսանկյունից դրանք առավել նպատակահարմար է հաշվառել ինչպես բռնությամբ կատարվող, այնպես էլ շահադիտական հանցավոր ոտնձգությունների խմբերում՝ այդ նպատակով առանձնացնելով շահադիտական-բռնի հանցագործությունների ենթախումբը¹⁰:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ քր. օր. -ի գլուխ 21-ով նախատեսված մյուս բոլոր հանցավոր արարքների համեմատ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններն օժտված են հանրային առավել բարձր վտանգավորությամբ: Կասկածից վեր է, որ թե՛ ավագակությունը և թե՛ բռնությամբ զուգորդված կողոպուտն ու շորթումը առավել վտանգավոր հանցագործություններ են, քան գողությունը, խարդախությունը, յուրացումը կամ վատնումը և այլն: Ընդ որում, արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա տվյալ դեպքում ազդում են ինչպես հանցագործության եղանակը, այնպես էլ պարտադիր լրացուցիչ օբյեկտի առկայությունը: Նշված հանցագործու-

յուններով հանցավորը ոչ միայն ոտնձգում է ուրիշի սեփականության դեմ, այլև վնաս պատճառում հասարակական այլ հարաբերություններին (կյանքին կամ առողջությանը) կամ նման վնաս պատճառելու իրական սպառնալիք ստեղծում:

ՀՀ քրեական գործող օրենսգրքի գլուխ 21-ով նախատեսված դրույթների վերլուծությունը հիմք է տալիս առաջարկելու սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դասակարգման ևս մեկ չափանիշ: Մասնավորապես, ըստ մեղքի ձևի, քննարկվող հանցագործությունները կարելի է բաժանել՝ 1) դիտավորությամբ կատարվողների (քր. օր. -ի հոդվածներ 175-185) և 2) անզգուշությամբ կատարվողների (քր. օր. -ի հոդվածներ 186 և 186.1):

Այսպիսով, սեփականությունը ցանկացած հասարակության գոյության տնտեսական հիմքն է: Իսկ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը մեր երկրում: Սակայն ժամանակակից բոլոր պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, սեփականության դեմ ուղղված հանցագործությունները հանցավորության առավել տարածված տեսակն են:

Մասնագիտական գրականության մեջ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները բաժանվում են երկու մեծ խմբի՝ 1) հափշտակություններ և 2) սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ: Հափշտակությունները հստակորեն սահմանագատելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ քր. օր. -ում ևս քննարկվող հանցագործությունները առանձին գլուխներով բաժանել համանուն երկու խմբի:

Հափշտակության տեսակների դասակարգումն առավել նպատակահարմար է իրականացնել ըստ հանցավոր արարքի կատարման եղանակների, այլ ոչ թե հանցագործության առարկայի կամ միջոցի առանձնահատկությունների կամ այլ հատկանիշների: Ուստի, թե՛ առանձնակի ար-

Քրեական իրավունք

ժեք ունեցող առարկաներ հափշտակելը և թե՛ հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, քր. օր.-ի առանձին հոդվածներով նախատեսված արդարացված չէ: Հետևաբար առավել ճիշտ կլինի առանձնակի արժեք ունեցող փաստաթղթերի հափշտակությունը որակել որպես կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն, իսկ առանձնակի արժեք ունեցող մյուս առարկաների հափշտակությունը, հաշվի առնելով դրանց բարձր արժեքը և կարևորությունը, հափշտակության առանձին հոդվածներում նախատեսել որպես ծանրացնող հանգամանք:

ՀՀ քրեական գործող օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կարելի է դասակարգել նաև՝ 1) շահադիտականների և ոչ շահադիտականների, 2) բռնությամբ և առանց բռնության կատարվողների: Շահադիտական ասելով՝

պետք է հասկանալ այն հանցագործությունները, որոնց դեպքում սեփականության դեմ ուղղված հանցանք կատարողը ձգտում է հարստանալ ուրիշի գույքի հաշվին:

Սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններում ֆիզիկական կամ հոգեկան բռնությունը հանցավորի պահանջմունքների բավարարման և նպատակներին հասնելու միջոց է: Ուստի չի կարելի համաձայնել այն տեսակետին, թե ավագակությունը, շորթումը և բռնությամբ զուգորդված կողոպուտը չեն կարող դասվել բռնությամբ կատարվող հանցագործությունների շարքը: Ընդ որում, կրիմինալոգիական տեսանկյունից դրանք առավել նպատակահարմար է հաշվառել ինչպես բռնությամբ կատարվող, այնպես էլ շահադիտական հանցավոր ոտնձգությունների խմբերում՝ այդ նպատակով առանձնացնելով շահադիտական-բռնի հանցագործությունների ենթախումբը:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կարող են դասակարգվել նաև ըստ մեղքի ձևի՝ 1) դիտավորությամբ և 2) անզգուշությամբ կատարվողների:

¹ Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կայք էջը՝ www.armstat.am:

² Տե՛ս Михлин А.С. Уголовное право РФ. Особенная часть. Учебник. — М.: Юристы, 2004, էջ 305:

³ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր., Երևանի համալս. հրատ., 2006, էջ 345:

⁴ Տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, էջ 348:

⁵ Տե՛ս, օրինակ, Лопашенко Н.А. Преступления против собственности: теорет. — приклад. исслед. М.: ЛексЭст, 2005, էջ 235, Гаухман Л.Д. Квалификация преступлений: закон, теория, практика. — 2 изд., перераб. и доп. — М.: Центр ЮрИнфор, 2003, էջ 353, Бойцов А. И. Преступления против собственности. — СПб.: Юр. центр Пресс, 2002, էջ 302:

⁶ Տե՛ս նաև ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, էջեր 399-400:

⁷ Սեփականության դեմ ուղղված ՀՀ քր. օր.-ի գլուխ 21-ով նախատեսված մնացած բոլոր հանցագործությունները դասվում են առանց բռնության կատարվողների շարքը:

⁸ Տե՛ս նաև Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Изд. Ереванского ун-та. — Ер., 2007, էջեր 108-109:

⁹ Տե՛ս նաև Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջեր 28-43:

¹⁰ Տե՛ս նաև Лунеев В.В. Преступность XX века. Мировые, региональные и российские тенденции. М., 1999, էջ 234:

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КЛАССИФИКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ СОБСТВЕННОСТИ

Гор АЛОЯН

Специалист первой категории управления протокола, обслуживания прокуроров и организационно-методического обеспечения аппарата прокуратуры РА

В настоящей статье автор анализирует основные особенности классификации преступлений против собственности, предусмотренных УК Республики Армения. В данной связи отмечается, что собственность является экономической основой существования любого общества, а Конституция РА гарантирует признание и защиту права собственности в нашей стране. Однако во всех современных государствах, в том числе, в Республике Армения, по словам автора, преступления против собственности составляют наиболее распространенный вид преступности.

В специальной литературе, как пишет автор, преступления против собственности делятся на две большие группы: 1) хищения и 2) иные преступления против собственности. А для четкого разграничения хищений и иных преступлений

против собственности автором предлагается в УК РА предусмотреть две отдельные одноименные главы.

Кроме того, классификацию видов хищений, по мнению автора, предпочтительнее осуществить по способам совершения преступного деяния, а не на основе определенных особенностей предмета или средства преступления либо иных признаков. Следовательно, считает автор, ни хищение предметов, имеющих особую ценность, ни хищение, совершенное с использованием компьютерной техники, не целесообразно предусматривать в отдельных статьях УК РА.

Далее в статье отмечается, что в соответствии с положениями действующего УК РА, преступления против собственности можно классифицировать также на: 1) корыстные и некорыстные, 2) насильственные и ненасильственные.

Исследуемые преступления, по мнению автора, необходимо классифицировать также по форме вины. В частности, им предлагается выделить следующие виды преступлений против собственности: 1) умышленные и 2) неосторожные.

ՔՐԵՄԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՔ**СУБКУЛЬТУРА ОСУЖДЕННЫХ ЖЕНЩИН И
ЕЕ ОСОБЕННОСТИ В РА****Давид ТУМАСЯН***Преподаватель Академии полиции РА и
Школы прокуратуры РА,
соискатель кафедры уголовного права ЕГУ*

Рядом с культурой, господствующей в том или ином обществе, всегда существовали периферийные культуры, противопоставляющие господствующей культуре свои нормы и ценности. В этих крайних культурах (субкультурах) формируется свой язык, мораль, идеалы, образ жизни, стереотипы поведения. Одной из таких субкультур является тюремно-воровская¹.

Субкультура осужденных вообще, и женщин, в особенности, отличается от субкультуры общества в целом. Данное обстоятельство продиктовано множеством факторов, основными из которых являются:

- антисоциальное и противоправное поведение индивидов субкультуры,
- изоляция от общества,
- однополая среда обитания,
- наличие постоянного надзора и контроля над поведением,
- необходимость скрывать определенную информацию как от других осужденных, так и от администрации,
- невозможность осуществления свободного общения как в среде осужденных, так и с администрацией и др.

Данные факторы не могут не отразиться на психологии осужденного, вследствие чего изменяется его поведение и отношение к окружающему его миру и к людям.

Субкультура (лат. sub – под и cultura – культура; подкультура) в социологии и культурологии – часть культуры общества, отличающаяся от преобладающей, а также социальные группы носителей этой культуры. Субкультура может отличаться от доминирующей культуры собственной системой ценностей, языком, манерой поведения, одеждой и другими аспектами². Различают субкультуры, формирующиеся на национальной, демографической, профессиональной, географической и других базах. В частности, субкультуры образуются этническими общностями, отличающимися своим диалектом от языковой нормы.

Будучи способом жизнедеятельности, культура включает не только общественно “полезные”, но и “вредные” формы деятельности: преступления, пьянство, применение наркотиков, суицидальное поведение и т.п., являющиеся компонентами культуры. Вообще деятельность, не соответствующая установившимся в данном обществе нормам (типам, шаблонам), охватывается понятием девиантного (отклоняющегося) поведения, которое может быть позитивным, ломающим устаревшие нормы и объективно способствующим прогрессу (социальное творчество), и негативным, препятствующим существованию или развитию общества (социальная патология). Отклоняющееся поведение “культурно”, поскольку, во-первых, как способ деятельности включено в культуру общества, а, во-вторых, поскольку само “нормировано”, осуществляется вполне определенными способами, в виде культурных “шаблонов”. Так, “нормы, а тем самым типы и частота агрессивных

форм поведения задаются культурой. Их различия зафиксированы в целом ряде исследований межкультурных различий³.

С другой стороны, культура (способ жизнедеятельности) изменяется посредством отклоняющегося поведения. Прежде всего в результате социального творчества, но также и под воздействием социальной патологии. Культура вбирает, аккумулирует аксиологически неравнозначные, подчас противоположные, способы (образцы) деятельности постольку, поскольку они объективно адаптивны, выполняют явные и (или) латентные функции. Очевидно, что сохраняющиеся формы негативно отклоняющегося поведения функциональны и только поэтому не элиминированы в процессе исторического развития общества (“сбалансированный полиморфизм”)⁴.

Вышеуказанные высказывания применимы и к субкультуре осужденных в целом, хотя имеют некоторые специфические черты, о чем будет указано далее.

Субкультура осужденных различается в зависимости от их пола, возраста, тяжести и характера совершенного преступления и т.д.

В деятельности пенитенциарных учреждений завязан узел проблем: правовых и нравственных, экономических и педагогических, политических и психологических, поэтому вопросы, связанные со значением и формированием субкультуры заключенных, особенно важны. Заметим, что в отечественной литературе этот вопрос наиболее полно исследован в работах Г. Ф. Хохрякова⁵ и Е. Г. Багреевой⁶, а касательно осужденных женщин — Ю.М. Антоняном⁷.

Субкультура формируется в результате обособления и интеграции людей, чье поведение и образ жизни не соответствуют нормам и ценностям большинства. Социально-психологические

факторы формирования субкультурных сообществ - потребность людей в объединении, психологическая защита, самопроявление и самоутверждение среди себе подобных. Субкультурные сообщества тем более сплочены и отличаются от социального большинства, чем более энергично отторгаются, а то и преследуются обществом. Поэтому, например, группа наркоманов интегрирована больше, чем компания пьяниц, но меньше, чем преступные сообщества. Интеграция субкультурных групп является следствием давления социального контроля и по степени обратно пропорциональна ему. Вот почему, чем терпимее общество, тем менее “злостны” его субкультуры.

Субкультура заключенных в целом, и осужденных женщин в частности - противоестественное образование, сообщество поневоле. Но став таковым, оно самоорганизуется. Во всех мужских уголовно-исполнительных учреждениях⁸ складывается трехступенчатая, строго иерархизированная структура: лидеры (“воры в законе”, “черная масть”), нейтральное большинство (“мужики”) и на низшей ступени - отверженные. В женском УИУ ситуация иная. В условиях УИУ женщины как бы разбиваются на маленькие отдельные группы, так называемые “семьи”. В семье могут быть от 2 до 8-10 женщин. Женщины в “семье” вместе питаются, защищают интересы друг друга, помогают друг другу. Возраст женщин в “семьях” приблизительно одинаков, хотя не исключены случаи, когда разница возраста женщин в одной “семье” колеблется до 25-30 лет.

Группируются “семьи” по-разному. В “семье”, где все получают передачи с воли, никогда не возьмут женщину без передач. А “семьи”, не получающие передач извне, с удовольствием бы приняли женщину с передачами. Образование, воспитание не имеют принципиального значения при формировании

ՔՐԵԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՐ

“семьи”. Значение имеет исключительно материальное положение. Женщины, не имеющие передач, но питающиеся вместе, называются “однохлебками”, впрочем так называют и вообще всех женщин, питающихся вместе.

В каждой “семье” свой лидер, который может качества лидера иногда распространять и на другие “семьи” тоже, в зависимости от качеств лидеров других “семей”.

“Семья”, имеющая лучшее материальное обеспечение, постоянные передачи с воли, занимает в камере (жилищном помещении) главенствующее положение. Лидер такой “семьи” является старшей в камере. Обычно она связана с сотрудниками УИУ и иногда докладывает им обо всем и обо всех.

В камере есть и женщины, которые живут сами по себе, не входя и группу или “семью”. Если новенькая имеет передачи с воли, то ее стараются “подтянуть” в “семью”, где нет передач. Но обычно новенькие быстро разбираются, что к чему, и уходят в “семьи”, где все с передачами. Или же живут поодиночке, со временем группируя “семью” из вновь прибывших. Никаких особых ритуалов для приема новеньких нет⁹.

На формирование субкультуры осужденных женщин (как и осужденных в целом) влияют как неформальные нормы, так и круг лиц, отбывающих наказание в УИУ, их характеристика и отличительные черты.

Большинство из осужденных родом из неполных или неблагополучных семей или выросли вообще без семьи в детских домах; многие пережили в детстве и юности сексуальное и другие виды насилия, некоторые из них занимались проституцией, у многих нет семьи, или, во всяком случае, мужей; они часто были лишены самого необходимого -

жилья, работы, нормального социального окружения, общения.

Некоторые женщины отбывают наказание со своими малолетними детьми. Особенно тяжкое впечатление производят именно маленькие дети в УИУ - дети тех, кто здесь же отбывает наказание, причем, согласно закону, они могут оставаться с матерями до того времени, когда им исполнится три года¹⁰.

Когда видишь их, совершенно беспомощных и невинных, то, хотя и понимаешь, что оставить дитя с матерью наиболее гуманное и правильное решение, что иначе и не должно быть, все-таки больно сжимается сердце, т.к. нет ничего более противоестественного, чем ребенок в неволе, пусть и такой относительной для него, И не случайно закрадывается мысль, которую хочется гнать от себя, может ли счастливо сложиться жизнь человека, начатая в тюрьме, не будет ли это как проклятье, тяготеть над ним, определяя его печальную судьбу? Но нужно со всей ответственностью сказать, что сотрудники УИУ, во всяком случае тех, где эти наблюдения велись, делают все, чтобы детям было хорошо: питание, лечение, уход, игры и т.д. Конечно же, матери в любое время имеют доступ к ним и для них, в соответствии с законом, создаются улучшенные условия. Как правило, матери, если есть законные основания, досрочно освобождаются, всячески поощряется помощь детям от родственников и других лиц и т.д.¹¹.

Наличие малолетних детей в УИУ положительно влияет на субкультуру осужденных женщин. “Семья” заботится о ребенке, защищает и оберегает его, у многих заключенных женщин “просыпается материнский инстинкт”, они занимаются с этим ребенком все свое свободное время, тем самым заполняя его общественно полезным трудом.

Для многих женщин лишение свободы представляет эмоциональный удар. Для лиц, которые впервые попали в УИУ

(среди женщин их значительное большинство), период пребывания в них самый весьма критический и вызываемые им психические состояния повышенной тревожности, подавленности, стресса, разочарования, угнетенности очень часто оказывают отрицательное действие на их поведение и возможности успешного приспособления к новым обстоятельствам. Переживания в это время бывают особенно острыми. Состояние подавленности начинает господствовать над женщиной, вызывая фрустрацию, потерю жизненной перспективы, сковывая инициативу. Если у нее есть семья и дети, то, как правило, переживания связаны именно с ними. В немалой степени сходные состояния и соответствующие им внешние проявления наблюдаются и при других изменениях условия жизни осужденных: при переводе из одного вида УИУ в другое, применении взысканий и т.д.

Досуг женщин в УИУ заполнен мелкими хозяйственными заботами, обслуживанием себя, письмами, чтением и, конечно, телевизором. В УИУ неплохие библиотеки, и их фонд несколько улучшился в последние годы, когда к ним стали поступать книги из благотворительных и церковных организаций, от последних преимущественно религиозного содержания. Женщины восприимчивы к религии и тем более в местах лишения свободы. В настоящее время священнослужители стали играть достаточно позитивную роль в исправлении и перевоспитании осужденных, приносят им столь необходимое в тяжких и экстремальных условиях неволи спокойствие, снимают напряженность, вселяют уверенность, помогают определить будущее.

УИУ «Абовян» периодически посещает священник, с которым осужденные женщины могут иметь конфиденциальный разговор, в ходе которого обсуждать интересующие их вопросы религии, веры, церкви, а иногда и житейские вопро-

сы и мнение церкви на их счет.

Касательно России, прежде всего надо отметить, что внешний вид женских УИУ не радует глаз. Как и во всех учреждениях такого рода, преобладают тяжелые и безрадостные серые тона, постройки однообразны и удручающе некрасивы, бросается в глаза их убогость, так характерная для всей нашей жизни. В одном УИУ (в РФ) начальство велело везде вырвать траву и все засыпать шлаком, поскольку в траве, видите ли, можно спрятать запрещенные предметы. Надо отметить, что подобные запретительные шаги администрация УИУ или вышестоящее руководство предпринимают нередко. Они свято убеждены, что УИУ, прежде всего, должны быть приспособлены к тому, чтобы им было бы легко и удобно управлять ими и работать в них¹².

В РА таких случаев не было, наоборот, озеленение женского сектора УИУ «Абовян» находится на достаточно высоком уровне, там есть не только лужайки с зеленой травой, но и клумбы с цветами, деревья, оборудована детская площадка для игр и т.д. Осужденные женщины сами рады проводить прополку цветов и иные садовые работы.

Структура в женском УИУ несколько иная, чем в мужских, отношения эти наполнены несколько другим содержанием, там не те нравы. Конечно, и здесь есть группы, отличающиеся антиобщественной направленностью и часто нарушающие режим, но в целом нарушения менее грубы и агрессивны, чем в мужских УИУ. Чаще всего членами таких групп являются осужденные за насильственные, и особенно корыстно-насильственные преступления, преступницы из числа воровок и расхитительницы попадают в их состав редко. Значительны по количеству участниц группы лиц, которые хорошо работают и ведут себя: они составляют основную массу преступниц. Низший слой среды образуют те, которые как бы вытолкнуты из

ՔՐԵՄԱՆԻ ԻՐԱՎՈՒՆԵՐ

среды, отвергнуты ею. Это чаще всего преступницы, имеющие психические аномалии, алкоголички, опустившиеся, деградировавшие по старости или болезни женщины, не соблюдающие личной гигиены (данный вопрос особенно актуально стоит в УИУ “Абовян”, и именно данное обстоятельство является поводом для жалоб).

Однако в женских УИУ, по сравнению с мужскими, отношение к осужденным со стороны администрации УИУ более мягкое и терпимое, сравнительно редко имеет место их оскорбление, унижение, издевательство над ними, а тем более их избиения. Вообще границы между социальными слоями осужденных женщин менее четкие и непоколебимые, они более подвижны, между группами меньше вражды и стычек¹³.

Особое место в структуре среды осужденных (и мужчин, и женщин) занимают группы лиц отрицательной направленности, иногда в них входят и так называемые “воры в законе”. На них держатся правила и нормы среды преступников, и они в целом могут задавать тон в данном учреждении, нередко определяют в ней нравственно-психологическую атмосферу, насаждая антиобщественные нравы, подавляют другие группы. В женских УИУ “воров в законе” нет. В этом убеждают результаты и нашего изучения, и изучения, проведенные Ю.М. Антоняном. По мнению Ю.М. Антоняна к лидерам групп с отрицательной направленностью можно отнести лишь 0,3% осужденных, 3,3% можно считать членами таких групп, 13,6% иногда контактируют с такими группами, выполняют отдельные поручения, но не входят в их состав, а все остальные не имеют к ним никакого отношения¹⁴.

Согласно нашему исследованию, проведенному в УИУ “Абовян”, осужден-

ные женщины по групповой принадлежности принадлежали: 8% - активистки, 43% - рабочие, 12% - асоциальные, но не преступные, 5% - преступные, 14% - униженные, а 18% опрошенных не смогли себя идентифицировать к какой либо группе.

Исходя из данных, можно заключить, что осужденных женщин с асоциальной, и тем более преступной, направленностью не очень много, и большинство осужденных женщин не представляют никакой опасности в УИУ.

Здесь необходимо более детально раскрыть те неформальные нормы, которые в целом влияют на формирование субкультуры осужденных. По мнению А.М. Хачикяна, данные нормы можно классифицировать следующим образом:

1. Ограничительные или сдерживающие нормы прямого действия, направленные на сохранение иерархической структуры сообщества и противопоставление другим группам.

2. Поощрительные или мотивационные нормы, нацеленные на развитие солидарности, усиление групповой сплоченности, а также формирование оппозиционных отношений членам других групп.

3. Имущественные нормы, ориентированные главным образом на оптимальное регулирование конфликтов в сфере распределения различных материальных ресурсов, проникающих в пенитенциарные учреждения легальными и нелегальными путями.

4. Процессуальные нормы, признанные согласовывать поведение осужденных при разрешении конфликтных ситуаций, возникающих в обществе.

5. Специфические нормы ритуально-характера, благодаря которым, во-первых, определяется процедура вхождения (“прописки”) новых членов общества, устанавливается сценарий так называемых разборок, необходимых для

решения спорных вопросов, а, во-вторых, весьма жестко поддерживается на должном уровне занимаемых статус и личных авторитет шлитарных членов общества¹⁵.

В женских УИУ данные неформальные нормы хотя и существуют, но контроль за их осуществлением не такой тотальный, как в мужских УИУ.

В УИУ осужденные женщины нередко вступают друг с другом в гомосексуальные отношения. Такие отношения характерны всюду, где лица одного пола искусственно собраны вместе и изолированы от остального мира. Поэтому женский гомосексуализм (лесбиянство, трибадия) распространен во многих закрытых учреждениях, в женских пансионах, УИУ, женских отделениях психиатрических больниц. Особая его "популярность" в УИУ объясняется некоторыми исследователями тем, что туда попадают проститутки¹⁶.

Имеющиеся данные не позволяют считать, что в гомосексуальное общение в УИУ включены только или преимущественно проститутки. В них могут быть замешаны самые разные люди, а занятие лесбийской "любовью" в значительной степени зависит от характера, темперамента, наличия нарушений сексуального характера, представления о самой себе и других личностных и врожденных факторов, а также, по-видимому, от длительности срока лишения свободы. Такие женщины, конечно, скрывают свои связи, иногда живут как бы "семьей" и психологические контакты между ними, взаимная привязанность (и после освобождения) могут быть очень сильны. Поэтому возможны такие проявления, как ревность, сопровождаемая иногда агрессивными действиями, агрессивность, конфликтность и т.д. Но в социальном плане женский гомосексуализм отличается от мужского меньшей общественной опасностью. Например, в мужских УИУ пассивные гомосексуа-

листы, независимо от того, стали ли они ими добровольно или насильно и при каких обстоятельствах, всегда подвергаются оскорблениям, унижениям, издевательствам. Это парни, услуги которых тем не менее используются, причем прибегают к ним чаще те, которые относятся к неформальным антиобщественным группировкам. Другое дело в женских УИУ: отношение к гомосексуалисткам здесь несравненно более терпимое. Известны те женщины-гомосексуалистки, которые играют активную роль. Они иногда выделяются среди других тем, что стараются подражать мужчинам в повадках, одежде, манерах, жестах, пытаются огрубить голос и т.д.

Большинство преступниц готовы сожалеть о содеянном, но это сожаление какое-то абстрактное, неопределенное, больше похожее на стремление соблюсти некоторые неписанные правила игры. Когда же речь переводится в плоскость реальной ответственности за преступление, что влечет за собой ряд существенных лишений и невзгод, положение существенно меняется. Можно обоснованно предположить, что упомянутое сожаление высказывается и соответственно переживается в тесном переплетении с сожалением о наступившей для преступницы каре. Впрочем, вряд ли это можно считать неожиданным или тем более протivoестественным: мало кто рад неволе. Многократные наблюдения показывают, что как только человека берут под стражу, все его жизненные силы уходят на собственную защиту. Исходя из проведенного нами исследования осужденные женщины в большинстве хотя и не признавали себя виновными в совершенном преступлении, но сожалели о содеянном.

Так, среди осужденных женщин, отбывающих наказание в УИУ "Абовян", согласно заполненным ими анкетам, отношение к совершенному преступлению было следующее: сожалели и рас-

ՔՐԵՄԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՐ

каивались-74%, были безразличны -5%, не принимали своей вины-13%, скрывали свое отношение-7% и протестовали -1%. А когда вопрос касался назначенного наказания, то опрос дал следующие результаты: только 25% осужденных женщин считали назначенное наказание справедливым, 34% - слишком суровым, 38% - несправедливым, а 3% - относились безразлично.

Как видно из приведенных данных, осужденные женщины, не считая себя виновными, сожалели о совершенном деянии, иногда не соглашаясь с тем, что их действия преступны. И как потом в бе-

седе указывали некоторые из них, после освобождения они снова будут совершать преступления, но только так, чтобы не пойматься. К сожалению, именно данное обстоятельство, т.е. укоренение преступной направленности и преступных навыков, является одним из самых опасных в субкультуре осужденных.

Подводя итог, необходимо еще раз заметить, что, несмотря на то, что субкультура осужденных женщин не имеет столь негативного влияния на осужденных, не является иерархической асоциальной группой, и в ней не столь ярко выражена стратификация осужденных, все же ее отрицательные признаки влияют на формирование мышления осужденных женщин, а также на их поведение как в УИУ, так и после освобождения.

¹ Ефимова Е.С. Современная тюрьма: быт, традиции и фольклор. Н., 2004, с.57.

² Энциклопедия социологии/ Сост. А. А. Грицанов, В. Л. Абушенко, Г. М. Евелькин, Г. Н. Соколова, О. В. Терещенко. Минск, Книжный Дом, 2003, с.1001.

³ Хеккаузен Х. Мотивация и деятельность. Т. 1. М., 1986, с.369.

⁴ Гишинский Я.И. Субкультура за решеткой (Обсуждение статьи Л. Самойлова "Этнография лагеря", (СЭ, '1, 1990))// Советская этнография, 1990, '2, с.100-103.

⁵ Хокряков Г. Ф. Формирование правосознания у осужденных. М., 1985; его же. Социальная среда, личность и правосознание осужденных: Автореф. днс. ...докт. юрид. наук. М., 1987; его же. Наказание лишением свободы // Социологические исследования. 1989, '2, с.75-83.

⁶ Субкультура осужденных и их ресоциализация. Монография/ Багреева Е.Г. М., 2001, с.64.

⁷ Антонян Ю.М. Преступность среди женщин.- М., Российское право, 1992, Антонян Ю.М. Предупреждение преступности несовершеннолетних. М., Знание, 1982, и др.

⁸ Далее- УИУ.

⁹ Женщины в российской тюрьме. Проблемы, свидетельства, взгляд изнутри/ Сост. Л.И.

Альперн.- М., РОО "Центр содействия реформе уголовного правосудия", 2001, с.30.

¹⁰ Согласно ч. 1 ст. 82 УИК РА осужденная может поместить в дом ребенка исправительного учреждения своего ребенка в возрасте до трех лет и общаться с ним в свободное от работы время, без ограничения, а согласно ч.3 той же статьи по достижении трехлетнего возраста ребенка, содержащегося в доме ребенка при исправительном учреждении, начальник исправительного учреждения может продлить срок содержания ребенка в доме ребенка до окончания срока наказания матери, если до отбытия наказания осталось не больше двух лет, т.е фактический до исполнения ребенком пятилетнего возраста.

¹¹ Антонян Ю.М. Преступность среди женщин. М., Российское право, 1992, с.128.

¹² Антонян Ю.М. Преступность среди женщин. М., Российское право, 1992, с..131.

¹³ Антонян Ю.М. Преступность среди женщин. М., Российское право, 1992, с.134-135.

¹⁴ Антонян Ю.М. Преступность среди женщин. М., Российское право, 1992, с.135.

¹⁵ Хачикян А.М. Лишение свободы: криминологические и уголовно-исполнительные проблемы. Ер., 2008, с.104-106.

¹⁶ Антонян Ю.М. Преступность среди женщин. М., Российское право, 1992, с.140-141.

ԿԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱԴՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՅՈՒՄ

Դավիթ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՀՀ դատախազության դպրոցի և ՀՀ ոստիկանության ակադեմիայի դասախոս

Այս հոդվածը վերաբերում է կին դատապարտյալների ենթամշակույթին: Ենթամշակույթը սոցիոլոգիայում և մշակութաբանությունում հասկացվում է որպես հասարակության մի մաս, որը տարբերվում է ընդհանուրից, ինչպես նաև դրանք կրողների սոցիալական խումբ: Լինելով կենսագործունեության մի տեսակ՝ այն ներառում է ինչպես հանրորեն «օգտակար», այնպես էլ «վտանգավոր» գործունեության եղանակներից մեկը՝ հանցագործություններ, հարբեցողություն, թմրամիջոցների օգտագործում, ինքնասպանության հակումներ և այլն: Ենթամշակույթը ձևավորվում է այնպիսի մարդկանց ինտեգրման ու առանձնացման հիման վրա, ում վարքագիծը չի համապատասխանում մեծամասնության արժեքներին ու նորմերին: Քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) կանայք բաժանվում են փոքր խմբերի, որոնց անվանում են «ընտանիքներ»: «Ընտանիքում» լինում են 2-ից 8-10 կանայք, որոնք համատեղ սնվում են, պաշտպանում են մեկը մյուսի շահերը, օգնում միմյանց:

Ենթամշակույթի ձևավորման վրա ազդում են ինչպես ոչ ֆորմալ նորմերը, այնպես էլ անձանց շրջանակը, որոնք պատիժ են կրում ՔԿՀ-ում, նրանց բնութագիրը և տարբերակիչ հատկանիշները: Առավել սուր է կրոնի խնդիրն ու կանանց վերա-

բերմունքը դրան: «Աբովյան» ՔԿՀ պարբերաբար այցելում են հոգևորականներ, որոնց հետ դատապարտյալները կարող են ունենալ առանձնագրույցներ:

Համաձայն մեր կողմից կատարված ուսումնասիրության՝ դատապարտյալ կանայք ըստ խմբային պատկանելության հետևյալն են՝ 8%՝ ակտիվիստ են, 43%՝ աշխատավոր, 12%՝ հակասոցիալական, բայց ոչ հանցավոր, 5%՝ հանցավոր, 14%՝ ստորացված խմբում են, իսկ 18% որևէ խմբին իրենց չնույնացրեցին: Բացի այդ, «Աբովյան» ՔԿՀ-ում պատիժ կրող կանանց վերաբերմունքը նրանց կողմից կատարված հանցագործության նկատմամբ հետևյալն էր. զղջում էին՝ 74%, անտարբեր էին՝ 5%, չէին ընդունում իրենց մեղքը՝ 13%, թաքցնում էին վերաբերմունքը՝ 7% և ըմբոստանում էին՝ 1%: Իսկ երբ հարցը վերաբերում էր նշանակված պատժի, ապա արդյունքը հետևյալն է. միայն 25% համարում էին նշանակված պատիժը արդարացի, 34%՝ չափից խիստ, 38%՝ անարդար, իսկ 3%՝ վերաբերվում էին անտարբեր:

Ամփոփելով հոդվածը, նշվել է, որ կին դատապարտյալների ենթամշակույթը այդքան էլ բացասական ազդեցություն չունի դատապարտյալների վրա, չի հանդիսանում կանոնակարգված հակասոցիալական խումբ, և նրանում այդքան ակնհայտ չէ դատապարտյալների ստրատիֆիկացիան, չնայած նրա բացասական հատկանիշները ազդում են կին դատապարտյալների մտածելակերպի ձևավորման, ՔԿՀ-ում ու պատիժը կրելուց հետո նրանց վարքագծի վրա:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**ՎԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱՎԱՐԳԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ****Մարինե ԻՍԱՀԱԿՅԱՆ***իրավագիտության մագիստրոս*

Քրեական դատավարությունը պետական գործունեության այն ոլորտներից է, որտեղ էապես շոշափվում են դատավարության մասնակիցների շահերը: Հաճախ դատավարության սուբյեկտները կամ նրանց միջավայրի հանցավոր տարրերը, նեղ անձնային կամ խմբային շահերից դրդված, սպառնում են դատավարությանը մասնակցող անձանց՝ խոչընդոտելով դատավարական իրավունքների և պարտականությունների իրացմանը:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության ինստիտուտը բավականին մշակված է զարգացած իրավական ավանդույթներ ունեցող արևմուտքի երկրներում: Այս ոլորտի իրավական կարգավորման հարուստ փորձ ունեն ԱՄՆ-ը, Անգլիան, Գերմանիան, Իտալիան¹: Այսպես, վկաների և տուժողների պաշտպանության հարցերը կարգավորվել են ԱՄՆ «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» 1970թ. դաշնային օրենքով ու «Հանցագործությունների զոհերի և վկաների իրավունքների մասին» առաջին (1982թ.) և երկրորդ (1984թ.) բիլերով: ԱՄՆ-ում գործում է նաև վկաների պաշտպանության ծրագիր, որն անընդմեջ կատարելագործվում է: Այդ ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողության պարտականությունը դրված է ԱՄՆ արդարադատության նախարարության վրա: Գերմանիայում 1994թ. ընդունվել է «Հանցավորության դեմ պայքարի մասին» օ-

րենք, որտեղ կարևոր նշանակություն է տրվել անանուն վկաների և տուժողների ինստիտուտին: Իտալիայում 1992թ.-ից գործում է «Հակամաֆիա» դեկրետը (N 306), որով հնարավորություն է ընձեռվել վկայի հարցաքննությունը հեռարձակել տեսակապի օգնությամբ, իսկ վկայի գտնվելու վայրը պահել գաղտնի. նրա պատկերը տեսնում է միայն դատավորը²:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի անժխտելի առավելություններից է մարդու իրավունքներն ու ազատությունները երաշխավորող դատավարական նորմերի համակարգի առկայությունը: Այդ համակարգի մեջ ուրույն տեղ ունի դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությանը նվիրված իրավական ինստիտուտը, որը նորոյթ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Սակայն այնտեղ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությանը վերաբերող մի շարք սկզբունքային հարցեր կարգավորված չեն: Օրենսդրությամբ սահմանված չեն՝ պետական պաշտպանության սկզբունքները, անձանց սոցիալական պաշտպանության երաշխիքները և միջոցները, ֆինանսական և նյութատեխնիկական ապահովման խնդիրները, անհատական, երկկողմ և բազմակողմ պատասխանատվությունը, անձի մահվան, առողջությանը վնաս պատճառելու հետ կապված քաղաքացիաիրավական հարաբերությունները, այլ իրավական ակտերով պաշտպանությանն առնչվող խնդիրները լուծելու այլ տարբերակները: Թերի են կարգավորված՝ պետական պաշտպանության ենթակա անձանց շրջանակը, որոշումների բողո-

քարկման ժամկետները չպահպանելու հետևանքները՝ կյանքի և առողջության պաշտպանության, ինչպես նաև գույքի պահպանության տեսանկյունից³:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք: Մերձավոր ազգականի պաշտպանության համար քրեական դատավարությանը մասնակցող անձը դիմում է ներկայացնում քրեական վարույթը իրականացնող մարմին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը, հայտնաբերելով, որ պաշտպանվող անձը պաշտպանության կարիք ունի, այդ անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման: Պաշտպանության միջոցներ պարտադիր կիրառվում են, եթե քրեական դատավարությանը մասնակցող անձին կամ նրա մերձավոր ազգականներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ կամ գույքը ոչնչացնելով կամ նրա նկատմամբ կիրառել են բռնի գործողություններ՝ կապված քրեական վարույթին նրա մասնակցության հետ: Եթե ոստիկանությունը, տեղեկացված լինելով կոնկրետ անձի կյանքի նկատմամբ ոտնձգության փորձի հնարավորության մասին, չի ձեռնարկում նրա անվտանգությունն ապահովելու արդյունավետ միջոցներ, որի հետևանքով տվյալ անձը սպանվում է, ապա կարելի է վիճարկել պետության կողմից «Մարդու իրա-

վունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Օսմանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով անդրադարձել է նշված հարցին: Սույն գործով դատարանը նշել է, որ մարդու կյանքի իրավունքի պահպանության ապահովման պարտականությունը ներառում է ոչ միայն քրեական օրենսդրության ստեղծումը և դրա արդյունավետ կիրառումը, այլև կյանքի պաշտպանության նախականիչ միջոցների նախատեսումը: Անձի կամ անձանց պաշտպանությանն ուղղված նախականիչ միջոցառումների ձեռնարկման պետության պոզիտիվ պարտականությունը ծագում է այն դեպքում, երբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին գիտենալ մարդու կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի գոյության մասին, որը կապված է երրորդ անձանց հանցավոր գործողությունների հետ: Նման հանգամանքներում, եթե իշխանություններն իրենց իրավասության շրջանակներում չեն ձեռնարկում միջոցներ, որոնք կարող էին օգնել խուսափելու վտանգից, ապա դա դիտվում է կյանքի իրավունքի խախտում: Դատարանը նշել է, որ այս դեպքում դիմողը պետք է միայն ապացուցի, որ պետությունը չի ձեռնարկել ողջամտորեն ակնկալվող այն միջոցառումները, որոնք նպատակ ունեին խուսափելու իրական և անմիջական վտանգից⁴:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98¹-րդ հոդվածում թվարկված պաշտպանության միջոցները բազմատեսակ են: Այդ շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, ինչպես նաև պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերը նշված միջոցները կիրառվում են առա-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

վել հաճախ, բայց դրանք կիրառելու արդյունավետության բարձրացման առումով օրենսդրության մեջ և գործնականում կան բազմաթիվ խնդիրներ:

Քրեադատավարական օրենսդրության մեջ և գործնականում առկա հիմնախնդիրների լուծման համար կարևոր է միջազգային իրավական համապատասխան փաստաթղթերի վերլուծումը: ՄԱԿ-ի շրջանակներում ընդունվել են մարդու իրավունքներին վերաբերող մի շարք փաստաթղթեր, որոնք ընդհանուր առմամբ երաշխավորում են մարդու պատիվը, արժանապատվությունը, հիմնական իրավունքները (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր): Սակայն այս փաստաթղթերում ուղղակիորեն չի խոսվում քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության մասին:

1985 թվականին ՄԱԿ-ում քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության չափանիշների և սկզբունքների մշակման ուղղությամբ իրականացվեցին լայնածավալ աշխատանքներ: Միջազգային հանրությունն անհանգստացած էր, որ հանցագործության զոհերին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին, վկաներին և նրանց օգնություն ցուցաբերող այլ անձանց առողջությանը և սեփականությանը անարդարացիորեն վնաս է պատճառվում: Հասունացել էր քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքները ճանաչելու ու հարգելու ուղղությամբ միջազգային և մերպետական միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

ՄԱԿ-ի 7-րդ կոնգրեսում, որը նվիրված էր հանցագործությունների կանխմանը և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքին, ընդունվել է «Միջազգային ահաբեկչության դեմ պայքարի միջոցառումներ-

րի» մասին ակտ, որը բաղկացած է երեք բաժնից՝ «Դատավորների և քրեական արդարադատության աշխատակիցների պաշտպանությունը», «Ձոհերի պաշտպանությունը», «Վկաների պաշտպանությունը»: Պետություններին հանձնարարվել է մշակել համապատասխան քաղաքականություն և միջոցներ ձեռնարկել հանցագործության զոհերի ու վկաների պաշտպանության ուղղությամբ: Դրա համար անհրաժեշտ էր ընդունել օրենսդրական ակտեր, ինչպես նաև քրեադատավարական իրավահարաբերությունների մասնակիցներին օգնություն ցույց տալու նպատակով տրամադրել բավարար միջոցներ:

Նույն կոնգրեսում ընդունվել է «Կազմակերպված հանցավորության նախազգուշացման և դրա դեմ պայքարի ղեկավար սկզբունքները», որտեղ նշվում է, որ քրեական գործերի նախնական և դատական քննության ընթացքում, ինչպես նաև իրավապահայան մարմինների գործունեության ընթացքում կարևոր նշանակություն է ձեռք բերում վկաների պաշտպանությունը սպառնալիքներից և բռնություններից: Հակաիրավական ներգործության սպառնալիքի առկայության դեպքում անհրաժեշտ է զաղտնի պահել վկայի անձի մասին տեղեկությունները, պահպանության տակ գտնվող անձին տրամադրել բնակարան, ապահովել նրա անձնական պահպանությունը և ցուցաբերել ֆինանսական օգնություն:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 45-րդ նստաշրջանում ընդունված բանաձևում (1991թ. հոկտեմբերի 21-25-ը, Սուզդալ) մեծ ուշադրություն է դարձվել քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությանը, մասնավորապես առաջարկվել է քննարկել վկաների պաշտպանության այնպիսի միջոցների կիրառման նպատակահարմարությունը, որոնք հնարավորություն են տալիս փոխելու պաշտպանվող անձի ազգանունը, ինչպես նաև մեղադրյալի կամ նրա հանցակիցների կողմից սպառնալիքի առկայության դեպ-

քում անձին վերցնելու ֆիզիկական պաշտպանության տակ: Նշված հանձնարարականները հաստատվել են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 46-րդ նստաշրջանում, և հետագայում սուզդալյան սեմինարի սկզբունքները արտացոլվեցին նշված նստաշրջանում ընդունված «Կազմակերպված հանցավորության» հանձնարարականում:

Վիեննայում 2000 թ. ապրիլին կայացած ՄԱԿ-ի 10-րդ կոնգրեսում ընդունվել է «Հանցագործության և արդարադատության մասին Վիեննայի հռչակագիրը՝ 21-րդ դարի մարտահրավերների պատասխանները»: Նշված հռչակագրի համաձայն՝ պետություններին հանձնարարվել է ընդունել հանցագործության զոհերի օգնության գործողությունների ազգային ծրագրեր, ուժեղացնել տուժողների և վկաների օգնության ծառայությունները:

Եվրոպական խորհրդի շրջանակներում անցկացվել են մի շարք խորհրդակցություններ, կոնֆերանսներ, որտեղ քննարկվել են քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության մասին հարցեր (օրինակ՝ 1986 թ. հունիսին Բուդապեշտում Եվրոպական խորհրդի արդարադատության նախարարների մասնակցությամբ տեղի ունեցավ «Քրեական, քաղաքացիական և վարչական գործերով արդյունավետ և արդարացի արդարադատություն» թեմայով խորհրդակցություն): Հաշվի առնելով քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության հարցի արդիականությունը՝ 1993թ.-ին Հանցավորության հիմնախնդիրների եվրոպական կոմիտեում վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքի ապահովման խնդիրների կապակցությամբ ստեղծվեց առանձին փորձագիտական խումբ, որը մի քանի տարիների ընթացքում ուսումնասիրել է քրեական դատավարությանը մասնակցող անձանց ահաբեկման ձևերը և մշակել է դրանց դեմ պայքարի գործնական և օրենսդրական մի շարք մոտեցումներ: Հանձնաժողովի ուսումնասիրությունների

արդյունքում 10.09.1997 թ. Եվրոպական խորհրդի նախարարների կոմիտեն ընդունեց «Վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքի ապահովման հարցերով» հանձնարարական, որտեղ առաջին անգամ տրվում են քննարկվող ոլորտում էական նշանակություն ունեցող մի շարք հասկացությունների բնորոշումներ:

1. «Վկա» հասկացությունը ընկալվում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան, այսինքն՝ վկա է ցանկացած անձ, ով տիրապետում է գործի համար նշանակություն ունեցող տեղեկատվության, և ում ցուցմունքները դատական մարմինների կողմից կարող են հաշվի առնվել մեղադրանքի քննության ընթացքում: Փաստորեն, այս դեպքում նկատի է առնվում ոչ այնքան անձի դատավարական վիճակը, որքան նրա գործառույթները: Այսինքն՝ վկան հասկացվում է լայն իմաստով:

2. «Ահաբեկել» եզրույթը նշանակում է վկայի նկատմամբ ուղղակի, անուղղակի կամ իրական սպառնալիք, որը կարող է խոչընդոտել վկայի կողմից իր քաղաքացիական պարտքի կատարմանը:

3. «Անանուն» են համարվում այն վկաները, որոնց անձը, անվտանգության նկատառումներից ելնելով, չի բացահայտվում, նրա տվյալները հայտնի չեն մեղադրյալին: Միևնույն ժամանակ, վկայի մասին տվյալները կարող են ներկայացվել փաստաբանին՝ դրանք զաղտնի պահելու պարտականություն ստանձնելու դեպքում: Մեղադրյալին կարող է տրամադրվել տեղեկատվություն այն ծավալով, որն անհրաժեշտ է անցյալում իր և վկայի միջև հնարավոր կապերի և հարաբերությունների բացահայտման համար: Միևնույն ժամանակ, վկան չի համարվում անանուն, եթե չեն հրապարակվում առանձին տեղեկություններ, օրինակ՝ նրա հասցեն, աշխատանքի վայրը:

Հաշվի առնելով վկայի ներկայացրած տվյալները վիճարկելու պաշտպանության կողմի իրավունքը՝ հանձնարարականում առաջարկվում է այլ միջոցների հետ միա-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

սին նախատեսել նաև՝

1. մինչդատական վարույթում տեխնիկական միջոցների օգնությամբ ձայնագրել վկայի ցուցմունքները,

2. դատարանում հրապարակել մինչդատական վարույթում վկայի տված ցուցմունքները, եթե դատարան վկայի ներկայանալը անհնար է կամ դատարան ներկայանալը կարող է իրական սպառնալիք ստեղծել նրա կամ մերձավորների անվտանգության համար,

3. վկայի անհատական տվյալները բացահայտել դատավարության վերջնական փուլում կամ բացահայտել առանձին անհրաժեշտ տվյալներ,

4. արգելել ՋԼՄ-ների մասնակցությունը դատական նիստերին:

Հանձնարարականում որպես կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հատուկ միջոց առաջարկվում է նախատեսել ցուցմունք տվող վկայի անանունությունը: Միաժամանակ նշվում է, որ եթե դատավարությանը մասնակցող անձինք պահանջել են անանունության երաշխիքներ, և դա ապահովվել է իրավասու մարմինների կողմից, ապա ազգային քրեադատավարական օրենսդրությունը քրեական դատավարության պահանջների և մեղադրյալի իրավունքների հավասարակշռության ապահովման նպատակով պետք է նախատեսի ստուգողական ընթացակարգեր: Համաձայն այդ ընթացակարգերի՝ պաշտպանության կողմին պետք է հնարավորություն տրվի բողոքարկել վկայի անանուն հանդես գալու անհրաժեշտությունը, ինչպես նաև կասկածի տակ դնելու այդ ցուցմունքների հավաստիությունը և վկայի ներկայացրած տեղեկատվության աղբյուրը:

Նման ստուգողական ընթացակարգերի ճիշտ գործառնությունն ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում՝

- դատախազության մարմինների կողմից դատարան միջնորդություն ներկայաց-

նել վկային անանուն հանդես գալու իրավունք տրամադրելու վերաբերյալ, որի մասին տեղեկացվում են մեղադրյալը և նրա պաշտպանը,

- ապահովել մեղադրյալի և պաշտպանի կարծիք հայտնելու և վկայի անցյալին վերաբերող հարցեր տալու իրավունքը,

- վկայի անցյալի վերաբերյալ անցկացնել քննություն, պարզել փաստեր, որոնք բացառում են վկայի կողմից մեղադրյալին զրպարտելու դիտավորությունը,

- մեղադրյալին և պաշտպանին իրավունք վերապահել բողոքարկելու քրեական դատավարությանը մասնակցող անձանց անձնական տվյալները գաղտնի պահելու մասին որոշումը, եթե այդպիսի գործողությունները կարող են ազդել դատարանի՝ անանունության իրավունք տրամադրելու կամ տրամադրումը մերժելու մասին որոշման վրա:

Անանունության իրավունք պետք է տրամադրվի այն դեպքում, երբ իրավասու դատական մարմինը, լսելով բոլոր շահագրգիռ կողմերին, պարզի, որ՝

- անձի կյանքը և ազատությունը ենթարկվում են իրական վտանգի, կամ գաղտնի գործակալին կարող է հասցվել էական վնաս,

- ներկայացվող ապացույցներն ունեն վճռական նշանակություն, և վկայի նկատմամբ վստահությունը կասկած չի հարուցում:

Հանձնարարականում հատուկ ընդգծվում է, որ մեղադրական դատավճիռը չի կարող հիմնվել միայն անանուն վկայի ցուցմունքների վրա: Անանունության իրավունք վերապահելիս պետք է հաշվի առնել՝ արդյոք գործով առկա են մեղադրանքը հիմնավորող այլ էական ապացույցներ: Եթե պարզվում է, որ լրացուցիչ ապացույցներ չկան, ապա գործը կամ չպետք է ուղարկվի դատարան, կամ էլ պետք է մերժվի վկայի անանունության իրավունքի տրամադրումը: Եթե, այնուամենայնիվ, վկային տրամադրվել է անանուն հանդես գալու իրավունք, և մեղադրանքն ամբողջությամբ

կառուցված է վկայի ցուցմունքների վրա, ապա դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ⁶:

Կարևոր է նաև այն հարցը, թե պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների սահմանափակումը, անանուն վկաների ինստիտուտը համատեղելի⁶ են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի (արդար դատաքննության իրավունք) պահանջներին⁶: Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ բոլոր ապացույցները պետք է ներկայացվեն հրապարակային դատական լսման ընթացքում, մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցությունն ապահովելու նպատակով: Այս սկզբունքից կան բացառություններ, սակայն դրանք որևէ կերպ չեն կարող նսեմացնել պաշտպանության իրավունքը:

Այսպես, Վիսսերն ընդդեմ Նիդեռլանդների գործով /14.02.2002 ք./ դիմումատուն մեղավոր է ճանաչվել անօրինական ձերբակալություն իրականացնելուն հանցակցելու համար: Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ մասնավորապես հենվել է անանուն վկայի ցուցմունքների վրա, ով նկարով ճանաչել է Վիսսերին: Գերագույն դատարանը մեղադրական դատավճիռը բեկանել է այն հիմքով, որ չեն պահպանվել անանուն վկաների հաղորդումների օգտագործման պայմանները: Գերագույն դատարանը գործն ուղարկել է վերաքննիչ դատարան և առաջարկել է քննիչ դատավորին լսել վկային: Քննիչ դատավորը գտել է, որ վկայի ցանկությունը՝ մնալ չբացահայտված, հիմնավոր է, քանի որ այն պայմանավորված է դիմումատուի՝ հանցակիցների կողմից հետապնդում իրականացնելու մտավախությամբ և այն հանգամանքով, որ մեղադրանքը կապված է եղել վրեժի ակտի հետ: Սրա հիման վրա քննիչ դատավորը մեկուսացված շինությունում հարցաքննել է վկային և ներկայացրել է առանձին սենյակում գտնվող դիմումատուի պաշտպանի հարցերը: Վերաքննիչ դատա-

րանը մեղավոր է ճանաչել դիմումատուին՝ հիմք ընդունելով քննիչ դատավորի կողմից հարցաքննված անանուն վկայի ցուցմունքները, ինչպես նաև տարբեր հաշվետվություններ և այլ պաշտոնական փաստաթղթեր: Հետագայում Գերագույն դատարանը մերժել է իրավունքի հարցերի կապակցությամբ ներկայացված Վիսսերի բողոքները՝ համաձայնելով քննիչ դատավորի այն եզրակացությանը, որ վկայի գաղտնիությունը եղել է հիմնավոր:

Եվրոպական դատարանը սույն գործով արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի d կետի խախտում՝ հետևյալ հիմնավորմամբ. «Քննիչ դատավորի հաշվետվությունը, որտեղ, փաստորեն, հիմք է ընդունվել մեղադրյալի հանցակիցների համբավը, չի նշվել, թե ինչպես է գնահատում վկայի մտավախության հիմնավորվածությունը ինչպես սկզբնական հարցաքննության, այնպես էլ երկար ժամանակ հետո՝ քննիչ դատավորի անցկացրած հարցաքննության ժամանակ: Ավելին, վերաքննիչ դատարանը չի ստուգել այն պատճառների լրջությունը և բավարար հիմնավորվածությունը, որոնց հիման վրա վկայի անձը չի բացահայտվել: Բացի այս, դիմումատուի մեղավորությունը առավելապես ապացուցվել է անանուն վկայի կողմից ներկայացված ապացույցների հիման վրա»⁷:

Դորսոնն ընդդեմ Նիդեռլանդների գործում դատարանը եկել է հետևյալ եզրակացության. «Արդարացի դատաքննության սկզբունքները նաև պահանջում են, որ համապատասխան դեպքերում հավասարակշռություն ապահովվի պաշտպանության շահերի և ցուցմունք տալու համար կանչված վկաների կամ տուժողների շահերի միջև: Այս դեպքում Ամստերդամում թմրանյութերի առուվաճառքի դեմ պայքարելու նպատակով ոստիկանները լուսանկարել էին մի շարք անձանց, որոնք կասկածվում էին թմրանյութ վաճառելու մեջ: Ոստիկանությունը տեղեկատվություն է ստանում, որ դիմողը զբաղվում է թմրան-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

յութերի առուվաճառքով, և նրա լուսանկարը ցույց է տրվում մի շարք թմրամոլների, որոնք հայտարարում են, որ ճանաչում են նրան, և որ նա իրենց թմրանյութեր է վաճառել: Նրանցից ոմանք մնում են անանուն: Դիմողը ձերբակալվում է և դատապարտվում թմրանյութերի հետ կապված հանցագործությունների համար: Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ իրականացվող քննությունների ընթացքում որոշակի վկաների կողմից ապացույց ստանալը, լսելը և դրանց վրա հիմնվելը խախտել են իր պաշտպանության իրավունքը՝ հակասելով 6-րդ հոդվածին: Նա նշել է, որ առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած քննությունների ընթացքում երկու անանուն վկաներ քննիչ դատավորի կողմից հարցաքննվել են իր պաշտպանի բացակայությամբ: Դատարանը նշել է, որ դատարանում անանուն վկաների օգտագործումը Կոնվենցիայի լույսի ներքո հարցեր է առաջանում, և որ պետք է լինեն հավասարակշռող միջոցներ պաշտպանության իրավունքի ապահովման համար: Դատարանը նաև նշել է, որ վերաքննիչ դատարանում քննիչ դատավորի կողմից հարցաքննվել են պաշտպանության փաստաբանի մասնակցությամբ, և քննիչ դատավորը տեղյակ է եղել վկաների անձի ինքնությանը: Փաստաբանը հնարավորություն է ունեցել վկաներին տալու ցանկացած հարց, որը նա համարել է մեղադրյալի շահերից բխող, բացառությամբ այնպիսի հարցերի, որոնք կարող էին բացահայտել վկաների անձը, և այդ բոլոր հարցերին տրվել են պատասխաններ: Դատարանը նաև նշել է, որ ազգային դատարանը մեղավորության մասին իր հետևությունները չի հիմնավորել բացառապես կամ էական չափով անանուն վկաներից ստացված ապացույցներով, և այդ պատճառով դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում չի արձանագրել»:

Զբացահայտված, անանուն աղբյուրից

ստացված տեղեկատվությունը որպես ապացույց օգտագործելու հարցի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումն արտահայտված է նաև Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդեռլանդների գործով: Ըստ գործի փաստական հանգամանքների՝ Նիդեռլանդների չորս քաղաքացիներ 10 տարի ժամկետով ազատազրկման էին դատապարտվել ծանրացուցիչ հանգամանքներում կատարված կողոպուտի և սպանության փորձի համար: Դիմողներին ներկայացված մեղադրանքները, ի թիվս այլ ապացույցների, հիմնված էին ոստիկանների ցուցմունքների վրա, որոնց ինքնությունը չէր բացահայտվել գործի քննության ընթացքում, այդ թվում՝ դատաքննության ժամանակ: Որպես վկա ցուցմունք տված ոստիկանները չէին ցանկացել բացահայտել իրենց ինքնությունն այն պատճառաբանությամբ, որ իրենց անունները բացահայտելու դեպքում իրենք այլևս չեն կարողանա պատշաճ կերպով կատարել իրենց պարտականությունները: Բացի այդ, նրանք վախենում էին իրենց ընտանիքների անդամների նկատմամբ ճնշումների գործադրումից: Ըստ դիմողների՝ խախտվել էր արդարացի դատաքննության իրենց իրավունքը (Կոնվենցիայի 6-րդ հոդված), քանի որ իրենց մեղադրական դատավճիռը կայացվել էր հիմնականում այն ոստիկանների ցուցմունքների հիման վրա, որոնց ինքնությունը մնացել էր անհայտ, և որոնք չէին հարցաքննվել հրապարակային դատաքննության ժամանակ՝ ամբաստանյալի մասնակցությամբ:

Եվրոպական դատարանը սույն գործով նշել է. «Մրցակցության սկզբունքը պահանջում է, որ բոլոր ապացույցները ներկայցվեն հրապարակային լուսմների ընթացքում մեղադրյալի ներկայությամբ: Թեև կան որոշակի շեղումներ այդ սկզբունքից, այնուամենայնիվ այդ շեղումները չպետք է սահմանափակեն պաշտպանության իրավունքները: Պատասխանող կառավարությունը չկարողացավ համոզիչ փաստարկներով պատճառաբանել մեղադրյալների

իրավունքների նման ծայրահեղ սահմանափակման դիմելու անհրաժեշտությունը»:

Սույն գործով դատարանն անհրաժեշտ է համարել գնահատել ոստիկանության սպաների և նրանց ընտանիքներին սպառնացող վրեժխնդրության վտանգի իրական լինելը: Ըստ դատարանի՝ կառավարության ներկայացրած ոչ մի փաստարկ չի վկայել իրական վտանգի առկայության մասին: Դատարանը հաշվի է առել նաև այն, որ դիմողների մեղավորությունը հաստատող միակ ապացույցը եղել է անանուն ոստիկանների ցուցմունքները: Սույն գործով Եվրոպական դատարանն արտահայտել է նաև սկզբունքային նշանակություն ունեցող մեկ այլ իրավական դիրքորոշում: Որոշման 56-րդ կետում նշվում է. «Դատարանի կարծիքով պաշտպանության կողմի շահերի հարաբերակցությունը վկաների գաղտնիության պահպանման օգտին ներկայացվող փաստարկների հետ, առաջ է բերում նոր խնդիրներ, քանի որ վկաները, որոնց մասին խոսվում է, ծառայում են պետական ոստիկանությունում: Չնայած նրանց և նրանց ընտանիքների շահերը նույնպես պաշտպանվում են Կոնվենցիայով, պետք է ընդունել, որ նրանց կարգավիճակը որոշակի առումով տարբերվում է չչափազորված վկաների և զոհերի կարգավիճակից: Ոստիկանությունը ենթարկվում է պետության գործադիր իշխանությանը, և նրանք կապված են դատախազության հետ: Այդ պատճառով, ոստիկաններին որպես անանուն վկաներ հանդես գալու իրավունք պետք է տրվի միայն բացառիկ դեպքերում: Բացի այդ, նրանց ծառայողական պարտականությունների բնույթը, մասնավորապես՝ կալանքի իրականացումը, պահանջում է ցուցմունքներ տալ դժբազ դատական միստում»:

Ելնելով նշված հանգամանքներից՝ դատարանը նշված գործով ճանաչվել է դիմողների արդարացի դատաքննության իրավունքի խախտման փաստը:

Այսպիսով, կարելի է առանձնացնել չբացահայտված, անանուն վկաներից ստացված տեղեկատվության որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության վերաբերյալ Եվրոպական դատարանի հետևյալ սկզբունքները՝

1. Չբացահայտված, անանուն աղբյուրից ստացված տեղեկատվության օգտագործումն ինքնին չի հանդիսանում արդար դատաքննության իրավունքի խախտում, եթե միայն այն վճռորոշ դեր չի կատարել մեղադրական դատավճիռ կայացնելու համար: Մեղադրական դատավճիռը չպետք է հիմնվի միայն կամ առավելապես անանուն պնդումների վրա:

2. Եթե տվյալ ապացույցի աղբյուրը չբացահայտելու անհրաժեշտությունը պայմանավորված է վկայի կամ տուժողի անվտանգության ապահովմամբ, ապա բացահայտելու դեպքում վկային կամ տուժողին սպառնացող վտանգը պետք է լինի իրական:

3. Պետք է տարբերակել գործով չչափազորված վկաների և ծառայողական պարտականություններ կատարող վկայի անձի մասի տեղեկությունների գաղտնիության թույլատրելիության սահմանները: Ընդհանուր առմամբ, ոստիկաններն իրենց ծառայողական պարտականությունների ուժով պարտավոր են հրապարակային ցուցմունքներ տալ:

Այսպիսով, վկայի պաշտպանության քրեադատավարական ինստիտուտը, լինելով նորույթ քրեական դատավարությունում, կարող է մեծ նշանակություն ունենալ վկայի ցուցմունքների դատավարական արժեքը և ապացուցողական նշանակությունը բարձրացնելու գործում: Միևնույն ժամանակ, այդ ինստիտուտը կազմող շատ իրավանորմեր պարունակում են թերություններ, որոնք գիտական խորը և բազմակողմանի հետազոտությունների դեպքում, մշակված հանձնարարականների հիման վրա ենթակա են վերացման:

Քրեական դատավարություն

- ¹ Տե՛ս Москалькова Т. П. Этика уголовно-процессуального доказывания. М. 1996. էջ 118:
- ² Տե՛ս Воробьев И. А. Защита свидетелей как одно из ключевых условий эффективной борьбы с организованной преступностью. // «Журнал Российского права», 1999. N2 էջ 134:
- ³ Տե՛ս Երեմյան Ա., Արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության մասին: Ազգային ժողով, 2005, սեպտեմբեր, էջ 26-29:
- ⁴ Տե՛ս Бассарабов В. Г., Быуова Е. В., Курочкина Л. А. Европейские стандарты обеспечения прав и свобод человека и гражданина в российском уголовном процессе. –М.: Изд. «Юрлитинформ». 2005. էջ 54-55: Стандарты Европейского суда по правам человека и российская правоприменительная практика, Сб., аналитических статей. –М.: Под ред. М. Р. Воскобитовой. «Анахарсис», 2005, էջ 71:
- ⁵ Տե՛ս Երեմյան Ա., Ղամբարյան Ա., ՀՀ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը, Երևան, 2006, էջ 38-43:
- ⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Լ., Ապացույցների թույլտվության չափանիշներն ըստ Եվրոպական դատարանի ձևավորված նախադեպային իրավունքի: «Օրինաբերք», 3 / 55 / 2003, էջ 24-27, Խաչատրյան Ս., Արդարացի դատական քննության իրավունք: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված, Երևան, 2004:
- ⁷ Տե՛ս Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. //Науч. ред.- сост. Берестнев Ю. Ю., Виноградов М. В., пер. с англ. Власихин В. А. М., 2004, էջ 84:

СПОСОБЫ ЗАЩИТЫ СВИДЕТЕЛЯ И СИСТЕМА ИХ ОСУЩЕСТВЛЕНИЯ В УПК РА

Марине ИСААКЯН

Магистр юриспруденции

Уголовный процесс является той сферой государственной деятельности, которая касается интересов непосредственных участников процесса.

Институт защиты свидетелей довольно эффективно разработан в правовой системе западных стран, имеющих развитую правовую традицию.

В системе действующего УПК РА особое место занимает институт защиты прав участников уголовного процесса, который является нововведением в УПК РА.

Для решения важных практических задач очень важен анализ соответствующих международных правовых документов. В статье приводится подробный анализ ряда таких документов. В результате автор приходит к следующему выводу: уголовно-процессуальный институт защиты свидетелей, будучи нововведением в уголовном процессе РА, может иметь большое значение для повышения ценности свидетельских показаний и доказательств в ходе уголовного процесса. В то же время правовые нормы, входящие в этот институт, содержат недостатки, которые при глубоком и всестороннем научном исследовании и на основе разработанных предложений, подлежат исключению.

**Հարգելի հեղինակներ,
Հանդեսին նյութեր համծնելիս խնդրում ենք
պահպանել հետևյալ պահանջները.**

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնային տարբերակի հետ միասին:

Հոդվածները՝ որպես կանոն առավելագույնը 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան ԲՈՒՀ-երի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի անգլերեն վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա, 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ:

Տառատեսակը՝ հայերեն տեքստերինը՝ «Arial Armenian», ռուսերենինը՝ «Arial LatRus»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն),

ընդունման ժամանակահատվածը (ընդունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ՝ 2003 թվականի դեկտեմբերի 12), չակերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (այդ թվում՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության աղբյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել շարվածքի, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը պարտադիր դնում է իր ստորագրությունը, նշում կոնտակտային տվյալները: